Էջմիածին



Ը–Թ
1999

Ա 1996

ԾԵ ՏԱՐԻ

Է. ՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄԱՍԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. Է. ՋՄԻԱԾՆԻ

Ս. Էջմիածին
1999

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալ-
յանի կենսագրությունը 3

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՀՀ նախագահն ընդունեց Կաթողիկոսական Տեղապահին 5
ՀՀ նախագահի շնորհավորական ուղերձը Կաթողիկոսական Տեղա-
պահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանին 6
Կաթողիկոսական Տեղապահը, Երուսաղեմի և Կ. Պոլսո հայոց Պատ-
րիարքները եպիսկոպոսաց դասի ուղեկցությամբ այցելեցին ՀՀ
վարչապետին 7
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական
նիստը «Հայկաշեն»-ում 8
Կաթողիկոսական Տեղապահի շնորհավորական ուղերձը Հայաս-
տանի Հանրապետության նախագահին 9
Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալ-
յանի խոսքը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի
քառասնօրյա պաշտոնին՝ ասված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում 10
Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալ-
յանի խոսքը՝ ուղղված ուխտավորներին 13
Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալ-
յանի խոսքը՝ ուղղված քահանա հայրերին՝ քահանայական
հավաքի ժամանակ 14
Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալ-
յանի ողջույնի խոսքը՝ ասված Հայաստան-Սփյուռք համահայկա-
կան խորհրդաժողովի բացմանը 17
Կաթողիկոսական Տեղապահի շնորհավորական նամակը ԼՂՀ անկա-
խության 8-րդ տարեդարձի առիթով 21
Կաթողիկոսական Տեղապահի ցավակցական հեռագիրը ՌԴ նախա-
գահին և Համայն Ռուսիո Պատրիարքին 22
Ս. Պատարագ՝ ի հիշատակ Վեհափառ Հայրապետի մահվան քառա-
սուներորդ օրվա 23
Հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ հոգելույս Վազգեն Ա Վեհափառ
Հայրապետի 24

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱՊԱՀ ՀՕՐ ՄՕՏ

Կաթողիկոսական Տեղապահն ընդունեց ՀՀ Սոցիալական ապահո-
վության նախարարին 25

Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Իտալիայի պատվիրակությունը 25
Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Ամերիկյան կոնգրեսականները 26
Կաթողիկոսական Տեղապահն ընդունեց Սամարայի նահանգապետին 26
Կաթողիկոսական Տեղապահն ընդունեց ԱՄՆ կոնգրեսական Ջեյմս Ռոգանին 27
Կաթողիկոսական Տեղապահն ընդունեց ՄԱԿ-ի պատվիրակությանը 27
Կաթողիկոսական Տեղապահն ընդունեց Ֆրանսիայի ԱԳՆ պատվիրակությանը 28
Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Ֆրանց Վերֆելիի ընվիրված գիտաժողովի մասնակիցները 29
Կաթողիկոսական Տեղապահն ընդունեց ԵԱՀԿ պատվիրակությանը 30

Քահանայից ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 30
Կաթողիկոսական Տեղապահն այցելեց կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճար 32
Օծվեցին Սպիտակի Ս. Հարություն եկեղեցու խաչերը 33
ՄՍՄԻԿՈՆ ԱՐԿ. ԱՎԵՏԻՍՅԱՆ - Երկօրյա այց Այուսյաց թեմ 34
1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի նիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 37
Խորհրդակցական ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 39
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Կլոր սեղանի» խորհրդաժողով Մայր Աթոռում 40

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Կ. Պոլսո նորընտիր Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի անդրանիկ կոնդակը 41
ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Նվիրակությունը Հայոց եկեղեցում 47
ՅԱՐԵՀ ԱԲԵՂԱ ԿԱԲԱՂՅԱՆ - Թորգոմ Պատրիարք Գուշակյանը եկեղեցական բարեկարգության ջատագով 57

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի «Թուղթ Կանոնականը» 71
ՎԱՀԱՆ ՍԱՂԱԼՅԱՆ - Երևանի պետական համալսարանի հիմնադրումը 80
ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆ - Կոմիտաս ... 130 93
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ - Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի գրական դիմանկարը 99

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՒ ԹԵՄԵՐՈՒՄ

ՀՐԱՆՏ ՈՒՐՈՒԱԿԻՐ ԿՈՍՏԱՆՅԱՆ - Գևորգյան Հոգևոր ճեմարանի նոր ուսումնաշրջանի բացումը 104
ԳԱՅԱՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ - Երևանի պետական համալսարանի Աստուածաբանութեան ֆակուլտետը տուեց իր առաջին շրջանաւարտները 108
Մասնաւոր վարդապետական իշխանութեան չորս աստիճանների տուուչութիւն Լիոնի Ս. Յակոբ եկեղեցում 111
Կենսագրութիւն Հոգեշնորհ Տ. Տաթև վարդապետ Յակոբեանի 112
Քահանայական ձեռնադրություն և վեղարի տվչություն Ս. Գայանե եկեղեցում 115
Տ. Ղևոնդ աբեղա Ղևոնդյան 115
Քահանայական ձեռնադրություն Երևանի Ս. Սարգիս եկեղեցում 117
Քահանայական ձեռնադրություն Օշականի Ս. Սեսրոպ Մաշտոց եկեղեցում 121
Ջոդի զորամասում կատարվեց Ս. Վարդան մատուռի հիմնարկեքը 122
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՅԱՊՈՐՅԱՆ - «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» 123
ԳԻՍԱԿ ԱՐՔԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆ - Բազմահարիւր հայ ուխտաւորներ մասնակցեցան Լուխանի ուխտագնացութեան 125
Լուրեր Գերմանիայի հայոց թեմից 128

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ժնևում գումարվեց ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի հերթական համաժողովը 130
Եկեղեցական կյանք. Լուրեր 132

Քրիստոնեյա աշխարհ

Սիրիական Ուղղափառ եկեղեցի 139

ՄԱՏԵԱՆԱՄԱԿԱՆՆԵՐ

ՏՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃԵԱՆ - Հանգիստ Տ. Եղիշէ աւագ քահանայ Փաճոսեանի, Հոգևոր հովիւ Մարսելի Սրբոյ Սահակ-Մեսրոպ եկեղեցւոյ 141
ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ - Հանգիստ Վաչագան Հովհաննիսյանի 143
եկեղեցական բեմ. լուրեր 145
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата 160
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin 164
"Etchmiadzine" organe officiel du Saint-Siège d'Etchmiadzine 168

ՀՐԱՄԱՆԱՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼԵԱՆԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈՉԱՊԱԼՅԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՋԱՊԱԼՅԱՆԻ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներսես արքեպս. Պոզապալյանը, ավազանի անունով՝ Հակոբ, ծնվել է 1937 թ. հուլիսի 5-ին Գըրըգ Խան քաղաքում /Թուրքիա/, արհեստավորի ընտանիքում:

1939 թ. ընտանիքով գաղթել և հաստատվել են Բեյրութում, ուր ստացել է իր նախնական կրթությունը, տեղի հայկական Նուպարյան վարժարանում:

1951 թ. ընդունվել է Անթիլիասի Դպրեվանք, ուր սովորել է մինչև 1955 թվականը:

1955-1957 թթ. սովորել է էշրեֆիե թաղամասում գտնվող Կենտրոնական բարձրագույն վարժարանում:

1957 թ. սեպտեմբերին ծնողների հետ ներգաղթել է Հայաստան և մեկ ամիս անց ընդունվել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1957 թ., ձեռամբ Հայկազուն արքեպս. Աբրահամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1960 թ. ավարտելով Հոգևոր Ճեմարանը՝ մեկնել է Մոսկվա և մեկ տարի ուսանել Զագորսկի Հոգևոր ակադեմիայում:

1961 թ. հունիսի 5-ին, ձեռամբ Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Ներսես աբեղա:

Կրոնական-եկեղեցական կրթությունը խորացնելու նպատակով 1963-1965 թթ. սովորել է Յորքշիրի /Անգլիա/ Հարության կոլեջի /College of "Resurrection", Yorkshire, England/ կրոնական բարձրագույն ուսումնարանում:

1965-1969 թթ. վերադառնալով Մայր Աթոռ՝ վարել է Հոգևոր Ճեմարանի տեսչության պաշտոնը:

1969-1970 թթ. սովորել է Ժնևի էկումենիկ ինստիտուտում: 1969-1972 թթ. իբրև հոգևոր հովիվ ծառայել է Ժնևի հայոց Ս. Հակոբ եկեղեցում:

1972-1974 թթ. եղել է հոգևոր հովիվը Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցու:

1974 թ. Համայնքային եկեղեցական խորհրդի կողմից ընտրվել է Անգլիայի հայոց առաջնորդ: 1974 թ. հոկտեմբերին, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս

Վազգեն Ա-ի, ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Անգլիայի հայոց առաջնորդ և Հայրապետական պատվիրակ Քենթրբերիի Արքեպիսկոպոսի մոտ:

1982 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի հրավերով վերադարձել է Մայր Աթոռ Իբրև դիվանապետ:

Սրբազան Հայրը նաև էկումենիկ աշխատանք է ծավալել Մայր Աթոռում: 1983 թ. ընտրվել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի անդամ: Եղել է Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հիմնադիրը և ցարդ շարունակում է ծառայել Իբրև նույն հաստատության Տնօրենների Խորհրդի ատենապետ:

1998 թ. նոյեմբերին ընտրվել է Ռուսաստանի Հումանիտար ակադեմիայի ակադեմիկոս: Հեղինակ է շուրջ մեկ տասնյակ բանաստեղծական և քարոզչական հատորների:

1999 թ. հուլիսի 4-ին Գերագույն Հոգևոր Խորհրդի և եպիսկոպոսաց համատեղ ժողովի կողմից ընտրվել է Կաթողիկոսական Տեղապահ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ-Ք

ՀՀ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻՆ

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հուլիսի 19-ին ընդունեց Կաթողիկոսական Տեղապահ Ներսես արքեպս. Պոզապալյանին: Հանրապետության նախագահին ներկայացնելով օրերս կայացած Գերագույն Հոգևոր Խորհրդի նստաշրջանի արդյունքները՝ Տեղապահը նշեց, որ քննարկվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջիկա ընտրությունների նախապատրաստական աշխատանքները և այդ ուղղությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետագա գործունեությանն առնչվող հարցեր: Զրուցակիցները շոշափեցին նաև եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին վերաբերող խնդիրներ: Ռոբերտ Քոչարյանը բարձր գնահատեց եկեղեցու դերը հայապահպանության և համայն հայության համախմբման գործում:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԻՆ

Կաթողիկոսական Տեղապահ ընտրվելու առիթով Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

«Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Հայ Առաքելական Եկեղեցու Կաթողիկոսական Տեղապահի ընտրվելու կապակցությամբ:

Մաղթում եմ Ձեզ առողջություն և հաջողություններ այս պատասխանատու շրջանում Ձեր բարձր առաքելությունը կատարելու գործում»,-ասվում է նախագահի ուղերձում:

Շնորհակալություն հայտնելով ՀՀ նախագահին՝ նորընտիր Կաթողիկոսական Տեղապահ Ներսես արքեպս. Պոզապալյանը պատասխան նամակ է հղել ՀՀ նախագահին՝ նշելով.

«Խորապես զգացված եմ Ձեր շնորհավորանքի համար իբրև Կաթողիկոսական Տեղապահի ընտրվելուս առթիվ:

Ընդունեցեք, խնդրեմ, բոլորով սրտիվ ծառայության իմ պատրաստակամությունը ի շահ հայ ժողովրդի և ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցու»:

ՄԱՍՍԱ ԴԻՎԱՆ ՄՏԱՐ ԱԹՈՌԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ, ԵՐՈՒՍԱղԵՄԻ ԵՎ Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԴԱՍԻ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Հուլիսի 9-ին, կեսօրից հետո, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի և եպիսկոպոսաց դասի հետ մեկտեղ այցելեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Վազգեն Սարգսյանին:

Փոխանցելով իր ցավակցությունները Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման կապակցությամբ, ՀՀ վարչապետը նշեց, որ Վեհափառ Հայրապետի կորստյան վիշտը համայն հայության և առավելապես Մայր Եկեղեցու վիշտն է:

Հանդիպման ընթացքում խոսվեց Եկեղեցի-պետություն հարաբերությունների շուրջ՝ փոխադարձ աջակցության և համագործակցության ակնկալիքներով:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ «ՀԱՅԿԱՇԵՆ» - ՈՒՄ

Օգոստոսի 26-ին Բյուրականի «Հայկաշեն» կաթողիկոսական նստավայրում հրավիրվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստ՝ նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի և ատենապետությամբ Թուրքիո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի: Նիստին մասնակցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ թեմական առաջնորդ Սրբազան Հայրերը:

Նիստի օրակարգի հիմնական նյութը էր առաջիկա կաթողիկոսական ընտրությունը: Այդ առիթով լսվեց և քննարկվեց ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպման հանձնախմբի կատարած աշխատանքների մասին տեղեկագիրը: Քննարկումից հետո, թեմերից ստացված հարցարանների տվյալների հիման վրա, հաստատվեց յուրաքանչյուր թեմի պատգամավորների թվաքանակը:

Նիստի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվեցին նաև Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարի շինարարական աշխատանքների ընթացքը և ֆինանսավորման հետ կապված խնդիրները:

ՄՍՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հայաստանի Հանրապետության նախագահ պրն. Ռոբերտ Քոչարյանի ծննդյան 45-րդ տարեդարձի առթիվ օգոստոսի 31-ին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը հետևյալ շնորհավորականն է հղել նախագահին.

«ՄԵԾԱՐԳՈ
ՏԻՄՐ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ,
ՎԱՍՏԱԿՈՒՔ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, պաշտոնեության և իմ անունից շնորհավորում եմ Ձերդ Վսեմափայլության ծննդյան 45-րդ տարեդարձը:

Այս առթիվ հղում եմ Ձեզ Ս. Էջմիածնի օրհնությունը և մեր բարի մաղթանքները քաջառողջության և գործոց հաջողության:

Մանավանդ մաղթում եմ Ձեզ Աստվածային բյուր շնորհներ, որպեսզի Ձեզ հանձնված ազգի նավը կարողանաք հաջողությամբ և բարօրությամբ հասցնել հույսի նավահանգիստ:

Մնամ հարգանոք և աղոթարար

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ»

ՍՍՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՌԱՄՆՕՐՅԱ ՊԱՇՏՈՆԻՆ

ԱՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(8 ՕԳՈՍՏՈՍ, 1999 Թ.)

«Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրեալ յորովայնէ»:
(Շարական)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Շարականագրի սույն խոսքերը՝ «Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրված որովայնից», այնքան իմաստնալից կերպով պատշաճում են այսօրվա մեր Հայրապետի մասին քառասունքին նվիրված հոգեհանգստյան պաշտաման և արարողությանը: Սահավասիկ քառասուն օրեր անցան այն օրվանից, երբ ի Տեր փոխադրվեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Հայրապետը: Սուգի մեջ թողեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, սուգի մեջ թողեց ողջ աշխարհի իր ծանոթներին, սուգի մեջ թողեց Հայաստանի ժողովրդին, սուգի մեջ թողեց բոլոր հարազատներին: Այդ սուգը քառասուն օրեր երկարածգվեց: Աղոթեցինք նրա շիրիմի առաջ և մեր սրտի մեջ, թե ինչո՞ւ և ինչպե՞ս Հայոց Հայրապետը այնքան եռանդալի հասակում ի Տեր փոխադրվեցավ:

Նա ծնվել էր Քեսաբի մեջ 1932 թ. և ապա ուսում ստացել Կիլիկյան Աթոռի Դպրեվանքում, Անթիլիասում: Ես հիշում եմ նրա աբեղայական ձեռնադրությունը, երբ առաջին տարվա ուսանող էի այդ Դպրեվանքում, երբ 1952 թ. հոկտեմբեր ամսին բոլոր ուսանողներով, դպիրներով և ժողովրդով երգում էինք՝ ի պատասխան հայցին ձեռնադրող եպիսկոպոս Դերենիկ Սրբազանի, «արժանի է», «արժանի է» բացականչելով: Նա հոգևորական ձեռնադրվելով ամբողջությամբ իր կյանքը նվիրեց նոր սերնդի դաստիարակության գործին: Նա իր ուսումը կատարելագործեց Օքսֆորդի համալսարանում և, այնտեղից ստանալով պատվավոր կոչում, վերստին նվիրվեց դպրեվանքյան տեսչության իր գործունեությանը և ապա հրավիրվեց մինչև Ջուղա, Ջուղայից՝ Միացյալ Նահանգներ, այնտեղ առաջնորդական պաշտոն կատարելու և ապա 1977 թ., իր ձեռնադրությունից 25 տարի հետո, Աստված արժանի գտավ նրան բազմեցնելու Կիլիկյան Աթոռին՝ որպես գահակալ և Կաթողիկոս:

Այդ օծման առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից երկու եպիսկոպոսներ էին

ներկա, ովքեր օծման արարողությանը մասնակցեցին: Նրանցից մեկը հանգուցյալ Սերովբե արքեպս. Մանուկյանն էր (Ֆրանսիա), և երկրորդը՝ ես խոնարհս. որ իմ աջը դրեցի նրա գլխին ուրիշ տասնմեկ եպիսկոպոսների հետ՝ խնդրելով, որ աստվածային անսպառ շնորհներն իջնեն նրա հոգու ավազանի մեջ և այդ ավազանը լցնեն հոգևոր իմաստությամբ և շնորհներով: Եվ այդպես էլ եղավ: Նրա հոգու ավազանը շատ հարուստ էր բազմազան և բազմապիսի շնորհներով: Նա լոկ չդարձավ գրի և գրականության մարդ, նա լոկ չդարձավ դաստիարակ և ուսուցիչ նոր սերնդի, նա չդարձավ միայն էկումենիկական ոգու տարածող, նա Միութենական եկեղեցիների Միության գործի ջահակիրը լոկ չդարձավ, նա դարձավ ամբողջ իր ծանոթների, իր հոտի, իր ժողովրդի համար մի աղբյուր անսպառ, հորդառատ աղբյուր, ինչպես շարականագիրն է ասում՝ հագեցնելու և լցնելու սրտերն ու հոգիները մեր հավատացյալ հոտի թե՛ Կիլիկյան Աթոռում և թե՛ Մայր Աթոռում: Եվ ապա տասնութ տարիներ, երկար տարիներ, Կիլիկյան Աթոռի Կաթողիկոսությունը վարելուց հետո, նա ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռի գահակալ, արժանավորապես, և, սակայն, հազիվ չորս տարի Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանը իր ձեռքում պահեց, հետո ծանր հիվանդացավ, և շուրջ տասներկու-տասներեք ամիսներ տառապեց: Իսկապես տառապանք էր հիվանդությունը, որովհետև նա կորցրել էր խոսելու ունակությունը: Այն լեզուն, որ երկնքից Պենտեկոստեի օրը իջավ հուրի կերպարանքով, կրակի կերպարանքով Հիսուսի աշակերտների վրա, իջել էր նաև իր վրա, և այդ հրեղեն լեզուն էր, որ մեզ համոզում էր, մեզ քաջալերում էր, մեզ առաջնորդում էր դեպի ծառայության մեր ժողովրդին: Այդ լեզուն էր, որ հանկարծ խափանվում է: Հիվանդության ավարտը դժբախտաբար շատ դշխեմ եղավ, որովհետև այս տարվա հունիսի 29-ին Վեհարանում, երկար ամիսներ գամված լինելով իր անկողնին, շրջապատված լինելով իր հարազատներով, իր քրոջով և իրեն շատ մոտիկ անձնավորություններով, նա իր աչքերը փակեց, բայց չմեռավ, այլ փոխադրվեց ի Տեր: Նրա կյանքը շարունակվում է այս կյանքի սահմանի մյուս կողմում, աստվածային երանության մեջ:

Ո՜վ Հայրապետ, քո հիվանդության շրջանը քեզ համար եղավ ապաշխարության ամենամեծ շրջանը, երբ դու, մաքրված հոգով, մաքրված մտքով, մաքրված իմացականությամբ, փոխադրվեցիր քո ճշմարիտ Հոր գիրկը՝ Աստծո ներկայության մեջ բնակություն հաստատելու: Սիրելիներ, ո՜վ կարող է ուրանալ մեծ ուսուցչի և մեծ դաստիարակի ավելի քան քառասուն տարիներ հայ ժողովրդի կյանքում ծավալած գործունեությունը: Մեզանից ո՜վ կարող է ուրանալ իր գրչի արգասաբեր արտադրությունը, որ նույնիսկ այդ չորս տարիների ընթացքում Մայր Աթոռում ավելի քան 350 հատոր գիրք հրատարակեց՝ նրանցից մեկ մասը ինքը գրած լինելով:

Ո՜վ կարող է չընդունել, որ նա մշակույթի մարդ էր և իր ամբողջ կյանքը նվիրեց հայ գրչագրության, հայ մանրանկարչության, հայկական արվեստի տարածմանը, եկեղեցական արվեստի ցուցահանդեսներ կազմակերպելով

Հելսինկիից մինչև Վատիկան, և այդ ցուցահանդեսը նաև մինչև Լոնդոն պիտի հասնի և մինչև Նյու Յորք: Ո՞վ կարող է չընդունել, որ նա մարդկանց մեծ ընկերն էր , մեծ բարեկամը և մեծ համոզողը: Ո՞վ կարող է չընդունել, որ նա հոգու տեր մարդ էր, աստվածային ներշնչանքով լեցուն, և նրա խոսքը երկինք էր բարձրանում կարծես որպես խունկ մաքուր և որպես ընծա՝ մարդկության կողմից երկնքին տրված:

Մենք բոլորս նրա առջև այսօր, քառասունքի այս հիշատակման օրը, ծունկի ենք գալիս մեր սրտով և խոնարհվում, ցավելով, որ կորցրեցինք մի մեծ Հայրապետ, «Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրեալ յորովայնէ»: Պիտի սգանք ոչ թե այս քառասուն օրերի ընթացքում, ոչ միայն մինչև նոր Հայրապետի ընտրությունը, այլ պիտի սգանք հավետ բոլորս, որ ծանոթ ենք եղել նրան, որ կարողացած ենք իր հոգու բաժակի ըմպանակից ըմպել և վայելել նրա խոսքերի միջոցով նրա հոգու արժեքները:

Աշխարհի մեջ ամեն բան կանցնի, բայց հոգու արժանիքները կմնան հավետ: Եկե՛ք ուխտենք այսօր այս Սուրբ Խորանի առջև, որ նրա հիշատակը պիտի պահենք անթառամ մեր հոգիների մեջ և աղոթենք առ Աստված, որ նրա հոգին ընդունի իր լուսեղեն և երանավետ հարկերի մեջ՝ խաղաղություն և երջանկություն պարգևելով նրա հոգուն: Աղոթե՛նք նաև, սիրելիներ, որ իր երազները, իր նպատակները, որոնք անկատար մնացին մեր ժողովրդի կյանքում, Աստված այնպես անի, որ դրանք ևս իրականանան: Նա հավատում էր Հայաստանյայց Եկեղեցու միությանը, հայ ժողովրդի միությանը, և այդ հավատքը մեզ պետք է առաջնորդի այսօր և վաղը դեպի այդ ցանկալի միությունը:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:
Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՋԱՊԱԼՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

(27 ՀՈՒԼԻՍ, 1999 Թ.)

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հղում ենք ձեզ հատուկ օրհնություն ու մաղթում ուժ և կարողություն, աստվածային հավատքի զորություն, որպեսզի Նա իբրև ռահվիրաներ ճանապարհ հաղթահարի մեր ուխտագնացների համար, որպեսզի այս օրերում իրենց ուխտը կարողանան ի կատար ածել Լեռնային Ղարաբաղից, Արցախից մինչև Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Ս. Աստվածածնի տոնի առիթով: Ձեզ այստեղ՝ Մայր Տաճարում կսպասենք սիրով, Ս. Աստվածածնի խնդրանքներով և աղոթքներով, որպեսզի ձեր ճանապարհը ծաղիկ չթվա ձեզ, այլ կարողանաք այս տասը օրերու ընթացքում կատարել ձեր պարտականությունը իբրև առաջին քայլողներ Արցախից մինչև Ս. Էջմիածին և այդ ճանապարհի անցումը բարեհաջող կատարեք: Բյուր օրհնություն ձեզ, ուժ և կարողություն:

Քիչ առաջ Սրբազան Հայրը հիշեց մի բանաստեղծություն, որ Հովհաննես Թումանյանի կողմից գրված է և մեր մանկության տարիներուն «Թանգարան» գրքին մեջ արձանագրված է հետևյալ ձևով. «Ա՛յ ուխտավոր, հա՛յ ուխտավոր, որ ուխտի կերթաս դեպ Արարատ»:

Արարատը մի բարձունք է, ուր Նոյյան տապանը հանգչեց, ուր Նոյը իջավ և իր առաջին զոհը մատուցեց, Ս. Էջմիածինը մի բարձունք է, ուր Ս. Գրիգոր Լուսավորիչը աստվածային տեսիլքով Միածինը իբրև այս երկու բարձունքների ուխտավոր իջած տեսավ: Բարի ճանապարհ և ուժ, համբերություն, կարողություն: Աստված մեր ժողովուրդը 1700-ամյակի առիթով պիտի օրհնի, բայց մանավանդ պիտի օրհնվեն նրանք, ովքեր դարձ են ապրում, զոհողություն ի սեր Քրիստոսի և ի սեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո: Ձեր ճանապարհը բաց է, ինչպես Հիսուս իր աշակերտները ուղարկած ժամանակ ասաց. «Ուր որ ձեզ ընդունում են, այնտեղ մտեք, մեր օրհնությունը տարեք, մեր սերն ու հարգանքը տարեք, ուր որ ձեզ չեն ընդունում, ձեր կոշիկների փոշին թոթվեցեք և հեռացեք»: Բայց վստահ եղեք, որ մեր ժողովուրդը և ամեն տուն ձեզ գրկաբաց պիտի ընդունի: Բարի ճանապարհ և բարի վերադարձ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

«Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ և Տէր մեր Յիսուս Քրիստոս եղիցի ընդ ձեզ ճանապարհորդակից և զօրավիգ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆԵՐՍԵՒ ԱՐՔԵՊՍ. ՊՈՂՈՍՊԵԼՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԵՐԻՆ՝ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ

(Սուրբ Էջմիածին, Կաթողիկոսարան, 29 Հուլիս, 1999 թ.)

Հայրական սիրով ողջունում եմ ձեր գալուստը Ս. Էջմիածին եւ այս առիթով կոչ անում ձեզ սիրո եւ միաբանության, անմնացորդ ծառայության եւ նվիրումի՝ մեր ժողովրդի հոգեւոր եւ բարոյական, ոգեկան ապրումների աշխարհում:

Ես վստահ եմ, որ դուք, ձեր մեջ կոչումն զգալով Աստծուն եւ նրա ստեղծած մարդկությանը նվիրական զգացումներով ծառայելու, առաքելական ավանդությամբ, ձեռնադրությամբ եւ օծումով ստացած լինելով Սուրբ Հոգու շնորհները, ուխտել եք պատասխանատվության խոր գիտակցությամբ հաշվետու լինել Աստծո եւ մարդկանց առաջ ձեր կյանքի եւ գործունեության համար: Դուք բոլորդ կոչեցյալ եւ ընտրյալ առաքյալներն եք Քրիստոսի հիմնած Եկեղեցու եւ նրան զինվորագրված սպասավորները: Դուք խոսում եք եւ գործում Աստծո անունով, ինչպես Քրիստոս Ինքը հանդես եկավ Իր կյանքի ընթացքում եւ ասաց. «Որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ»: Դուք ուղարկված եւ կոչված եք մի ճշգրիտ առաքելության, որ է «եղիջիք ինձ վկայք» (Գործք Ա 8): Դուք ձեր կյանքով ու գործով վկայողներն եք եւ արծագանքողը Աստծո խոսքի եւ լույսը աշխարհի՝ հար եւ նման Քրիստոսի: Դուք միջնորդներ եք մարդկանց եւ Աստծո միջեւ: Ձեր խոսքը, վարքը եւ գործը, որպես հայելի, պետք է արտացոլի Քրիստոսի պատկերը:

Դժվար է միանշանակ գնահատել պատմության ելեւէջները մեր եկեղեցական կյանքում եւ հոգեւորականների դերը մեր ժողովրդի հոգեւոր, մտավոր, ազգային-հայրենասիրական կյանքի եւ Հայաստանի զորակցության խնդրում: Իսկ այսօր, ավելի քան երբեւէ, Հայաստանի արդի կյանքը խիստ բարդ է, որն էլ անդրադառնում է նաեւ մեր բոլորի առաքելության վրա: Մեր հավատքի, ավանդությանց եւ հոգեւոր-բարոյական ապրումների նկատմամբ երեւացող անտարբեր եւ սառը կեցվածքը, աշխարհականացած արդի օտարամուտ մտայնությունները հասարակության մեջ անհաղթահարելի խոչընդոտներ են ստեղծում մեր երկրում:

Բայց հոգեւոր գիտելիքներով զինված հոգեւորականը դիմագրավում է այդ խոչընդոտները, Աստծո շնորհի օգնությամբ հետապնդում Տիրոջ կամքը կատարելուն երկրի վրա՝ վճռակամությամբ հաստատելու Աստծո Թագավորությունը:

Դուք, նախ լինելով Աստծո սպասավորները, պետք է միշտ կապված զգաք

տեւական հաղորդակցության մեջ ձեզ ներշնչող աղբյուրին՝ Արարչին, աղոթքի միջոցով եւ այդ ճանապարհով առաջնորդեք ձեզ հանձնված հոտը դեպի հոգեւոր եւ բարոյական աշխարհի ոլորտները: Աղոթքն անհատի հոգու միաձուլման ձգտումն է Աստծո հետ: Դա ձեր ընկալումն է ավետարանական պատվիրանների եւ մեր խղճի ձայնի արձագանքը: Հոգեւորականներս պետք ունենք հարատեւ նորոգելու մեր հոգու պահանջները: Պաշտոնական պաշտամունքներն ու ծեսերը, որ ունեն համայնական բնույթ, պետք է վերածել եւ հասցնել անհատական խոստովանության մակարդակի, ձեր միջոցով՝ առ Աստված: Ուստի, հովիվ եւ ծուխ պետք է նույնանան եւ ձգտեն մոտենալ քրիստոսավանդ կյանքի գործելակերպին եւ, իբրեւ եկեղեցական կարգապահություն, առօրեական պահանջք դառնա, ձեր հովվական առաքելությանը զուգընթաց, շարունակական բյուրեղացման եւ տեւական վերանորոգման սուրբգրական քրիստոսավանդ կենցաղավարությունը, որի աշխեղ թելադրությունն ստանում ենք Աստծո հետ հարատեւ հաղորդակցության միջոցով՝ հավատացյալների հոգու եւ սրտի մեջ լուսավորելով աստվածապարգեւ պարտավորությունները:

Հաճախ պետք է գտնել խոկումի եւ ինքնամփոփ ինքնակատարելագործման եւ հսկումի պահեր՝ զորանալու, հոգեւոր պատրաստությունը խթանող եւ չթուլացնող ընթերցումներով գործելու, մշտանորոգ վճռականությամբ ձեռք բերելու Սուրբ Հոգու միջոցով զորացած կամքի եւ մտքի ներքին ուժը, որը կշարունակի վերակերտել ձեր հոգեւոր գործունեությունը ձեր կյանքում: Ձեր ընթերցումների մաս պետք է կազմեն նաեւ մեր Եկեղեցվո հայրերի՝ Ս. Նարեկացու, Ս. Շնորհալու, Օրմանյանի եւ բազմաթիվ այլ հեղինակների ներաշնծնական բնույթի գրքերը՝ լցվելու համար լույսով, հավատքի առավել հստակությամբ: Իսկ Սուրբ Գրքի ընթերցումը մեր տներում եւ եկեղեցիներում առաջին աղբյուրը հոգեւոր կյանքի, անբաժանելի ուղեգիծը պետք է հանդիսանա մեր անձնական կյանքի: Կրոնազգաց ապրումներով ձեր կյանքը պետք է առաջնորդվի ինքնաբյուրեղացման եւ պայծառատեսության ըմբռնումով, ժողովուրդը պետք է մղվի դեպի մեր Եկեղեցու ծառայության, իսկ ձեր հովվությունը պետք է առաջնորդվի խոստովանահոր հատուկ վստահությամբ: Դուք, որպես հոգիների ուսուցիչ, պետք է ուսանեք եւ ուսուցանեք կյանքի ճշմարտության ակունքից:

Դուք պետք է վերականգնեք Աստվածաշնչի առաջնային տեղը ձեր եւ Հայ Առաքելական Եկեղեցու ներկա կյանքում: Այն պետք է հանդիսանա բյուրեղացնող հոգեկան ապրումների եւ կերպարանափոխության այն հայելին, որի շնորհիվ մեր ազգը հենց սկզբից գտավ Աստծո հայտնությունը:

Հաղորդվելու համար մեր ավանդությունների կենսապարգեւ ակունքների՝ մեր Եկեղեցու հայրերի մեկնողական-գրական ժառանգությանը, դուք պետք է թափանցեք մեր հայրերի սրբազան մյուս գործերի մեջ:

Ձեր սրբազան պարտականությունն է նաեւ, որ այսօր, առավել քան երբեք, առնչվեք մեր ժողովրդի սոցիալական տարբեր խավերի հետ եւ փոխանցեք

մեր Եկեղեցու պատգամը, որպեսզի թեթեւացնեք նրանց առօրեական հոգսերը եւ մասնակից դարձնեք ձեր քարոզած Աստծո Արքայության երանավետ զգացումներին, ինչպես, օրինակ, ձեր ամենօրյա զբաղմունքների հետ պետք է հիշեք ու այցելեք մեր զինվորներին, բանտարկյալներին, ծերերին, հիվանդներին, մենակյացներին, կարոտյալներին եւ կյանքի տարբեր այլ աստիճաններում գտնվող հավատացյալներին, ովքեր սպասում են մեր Եկեղեցու օգնությանը՝ իբրեւ նեցուկ իրենց հոգեւոր եւ բարոյական կյանքի:

Մեկ անգամ եւս ձեր ուշադրությանն եմ հանձնելու Հայ Եկեղեցու առաքելության այսօրվա հրամայականը, որ է մեր ժողովրդի հոգեւոր եւ բարոյական մակարդակի բարձրացումը ձեր անձնական կյանքի օրինակով, եւ ամեն վայրկյան նրանց հետ, նրանց մեջ, նրանց կողքին լինել մարդասիրական եւ ընկերային բոլոր տեսակի ծառայությամբ՝ սիրով թեթեւացնելու նրանց առօրեական հոգսերը, որպեսզի համարձակ կոչենք նրանց դեպի Եկեղեցի՝ ասելով. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք եւ ես յանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 29):

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈՂՈՍՊԱՆՅԱՆԻ ՕՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՔԱՅՏԱՆԸ

Վսեմափայլ Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարյան, Վեհափառ Տեր, Ամենապատիվ Սրբազան Պատրիարք, սիրելի հայրենակիցներ և հյուրեր.

Մեծ գոհունակությամբ ողջունում ենք Հայաստան-Սփյուռք սույն առաջին խորհրդաժողովը և մաղթում իր ընթացքին կատարյալ հաջողություն:

Անցյալում ևս նմանօրինակ ձեռնարկումներ եղել են, սակայն մեծ ընդգրկում չեն ունեցել: Տա բարին Աստված, որ այս մեկը դրվի ամուր հիմքերի վրա, լինի ավանդական, տևական ու համապարփակ: Ոչ միայն խիստ ցանկալի է, այլև այսօր մեր ազգի, եկեղեցու և պետության համար նույնիսկ հրամայական է, որ Հայաստան-Սփյուռք գոյություն ունեցող առ այս մերթ տկար, մերթ քիչ ավելի գործուն կապը դառնա հաստատուն և անշրջելի՝ ի շինություն և միություն մեր՝ ճակատագրի բերումով ֆիզիկապես տարանջատված, բայց հոգեպես, հոգևոր արժեքների և ինքնության առումով իր միասնականությունը պահպանած ժողովրդի հետագա երթը մեկ հեռանկարային ու լայնահուն ճանապարհի վրա դնելու համար:

Դարերի ընթացքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եղել է մեր ժողովրդի քրիստոնեական վարքագծի, լեզվի ու մշակույթի, գիտության՝ ու ազգային այլ ավանդությունների կրողն ու պահպանողը, իսկ պետականությունը կորցնելուց ի վեր՝ նաև աշխարհիկ իշխանությունների դերակատարն ու քաղաքականություն մշակողը: Այսօր պատկերն այլ է. այսօր մենք ունենք հայրենի պետություն: Անկախ բոլոր դժվարություններից, զրկանքներից, անկախ թափված այնքան թանկ արյան՝ մենք հայ ժողովրդի երջանիկ սերունդն ենք և դա պետք է գիտակցենք: Մենք տեսանք այն, ինչի մասին միայն երազել էր հայը դարեր շարունակ: Քանի-քանի սերունդ այդ երազը սոսկ փայփայել, ու անցել է և հիմա նրանց լույս հոգիները երանի են տալիս մեզ:

Այսօր Հայրենիքն ու Սփյուռքը կարիք ունեն փոխադարձ օգնության, աջակցության, սատարումի: Սփյուռքը, նյութական օգնությունից, կարևոր ներդրումներից զատ, պետք է դառնա կամուրջ, նոր ու նորովի մի կամուրջ՝ համաշխարհային գործընթացներում ինտեգրացնելու համար Հայաստանի գիտական, մշակութային, արտադրատնտեսական ներուժը, իսկ Հայրենիքը պիտի շարունակի լինել այն հողը, այն քուրան, որից հոգևոր-մշակութային էներգիա, ազգային շունչ ու ոգի պիտի առնի աշխարհի չորս ծագերում ապրող հայը՝ իր վրայից թոթափելով սոսկ կրոնական ու ազգային ներամփոփ համայնքի ներկայացուցիչ լինելու գաղափարը: Թիկունքում հզոր, անկախ հայրենիք ունենալը վերացական պայմանը չէ այլևս, այլ հարատևության,

ինքնության հաստատման աներկբա կռվան: Եվ այս հայրենիքին՝ Հայաստան աշխարհին պետք է լիիրավ տեր ու ծառա դառնա հենց ինքը՝ հայ մարդը՝ անկախ բնակության վայրից:

Եթե հայի՝ աշխարհով մեկ սփռված լինելու պարագան երեկ համարվում էր մեր դժբախտությունը, ապա այսօր, հեռատես ու խոհեմ քաղաքականության շնորհիվ, կարելի է այն վերածել աննախադեպ առավելության: Անհրաժեշտ է առաջին հերթին ձգտել և հասնել երկրի տնտեսության առողջացման, պետության և ներդրողի փոխադարձ վստահության, արտերկրի հայության և հայաստանաբնակի շահերի իրատես միասնության: Ահա այս դեպքում մենք այլևս պետք չենք ունենա մեր հայացքն ուղղելու օտար ու օտարամետ տարրերի օգնությանը, որոնք շատ հաճախ հացի հետ խայծ են բերում մեր երկիր՝ մոխրացնելով, կրակին տալով մեր 1700-ամյա կեցվածքի ողջ նկարագիրը:

Ցավով պետք է նշել, որ այսօր Հայաստան են մուտք գործել բազում աղանդներ և, օգտվելով մեր հանրապետության սոցիալ-տնտեսական դժվարություններից, ինչու չէ նաև մեր Եկեղեցու ոչ այնքան եռանդուն գործունեությունից, իրենց վտանգավոր, ազգաբաժան սև գործն են կատարում: Հայի՝ Հայ Առաքելական Եկեղեցու կողքին գտնվելը և նրա զավակը համարվելը միայն հավատի, կրոնի խնդիր չէ, այլ ազգային, պետական-ռազմավարական նշանակություն ունեցող պարագա: Այս մասին հարկ է, որ բոլորս խորհենք: Հային Հայ Եկեղեցու կողքին պահելը ամենքիս գործն է, լինի հոգևորական թե մտավորական, պարզ հավատացյալ թե պետական իշխանավոր, հայաստանաբնակ թե սփյուռքահայ:

Հանրահայտ բան է. երեխային որևէ վտանգավոր հիվանդությունից զերծ պահելու համար նրան պատվաստումներ ենք կատարում, կազմակերպում պրոֆիլակտիկ միջոցառումներ: Կարծում ենք, ոչ ոք կասկած չունի Հայ Եկեղեցու ազգանվեր դարավոր պահվածքի հարցում. այն դարերի դժվարին, բայց փառավոր ուղի է անցել: Չարժե՞, արդյոք, այսօր, որ Հայ Եկեղեցու առջև պաշտոնապես բացվեն մանկապարտեզների, դպրոցների դռները: Չարժե՞, արդյոք, մեր զավակներին մեր կաթի հետ այսօր ներարկել մեր էության ճշմարիտ դեղը, որպեսզի օտարի հիվանդությունն այնտեղ բուն չդնի և ներսից չքայքայի մեր մարմինն ու հոգին, մեր պետության ու Եկեղեցու հիմքերը: Հայտնի բան է, որ ազգերը չեն մեռնում, այլ ինքնասպան են լինում: Ինքնասպան են լինում՝ սեփական դեմքն ու կենսագրությունը, արմատներն ու ավանդությունները, հիշողությունն ու կենսափորձը կորցնելով: Ինքնասպան են լինում՝ հեռանալով, օտարվելով միմյանցից:

«Բաժանիր, որ տիրես» մարդկային դաժան մտքին 17 դար շարունակ մեր ժողովուրդն իր Եկեղեցու գլխավորությամբ հակադրել է «Մերձեցիր, որ չտիրեն» մեզապատկան քրիստոնեական կեցվածքը: Մերձեցումը ծառայամտություն չէ: Մերձեցումը նախ և առաջ հավատի, սիրո, առողջացումի ճանապարհ է, ճանապարհ, որ եղել է մեր Եկեղեցու 1700-ամյա դասը:

Արդ, առողջացման և վերակերտման հույժ կարևոր մեր գործընթացում

պետք չէ Սփյուռքը թողնել ստվերում՝ լինի ներքին Սփյուռքը թե արտաքին: Ընդհակառակը, դրանց ամենակարևոր ուժերը պետք է խմբավորվեն և միաբանվեն՝ մեկ դառնալով Հայաստան աշխարհի հետ՝ փորձելով միատեղ գտնել լուծումը բոլոր դժվարությունների: Սպրելով և կրթություն ստանալով տարբեր երկրներում՝ մեր հայրենակիցներն իրենց մտածելակերպի և գործելակերպի ոլորտները մշտապես հարստացրել են տվյալ երկրի թե՛ մշակութային և թե՛ տնտեսական բնագավառների նվաճումների ազդեցությամբ: Մենք պետք է կարողանանք օգտվել այդ զինանոցից: Սակայն ինչպես Սփյուռքի հայությունը, այնպես էլ հայաստանաբնակը, պատրաստակամության հետ մեկտեղ, պետք է ունենա նաև միևնույն ծննդի զավակը լինելու իրավունքն ու պատասխանատվությունը: Հայաստանն ամեն հայի հայրական, պապենական ժառանգությունն է՝ տալու և առնելու միարժեքությամբ: Կարծում ենք, այս խնդիրները համակարգված լուծելու համար անհրաժեշտ է համահայկական ներկայացուցչական մի մարմին: Խորհրդային իշխանության տարիներին գործում էր Սփյուռքի հետ մշակութային կապերի կոմիտեն: Գուցե արժե այսօր նոր, ավելի լայն հնարավորություններով ու լիազորություններով վերականգնել այդ կոմիտեն: Հույս ունենք, որ այս համաժողովի գլխավոր նպատակներից մեկն էլ կլինի նման մի մարմնի ստեղծումը:

Այսօր աշխարհում համայն հայությունն իր նպատակներն իրագործելու համար ունի երկու հիմնական կենտրոն. մեկը Միածնաէջ ու Լուսավորչահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է, մյուսը՝ հայոց նորանկախ պետությունը, որոնց համագործակցությունը պետք է լինի նպաստավոր ու արդյունալից՝ հանուն հայրենաշինության, հզոր Հայրենիք կերտելու և ազգապահպանման նվիրական գործի: Ինչպես միշտ, այսօր ևս մեր Եկեղեցին իր ժողովրդի կողքին է, իր բուն առաքելությանը զուգընթաց՝ տեղերում նպաստելով հայրենաշինության գործին: Ներքին թե արտաքին Սփյուռքում մեր Եկեղեցու Հայրերն օգնում, աջակցում և սատարում են Հայաստանի դեսպանություններին՝ ծառացած խնդիրները համատեղ ուժերով լուծելու ուղղությամբ: Այդ համագործակցությունը տվել և տալիս է իր պտուղները:

Այո՛, այսօր մեր ժողովրդի և Հայրենիքի շահերը պահանջում են, որ պետությունն ու Եկեղեցին մշտապես լինեն կողք-կողքի, մշտապես համագործակցեն: Սակայն այդ համագործակցությունը պետք է լինի ըստ պատշաճի, փոխըմբռնման ու փոխհարգանքի պայմաններում: Համագործակցություն, ուր բացառվի միջամտությունը: Ինչպես Եկեղեցին չպետք է ընդգծի իր կեցվածքը, ասենք աշխարհիկ իշխանությունների ընտրություններում, այնպես էլ պետական իշխանավորները պետք է փորձեն զերծ մնալ ինչ-ինչ գայթակղություններից և սին հեռանկարների պատրանքներից՝ չմիջամտելու համար Եկեղեցու գործերին: Քանզի դրանով իսկ կխաթարվի փոխվստահության և միասնության ճշմարիտ ոգին: Առաջին հայացքից աննշան թվացող այս հանգամանքը անարդարության սերմ կդառնա և ծիլեր կարձակի համայն հայության մեջ և կվերածվի վնասի:

Փորձենք այսօր միասնականության, բայց նաև արդարության ճանապարհով անցնելու օրինակ տալ մեր ժողովրդին և սրբագրել նախկինում թույլ տված սխալները: Մենք դաս ունենք առնելու հենց մեր պատմությունից:

Վերստին ողջունելով այս խորհրդաժողովը՝ ցանկանանք, որ այն օգնի Հայաստանի անկախության նոր ուժով զորացած Սփյուռքին վեր կանգնելու իր ներհամայնքային ճոճիմ վեճերից, նեղկուսակցական շահերից, որպեսզի ազգովի հնարավորություն ունենանք լծվելու համահայկական խնդիրների լուծմանն ու իրականացմանը, որի հիմքում պետք է լինի Նորանկախ Հայաստանի Հանրապետության հզորացումը: Խոսելով ամուր և բարգավաճ հայրենիք ունենալու տեսիլքի մասին, հարկ է մեկ անգամ ևս վերհիշել մեր Տիրոջ՝ Հիսուսի պատգամը. մեր տունը չկառուցենք ավազի վրա, այլ ժայռի. այսինքն՝ պինդ ու անսասան հիմքի, որպեսզի դրսից եկող ոչ մի քամի, ոչ մի հողմ, բնական ու անբնական ոչ մի աղետ չավերի, չքանդի այն:

Թող Ամենակարող Աստված Իր բարեգութ Աջով հովանի լինի մեզ վրա՝ այս նվիրական գործընթացի իրականացման ճանապարհին: Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք մեր օրհնությունը և հավատքի բարի մաղթանքները Հայաստան-Սփյուռք անդրանիկ համաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին, հյուրերին և բոլոր նրանց, ովքեր ջանք չեն խնայել իր տեսակի մեջ այս եզակի հավաքը կյանքի կոչելու գործում:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 8-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը ԼՂՀ անկախության 8-րդ տարեդարձի առիթով շնորհավորական նամակ է հղել ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանին, որտեղ մասնավորապես ասվում է.

«Հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, Գերագույն Հոգևոր խորհրդի, պաշտոնեության և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ և Լեռնային Ղարաբաղի ողջ հայությանը անկախության նվաճման 8-րդ տարեդարձի առիթով:

Թող Աստված անկախության բազում տասնամյակներ պարգևի նորահաստատ հանրապետությանը և անսասան պահի մեր սիրելի արցախցիների աննկուն և ազատատենչ ոգին»:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՅԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՌԴ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Սեպտեմբերի 14-ին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը ցավակցական հեռագրեր ուղարկեց ՌԴ նախագահ Բորիս Ելցինին և Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիյ Երկրորդին՝ Բույնակսկում և Մոսկվայում ահաբեկչական գործողություններին զոհ դարձած անմեղ քաղաքացիների մահվան կապակցությամբ:

Հայ Եկեղեցու և ողջ հայ ժողովրդի անունից իր ցավակցությունը հայտնելով զոհվածների ընտանիքների հարազատներին, Տեղապահ Արքազանը նշում է. «Ռուս ժողովրդին վերահաս մեծ վիշտը նաև հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու վիշտն է, քանզի զոհվածների ողբը արձագանքում է ողջ աշխարհում»: Ամենապատիվ Արքազանը դատապարտում է ցանկացած տիպի ահաբեկչությունը և հայցում, որպեսզի Ամենաբարձրյալը խաղաղություն հաստատի աշխարհում, վերափոխելով զոհվածների հոգիները երկնային թագավորություն:

ՄՍՍԼՈ ԴԻՎԱՆ ՄՍՅՈ ԱՁՈՈՒ

Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ի ՀԻՇԱՏԱԿ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ ՔԱՌԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՕՐՎԱ

Կիրակի, օգոստոսի 8-ին, երանաշնորհ Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան քառասունքի առիթով Սբ. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր Սբ. Պատարագ: Պատարագիչն էր Գերշ. Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

Հընթացս Սբ. Պատարագի Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը «Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրեալ յորովայնէ» բնաբանով իր խոսքն ուղղեց ներկաներին՝ անդրադառնալով երջանկահիշատակ Վեհափառ Հայրապետի կյանքին և հոգևոր ասպարեզում բոլորանվեր ծառայությանը (տե՛ս էջ 10): Տեղապահ Սրբազանը, հիշատակելով Վեհափառ Հայրապետի կյանքի վերջին ամիսներին ծանր հիվանդության պատճառած տառապանքն ու չարչարանքը, նշեց, որ «այն դարձավ ճշմարիտ ապաշխարանք՝ երկնային լուսեղեն օթևաններում վայելելու Աստծո փառավոր ներկայությունը»:

Հավարտ Սբ. Պատարագի Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսադրությամբ և թեմական առաջնորդների ու Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբանության ընթերակայությամբ կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն Վեհափառ Հայրապետի շիրիմի առջև:

Սրբազան արարողությանը ներկա էին Վեհափառ Հայրապետի ազգականները, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի բարերարներ, ՀՀ կառավարության անդամներ, բազմաթիվ հավատացյալներ:

Արարողության ավարտին ներկաները հրավիրվեցին Վեհարան, ուր տրվեց հոգեճաշ:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԿԱՐԳ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՒՅՍ ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Օգոստոսի 22-ին, կիրակի օրը, լրացավ երջանկահիշատակ Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 5-րդ տարելիցը, որի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ (պատարագիչ՝ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյան):

Հավարտ Սուրբ Պատարագի՝ հոգեհանգստյան հատուկ պաշտոն կատարվեց երանաշնորհ Վազգեն Ա Հայրապետի հոգու հանգստյան համար:

Այս առիթով մի անգամ ևս հոգևորականների և հավատացյալների կողմից աղոթք բարձրացվեց առ Աստված՝ վասն հոգվո խաղաղության հանգուցյալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱՊԱՀ ՀՈՐ ՄՈՏ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հուլիսի 23-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովության նախարար Ռազմիկ Մարտիրոսյանին:

Հանդիպման ընթացքում խոսվեց հանրապետությունում առկա սոցիալական խնդիրների՝ մասնավորապես ընտանեկան նպաստների բաշխման, ծերերի և թոշակառուների պաշտպանվածության, ծերանոցների գործունեության վերաբերող հարցերի շուրջ:

Պարոն Մարտիրոսյանը, կարևորելով Եկեղեցու դերը սոցիալ-բարոյական խնդիրների լուծման գործում, միաժամանակ նշեց Եկեղեցու հետ այս ասպարեզում համագործակցության անհրաժեշտության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 8-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեցին Իտալիայի տրանսպորտի նախարար Տեցիանո Տրեուի գլխավորած պատվիրակությունը և Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի դեսպան Ջանկարլո Արագոնան՝ ՀՀ տրանսպորտի փոխնախարար Աշոտ Գրիգորյանի և Իտալիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Գագիկ Բաղդասարյանի ուղեկցությամբ: Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Գերշ. Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը ողջունելով հյուրերին, գոհունակությամբ նշեց, որ հազարամյակների խորքը ձգվող Հայաստան-Իտալիա կապերը շարունակվում են նաև այսօր: Տեղապահ Սրբազանը հիշարժան համարեց այն իրողությունը, որ Վենետիկում է լույս տեսել հայերեն առաջին տպագիր գիրքը:

Անդրադառնալով Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների առնչություններին, Տեղապահ Սրբազանը ափսոսանք հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի

հիվանդության պատճառով Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու պետ Հովհաննես-Պողոս Բ Պապի Հայաստան կատարելիք այցի իրականացման կապակցությամբ և հույս հայտնեց, որ նման այցելություն տեղի կունենա առաջիկայում:

Հանդիպման ավարտին իտալացի հյուրերը եղան Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի քանգարաններում, ծանոթացան Հայ Եկեղեցու մեծարժեք գործերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆՆԵՐԸ

Օգոստոսի 11-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով կոնգրեսական խմբի անդամներին: Հյուրերին ուղեկցում էր Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնը:

Ողջունելով հյուրերին, Տեղապահ Սրբազանը կոնգրեսականներին ներկայացրեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հիմնադրության պատմությունը՝ նշելով, որ հայ ժողովուրդն արդեն 1700 տարի վկայում է Քրիստոսի Միածնաէջ Սուրբ Աթոռն ունենալով իբրև հոգևոր կենտրոն և ուղենիշ: Հանդիպման ընթացքում Ամենապատիվ Սրբազանը հանգամանորեն ներկայացրեց Հայ Եկեղեցու կրած փորձությունները՝ սկսած խորհրդային տարիներից մինչև երկրաշարժ, ղարաբաղյան հակամարտությունից մինչև խորհրդային կայսրության փլուզումը:

«Փառք եմ տալիս Աստծուն, որ Հայ Եկեղեցին, հաղթահարելով այդ բոլոր փորձությունները, տեսավ Հայոց անկախ հանրապետության հռչակումը», - ասաց Տեղապահ Սրբազանը:

Ներսես արքեպիսկոպոսն ընդգծեց, որ չնայած տնտեսական ու սոցիալական դժվարություններին, հայ ժողովուրդը շարունակում է իր ստեղծագործ աշխատանքով արարել բարիքներ և Աստծո հավատքով շարժվել առաջ:

Ընդունելության և բովանդակալից մեկնաբանությունների համար պատվիրակության անունից Տեղապահ Սրբազանին շնորհակալություն հայտնեց սենատոր Կոնի Մորելան:

Հանդիպման ավարտին հյուրերը ծանոթացան Վեհարանում պահվող հայ հոգևոր մշակութային արժեքներին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Գերշ. Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԱՄԱՐԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Օգոստոսի 9-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց Սամարայի նահանգապետ Կոնստանտին Տիտովին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին, Տեղապահ Սրբազանը փաստեց հայ և ռուս երկու քրիստոնյա ժողովուրդների դարավոր բարեկամությունը և վստահորեն նշեց, որ Քրիստոսի ծննդյան երրորդ հազարամյակի նախաշեմին այդ բարեկամությունն էլ ավելի կամրանա:

«Ինձ համար մեծ պատիվ է լինել հայոց հոգևոր կենտրոնում», -շնորհակալություն հայտնելով ընդունելության համար ասաց պարոն Տիտովը: Նահանգապետը դրվատանքով խոսեց Սամարայում բնակվող ավելի քան 60 հազար հայ բնակչության մասին, որոնց ջանքերով անցած տարի Սամարայում հիմք է դրվել հայկական եկեղեցու շինարարությանը:

Հանդիպմանը ներկա էին Գերշ. Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը և Ուկրաինայի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆ ՋԵՅՄՍ ՌՈԳԱՆԻՆ

Սեպտեմբերի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ԱՄՆ կոնգրեսական Ջեյմս Ռոգանը՝ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի օրհնությունն ստանալու նպատակով: Մեծարգո հյուրին ընկերակցում էին ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի պառլամենտի անդամ Հովարդ Քալուգյանը, Ամերիկայի Հայկական Համագումարի Լոս Անջելեսի և Երևանի գրասենյակների տնօրեններ Պիտեր Աբաջյանը և Արփի Վարդանյանը:

Տեղապահ Սրբազանը ողջունելով հյուրերին, համառոտ ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմությունը և Հայ Եկեղեցու ներկայիս առաքելության հիմնական ուղղությունները:

Նշելով, որ Կալիֆոռնիան աշխարհի հայաշատ գաղթօջախներից մեկն է, Սրբազան Հայրը կարևորեց հայ-ամերիկյան բարեկամության ամրապնդման անհրաժեշտությունը ի շահ հայկական խնդիրների արդարացի լուծման:

Հանդիպման ավարտին հյուրերը եղան Վեհարանի թանգարանում:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԿ-Ի ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց ՄԱԿ-ի Փախստականների գծով Գերագույն հանձնակատար Սադակո Օգատային և նրա գլխավորած պատվիրակությանը:

Տեղապահ Սրբազանը ողջունելով ՄԱԿ-ի ներկայացուցիչների այցը հայոց հոգևոր կենտրոն, հյուրերին ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրման պատմությունը:

Ձրույցի ընթացքում խոսվեց դարաբաղյան հակամարտության խնդիրների շուրջ: Այս առիթով Տեղապահ Սրբազանն անդրադարձավ հակամարտության հետևանքով Ադրբեջանից գաղթած բազմահազար հայ փախստականների խնդիրներին՝ նշելով, որ Հայ Առաքելական Եկեղեցին մշտապես սատարում է փախստականներին, ինչպես նաև հասարակության բոլոր կարիքավոր խավերին:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև առաջիկա կաթողիկոսական ընտրությունների, աշխարհասփյուռ հայ համայնքների և Հայ Առաքելական Եկեղեցուն վերաբերող հարցերի շուրջ:

Հանդիպման ավարտին հյուրերը եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարաններում, ծանոթացան Վեհարանում պահվող հայ հոգևոր-մշակութային արժեքների հետ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Գերշ. Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԳՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության պատվիրակությանը՝ նախարարի խորհրդական, հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Միշել Ֆուշեի գլխավորությամբ: Պատվիրակությանն ընկերակցում էր Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրան:

Ողջունելով հյուրերին, Տեղապահ Սրբազանը գոհունակությամբ նշեց հայ-ֆրանսիական դարավոր կապերի մասին, շնորհակալությամբ հիշատակելով նաև 1988 թ. աղետալի երկրաշարժից հետո Ֆրանսիայի կողմից Հայաստանին ցուցաբերված օժանդակությունը:

Հանդիպման ընթացքում Ամենապատիվ Սրբազանը հյուրերին ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու և Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով հաստատված Մայր Տաճարի 1700-ամյա պատմությունը:

Պրն. Ֆուշեի խնդրանքով Տեղապահ Սրբազանն իր մտորումներն ու տեսակետներն արտահայտեց վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանում ստեղծված կացության և մասնավորապես ղարաբաղյան հակամարտության խնդիրների շուրջ՝ հույս հայտնելով, որ շնորհիվ միջազգային հաշտարար ուժերի և կողմերի միջև խաղաղ երկխոսությունների հակամարտությունը վերջապես կստանա իր արդարացի լուծումը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև առաջիկա կաթողիկոսական ընտրությունների շուրջ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Սեպտեմբերի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց սեպտեմբերի 16-17-ը Երևանում կայանալիք «Ֆրանց Վերֆելը և հայ ժողովուրդը» միջազգային գիտաժողովի մասնակից ավստրիացի հյուրերին՝ ուղեկցությամբ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Լավրենտի Բարսեղյանի: Այցելուների թվում էին Ավստրիայում գործող «Ֆրանց Վերֆել» կոմիտեի անդամ մի խումբ գիտնականներ, ինչպես նաև Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գրքի թուրքերեն թարգմանության հրատարակիչ Ռագըպ Զարաքոլուն:

Ողջունելով և արդյունավետ աշխատանք մաղթելով գիտաժողովի մասնակիցներին Տեղապահ Սրբազանը անդրադարձավ հայոց ցեղասպանության հարցերին:

«Որքան էլ որոշ ուժեր փորձեն կատարված իրողությունը թաքցնել, ճշմարտությունը երբեք չի կարող թաքնված մնալ: Միշտ էլ ազնիվ և արդարամիտ մարդիկ կգան և պատմության իրական դեպքերը կբացահայտեն», - ասաց Տեղապահ Սրբազանը:

Հանդիպման ավարտին հյուրերը եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գանձատանը, ծանոթացան եկեղեցական մեծարվեստ գործերին:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԱՀԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց ԵԱՀԿ գործող նախագահ, Նորվեգիայի արտգործնախարար Կնուտ Վոլեբեկին և նրա գլխավորած ԵԱՀԿ պատվիրակությանը:

Տեղապահ Սրբազանը ողջունելով հյուրերի այցը Հայոց հոգևոր կենտրոն, նրանց ներկայացրեց Հայ Առաքելական եկեղեցու և աշխարհում քրիստոնեական հնագույն տաճարներից մեկը հանդիսացող Ս. Էջմիածնի պատմությունը:

Հանդիպման ընթացքում պրն. Վոլեբեկը հայտնելով այցի նպատակը, գոհունակությամբ նշեց ՀՀ կառավարական շրջանակներում ունեցած իր հանդիպումների, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ ունեցած քննարկումների մասին: Իր հերթին Տեղապահ Սրբազանը հույս հայտնեց, որ դարաբաղյան խնդիրը խաղաղ բանակցությունների ճանապարհով ի վերջո կստանա իր արդարացի լուծումը:

Հանդիպման ավարտին հյուրերը հետաքրքրությամբ դիտեցին Վեհարանում ցուցադրվող եկեղեցական արվեստի ցուցանմուշները:

Հանդիպմանը ներկա էր Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՔԱՀԱՆԱՅԻՑ ԺՈՂՈՎ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ա.թ. հուլիսի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարվեց ներքին թեմերի հոգևորականների մեկօրյա նիստ՝ նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի: Նիստին ներկա էին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, ներքին թեմերի առաջնորդ սրբազանները և Հայաստանի քահանա հայրերը:

Առավոտյան նիստը սկսելուց առաջ Մայր Աթոռ ժամանած հոգևոր հայրերը, հանդիսադրությամբ Ամենապատիվ Տեղապահի՝ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, կատարեցին հոգեհանգիստ նորոգ հանգուցյալ Հայրապետի շիրիմի վրա: Ապա Վեհարանի հանդիսությունների դահլիճում աղոթքով և Սբ. Գրական ընթերցումներով սկսվեց աշխատանքը, և «Հովիվն քաջ» բնաբանով հանդես եկավ Գերշ. Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը:

Նիստի նպատակն էր ներկայացնել քահանայության առջև դրված ներկա առաքելության հրամայականը, անդրադառնալ դրանց լուծման եղանակներին, ինչպես նաև ծանոթանալ քահանայությանը մտատանջող խնդիրներին ու հիմնահարցերին և լուծում տալ դրանց:

Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց, որ հայ հոգևորականի այսօրվա գերխնդիրը ժողովրդի բոլոր խավերին Ավետարանի խոսքն ուղղափառ ընկալումով մատուցելն է, որտեղ պետք է ուսումնասիրվեն ժամանակակից բոլոր մեթոդներն ու միջոցները և մեր փոքրիկ հոտը առաջնորդել հոգևոր և բարոյական աշխարհի ոլորտներ ազգային ավանդական փորձի վրա հիմնված և կարևոր դեր ունենալ 2000 թ. Քրիստոսի ծննդյան տարեդարձին քրիստոնյա մյուս ազգերի շարքում մեր ազգային նկարագրով:

Զեկուցող քահանա հայրերը (Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյան, Տ. Մեսրոպ քհն. Արամյան) շեշտեցին քահանա-ծուխ հարաբերության վերականգնման, ծիսակատարությունների դաստիարակչական բնույթի նորովի արժևորման և եկեղեցու հոգևոր ժառանգության կենդանի պահպանման անհրաժեշտությունը, որի ամբողջական և հաջող իրագործումը հաստատումն է Աստծո Թագավորության:

Տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակում, որտեղ քահանա հայրերը հանդես եկան իրենց մտահոգություններով, հարցերով ու ցանկություններով: Ներկաները ուխտեցին շարունակել մնալ գիտակից իրենց կոչումին,

սրբությամբ պահպանել 2000-ամյա բյուրեղացած ավանդությունը, որ գալիս է մեր հայրերից և եկեղեցում կուտակված հոգևոր ժառանգությունից:

Նիստի արդյունքներն ամփոփեց և օրհնության խոսքով հանդես եկավ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը (տե՛ս էջ 14), որն իր խոսքում շեշտեց քահանայի կյանքում ինքնամփոփման և խոկումի կարևորությունը՝ իր առաքելությունը նպատակասլաց և գիտակից կերպով կատարելու համար: Տեղապահ Սրբազանը կոչ ուղղեց քահանաներին՝ մնալ Աստծո սպասավորի բարձրության վրա և այդ վեհությանը հաղորդակից դարձնել մեր ժողովրդի բոլոր զավակներին:

ՍԱՄՎԵԼ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԱՅՑԵԼԵՑ ԿԱՌՈՒՑՎՈՂ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՏԱՃԱՐ

Հուլիսի 15-ին կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը այցելեց Երևանում կառուցվող Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

Սրբազան Հայրը շինարարության ղեկավարման գրասենյակի պատասխանատու էդուարդ Պալասանյանի ուղեկցությամբ շրջեց շինհրապարակում, մանրամասն տեղեկություններ ստացավ կատարվող աշխատանքների մասին:

Կաթողիկոսական Տեղապահը, տեղում ծանոթանալով կատարված աշխատանքներին, արտահայտեց իր գոհունակությունը և հույս հայտնեց, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով կառուցվող տաճարի շինարարությունն իր լրմանը կարող է հասնել հոբելյանական տարում՝ 2001 թվականի մայիսի կեսերին:

ՍԱՄՍՈՆ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՕԾՎԵՑԻՆ ՍՊԻՏԱԿԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԸ

Օգոստոսի 10-ին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, ուղեկցությամբ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաճարյանի և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբանների, մեկնեց Սպիտակ՝ կատարելու Սբ. Հարություն Նորակառույց եկեղեցու գմբեթի և զանգակատան խաչերի օծումը:

Եկեղեցու մոտ Տեղապահ Սրբազանին դիմավորեցին Գուգարաց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Աղոթքի և շարականների երգեցողությամբ խաչերը նախ լվացվեցին գինիով, ապա Տեղապահ Սրբազանը սրբալույս մյուռոնով օծեց զույգ խաչերի կենտրոնները, աջ և ահյակ կողմերը:

Հավարտ արարողության Սրբազան Հայրն իր օրհնությունը բաշխեց 1988 թ. երկրաշարժի արհավիրքն ապրած սպիտակցիներին՝ ասելով. «Տասը տարիներ առաջ մենք էլ ձեզ հետ արտասվեցինք, մենք էլ ձեզ հետ սև բախտի դեմ ըմբոստացանք և աղոթեցինք, որ Սբ. Հոգին գա մխիթարելու մեզ բոլորիս: Այսօր այդ մխիթարությունը իջավ Սպիտակի ժողովրդի վրա»:

Ըստ ընկալյալ սովորության, օծված խաչերը, որպես սպիտակցու հավատքի «ոգեղեն իրականություն», բարձրացվեցին և տեղադրվեցին Սբ. Հարություն եկեղեցու գմբեթին և զանգակատանը: Խաչերի տեղադրման պատիվը, իբրև շինարարական աշխատանքների վերջակետ, տրվեց եկեղեցու շինարարության ղեկավար Սկրտիչ Լամբարյանին:

Սբ. Հարությունը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նվերն է աղետյալ սպիտակցիներին, որը կյանքի է կոչվել ճարտարապետ Բաղդասար Սրգումանյանի նախագծով:

Սպիտակցիները վկայում են, որ Սբ. Հարություն եկեղեցու տեղում է գտնվել խորհրդային տարիներին հիմնովին ավերված Սբ. Աստվածածին եկեղեցին: Ավերված եկեղեցուց մնացել է միայն երկու քար, որոնք որպես մասունք, առաջնորդ սրբազանի առաջարկով, ագուցվել են Սբ. Հարություն եկեղեցու մուտքի զույգ որմերին:

Մինչև տարեվերջ տեղի կունենա նաև Սբ. Հարություն եկեղեցու օծման արարողությունը: Եվ ինչպես Տեղապահ Սրբազանը մաղթեց՝ «Թող աղոթքի մրմունջը եկեղեցու կամարների տակ երբեք չդադարի»:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԵՐԿՕՐՅԱ ԱՅՑ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Օգոստոսի 21-22-ը .Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մի խումբ միաբանների ուղեկցությամբ, երկօրյա այցով մեկնեց Սյունյաց թեմ՝ կատարելու Ղափանի Ծավ գյուղի Սբ. Գևորգ եկեղեցու Սուրբ Սեղանի օծման արարողությունը:

Տեղապահ Հորը Աբրահամ Սրբազանը ծանոթացրեց Սյունյաց թեմում տարվող շինարարական մեծածավալ աշխատանքներին:

Այցելության առաջին հանգրվանը եղավ Եղեգնաձոր քաղաքը, որտեղ Սբ. Աստվածածին եկեղեցու հարևանությամբ կառուցվել էր երկհարկանի նորակառույց մի շենք: Շինարարական ներքին հարդարման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ էին: Ըստ Աբրահամ Սրբազանի բացատրության, շենքը մոտ ապագայում շահագործման կհանձնվի և կծառայի իբրև կրոնակրթական և քարոզչական կենտրոն: Սբ. Աստվածածին եկեղեցու թիկունքի մասում գտնվող տափարակ բլուրը, համաձայն առաջնորդ-Սրբազանի ծանուցման, ե դարի պատմիչ Եղիշեի մատնանշած այն վայրն է, ուր նահատակվել է հայկական զորքի մի մասը. դա են ապացուցում բլրի վրա գտնվող գերեզմանները և հին բերդի կիսաավերված ու հողի տակ անցած պարիսպը: Սրբազանն ասաց, որ հիշյալ վայրի բարեկարգման աշխատանքները ներգրավված են թեմի ապագա ծրագրի մեջ, որի շրջանակներում նախատեսվում է կառուցել նաև մի հուշարձան՝ ի հիշատակ նահատակված հայ ռազմիկների եզակի վայրի, որը կդառնա մի նոր ուխտատեղի:

Այնուհետև Սրբազան Հոր առաջնորդությամբ Տեղապահ Սրբազանն այցելեց ՀՀ ամենամեծ գյուղը՝ Մալիշկա, որտեղ կառուցվում էր Սբ. Հարություն եկեղեցին՝ տեղաբնակ Աբրահամյան եղբայրների նյութական հովանավորությամբ:

Ապա մեքենաների շարասյունն ուղղվեց դեպի Գորիս, Սյունյաց թեմի առաջնորդանիստ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որը կառուցվել էր դեռևս Տ. Տ. Մկրտիչ Ա Խրիմյան Կաթողիկոսի օրոք: Աբրահամ Սրբազանը ներկաներին ծանոթացրեց վերանորոգված եկեղեցու հովվատան շրջակայքի և պարիսպների կառուցապատման աշխատանքներին:

Երեկոյան Մայր Աթոռի հոգևորականները, Տեղապահ Սրբազանի գլխավորությամբ, ուղևորվեցին Ղափան:

Ղափանում Մայր Աթոռից ժամանած հոգևորականներին դիմավորեց Սյունիքի մարզպետ պրն. Ռոման Նավասարդյանը: Ջերմ ընդունելությունից հետո, Ներսես Սրբազանը մարզպետի հետ միասին այցելեցին քաղաքի

կենտրոնական մասի բարձրավանդակում գտնվող կիսակառույց Սբ. Հարություն եկեղեցի, որի շինարարական աշխատանքներն սկսվել էին 1997 թ. գարնանը, սակայն ֆինանսավորման դժվարությունների պատճառով կառուցման ավարտը դանդաղել էր: Ծանոթանալով եկեղեցու շինարարական խնդիրներին՝ Տեղապահ Սրբազան Հայրը եկեղեցու գմբեթի ներքո հավաքված հոգևորականների հետ «Հայր մեր» արտասանեց, և «Որախ լեր» շարականի երգեցողությամբ մի փոքր արարողություն կատարվեց՝ իբրև նավակատիք սուրբ եկեղեցու: Ներսես Սրբազանը հավաքվածների ներկայությունը վկայություն համարեց այն համոզումով, որ Սբ. Հարությունը ամեն գնով պետք է վեր խոյանա և ծառայի ի սպաս հավատացյալ ժողովրդի: Սյունիքի մարզպետն իր հերթին, կարևորելով հոգևոր կյանքի անհրաժեշտությունը, խոստացավ նյութապես օժանդակել քաղաքի եկեղեցու շինարարությանը:

Կիրակի օրը, օգոստոսի 22-ին, Ղափանից շուրջ 40 կմ հեռավորությամբ լեռների գողտրիկ լանջերին փռված Ծավ գյուղում ժողովրդական տոնախմբություն էր, քանի որ պիտի տեղի ունենար Սբ. Գևորգ եկեղեցու օծման արարողությունը, որի վերականգնողական աշխատանքները (ներառյալ՝ փոքրիկ զանգակատուն-գմբեթը) հանձն էր առել այդ գյուղում ծնված պրն. Էդիկ Մարգարյանը: Բազիլիկ ոճի այդ եկեղեցին կառուցվել էր Ճարտարապետ Ալեքսանյանի կողմից 1907 թ.:

Սուրբ Պատարագի ընթացքում կատարվեց եկեղեցու օծման արարողությունը՝ ձեռամբ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի: «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողությամբ Սրբազան Հայրը սրբալույս մյուռոնով օծեց Սուրբ Սեղանի գագաթը, աջ ու ձախ անկյունները և ճակատը: Եկեղեցու օծման առիթով նախ առաջնորդ Սրբազանն իր շնորհակալության և գնահատանքի խոսքն ուղղեց բարերար Էդիկ Մարգարյանին, աշխատող վարպետներին և Ծավ գյուղի քաջ բնակիչներին՝ ասելով. «...այստեղ թերևս մոռացված բոլորից, կտրված աշխարհից ապրում ենք մենք՝ սյունեցիներս, ապրում ենք մենք որպես ազգ ու ժողովուրդ և գիտենք մեր արժեքը, գիտենք մեր նախնիների թողած ժառանգության արժեքը, գիտենք հավատալ, գիտենք կռվել, աշխատել և ապրել մեր հայրենիքում:

...Սրբազան Հայր, վստահեցնում ենք, որ մենք այստեղ դարեր շարունակ կանք, եղել և մնում ենք որպես Հայաստանի և Հայ Եկեղեցու ամրակուռ պարիսպը»:

Ապա իր շնորհակալությունն ու երախտիքը հայտնելով Նորին Ամենապատվությանը՝ Աբրահամ Սրբազանը հրավիրեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բյուր օրհնություն փոխանցելու ժողովրդին:

Տեղապահ Սրբազանը շնորհավորեց Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանին, ապա պրն. Էդիկ Մարգարյանին և եկեղեցում հավաքված հավատացյալ հոծ ժողովրդին՝ առ ի գնահատումն կատարված աշխատանքի, և ասաց. «Այս եկեղեցու ծոցից պիտի ծնվեն ձեր ապագա

սերնդի զավակները: Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բերում եմ ձեզ Լուսավորչա-հաստատ Սուրբ Էջմիածնի օրհնությունները և մաղթում, որ այս հեռավոր Հայաստանի ծայրամասում, որ ապրում եք, ձեր հավատքի վրա ամուր մնաք, հաստատ մնաք, ոչ մի աղանդավոր թող ոտք չդնի այս գյուղից ներս և իր աղանդավորական վարդապետությամբ չշփոթեցնի ձեզ, և դուք կապված լինեք, հաստատ լինեք ձեր հավատքի վրա, ինչպես մեր Հավատքի Հայրը՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչն ուսուցանել է, նույն ձևով, նույն հավատքով, մեր պապերի հավատքով շարունակենք այս եկեղեցին կենդանի պահել, ապրող և շնչող պահել»:

Պատարագի սրբազան արարողությանը հյուրաբար ներկա էր «Պրոմեթևս» բաժնետիրական ընկերության «Մշակույթ» հեռուստաալիքի գլխավոր տնօրեն պրն. Արմեն Սմբատյանը և նրան ընկերակցող հեռուս-տաալիքի տեսագրող խումբը, որոնք էլ նկարահանեցին ողջ արարողությունը:

Հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց 120 երեխաների խմբակային մկրտություն, մատաղի օրհնություն և բաժանվեց հոգևոր գրականություն:

ՄԱՄԻԿՈՆ ՄՐԿ. ԱՎԵՏԻՄՅԱՆ

1700-ԱՄՅԱԿԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր աշխատանքն սկսեց քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի եկեղեցական հանճնաժողովի գործադիր մարմնի լիագումար նիստը:

Բացման աղոթքից հետո ժողովի մասնակիցներին ողջույնի խոսք ասացին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և Թուրքիո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը: Բարձր գնահատելով 1700-ամյակի հանճնաժողովի կողմից մինչ այժմ կատարված աշխատանքները, Սրբազան Հայրերը հաջողություն մաղթեցին հոբելյանական հետագա ծրագրերի իրականացմանը:

«Մոտենում է 2001 թվականը, և պետք է ամեն ինչ գործադրենք՝ բոլոր ծրագրերի հաջող իրականացման և 1700-ամյա հոբելյանը փառավորապես տոնակատարելու համար», - ասաց Տեղապահ Սրբազանը:

Մեսրոպ Պատրիարքը նշեց, որ զանազան ծրագրեր իրականացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել, թե ինչպիսի հոգևոր կնիք պետք է դնի դրանց վրա 1700-ամյակը: Այս առումով Պատրիարք Սրբազանը կարևորեց հատկապես ուխտագնացությունների ծրագիրը:

Կատարված աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես եկավ հանճնաժողովի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը: Միայն վերջին ամիսների ընթացքում իրականացվել են 1700-ամյակին նվիրված մի շարք խոշոր միջոցառումներ, որոնցից Մեսրոպ Սրբազանն առանձնացրեց հունիսին Օշականում կայացած «Աստվածաշնչական Հայաստան» գիտաժողովը, հուլիս-օգոստոս ամիսներին՝ ավելի քան 40 ուխտագնացների մասնակցությունը Գանձասար-Էջմիածին ուխտագնացությանը:

Կիլիկյան Աթոռի և Թուրքիո Հայոց Պատրիարքության կողմից կատարված աշխատանքների, հոբելյանական միջոցառումներին թեմերի մասնակցության մասին զեկուցեցին Տ. Նարեկ ծ. վրդ. Ալեմեզյանը, Տ. Շահան արքեպս. Սվաճյանը և Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: 1700-ամյակի պետական հանճնաժողովի աշխատանքները ներկայացրեց ՀՀ կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանը:

Ժողովի մասնակիցները կարևորեցին պետական և եկեղեցական հանճնաժողովների, ինչպես նաև Եկեղեցու նվիրապետական Աթոռների և թեմերի կողմից տարվող աշխատանքների համադրման անհրաժեշտությունը, մտահոգություն հայտնվեց միջոցառումներին թեմերի ոչ լիարժեք մասնակցության առնչությամբ:

Հանձնաժողովն իր աշխատանքները կավարտի սեպտեմբերի 18-ին: Երկօրյա նիստերի ընթացքում ժողովականները կքննարկեն 1700-ամյակի հետագա ծրագրերին վերաբերող հարցեր, որոնց թվում՝ Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ Տաճարի, եկեղեցիների և վանքերի կառուցմանն ու վերակառուցմանը, ուխտագնացությունների, 1700-ամյակի առիթով Պետերբուրգում, Վիեննայում, Լոնդոնում և արտերկրի այլ քաղաքներում նախատեսվող ցուցահանդեսների կազմակերպմանն առնչվող հարցեր:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ և Թուրքիո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ատենապետությամբ գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի և եպիսկոպոսաց դասի համատեղ խորհրդակցական ժողով:

Ժողովի ընթացքում քննարկվեցին Հայ Եկեղեցու կանոնադրությանը, եպիսկոպոսաց ժողովի իրավասություններին և Ամենայն Հայոց 132-րդ կաթողիկոսի ընտրությանը վերաբերվող հարցեր:

Ժողովականները անդրադարձան նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700 և Քրիստոսի ծննդյան 2000-ամյակների տոնակատարությունների կազմակերպմանն առնչվող հարցերին:

ՍՄՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր աշխատանքն սկսեց Հայաստանում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Կլոր սեղան» գրասենյակի տարեկան խորհրդաժողովը:

Խորհրդաժողովի բացման առիթով, նախքան նիստի սկսվելը, հանդիսադրությամբ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն նորոգ հանգուցյալ երանաշնորհ Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի շիրմի վրա, որը, ինչպես Սրբազան Հայրը նշեց, մեծ վաստակ է ունեցել էկումենիկ հարաբերությունների զարգացման գործում:

Տեղապահ Սրբազանն իր ողջույնի խոսքը ուղղեց ժողովի բոլոր մասնակիցներին՝ բարձր գնահատելով ու իր գոհունակությունն արտահայտելով գրասենյակի կատարած մարդասիրական բազմաբնույթ աշխատանքների համար:

«Կլոր սեղանի» աշխատանքներին մասնակցում է ԵՀԽ տարածաշրջանային փոխհարաբերությունների բաժնի եվրոպական գրասենյակի տնօրեն Ալեքսանդր Բելոպոպսկին: Հայ Առաքելական, Հայ կաթողիկե և Հայ Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչների հետ մեկտեղ ժողովին մասնակցում են նաև տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Դանիայից, Մեծ Բրիտանիայից, Նիդեռլանդներից, Շվեյցարիայից, Ռուսաստանից:

Խորհրդաժողովն իր աշխատանքը կավարտի հոկտեմբերի 1-ին, որի ընթացքում կներկայացվի գրասենյակի եռամյա գործունեությունը, կքննարկվեն 2000-2002 թթ. ծրագրերը, կկայանա նոր ղեկավար խորհրդի ընտրություն: Տեղի կունենա նաև «Եկեղեցին Հայաստանում» թեմայով քննարկում:

ՍԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Կ. ՊՕԼՍՈ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊ. ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍԻ ԾԱՌԱՅ ՄԵՍՐՈՊ
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՕՐ
ՇՆՈՐՀՕՔ ԱՄԵՆԱՍՐԲՈՅ ՀՈԳԻՈՅՆ ԵՒ
ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ ԱՂԳԻՍ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ
ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԻՍ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Օրհնեալ հաւատացելոց տիրախնամ Պատրիարքական վիճակիս, գերաշնորհ եւ հոգեշնորհ վեղարաւոր Միաբանից, բարեխնամ Քարոզչաց, բարեկարգ Երիցանց, բարեշնորհ Սարկաւագաց, բարեկրօն Դպրաց, եւ բովանդակ եկեղեցական պաշտօնէութեանց, նոյն եւ պատուարժան Թաղային Խորհրդոց եւ Խնամակալութեանց եւ հոգաբարձութեանց եւ Յանձնաժողովոց, կրթական Մշակաց, յարգարժան Ստաւորականաց եւ Արուեստագիտաց, Հայ Մամլոյ երախտաշատ սպասաւորաց, եւ բովանդակ բարեպաշտօն ժողովրդականաց, արանց եւ կանանց, մանկանց եւ երիտասարդաց, կատարելոց եւ ծերոց, հարազատաց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյս, Քրիստոսաւանդ ողջո՞յն եւ սէր հայրական, եւ օրհնածայն մաղթանք երկնային առատապարգեւ շնորհաց ի Հօրէն Ամենակալէ եւ ի Միածնէ Որդւոյն եւ ի Սրբոյ Հոգւոյն, ամէն:

Մեր ընտրութենէն եւ գահակալութենէն լման տաս ամիս յետոյ, Սուրբ Կոյս Աստուածածնի Վերափոխման եւ Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյս անուան տօնախմբութեան բարեբաստիկ առիթով կը հրապարակենք սոյն Պատրիարքական Անդրանիկ Կոնդակը որպէս սրտազեղ հայրական խօսք, յօգուտ եւ ի

շինութիւն մերազն հաւատացեալներուն: Տիրամօր կենդանի բարեխօսութեամբ. Տէր Աստուած մեզ եւս արժանացնէ Իր այցելութեան, նորոգէ եւ հաստատէ մեր սրտերը ուղղափառ հաւատքի եւ առաքինասէր կեանքի մէջ, լուսաւորէ մեր մտքերը եւ անսայթաք առաջնորդէ մեզ ամէնքս յաւիտենական կեանքի:

Գոհութիւն եւ փա՛ռք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարթողոմէոս առաքեալներու քարոզչութեամբ, բազում վկաներու նահատակութեամբ, մեր բազմերախտ հայրապետին Սուրբ Գրիգոր Լուսաւորչի սխրագործութեամբ առաջնորդեց մեզ ի խաւարէ ի լոյս եւ մեր բազում հայրերու եւ սուրբերու վկայութեամբ աստուածգիտութեան լոյսը դրաւ մեր սրտերում մէջ: Հայ ժողովուրդը իր երկհազարամեայ քրիստոնէական կեանքը արգասաւորեց մեծանուն գործերով եւ հոգեւոր մշակոյթի զարմանալի արժէքներով. մինչեւ իսկ երբեմն նուիրագործելով զանոնք մարտիրոսներու արեամբ:

Ահաւասիկ մեր հերթին այսօր կանգնած ենք կարեւորագոյն երեք հանգրուաններու սեմին. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը յառաջիկայ Հոկտեմբերի վերջաւորութեան, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան երկհազարամեակի յոբելեանը եւ Առաքելական Սուրբ Եկեղեցիի Հայոց կողմէ պաշտօնական ճանաչում գտնելուն 1700-ամեակը: Պատմական սոյն քննութիւնները առիթ պիտի ընծայեն մեզի վերահաստատելու մեր ինքնութիւնը եւ նորոգելու մեր Քրիստոնէական կերտուածքը: Եկէք, ներհայեցողութեամբ ու աղօթքով եւ երկնային շնորհաց հոգեզարթ ակնկալութեամբ մերձենանք սոյն երեք իրադարձութիւններուն, որպէսզի անոնք յիրաւի դառնան առիթներ անձնական եւ հաւաքական ապաշխարութեան եւ պատճառ մեր մկրտութեան ուխտի հզօրագոյն վերականգնման:

Որպէս հոգեւոր վերադէտ, առաջնակարգ պարտականութիւնն ունինք Սուրբ Սթոռոյս միաբանակից իւրաքանչիւր կարգի եւ աստիճանի բոլոր հոգեւոր հայրերուն, եղբայրներուն եւ քոյրերուն, յիշեցնելու իրենց ձեռնադրութեան ուխտը, զոր կատարեցին առաջի Աստուծոյ վկայութեամբ մեր ժողովրդին: Հնազանդութիւն աստուածային օրէնքներու, եկեղեցական կարգկանոններու եւ մեծաւորներու պատուէրներուն, կամաւոր աղքատութիւն ընչաքաղցութեան եւ արծաթսիրութեան մերժման ամենանախնական իմաստով եւ ողջախոհութիւն մաքրակրօն, սրբասէր եւ ժուժկալ կենցաղի առումով, ե՛ն եւ կը մնան աւետարանական հրամայականներ բոլո՛ր քրիստոսասէր հաւատացեալներուն եւ որչա՛փ աւելի եւս հոգեւորականներուս համար: Պաշտամունքային ժամերու կանոնաւոր հետեւողութիւն եւ կատարում մինչեւ իսկ երբ առանձինն եւ մենակ ենք, Աստուածաշունչ Մատեանի եւ սուրբ հայրերու սրբատառ գրականութեան ընթերցասիրութիւն, հոգեւոր խոկմունքի եւ մտահայեցողութեան պահերու յաճախադիպութիւն կը սատարեն, որպէսզի մնանք անկեղծ, նուիրեալ եւ ծառայասէր սպասաւորութեանը մէջ մեր մարտիրոս եկեղեցւոյ, որ հոգեւոր մարմինն է մեր երկնաւոր Քահանայապե-

տին: Մեր ճշմարիտ, բարի եւ քաջ Հովուապետը համբերեց Խաչի չարչարանքներուն եւ մահուան՝ մեր մեղքերու քաւութեան եւ թողութեան համար, քաղուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ մեռելներէն, համբարձաւ երկինք եւ այժմ կը շարունակէ քահանայագործել մեր փրկութեան համար: Իր ցայժմ կատարածներուն խորագգած գիտակցութեամբ եւ Իր միւսանգամ Գալստեան կատարելիքներուն յուսապարար սպասումով տոգորեալ՝ պիտի շարունակենք մեր հոգեւոր ծառայութիւնը ի շինութիւն մեր հաւատացեալ ժողովրդին եւ ի փառս Բարձրեալն Աստուծոյ: Սիրելիներ, Տէր Աստուած հոգեւոր քաղցրութեան, եղբայրսիրութեան եւ ուղղափառ հաւատքի մէջ պահէ եւ օրհնութեամբ ամրացնէ ձեզ, թող ձեր մտքերն ու զգայարանները, ձեր սրտերն ու խորհուրդները, ձեր խօսքն ու գործքը ծաղկազարդէ շնորհափայլութեամբ, հեղլով ձեր վրայ եօթնազան պայծառութեամբ լուսաճառագ շնորհները Իր Սուրբ Հոգիին: Հոգեզուարճ հրճուանքով զմայլեցէք, խայտալից բերկրանքով ցնծացէք, անսպառ ուրախութիւնը ճաշակեցէք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ քաղցրահամ եւ ուղղափառ ժառանգութեան, որուն ցկեանս ուխտաւորները լինելու պատուին անարժանաբար կոչուած ենք բոլորս ալ: Իսկ մեր հաւատացեալներուն հայրաբար կը յորդորենք զգոյշ լինիլ հոգեւոր պաշտօնեաներու եւ առաջնորդներու ընտրութեան մէջ, եւ որդիական ակնածանքով եւ մեծարանքով վերաբերուիլ անոնց հետ, քանք չխնայել եւ երկիւղածութեամբ պաղատիլ Աստուծոյ, որ հետզհետէ բազմանան արժանաւոր հոգեւոր մշակները, ինչպէս որ կը պատուիրէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասելով. «Աղաչեցէք զՏէր հնձոց՝ զի հանցէ մշակս ի հունձս իւր» /Մատթ. Թ 38/:

Դպրա՛ց դասեր, եղէք ոչ միայն երգչախումբեր, այլ նաեւ եղբայրական համախմբումներ՝ աշակերտելու հոգեւոր դպրութեան, կանոնական եւ դաւանական գրականութեան, ինչպէս երբեմնի առաքեալները նստեր էին Գալիլիացի Մեծ Վարդապետի ծունկին, այնպէս եւ դուք հաւաքուեցէք ձեր հովիւներուն շուրջ, ճաշակեցէ՛ք Աստուծոյ խօսքին քաղցրութիւնը, մեր հայրերու հոգեւոր աննման գանձերը: Թափանցեցէ՛ք իմաստին եւ ձեր սրտերու ամենատաքուկ անկիւններուն տեղ բացէք այն հիանալի երգերու եւ շարականներու մէն մի բառին զոր կ'եղանակէք ձեր շրթներով: Ձեր հովիւներու աջակցութեամբ հո՛գ տարէք նորահաս սերունդին, զբաղեցէք մանուկ եւ պատանի դպիրներ հասցնելու կենսական առաքելութեամբ: Աշխատեցէ՛ք, որ ձեր այնքան սիրած հոգեւոր գանձերը երգուին նաեւ ձեզմէ յետոյ: Լուսաւոր, շէն, պայծառ եւ հաւատացեալներու այցելութեան միշտ բաց պահեցէք մեր տաճարները, որոնց մէջ հոգ տանիլ անհրաժեշտ է, որպէսզի տիրէ աղօթքի, երկիւղի, խաղաղութեան, լրջութեան եւ սրբութեան մթնոլորտը: Եւ Ամենակարողն Աստուած, որ Իր Որդիին՝ Քրիստոսի միջոցաւ լուսաւորեց աշխարհն ու ազատեց մեզ մեղքի անէծքէն եւ հոգեւոր մահէն, թող անսպառ պահէ ձեր ծայները, հաստատէ ձեր սրտերը Իր երկիւղին մէջ, լուսաւորէ ձեզ Իր իմաստութեան լուսով, որպէսզի ժամանէք անանց կեանքին, ուր պիտի երգակցիք զուարթուններուն՝ յաւերժ սրբաբանութեամբ:

Ուսուցիչներ, նուազ կարեւոր չէ ձեր դերը մեր ժողովուրդի ոգեկան շինութեան եւ կերպաւորման. Հայ Քրիստոնեայ դիմագծի պահպանութեան. մեր ոսկեղինիկ լեզուի եւ մեսրոպեան սուրբ տառերու նոր սերունդներու փոխանցման. Հայ Մշակոյթի պահպանման եւ զարգացման անյետաձգելի առաքելութեանց ծիրերէն ներս՝ որոնց մէջ, ըստ Մեզի, ունիք եւ պարտաւոր էք ունենալու կենսական ներդրում: Կոչում եւ սրբազան պաշտօն է ձերինը, զոր միշտ մերժած ենք ընդունիլ լոկ որպէս եկամտաբեր ապրուստի միջոց: Այնքան անփոխարինելի է ձեր առաքելութիւնը, որ հոգեւոր սպասաւորներու նման, ցկեանս ուխտաւորները պիտի լինիք ազգային դպրութեան, երբեմն նեղութիւններու պիտի ստիպողաբար համբերէք նաեւ դուք, սակայն ձեր բարոյական վարձատրութիւնը վստահ եղէք, որ միշտ պիտի գերազանցէ ձեր կեանքի բոլոր օրերուն ընթացքին, յատկապէս երբ ականատես կ'ըլլաք, որ աշակերտներու նորանոր սերունդներ կը խօսին եւ կ'աղօթեն մեր լեզուով, կ'օգտագործեն մեր տառերը, կ'երգեն եւ կը պարեն մեր տոհմաշունչ մեղեդիներով: Հայկական դպրութեանց բազմերախտ հիմնարկուներ Սուրբ Սահակ Հայրապետի եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի եւ Թարգմանիչ Սուրբ Վարդապետներու հոյլին արժանահայաց աղօթքներով եւ բարեխօսութեամբ, Տէր Աստուած թող զօրացնէ, ամրացնէ եւ հաստատէ ձեզ ուսուցչական ձեր կոչումին մէջ եւ թող տեսիլք շնորհէ ձեզի, որպէսզի տոկաք եւ համբերէք նեղութիւններու, բարձր պահէք ձեր ազնիւ եւ ներշնչող դիմագիծը դեռատի սերունդին առջեւ, որու ներաշխարհին մէջ այնքա՜ն խոր ազդեցութիւն կը թողու ձեր մէն մի խօսքն ու շարժումը:

Մեր եկեղեցւոյ եւ եկեղեցական համայնքներու վարչական զանազան մակարդակներուն վրայ, ընտրութեամբ կամ նշանակովի պաշտօնի կոչուած աշխարհականներուն ալ հայրաբար խրատներ պիտի ունենանք: Նախեւառաջ, սա յստակ լինի բոլորին. դուք կոչուած չէք աշխարհիկ եւ քաղաքական պաշտօնավարութեան, այլ առաւելաբար ընտրուած էք խնամածելու եւ զարգացնելու այն աւանդը, զոր մեր եկեղեցասէր եւ ազգանուէր նախնիք մեծագոյն զոհողութիւններով փոխանցած են մեզի: Բարեպաշտ հասարակութիւնը ընտրութեամբ կոչած է ձեզ վարչական պարտականութեան՝ ի՛ր իսկ անունով ղեկավարելու մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ անոր յարակից կրթական եւ մշակութային, առողջական եւ բարեսիրական հաստատութեանց տնտեսութիւնը եւ ապահովելու աշխարհավարական ներքին եւ արտաքին գործառնութեանց անխափան եւ ապահով ընթացքը: Մեր կրօնա-եկեղեցական համայնքային կեանքի սոյն ոլորտի ժրաջան եւ ազնիւ բոլոր մշակներուն կը փոխանցենք մեր հայրական օրհնութիւնը եւ զօրակցութիւնը: Գալով անոնց, որ կը շեղին եւ դուրս կու գան իրենց պարտականութիւններու ծիրէն եւ իրենց վստահուած վարչական հանգամանքը կը չարաշահին, հայրաբար կը հրաւիրենք ողջմտութեան եւ սթափութեան: Իսկ համայնքներու մէջ կեդրոնախոյս եւ անջատողական հոսանքներու աւերիչ եւ դաւադիր ճամբան բացողները, նուիրապետական իշխանութեան դէմ ճակատ յարդարողները լրջօրէն կը զգուշացնենք, որ եթէ չդառնան իրենց չար ճանապարհէն եւ չհայցեն ներո-

դամտութիւնը Սուրբ եկեղեցւոյ, յաւէտ պիտի զրկուին աստուածային օրհնութենէն եւ հոգիի խաղաղութենէն:

Բարձրօրէն կը գնահատենք Հայ գրի եւ գրքի համար աշխատանք տանողները, Հայ մամլոյ խմբագիրներն ու աշխատակիցները, հրատարակչատուներու եւ տպարաններու անձնակազմերը, որոնք տիւ ու գիշեր իրենց կարելին կ'ընեն Հայ գիրն ու արուեստը ապրեցնելու, մեր ժողովուրդը լուսաբանելու եւ այսպիսով կը դառնան համայնքային կեանքի աշխուժացման լծակ: Աւելորդ չենք նկատեր մեր մամլոյ խմբագիրներուն անգամ մը եւս յիշեցնելու Մեր երանաշնորհ նախորդներէն Տրապիզոնի Գարեգին Ա Պատրիարքի պատգամը. «Քննութիւնն ու քննադատութիւնը կը կորսնցնեն իրենց արժէքն ու իրաւունքը, ինչպէս նաեւ ագդեցութիւնն ի բարին եւ ի ճշմարիտը, երբ չեն ներշնչուած քափանցուած բուն իրողութիւններէն, այլ առաջնորդուած են երեւակայութիւններէ, կանխակալ կարծիքներէ, սեւեռամտածումներէ եւ մերթ ալ անխոստովանելի նկատումներէ: Ասոնք ոչ միայն չեն շիներ, այլ եւ կը քանդեն»: Արդարեւ ահաւոր է մամուլի պատասխանատուութիւնը: Մենք հայրաբար կ'օրհնենք մեր մամլոյ բոլոր այն աշխատակիցները, որոնց գրիչները կը սպասարկեն բարիին, գեղեցիկին, ճշմարտութեան եւ շինութեան:

Հետեւեալ պատուէրներն ունինք բոլորին: Յիշեցէք, որ ըստ Առաքեալի՝ տաճար էք Աստուծոյ եւ Աստուծոյ Հոգին կը բնակի ձեր մէջ Սուրբ Աւազանի մկրտութեամբ, ուստի հեռու մնացէք մեղքերէ եւ հոգեկործան մոլութիւններէ եւ ձեր հոգիները զարդարեցէք առաքինութեան գործերով: Ինչպէս միշտ, նաեւ այսօր հաւատարմօրէն կատարեցէք ձեր քաղաքացիական բոլոր պարտականութիւնները, միաժամանակ գիտակից եղէք ձեր իրաւանց եւ արժանապատուութեան: Բծախնդիր եղէք ընտանեկան յարկի սրբութեան, հեռու վանեցէք ձեզմէ մեր քրիստոնէական ինքնութեան եւ տոհմիկ նկարագրին անվայել եւ օտարոտի խորհուրդները եւ ջերմօրէն պահպանեցէք այն օրհնութիւնը, զոր ստացաք Սուրբ Պսակի աստուածային խորհրդով: Ձեր զաւակները սնուցանեցէք Աստուծոյ երկիւղով, աղօթասիրութեամբ եւ ողորմածութեամբ. հետամուտ եղէք, որ անոնք լինին պարկեշտ, եկեղեցանուէր եւ հայրենասէր: Իրարու նկատմամբ մնացէք սիրով եւ յարգալից: Աղքատներու, որբերու, հիւանդներու եւ տառապեալներու իրաւունքները անտես մի՛ առնէք, եղէք կարեկից եւ ողորմած, քանզի ոչ մէկ բան մեզ կրնայ աւելի աստուածանման դարձնել քան ողորմութեան գործերը: Արդարեւ գնահատելի է մեր ժողովուրդը, որ ամէն առիթով ջանադրաբար կը սատարէ համայնքային եւ բարեսիրական մեր բոլոր հաստատութիւններուն, չէն պահելով զանոնք ի փառս Աստուծոյ եւ ի վայելումն մերազգ ժողովրդին:

Յաւարտ կոնդակիս, ակնածանքով եւ յարգանքով կը խոնարհինք մեր երանաշնորհ նախորդներու հոգեւոր ժառանգութեան, ի մասնաւորի Մեր հոգեւոր ծնողի՝ Շնորհք Պատրիարքի սրբալոյս յիշատակին առջեւ: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ մեզ առաջնորդէ եւ զօրացնէ՝ արդիւնաւորելու եւ

մշակելու մեր տեսչութեան վստահուած տիրախնամ վիճակը Հայաստանեայց Առաքելական Սուրբ եւ Ուղղափառ Եկեղեցւոյ անխախտ միութեան մէջ: Եղբայրական ջերմագին ողջոյններ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Նախամեծար եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանակից բոլոր հայրերուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Առաքելագործ Հայրապետին եւ Միաբանութեան, Ս. Երուսաղէմի Շնորհազարդ Պատրիարքին եւ Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռի միաբանակից բոլոր հայրերուն, եւ իրենց վիճակներուն:

Ողջ լերուք ի խնամս Տեառն, «եւ Աստուած ամենայն շնորհաց, որ կոչեաց զձեզ յիւր ի յաւիտենական ի փառսն Քրիստոսիւ Յիսուսի, որում փոքր մի եղերուք չարչարակիցք. Նա կազդուրեսցէ, կարողացուսցէ, հաստատիմն արասցէ զձեզ: Նմա իշխանութիւն եւ փառք յաւիտեանս: Ամէն: (Ս. Պետրոս Ե. 10):

ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔ

ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Տուաւ կոնդակս ի 14-ն Օգոստոսի,
յամի Տեառն 1999 եւ ի թուին Հայոց ՌՆԽԸ
ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին
Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ
ընդ համարաւ Ա/1

ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԺԸ դարի երկրորդ կեսից սկսած, Հայ Եկեղեցին ներկայացուցչական բացառիկ լիազորություններով օժտեց իր սպասավորներին, ովքեր նվիրակի հանգամանքով շրջելով աշխարհով մեկ սփռված հայության մեջ, իրականացնում էին ոչ միայն Եկեղեցու փրկագործական առաքելությունը, այլև հեռապնդում ազգային ինքնությունն անեղծ պահելու նպատակ: Դուրս գալով Ս. Էջմիածնից՝ նվիրակներն իրենց հետ տանում էին Արարատյան աշխարհում բռնությունների տակ կքած ու ճնշված հայ ժողովրդի հառաչանքը, ինչը փոխանցելով օտար ափերում ապաստանած հայերին, հորդորում էին գորավիգ լինել հայրենի երկրի հայությանը, ջերմ ու անկեղծ զգացումներով լցվել դեպի հարազատ բնօրրանը:

Մինչև ԺԸ դարի կեսերը նվիրակության վերաբերյալ մեզ հասած փեղեկությունները, չափազանց աղքատիկ լինելով հանդերձ, որոշ թույլ պատկերացում տալիս են եկեղեցական այս կարևորագույն կառույցի նախնական գոյության վերաբերյալ: Այս մասին առաջին անգամ հիշատակում է Սրբեփանոս Օրբելյանը: Համաձայն Սյունյաց տան պատմիչի, Կիլիկիայում գահակալած Գրիգոր Անավարզեցի Կաթողիկոսի օրոք (1293-1307) Արևելյան Հայաստան է եկել Կոստանդին վարդապետը, ում Կաթողիկոսի կողմից նվիրակի կարգավիճակ էր շնորհվել: Սրբեփանոս Օրբելյանի հիշատակությունը հետևյալն է. «*Իսկ մեք հանապազ աղեցաւ և լիրդահոց լինելով ի վերայ այսր ամենայնի՝ հաշեալ մաշէաք ծիսական իւորհրդովք ի պուէ և ի գիշերի. և ոչ գոյր տեղի յուսոյ կամ ապաստանի, զի սակաւ մի ախոյեան առից ընդդէմ կալ հոգևոր մարտին: Երկնչէաք եթէ յաւուրս մեր զարթնու չարն ի պատերազմ ընդ եկեղեցւոյ. և յարուցանէ մրրիկ խռովութեան ի մէջ մեր. և ընթադրեալ կործանէ զսիևիթքոր մնացուած ազգիս. յաղագս որոյ ւպատճառանաց ի գալ նուիրակի նորա Կոստանդեայ՝ եպիսկոպոսին Կեսարու. միաբան խորհրդով եպիսկոպոսաց աշխարհիս և իշխանաց գրեցաք մեք թուղթ մաղթանաց, նաև ողջամիտ հաւատոյ և կարգաց Հայաստանեաց եկեղեցւոյ առ կաթողիկոսն մեր Տէր Գրիգոր ոչ հիվանդանալ անողջանալի ցաւօք, որ իբր զքաղցկեղ ճարակէ յակաս թօթափել զհաւատարակ անդամս եկեղեցւոյ. զոր և նուիրակին*

այն գիտելով զանձանց վէրս՝ ոչ կարէր յանձն առնուլ գրարոումն թղթոյն բաղբաղելով պատճառանս ինչ»[1]:

Կռնստանդին նվիրակի գործունեության մանրամասները թեև լուսաբանված չեն վկայակոչության մեջ, սակայն նրա՝ Կիլիկիայի Կաթողիկոսության նստավայրից Արևելյան Հայաստան գործուղվելու իրողությունն արդեն իսկ խոսում է Հայ Եկեղեցու մեջ կիրառվել սկսվող այն գործընթացի մասին, որ գերագույն իշխանությունը եկեղեցական վարչության միավորների՝ թեմերի հետ հարաբերվում էր նաև նվիրակի միջոցով:

Պատմական մեկ ուրիշ աղբյուրից տեղեկանում ենք, որ Մովսես Տաթևացի Կաթողիկոսի օրոք նվիրակներ են առաքվել տարբեր տեղեր: Այս նվիրակների առաքման նպատակի մեջ արդեն որոշ չափով պարզաբանվում է նվիրակության գործառնական իրավասությունը:

Համաձայն Առաքել Դավրիժեցու հաղորդած տեղեկության, Մովսես վարդապետը, Կաթողիկոս դառնալուց հետո, ձեռնամուխ է լինում Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքներին և իր աշակերտներից շատերին ուղարկում նվիրակության: «*Առաքեաց [...] ի նուիրակութիւն,*- գրում է Առ. Դավրիժեցին,- *զի բերցեն ինչս յօժանդակութիւն նորոգման սուրբ Աթոռոյն Էջմիածնի*»[2]:

Հատկանշական է, որ նվիրակների առջև բացառապես դրամ հավաքելու խնդիր չի դրվում: Այս հանգամանքը կրկին ու կրկին առնչակցվում է Հայ Եկեղեցու հավաքած կամավոր նվիրատվությունների սկզբունքայնությանը: Իսկ այս սկզբունքը պարտադիր դրամահավաքության գործողություն չէր ներառնում: Հավատացյալն ազատ էր Մայր Եկեղեցուն տալու այնպիսի նվեր և այնքան քանակությամբ, որքան ինքը կցանկանար: Ահա այս իրողությունն է նվիրակության եզրի ստուգաբանման բանալին: Անտարակուսելիորեն **նվիրակ** բառը առաջացել է հայ հոգևորականների կամավոր նվիրատվություններ ժողովելու իրողության հիմքի վրա: Սակայն հոգևոր գործունեության մեջ նախնականորեն դրսևորված այս գործառույթը աստիճանաբար զարգացվելով, սկսել է եզրաբանական հատուկ իմաստ՝ մատնանշելով հայ եկեղեցական կառույցում ձևավորված հատուկ երևույթ: Հայ եկեղեցական իրականության մեջ նվիրակի հանգամանք էր հաղորդվում եպիսկոպոսի կամ վարդապետի աստիճան ունեցող հոգևորականներին, որոնց ուղեկցում և ծառայության մեջ օժանդակում էին մեկ կամ մի քանի ցածր աստիճան ունեցող սպասավորներ: Նվիրակների հանգամանքն ու գործունեության ծավալման վայրերը վավերացվում էին Կաթողիկոսական հատուկ կոնդակով, մի փաստաթուղթ, որը նվիրակի գործունեության կանոնականության գլխավորագույն տարբերանշանն էր:

---

[1] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 448-449:

[2] Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, Երևան, 1990, էջ 209:

Կաթողիկոսական բարձրագույն հրահանգով նվիրակության մեկնած շատ հոգևորականներ, որոնք ունեին իրենց սրբազան առաքելության բարձր գիտակցությունը և բարոյական փորձառության հարուստ պաշար, օրնիբուն փքնությամբ նվաճում էին հեռաբնակ հայերի համակրանքը և այն ծառայեցնում հայության միավորման մղումների շրջագծում Մայր Աթոռի պայծառությանը:

ԺԷ դարի սկզբներին նվիրումի ու զոհողության փիպար այսպիսի երեք նվիրակներ են առաքվում Բյուզանդիոն: Այս հոգևորականները՝ Հովհաննես եպիսկոպոսը, Սարգիս եպիսկոպոսը և Դավիթ աբեղան, բոտն ու եռանդուն գործունեությամբ են աչքի ընկնում թուրքահպատակ հայերի մեջ: Նրանք խանդավառ հայրենասիրության ու եկեղեցասիրության են կոչում տեղի հայերին և «*խոսքն ի գործ*» նպաստում ազգային գիտակցության զորացմանը: Սակայն նվիրակ հոգևորականները ծառայության ընթացքում նահատակվում են՝ ուժգին տպավորություն գործելով կայսրության մայրաքաղաքում բնակություն հաստատած հայերի վրա: Հեղագայում բյուզանդահայերը չափածո մի գողտրիկ ստեղծագործությունում մեծարում ու փառաբանում են «*սրբոց նմաև*» երեք հոգևոր սպասավորներին: Ներկայացնենք մի հատված այդ պատումից.

«Ինչն հարիւր հայոց թուական,
Յիսուն և հինգ թիւ աւելեան,
Էջմիածնէն նուիրակք եկան,
Բոլոր աշխարհս հոռոմոց տան:

Յոյով մեռոն կայ ընդ ինքեան,
Մեծ նամակով և օրհնութեամբ,
Եկեալ հասին Բիւզանդիան,
Որ է Սպտանպօլ, սրբոց կայան:

Անուանք նոցա հաւքրաւեցան,
Սուրբ օրհնութիւնք, որ կարդացուան,
Եկեղեցիք բեռկրեալք ցնծան,
Եւ ժողովուրդս, որ օրհնեցան:

Դիւրեր եկին մեզ աննըման,
Ջինչ հրեշտակք Աբրահամեան,
Ինց սպտանպօլցիք զնոսա տեսան,
Տեառն Աստուծոյ շատ գոհացան»[3]:

[3] Խ. Կանայան, Էջմիածնի նվիրակությունը ԺԸ դարում, «Էջմիածին», 1977, Բ, էջ 52-53:

Բանասրեղծության տողերն ակնհայտ գնահատանք են պարունակում հանդեպ նվիրակների գործունեությունը, ինչը հիմք է տալիս այն ենթադրության, թե նվիրակները բավականաչափ լայն ճանաչում էին գտել հայկական գաղթօջախներում արդեն ԺԷ դարի սկզբներին և ունեին բավականին բարձր հեղինակություն:

Նվիրակությունը լայն ծավալ էր ստացել նաև Լեհաստանում բնակված հայության մեջ: Սակայն նվիրակի հաջողություններով ցնծացող հայորդուց տպավորիչ հայացքով են դիտում նվիրակությունը, օրինակ, Լվովբերգում գտնվող կաթոլիկ պատերները:

«Եկեղեցականք հայոց,- գրում են նրանք, - *ոչ ունին իրեանց ապացուածս, այլ կեան պրիւք ժողովրդեանն. նաև ինքն կաթողիկոսն գրնա թէ ամի ամի առաքէ ի գաւառսն, որ ընդ իւրն՝ ապա նուիրակս ժողովել նուէրս և ի վաճառել զմիւռոնն: Զորս ոչ կամովին գայցենն իր նուիրապետութիւն կամ յանձինս գրաւիցեն գիաւս կաթողիկոսին՝ սրիպեն զնոսա ապառնալեօք նզովից, և բոնի հանեն ի բաց իրս, զորս ոչ կան նորա»*[4]:

Հայոց Եկեղեցու հավատացյալների հավատափոխությունը նախապատրաստող կաթոլիկ Եկեղեցու քրամադրությունն արտահայտող հոգևորականը հայտնելով նվիրակության վերաբերյալ իր խիստ սուբյեկտիվ և որևէ քրամաբանական հիմք ջունեցող կարծիքը, ակամա հաստատել է մի փաստ, որ կաթոլիկները Լեհաստանի հայերին դավանափոխելու ճանապարհին լուրջ խոչընդոտներ էին գտնում իրենց առջև՝ հանձին նվիրակների նախանձախնդրության: Իսկ ինչ վերաբերում է նվիրակությունը բոնության ենթ գուգակցելու մասին պատերի հաղորդած տեղեկությանը, ապա բնական մտածողության սահմաններում հազիվ թե տեղավորվի այն գաղափարը, թե Էջմիածնից առաքված հայ հոգևորականը հնարավորություն ուներ հարկադրանքի միջոցով տուրքեր հավաքել: Եթե նվիրակն այսպիսի պարտադրանքի առջև էր կանգնեցնում հավատացյալին, ապա միմիայն շնորհիվ Հայ Եկեղեցուց բխած բարոյական հեղինակության և այդ հեղինակությունը փոխանցողի իր արժանիքների: Հակառակ ընդհանրական կոչվելու հավակնություն ունեցող Եկեղեցու սպասավորների հերյուրանքների, պատմական մի վավերագրում հստակորեն ընդգծվում է նվիրապվություններ ընդունելու ողջ բարոյական հիմքը: Նվիրակությունն այստեղ ներկայանում է որպես միջնորդավորող օղակ Ծնող-Եկեղեցու և որդի-հավատացյալի միջև: *«Պաշտօն նուիրակաց է՝ ընդունիլ շնորհակալութեամբ և օրհնութեամբ զնուէրս և զընծայս, զորս ջերմեռանդութեամբ սիրոյ որդիութեան իրեանց՝ յանուն յուսածին ծնողի*

---

[4] Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում (1800-1900), հտ. Ա, Քագու, 1913, էջ 87:

իւրեանց սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, կամ ի վայելս անձին իւր իսկ նուիրակն, նուիրել ունիցին ի ձեռս իւրեանց. հարուստք և աղքատք ծնունդք հարազատք սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի ծնողաւէր և Աստուածաւէր ազգին մեր հայոց»[5]:

Փաստաթղթի հեղինակը Եկեղեցու և հոտի միջև կապը ներկայացնում է ամենամտերիմ մերձակցական հարաբերության մեջ, ինչն այլևս բաց տարածք չի թողնում նվիրատվությունները բռնությամբ զուգորդելու համար: Ընդհակառակը, նվիրակներն իրենց գործունեությունը համեմում էին նվիրակության անկապտելի մաս կազմող մեռոնաբաշխությամբ: Սրբալույս մեռոնը Կաթողիկոսի գերագահության մեծագույն խորհրդանիշն է: Այս նկատառումով նվիրակներն իրենց հետ օտար ափերում հանգրվանած հայության սփյուռ զանգվածներին էին տանում մեռոնը: Մեռոնաբաշխությանը զուգընթաց, նրանք պարտավորություն ունեին ներկայացնելու այդ անուշահոտ հեղուկի խորհրդանշած հաստատության՝ Մայր Աթոռի կացությունը: Այս զուգորդումն այսպես է նկարագրվում վերը հիշված փաստաթղթում. «...[Նվիրակը պարտավոր է պատմել] *զողջութեանէ և զշինութեանէ մօրն յուսոյ՝ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի ... բաշխել երկանց սուրբ ծննդեան նորա զմեռոնն սրբալոյս, որ է իմանալի ամենամաքուր կաթն սրեանց երկնաւոր և անախտ ծնողութեանն իւրոյ, պարգև մայրենի իւրոց զաւակաց*»[6]:

Սակայն այս ծրագիրը ոչ միշտ էր կյանքի կոչվում: Պատահում էր, որ Մայր Աթոռից դուրս էին գալիս այնպիսի նվիրակներ, ովքեր ոչ միայն վնաս էին հասցնում Ս. Էջմիածնի նյութական հիմքին, այլև ուղղակիորեն հարվածում Եկեղեցու գոյատևման կենսական ակունքին՝ նրա բարոյական դիմագծին: Մայր Աթոռից այսպիսի նվիրակներ «թղթարկվել» են հատկապես փխրահոչակ Մելքիսեթ Կաթողիկոսի օրոք, երբ Հովվապետն ինքն իր արարքներով խրախուսում էր նվիրակների կողմից թույլ տրված սանձարձակությունները: Մայր Աթոռում փիրող բարձիթողի և համատարած անտարբերությամբ պայմանավորված իրավիճակը նպաստավոր պայմաններ էին ստեղծել արատավոր հակումների ազատ ծլարձակման համար: Անձեռնական բարեկեցությանը և շահատակությունների հեփամուփ շատ հոգևորականներ, շահարկելով նվիրակության նկատմամբ ձևավորված համազգային հարգանքը, նյութական հարստություն էին դիզում: Իրավիճակի այս մռայլության մեջ, սակայն, կային դեռևս Եկեղեցու սպասավորներ, ովքեր գտնվում էին իրենց բարձրության վրա: Վառպուրականում, օրինակ, դեռևս ամեն ինչ չէր նյութականացվել, և տեղի հոգևորականները ժողովրդի ներկայացուցիչների հետ համատեղ մի բողոքագիր են հղում Մելքիսեթին: Ի

---

[5] Դիվան, հտր. Գ. Թիֆլիս, 1894, էջ 806:

[6] Նույն տեղում:

թիվս այլևայլ մեղադրանքների՝ Կաթողիկոսին ներկայացվում է նաև հետևյալը. «*Եւ երկրորդ անկարգութիւն այն է որ թէ յինչ երկիր որ հեդնյալը. «Եւ երկրորդ անկարգութիւն այն է որ թէ յինչ երկիր որ նուիրակ յուղարկես՝ նա կու ընդրես՝ յորոնէ որ չար և յիրք. անգգամ, անամօթ և ամբարտաւան մի կայ, որ ոչ յԱստուծոյ երկնչի և ոչ ի մարդկանէ ամաչէ. զայնպիսիքն կու առաքեւ, որ զարդարեալ զաբար խրոխտական. և բազում ցոփութեամբ զաշխարհս վրդովեն:*

Գրոց ամենեին անտեղեակ են և օրինաց բնաւին անծանօթ. և բոլորովիմբ ոչ ճանաչեն հաւատս քրիստոնէութեան թէ զինչ է: Զարդարն և զանմեղն դատապարտեն վասն ընչից, և զանիրաւն իրաւացուցանեն վասն կաշառաց. և ազգապղծութեան հրամանս տան վասն արծաթոյ: Գիտեմք թէ սոքա քնչ կու հասուցանեն ի Սուրբ Աթոռ ի ձեռս վեհիդ, զի վասն ազահութեան իւրեանց շրջին և ոչ վասն օգտի սուրբ տանդ, զի զինչ որ ժողովեն, ի գինս այնպիսի երևելի հանդերձի տան, որ ոչ վայելէ քրիստոնէի և ոչ իշխանի, թող թէ կարգաւորի... Շրջին իբրև զբոնաւորս և պճնին, և ի կերակուրս և յըմպելիս ծախեն զժողովեալսն իւրեանց՝ յորով կաշառս տան բոնաւորաց և բազում տուգանս այլազգաց վասն հակառակաւէր բարուց իւրեանց, վասն որոյ Ազգս Հայոց տապրկացեալ է ի գարշահոտութենէ վարուցն այսպիսեացս»[7]:

Քարեբախտաբար վասպուրականցիների բողոքը, որը բխում էր ազգային Եկեղեցին փրկելու մտահոգությունից, հետագայում ունենում է իր նախանձախնդիր ու համառ արտահայտիչները, ովքեր ոգի ի բռի մարտնչում են լուսավորչահիմն հաստության անաղարտ պահպանման ու բարեկարգման համար:

ԺԸ դարից սկսյալ, քաղաքական թոհուբոհի մեջ բզկտված Հայ Եկեղեցին աշխուժացնելու ու կենսավորելու փորձերն ու ջանքերը նոր փուլ են թևակոխում: Նվիրակությունը, որն արդեն հավաստել էր իր կարողությունը Եկեղեցու նյութական հիմքերը կայունացնելու ուղղությամբ, սկսեց առավել սևեռուն հայացքի արժանանալ Ամենայն Հայոց Կաթողիկոսների կողմից: Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի գահակալման շրջանում (1737-1751), Հայրապետի ձեռնհասության շնորհիվ, օսմանյան իշխանություններից ձեռք է բերվում չափազանց կարևոր մի փերման: Հրովարտակով օսմանյան կառավարությունը, որոշ ազատությունների հետ, Կաթողիկոսական նվիրակների վերաբերյալ հրահանգում է թուրք պաշտոնյաներին, որպեսզի «*մի ինչ պահանջեսցեն ի նուիրակացն Աթոռոյ*»[8]:

---

[7] Լեո, Հայկական տպագրություն, հտ. Ա, Թիֆլիս, 1904, էջ 145-146:

[8] Սիմեոն Կաթողիկոս, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 238-39:

Հակոբ Շամախեցի Կաթողիկոսը (1759-63) նմանօրինակ մի արտոնագիր է սպանում պարսկական տերությունից: Նրա դիմելով Երևանի Ալի Հուսեին խանը նվիրակներին արտոնում է ազատ շրջագայել պարսից պետության սահմաններում միաժամանակ մաքսային պարտավորությունների մեջ ունենալ որոշ արտոնություններ[9]:

Պետական մակարդակներում Կաթողիկոսների ձեռք բերած հաջողությունները զուգակցվում էին նվիրակության ինստիտուտի կարգավորման հետ: Աստիճանաբար կանոնավոր կերպարանք են սպանում նվիրակների հավաքած կամավոր տուրքերը: Խորքում այդ տուրքերը թեև շարունակում էին մնալ իբրև բարոյական հողի վրա տրված օժանդակություններ, սակայն այն, որ դրանք որոշակիացված ավանդության ուժով օրենքի կիրառություն էին սպացել, նույպես չպետք է ժխտել:

Մեսրոպ Թադիաղյանի վկայությամբ նվիրակները հավաքում էին հետևյալ տուրքերը.

1. Երեք տարին մեկ անգամ ամեն մի շնչից 40 փարա:
2. Քառասնից. ողորմություն, որը տրվում էր ննջեցյալի մահվան քառասուներորդ օրը և կամ նույնիսկ քառասուներորդ տարելիցին:
3. Հիշատակի համար տրվող արծաթե կամ ոսկե իրեր և սպասքներ, որոնց վրա գրվում էին նվիրատուների անունները և ուղղարկվում Էջմիածին:
4. Խոստմունք. որևէ խոստացված նվեր:
5. Հոգեբաժին. մեկ այլ տուրք մահացածի հոգու հանգստության համար:
6. Խաչհամբույր. տրվում էր նվիրակին, որպեսզի նա նվիրատուի փոխարեն համբուրի Ս. Իջման տեղը:
7. Աջհամբույր. նվիրատուի փոխարեն Հայրապետի աջը համբուրելու համար*:
8. Մատաղ. ոչխար, եզ կամ դրանց համարժեքը՝ Ս. Էջմիածնի միաբանության համար:
9. Գավազանապտուղ. տուրք, որը տրվում էր նվիրակին՝ քարոզի ժամանակ ձեռքում գավազան բռնելու համար:
10. Փոքրավորք. տրվում էր նվիրակի սպասավորին:
11. Ժամուց. այս տուրքը երկու կարգի էր՝ հասնում էր և՛ Կաթողիկոսին, և՛ նվիրակին՝ վերջինիս Պարսկաստան մեկնելուց հետո:
12. Պաշտոնեից. ընդհանրապես տրվում էր եկեղեցական ողջ դասին[10]:

---

[9] Անդ, էջ 233:

* Կաթողիկոսին առաքված աջհամբույրին հետևում էր Կաթողիկոսական օրհնագիրը, որով նվիրատուին շնորհակալություն էր հայտնվում և տեղեկացվում, որ ընծան հասել է: Պարտնական վերջին տեղեկության համար Կաթողիկոսական օրհնագիրը բնորոշվել է «Էկաւ հասաւ» արտահայտությամբ:

[10] Մ. Թադիաղյան, Գրական ժառանգություն, հտ. 9, Երևան, 1975, էջ 137–138:

Կամավոր տուրքերի հավաքման համար նվիրակներն ունեին որոշ առանձնաշնորհումներ՝ կապված բուն նվիրակությունից բխած հատկանիշների հետ: Ի տարբերություն մյուս հոգևորականների, Կաթողիկոսական կոնդակով չափազանց բարձր հեղինակություն էր հաղորդվում նրանց: Նվիրակները ի պաշտոնե կոչված էին հայկական գաղթավայրերում ներկայացնելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այս մասին հիշատակվում է Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի «Հիշատակարան»-ում ամփոփված մի փաստաթղթում: «*...զի ըստ որում իրիւանակ Քահանայապետի են,*- ասվում է այնտեղ,- *որպէս և գրեալն է ի կոնդակն նուիրակական, զորօրինակ հնգեանք՝ ի նուիրկայութեան Քահանայապետին ունին պահպանել զպատիւ նորին և զգուշանալ անձանց իւրեանց և ամենայն զգայարանաց՝ զի մի՛ անվայելչութիւն իմն յառաջ եկեսցէ յինքեանց ընդդէմ արժանաւոր պատուոյ Քահանայապետական բարձրութեան. այնպէս պատուին զնոյն զգուշութիւն ունիլ մշտնջենաւորէս միևնոյն կերպիւ առ ի պահպանել զպատիւ անձանց իւրեանց ձանաչելով զնոյն անձն իւրեանց՝ և անձն իրիւանակ Քահանայապետի արժանաւոր այնմիկ յարգութեան*»[11]:

Մեկ ուրիշ պատմական վավերագրում նշվում են կաթողիկոսական տուրքերը, որոնք ամենայն հավանականությամբ նույնպես հավաքվում էին նվիրակների միջոցով: Նույն այս փաստաթղթում հիշվում են նաև առաջնորդական և քահանայական հարկերը: Վերջիններս թեև իրենք չէին սրանում իրենց հասանելիքը, սակայն Տերունի վիճակներում, որտեղ առաքված նվիրակը միաժամանակ սրանձնում էր նաև առաջնորդական իրավասությունները[12], առաջնորդական «*հասքն ու տուրք*»-ը հավաքվում էր նվիրակի կողմից: Սրտորև ներկայացնում ենք նվիրակի կողմից հավաքված կաթողիկոսական ու առաջնորդական տուրքերը:

ա. Կաթողիկոսական տուրքեր

1. Նվիրակության դրամը՝ երեք տարին մեկ անգամ.
2. Հոգեբաժին.
3. Մայր Աթոռի անվամբ հավաքած գանձանակի գումարը.
4. Խոստմունք.
5. Քառասնից.
6. Կտրակ.
7. Բազմատեսակ հիշատակներ.
8. Առաջնորդների կողոպուտը, հոգեբաժինը, եկեղեցական զգեստը և ձին:

---

[11] Դիվան, հտր. Գ, էջ 813-814:

[12] Ջամբռ, էջ 48:

բ. Առաջնորդական փուրքեր

1. Այգիների և պարտեզների բարիքներից.
2. Հոգեբաժին.
3. Քառասնից.
4. Խոստմունք.
5. Կտրակ.
6. Հիշատակը.
7. Վանքի գանձանակը.
8. Աթոռամասն կամ վանքամասն. փուրք, որը տալիս էր առաջնորդին յուրաքանչյուր կին առնող.
9. Կնքադրամ. երեխա մկրտելու համար տալիս էր ընտանիքը.
10. Կողոպուտը.
11. Դիազարդ. թաղման արարողության ժամանակ տրվող փուրք.
12. Մատաղ.
13. Տյառնական.
14. Հոգևոր պարտավորության գիտակցությունից բխած մի տեսակ կամավոր ընծայաբերություն.
15. Սրբադրամ.
16. Քահանայաթաղ.
17. Այլևայլ փուրքեր, որոնք հավաքվում էին խաչ, եկեղեցի, փուն, պատկեր և այլն օրհնելու համար[13]:

Առաջնորդական կամ եպիսկոպոսական փուրքերի հավաքմամբ նվիրակներն արդեն իսկ իրենց գործառույթներով մոտենում էին թեմակալ եպիսկոպոսներին: Սակայն առաջնորդ և նվիրակ հասկացությունները հստակորեն սահմանազատված էին: Առաջինն իրականացնում էր Մայր Աթոռի վարչական ներկայացուցչության հետ կապված ֆունկցիաներ, մինչ նվիրակները գերազանցապես գործում էին բարոյական ու հոգևոր միության հաստատման ոլորտում: Նրանց առջև խնդիր էր դրված ոչ միայն արդյունահավաքությամբ զբաղվել, այլև բարոյական մաքրության նախանձախնդիր պաշտպանները լինել:

Բնականաբար, խիստ դժվարին առաքելության իրականացնելու ճանապարհին, նվիրակներն օժանդակության կարիք էին զգալու: Ուստի նրանց հետ գաղութահայության մեջ Մայր Աթոռի շահերը պետք է պաշտպանեին հոգևոր և աշխարհական այլ անձինք ևս: Նվիրակի հետ էջմիածնապատկան վիճակներ էին ուղևորվում նաև հոգևոր կրթսեր աստիճանավորներ, ովքեր նվիրակին օգնում էին ծիսական արարո-

[13] Դիվան, հտր. Գ, էջ 825-826:

ղությունների ժամանակ, գործուն մասնակցություն ունենում արդյունահանվող մանր ու միջին ձկների վերամշակմանը: Հաճախ նվիրակն օտար ափերում հայրենի բազմաթիվ ավանդների անհետաքրքիր մնացած հայությանը հոգևոր բավականություն պատճառելու համար, իր սպասավորներին՝ սարկավագ կամ դպիր, իր վիճակում քահանայական ձեռնադրություն էր շնորհում: Նվիրակին օժանդակելու մեջ քիչ տարբեր ծառայություն էին մատուցում տեղական բնակչությունից Մայր Աթոռին հավատարմագրված անձինք: Վերջիններս անվանվում էին **գործակալ** կամ **գանձապահ** և նվիրակական տվյալ թեմում իրականացնում դրամական ու վարչա-կազմակերպչական որոշ գործառնություններ: Հիմնականում նրանց էր վստահվում նվիրակությունների նկատմամբ սահմանված հսկողության իրականացումը և բեռների կամ դրամի Մայր Աթոռ տեղափոխումը: Պատասխանատվության չափազանց բարձր զգացում պահանջող այս ծառայությունը, ինքնաբերաբար, պատահական մեկին չէր կարող հանձնվել: Ուստի գործակալի կամ գանձապահի պաշտոնն ստանձնելու համար պահանջվում էր անմիջաբար Կաթողիկոսի համաձայնությունն ու նշանակման հրահանգը: Հաճախ վերջիններս ընտրվում էին նվիրակի միջնորդությամբ՝ տեղացի հայտնի անձանցից, ովքեր քիչ թե շատ ճանաչում էին գլխել եկեղեցական գործերի շրջանակում:

Նվիրակի գլխավորած այս փոքրիկ խումբը կոչված էր պահպանելու ազգային արժեքներն ու հայության գիտակցության մեջ դրոշմելու ինքնուրույն դիմագծի պահպանման անհրաժեշտությունը: Եվ ի՞նչը կարող էր առավել օգտավետ ծառայել այս նպատակին, եթե ոչ հայության ազգային ինքնության բոլոր լավագույն ձգտումներն իր առաքելության մեջ պարունակող Ս. Էջմիածնի գաղափարի հզորացումը:

ՋԱՐԵՀ ԱԲԵՂԱ ԿԱԲԱՂՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՇԱԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՋԱՏԱԳՈՎ

Թ-որգոմ Պատրիարք Գուշակյանը (1874-1939 թթ.) Հայոց Եկեղեցու պատմության նոր շրջանի նշանավորագույն հոգևոր գործիչներից է, ով իր պատմագիտական ու կրոնագիտական հետաքրքրությունների լայն շրջանակի մեջ քննության է առել նաև Եկեղեցու բարեկարգության խնդիրը: Այս հարցին նա պարբերաբար անդրադարձել է դեռևս 1920-ական թվականներից սկսյալ, ինչը պայմանավորված էր երկու հանգամանքով: Առաջինը Հայոց Մեծ եղեռնից հետո ստեղծված իրավիճակն էր, երբ հայ ժողովրդի զգալի մասը սփռվեց աշխարհով մեկ՝ կտրվելով իր պատմական բնաշխարհից, որի վրա և որում կեցության ավանդական կերպի վրա էր խարսխված նաև Հայոց Եկեղեցու նվիրապետական կարգն ու ընդհանրապես ողջ կառույցը, որը տևավեր ու գաղթական ժողովրդի հետ հիմա հայտնվել էր միանգամայն այլ իրավիճակում, իսկ երկրորդը ժամանակի թելադրանքն ու պահանջն էր:

Եկեղեցական բարենորոգության հարցը ազգային-եկեղեցական կյանքում արծարծվել և ժամանակի հասարակական ու կրոնական պարբերականներում սկսվել է քննարկվել դեռևս անցյալ դարի կեսերից: 20-րդ դարի սկզբից այս հարցին անդրադարձել են նաև Ազգային-Եկեղեցական ժողովները: 1906 թ. գումարվում է ռուսահայոց կենտրոնական ժողովը, սակայն այն չհասցրեց որևէ որոշում ընդունել, քանի որ փակվեց ցարական իշխանությունների պահանջով:

Ընդառաջելով տարբեր թեմերի ու հոգևորականների դիմումներին՝ Գևորգ Ե Սուրենյանցը 1917 թ. Մայր Աթոռում հրավիրում է ռուսահայ հոգևորականության խորհրդակցական ժողով, որին մասնակցում են 67 պատվիրակներ: Նրանք բերել էին նաև իրենց թեմերի և համայնքների առաջարկությունները: Մի քանի օր տևած ժողովում քննարկվում են բազմաթիվ հարցեր, այդ թվում և՝ բարեկարգության, որի համար ընտրվում է մի հատուկ հանձնաժողով: Վերջինիս հանձնարարվում է հավաքել և ի մի բերել բարեկարգությանը վերաբերող բոլոր նյութերն ու առաջարկությունները և դրանք մշակել համապատասխան դասակարգմամբ ու խմբավորմամբ՝ ընդգրկելով նաև կարող ու գիտակ այլ ուժերի ևս: Հանձնաժողովի աշխատանքի ավարտվելուց հետո գումարվելու էր բարեկարգության խնդրին

նվիրված Ազգային-Եկեղեցական ժողով, որը, սակայն, հնարավոր չեղավ հրավիրելու նախ՝ պատերազմական, ապա և՝ քաղաքական անհպատ իրավիճակների պատճառով: Տեսնելով, որ ներկայացուցչական նման ժողովի գումարումը երկար ժամանակով կարող է ձգձգվել, Գևորգ Ե Կաթողիկոսը մի քանի կարևոր ու ժամանակի թելադրանքով ծնված հարցերի մասին պահանջում է Երևանի և Կ. Պոլսի Պատրիարքների գրավոր պաշտոնական կարծիքներն ու եզրակացությունները և ապա հրապարակում հայրապետական հետևյալ կանոնական կոնդակները.

ա) 1922 թ. նոյեմբերի 11-ին՝ թ. 644, որով՝ արգելում է այրի քահանաների կրկնամուսնությունը:

բ) 1922 թ. նոյեմբերի 11-ին՝ թ. 645, որով թույլատրվում են ազգակցական հինգերորդ և խնամիական չորրորդ աստիճանի պսակները և վերացվում ամուսնության վերաբերյալ հոգևոր ազգակցության բոլոր տեսակ արգելքները:

գ) 1923 թ. նոյեմբերի 9-ին՝ թ. 349, որով ընդունվում է նոր տոմարը և պատվիրվում նրանով առաջնորդվել:

դ) 1923 թ. նոյեմբերի 9-ին՝ թ. 350, որով թույլատրվում է հայկական եկեղեցիներում ժամապաշտության ժամանակ երգեհոնի և երաժշտության գործածությունը:

Հետևողականորեն շարունակելով այս աշխատանքները՝ 1923 թ. նոյեմբերի 24-ին Գևորգ Ե Կաթողիկոսն իր հաստատմամբ Մայր Աթոռում կազմում է «Հայոց Եկեղեցու բարեկարգության Կենտրոնական հանձնաժողով»: Հանձնաժողովի ունեցած նյութերը կենտրոնացվում են Գերագույն Հոգևոր Խորհրդի դիվանում[1]: Բարեկարգության հարցը քննվում է նաև 1932 թ. Ազգային-Եկեղեցական ժողովում: Վերջինիս, ինչպես նաև նախորդ տասնամյակների առաջարկությունների, կարծիքների և արված աշխատանքների ու մշակումների վրա հիմնվելով՝ Խորեն Ա Կաթողիկոսն իր անդրանիկ կոնդակում Հայ Եկեղեցու բարեկարգությունը և սահմանադրությունը ի նկատի ունենալով՝ անհրաժեշտ է գտնում շարունակել այն իրականացնելու գործը՝ «ըստ պահանջից և կարեաց նորոյ ժամանակի՝ կազմել նոր սահմանադրութիւն և բարեկարգել և նորոգել զհնացեալ սովորութիւնս և կարգս, որք կարօտին սրբագրութեան»[2]:

Այնուհետև 1937 թ. օգոստոսի 1 թվակիր թիվ 417 կոնդակով Խորեն Ա Մուշաղբեկյանը շեշտում է այս հարցի քննության կարևորությունը և ասում, որ կոնդակին կից ներկայացվող «Ջեկուցումն Հայոց Եկեղեցու բարենորո-

---

[1] Այս շրջանի եկեղեցական բարեկարգության հարցի մասին տե՛ս Ջաւէն Աւագ քահանայ Արզումանեան, Ազգապատում, հտ. Դ, Ա գիրք, Նիւ Եօրք, 1995, էջ 309 և Գեղամ սրկ. Մարտիրոսյան, Ուրվագիծ Հայ Եկեղեցու բարեկարգության պատմության, «Էջմիածին», 1998, Զ, էջ 133-141:

[2] «Միսն», 1933 թ., էջ 294:

գութեան մասին» խորագրված ծրագրի վերաբերյալ դիտողությունները, կարծիքներն ու առաջարկությունները Սիյոնքի թեմերից ուղարկվեն Թորգոմ Սրբազանին, և նա էլ դրանք, իր եզրակացությամբ հանդերձ, ներկայացնի Մայր Աթոռ՝ վերջնական խմբագրման և ընդունման համար[3]: Թորգոմ Սրբազանը, «Սիոնում» տպագրելով կոնդակը և նրա աշխարհաբար թարգմանությունը և «Ջեկուցումը», վերջինիս հաջորդող խմբագրականով զգուշացնում է, որ բարեկարգությանը «հարկ էր մօտենալ վերին աստիճանի զգուշութեամբ, զգաստ հոգով, լուրջ միջոցներով, երկիւղածութեամբ և իմաստութեամբ միանգամայն»[4]: Նաև ավելացնում է, թե «Ջեկուցումը» ամէն ինչ տնօրինած է իմաստութեամբ և համաձայն մեր Եկեղեցւոյ կանոնական ըմբռնումներու»: «Սիոնի» հաջորդող համարներում էլ առանձին խմբագրականներով, որոնց դիմելով ընդգծում է այս խնդրի կարևորությունը, անդրադառնում է զեկուցման մեջ բարձրացված և բարեկարգության ենթակա հարցերին՝ ըստ «Ջեկուցման» թեմատիկ բաժանման և խմբավորման:

Թորգոմ Սրբազանի մնացյալ քարոզների և հոդվածաշարերի նման, այս խմբագրականները ևս ի մի հավաքելով, Երուսաղեմի միաբանությունը հրատարակում է առանձին մի գրքով, որպես չորրորդ հատորը «Ամբողջական երկերի»: Այսպիսով, «Բարեկարգութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ» վերնագրված «Ամբողջական երկերի» չորրորդ գիրքը ևս մեկ ամբողջական գործ չէ և ոչ էլ առանձին հոդվածների միացումը որոշակի խմբագրմամբ և գրքային ձևի մեջ ամփոփումով:

«Նօթ մը» խորագրի ներքո հրատարակիչները, անդրադառնալով այս խմբագրականները մեկ գրքով տպագրելու անհրաժեշտությանը ու կարևորությանը, գրում են. «Իր կեանքի վերջալոյսին գրուած յոդուածներու այս շարքը, որոնց մէջ կը ցոլանայ լուրջ և առողջ պահպանողական ոգի մը, որ ամէնէն յատկանշական կողմերէն եղած է Հայաստանեայց Ս. Եկեղեցիին, կը յուսանք որ ո՛չ միայն հայ հատուցեալին մէջ պիտի արծարծէ իր Եկեղեցին բարեկարգ տեսնելու իղձը, այլ նաև ապագային, եթէ երբեք երջանիկ օր մը գումարուի Ազգային-Եկեղեցական այն ժողովը, որ տարիներով ծնծղուած այս խնդիրը իր գործնական հունին մէջ պիտի դնէ, իր կարևոր կշիռը պիտի ունենայ այդ հարցի կարգադրման գործին մէջ»[5]:

Հրատարակիչները նաև «Իբրև յառաջաբան» խորագրի ներքո առաջաբանի փոխարեն զետեղել են «Սիոնի»՝ 1937 թ. սեպտեմբերի խմբագրականը, որը գրված է Պ. Գևորգյանի (Կիպրոս) «Արև» օրաթերթում հրատարակած

---

3 «Սիոն», 1937 թ., էջ 295:

4 Նույն տեղում, էջ 299:

5 Տ. Թորգոմ Պապրիարք Գուշակեան, Ամբողջ երկեր, հտ. Դ, Բարեկարգութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1940, էջ 5:

մի հոդվածաշարի առիթով: Այս հոդվածաշարին Թորգոմ Սրբազանի փված բնորոշումում իսկ երևում է նրա վերաբերմունքը եկեղեցական բարեկարգության հանդեպ: Ասում է, որ իրեն հատկապես դուր է եկել հեղինակի այն միտքը, թե Եկեղեցու բարեկարգություն ասելով պետք է հասկանալ եկեղեցականների պատրաստությունը իրենց ասպարեզի և կոչումի համար և ժողովրդի կրոնական դաստիարակության բարելավումը «այսինքն՝ ամբողջ ազգին քրիստոնեական կեանքի մշակումը իր Եկեղեցիին ճամբով»: Այսպիսով, բարեկարգությունը Թորգոմ Սրբազանի համար, ի տարբերություն այդ բառը Եկեղեցու ռեֆորմացիայի իմաստով գործածողների, ժամանակի հարափոփոխ ընթացքի մեջ Եկեղեցու և հոգևորականների կողմից հոգևոր կյանքի կազմակերպումն է և կրոնական պահանջմունքների բավարարումը Եկեղեցու շրջագծում:

Հոդվածի հենց սկզբում այս ըմբռնմամբ Եկեղեցու բարեփոխությունը համարում է ոչ թե ժամանակի առաջադրած պահանջ նվիրապետական կարգի և ծիսական արարողությունների փոփոխության, այլ այն միտքն է հայտնում, որ բարեկարգության խնդիրը այժմեական լինելուց առավել մշտական և հավերժական է. «Իր Եկեղեցիին զգացումն ունեցող ժողովուրդի մը համար ոչինչ աւելի բնական է քան զայն իր հոգեկան և բարոյական կարիքներուն համընթաց և համապատասխան դրութեան մը մէջ տեսնելու իղձը»:

Մինչ Հայ Եկեղեցու բարեկարգության հարցի քննությանն անցնելը նախ շեշտում է, որ հակավոր է իրարից հստակորեն տարբերակել վերանորոգությունը և բարեկարգությունը: Առաջինը հայերենի վերածված ձևն է ֆրանսերեն reforme բառի, որը հաճախ նաև վերակազմություն է թարգմանվել: Նշում է, որ այդ բառը սկզբից ի վեր բողոքականության իմաստով է գործածվել մեր մեջ, իսկ բարեկարգություն նշանակում է «եղած կարգին բարւոք պահպանումը», գրեթե հոմանիշ կարգապահություն (distipline) բառին:

Այսպիսով, բարեկարգությունը երբեք ռեֆորմացիայի իմաստ չի ունեցել Թորգոմ Սրբազանի համար: Ասում է, թե վերանորոգության, ռեֆորմացիայի կողմնակիցները պահանջում են վերադառնալ քրիստոնեության առաջին դարերին, նախնական Եկեղեցու հավատքի և պաշտամունքի պարզությանը, որն, ըստ իրեն, հնարավոր չէ, քանի որ ժամանակը չի կարելի ետ դարձնել:

Այս հոդվածում մեկ անգամ ևս նա շեշտում է, որ այսօրվա եկեղեցական կյանքն իր պաշտամունքային ծեսերով և ավանդությամբ ծնունդն է մեր նախնիների հոգևոր-իմացական թռիչքի և իր ամբողջության մեջ մի սերտ ներդաշնակություն է կազմում, որի համար էլ «Մեր խորին համոզումն է թէ, մեզի համար, Բարեկարգութիւնը մեր այդ ունեցածը իր բարւոք վիճակին մէջ պահելու ջանադրութիւն միայն պէտք է ըլլայ»:

Որպեսզի այս բարեկարգությունը՝ կարգի բարվոք պահպանությունը, իբրև եկեղեցական կյանքի մշտական մի ընթացք, հնարավոր լինի իրականացնել, անհրաժեշտ է, որ իր կոչումի և ասպարեզի գիտակցությունն ունեցող հոգևորականություն ունենանք և մեզ ավանդված հոգևոր ժառանգությունը պահելու ունակ մի ժողովուրդ: Ահա այս պատճառով բարեկարգությունը ոչ թե բողոքական ռեֆորմացիայի իմաստով պետք է հարաբերվի Եկեղեցու նվիրապետական կառույցը կազմող աստիճանների հետ, այլ ժողովրդի ու հոգևորականության: Ինչպես Թորգոմ Սրբազանն է գրում. «Բարեկարգութեան կարևորագոյն տարրերն են եկեղեցականն ու ժողովուրդը. իսկ այդ երկուքը իրենց պարտականութեան բարձրութեան վրայ պահելու միջոցները՝ կղերին կրթութիւնը և ժողովոդին կրօնական դաստիարակութիւնը»:

Իբրև առաջաբան դրված այս հոդվածից հետո հրատարակիչները զետեղել են կաթողիկոսական կոնդակը, ապա «Ջեկուցագրի» տարբեր կետերին, արձարձած խնդիրներին և հարցադրումներին նվիրված՝ Թորգոմ Սրբազանի «Սիոնում» տպագրած խմբագրականները: Գրքի վերջում, որպես հավելված, բերված են 1932 թ. Ազգային-Եկեղեցական ժողովին և Խորեն Ա Կաթողիկոսին ուղղված Թորգոմ Սրբազանի երկու գրությունները, որոնցում այն միտքն է շեշտվում, թե ժողովրդի աստիճանական հեռացումն ու սառումը իր Մայր Եկեղեցուց պայմանավորված է ոչ թե ծեսի, ժամակարգության ու պաշտամունքի լեզվի բարդությամբ և անհասկանալիությամբ, այլ կրոնական ապրումի նվազմամբ, որն էլ իր հերթին արդյունք է հոգևորականների թերացման և իրենց վերապահված բարձրության վրա չգտնվելուն: Ըստ Թորգոմ Սրբազանի՝ ծիսա-արարողական ու լեզվական որևէ պարզեցում և համառոտում ժողովրդին եկեղեցի չի բերի և ոչ էլ կրոնական կենդանի ապրումի կմղի, եթե չլինեն արժանավոր հոգևորականներ: Հետևաբար, ոչ թե եկեղեցին ու եկեղեցական արարողությունները պետք է փոխվեն, այլ եկեղեցականները:

Որ եկեղեցական բարեկարգության կենտրոնում ոչ թե եկեղեցին, այլ եկեղեցականները պետք է լինեն, Թորգոմ Սրբազանը լավագույնս արտահայտել է հիշյալ գրության ծավալուն, բայց և խտացված հետևյալ տողերում. «Երբ կրօնի ուսումը կը կորսնցնէ իր հմայքը՝ անհմուտ դասախօսներու երեսէն, երբ քրիստոնէական բեմը կը դադրի մեր եկեղեցիներուն ամենէն կենսունակ զօրութիւնը ըլլալէ՝ շնորհիւ անկարող քարոզիչներու, երբ քահանաներուն կրթութեան գործը կը շարունակէ մտրնուիլ մոռացութեան, երբ վարդապետներու պատրաստութեան և զարգացման կարևորութիւնը հետզհետէ չի շեշտուիր աւելի շօշափելի արդիւնաւորութեամբ մը, բարեկարգութիւնը կրնայ այսօր իրականանալ՝ վաղը ոչնչանալու համար. վասնզի արժանաւոր պաշտօնեան միայն կրնայ շարունակել և արդիւնաւորել այնքան ջանքերով իրագործուելիք այս գեղեցիկ գործը»: Ահա այս պատճա-

ռով է «Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան հիմնաքարը եկեղեցականներու պատրաստութեան ձեռնարկն է»:

Ազգային-Եկեղեցական ժողովից էր ինգ տարի անց Երուսաղեմի Ամենապատիվ Պատրիարքը Եկեղեցու բարեկարգման հարցը և վերջինիս նվիրված «Ջեկուցումը» քննում է՝ մեկնակետ ունենալով նույն այս ըմբռնումը: Ստորև ներկայացնում ենք Հայրապետական կոնդակը, «Ջեկուցումը» և դրանց նվիրված «Միռնի» խմբագրականները: Քանի որ խմբագրականները զուգահեռ են ընթանում «Ջեկուցման» շարադրանքին, ավելորդ կրկնաբանություններից խուսափելու համար, «Ջեկուցումը» և խմբագրականները առանձնաբար ներկայացնելու փոխարեն, Թորգոմ Սրբազանի հետևողությամբ՝ յուրաքանչյուր խմբագրականի հետ միաժամանակ անդրադառնում ենք նաև «Ջեկուցման» համապատասխան հատվածին:

Առաջին խմբագրականը, որը զետեղված է Հայրապետական կոնդակին և «Ջեկուցմանը» կից, ծանուցում է վերջիններիս մասին: Թորգոմ Սրբազանն իր հոդվածաշարի առաջին իսկ հոդվածում ուրախությամբ է շեշտում այն կետը, որ «Ջեկուցման» մեջ բարեկարգության կարևորագույն պայմաններից է հանդիսանում հոգևորականների կրթության և ժողովրդի կրոնական դաստիարակության հարցը: «Միռնի» այս համարում տպագրելով Մայր Աթոռից ստացված հիշյալ երկու գրությունները՝ հույս է հայտնում, որ դրանք առաջ կբերեն «ժողովրդական ամբո հոգևորութիւն մը և աշխատելու վերազարթոնքին, վերածաղկումին և վերականգնումին այն հաստատութեան, որ մեր անմահ նախնիքներէն մեզի հրիտակուած ամենէն մեծ և պատուական ժառանգութիւնն է»:

Երկրորդ խմբագրականը նվիրված է լուր օրերի ժամերգությանը: «Ջեկուցման» մեջ այս մասին գրված է. «Վերացնել լուր օրերի ժամասացութիւնները, ինչպէս եղել է քրիստոնէական եկեղեցւոյ մէջ մինչև երրորդ դարու վերջերը»: Թորգոմ Սրբազանը չի համաձայնում թե՛ նման կրճատմանը և թե՛ բերվող այն փաստարկին, որ քրիստոնեական եկեղեցում վերջինս չի եղել մինչև երրորդ դարի վերջը: Ավելին, ասում է, որ առաքելական շրջանից է գոյություն ունեցել և երրորդ դարում քրիստոնեության դեմ ծավալված հալածանքների պատճառով է, որ առժամյա այն դադարել է: Պատմականորեն հիմնավորելով, որ դեռևս առաքելական շրջանից է ժամակարգությունը ամենօրյա եղել, այնուհետև անդրադառնում է այն հարցին, թե որքանով է պատշաճ նման գեղչմամբ «Եկեղեցին, Աստուծոյ տունը, «տուն աղօթից», շաբթուան հինգ օրերուն վերածուի լռութեան և ամայութեան վայրի մը, որուն առջևէն մարդիկ առաւօտ և երեկոյ անցնին ինչպէս շէնքի մը՝ որուն փակ դրան երկն ոստայն են կապած սարդերը»:

Ասում է, որ եթե ամբողջության մեջ հնարավոր չէ կատարել ամենօրյա ժամասացությունները, ապա գոնե իր ամփոփ ձևի մեջ պետք է պահվի այն, որպեսզի երբ հայ հավատացյալը մտնի եկեղեցի, «վառ գտնէ կանթեղը Ս.

Մեղանին վրայ, պէտք է ընդունի աղօթքին, մաղթանքին, ընթերցուածներուն և օրհներգերուն ազդած եռգնոր սփոփանքը, կամ գէթ տեսնէ քահանան լոին, աղօթասոյզ, բեմին կամ գրակալին առջև»: Ի հավելումն ավելացնում է, որ ոչ մի առաքելական և ավանդական հին Եկեղեցի իրեն թույլ չի տա Աստծու տունը լուռ պահել լուր օրերին:

Հաջորդ երապարակումը նվիրված է ժամերգության կրճատմանը: Գրնում է, որ այստեղ ևս չի կարելի ծայրահեղությունների մեջ ընկնել, ամբողջովին մերժելով, ինչպես լուր օրերի պարագայում, և ոչ էլ պնդել, թե անխաթար պետք է կատարվի, համաձայն «Ժամագրքի»: Ըստ Թորգոմ Սրբազանի՝ ժամերգության երկու տեսակ է եղել՝ մեկը վանքերի համար, ուր կատարվել է ամբողջական և անխաթար կերպով, և երկրորդը՝ բնակավայրերի եկեղեցիներում, որտեղ կիրառվել է առավել համառոտված տարբերակը, և պետք է հետևել բանավոր փոխանցմամբ մեզ ավանդված կրճատ նման տարբերակներին, որոնցում սղվել են սաղմոսների և շարականների կանոնների տարբեր միավորները և հիմա էլ անհրաժեշտ է «ներշնչումի տեսակէտով ամէնէն գեղեցիկները պահելու և միշտ գրեթէ երկու տուն ունենալու պայմանաւ, իբրև փոխներգութեան տարրեր»:

Շեշտում է, որ ժողովրդի համար կարևոր է ոչ թե ժամերգության կարճ կամ երկար, այլ «տպատորիչ ու սրտագրաւ ըլլալը»: Այսինքն՝ ժամերգության առիթով ևս վերստին շեշտում է այն միտքը, որ ոչ թե Եկեղեցու կարգերն են հնացել և չեն համապատասխանում ժամանակին, այլ չկա եկեղեցական նախկին կենդանի ապրումը:

Ժամերգությանը նվիրված այս խմբագրականն ավարտվում է ժամանակի քննությունը բռնած և իրար հաջորդող սերունդների համար իբրև պատգամ հնչող հետևյալ խոսքերով. «Ոչ մէկ ժողովուրդ հարկադրուած է պահպանողական լինելու այնպէս և այնքան՝ ինչպէս և որքան մենք»:

Եկեղեցական տոների պարագայում էլ «Ձեկուցումը» վերստին առաջարկում է կրճատումներ և տոների համախմբումներ կատարել, որն էլ իր հերթին հանգեցնելու էր «Տոնացոյցի» վերախմբագրմանը: Ինքը, սակայն, տոների պարագայում ևս սխալ է համարում նախնական, քրիստոնեության առաջին դարերին վերադառնալու ձգտումը, քանի որ այդ դեպքում «Տոնացոյցից» դուրս կմնան թե՛ Հայ Եկեղեցու տոնելի շատ սրբեր և թե՛ Տիրամորն ու Խաչին նվիրված տոները, և «Հայ Եկեղեցւոյ տօնակարգէն ջնջուին իր ամէնէն մաքուր և թանկագին խճապատկերներէն մին և միւսը, Տիրամօր դէմքը և Խաչին նկարը, ու ժամագիրքէն պատռուին այն տողերը, որոնք կանխագոյն ժամանակներէ ի վեր ոգեկոչել տուած են և ցարդ կուտան»:

Թորգոմ Սրբազանը գտնում է, թե ուր կյանք կա և աճումի օրենք, այնտեղ միշտ ընդլայնում և բարձրացում կա, և քրիստոնեությունը ամենաաքանչելի հանդիսարանն է այս իրողության, որի համար էլ պետք չէ անպատճառ նախնական, սկզբնական վիճակին վերադառնալ բարեկար-

գության համար: Ասում է, որ այսօր ոչ թե «Տոնացույցը» պետք է կրճատենք, այլ հակառակը՝ ավելացնենք նահատակության պսակին արժանացած և սրբակրոն կյանքով ապրած ուրիշ հայ Սրբերի հիշատակները ևս:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ինչպես «Սուրբք և փոնքում», այնպես էլ այստեղ, Թորգոմ Սրբազանն անդրադառնում է հաճախ շահարկվող այն հարցին, թե ինչու մեր Եկեղեցու Տոնացույցում մեծ թիվ են կազմում օտար սրբերը: Վերսկիզբ շեշտում է, որ օտար համարվող այդ սրբերը սրբերն են Ընդհանրական Եկեղեցու, քանի որ մեր Տոնացույցը կազմվել էր Եկեղեցիների բաժանումից առաջ, որը ևս մեկ վկայությունն է մեր Եկեղեցու ընդհանրական նկարագրի: Այս ընդհանրականությունը պահելու համար է, որ մեր Եկեղեցում 5-րդ դարից հետո գրեթե սրբեր չեն ներառվել, որպեսզի «ուրիշ եկեղեցիներու և մերինի միջև դաւանաբանական պարճառներով գոյացած խրամը աւելի չխորանայ. այս պարճառով եթէ չենք կրցած նորեր առնել անոնցմէ, չենք ուզած մերժել նաև արդէն առնուածները»:

«Մաշտոց» և «Ճաշոց» վերնագրված խմբագրականներում էլ նույն կերպ անպատշաճ և սխալ է համարում Մկրտության, Հնոնադրության, Պսակի և այլ խորհուրդների տարբեր հատվածների կրճատումները՝ վերստին շեշտելով, որ այստեղ եթե բարեկարգության անհրաժեշտություն կա, ապա այն պետք է վերաբերվի ոչ թե բուն ծեսին կամ ընթերցվածներին, այլ այն կատարողների կատարման կերպին և ներկաների պահվածքին ու վերաբերմունքին: Այսինքն՝ կրոնական կենդանի, ճշմարիտ ապրումի անհրաժեշտությունը ելակետ ունենալով, ծեսի պարագայում էլ, բնականաբար, կարևորում է կատարումը և արձագանքը՝ արարողությանը ներկա եղող ժողովրդի վերաբերմունքը, որ բարեկարգության կարիքը ոչ թե «խորհուրդներուն և անոնց կատարումին, այլ անոնց կատարիչներուն և ընկալուչներուն մէջ պէտք է փնտրել»:

Կրճատման և համառոտման ջատագովներին և կողմնակիցներին Թորգոմ Սրբազանը հիշեցնում է, որ ծիսական և մյուս արարողական ծավալուն հատվածներն արդյունք են ոչ թե հետագայի հավելումների և խճողումների, այլ կառուցիկ մի միություն են կազմում իրենց ամբողջության մեջ որպես առանձին գրքեր՝ Տոնացույց, Ճաշոց, Մաշտոց ու Ժամագիրք, որոնցում ներքին կապակցություն ունեն թե՛ տարբեր միավորները և թե՛ յուրաքանչյուր միավորի ենթամիավորները, որոնք փվյալ գաղափարի ու խորհրդի հոգևոր ստեղծագործական զարգացումն են ներկայացնում: Ինչպես ինքն է գրում. «Ոչինչ դիպուածական կը գտնես անոնց մէջ, ոչինչ՝ ափյափոյ: Մէն մի ժամերգութիւն, մէն մի խորհուրդ պարզումն է մեծ զգացումի մը կամ մտածումի մը, որ կը սկսի իբրև փթթումով մը, և կը շարունակուի զգացումի յառաջդիմական շարժումի մը մէջ մինչև որ կշռաւորուած խօսքի, երգի և խորհրդական շարժուածքներու ներդաշնա-

կութեան մէջէն, կարծես հեռզհեռէ հասունացած, դուրս կուգայ իմաստը, հոգիին վրայ յաւէտ բարոյացուցիչ ներգործութեամբ մը»:

Անթուլպատրելի համարելով «Եկեղեցւոյ խորհուրդներու բանական և արարողական կազմին», որոնք «սիւներն են մեր հաւատքին շէնքին», բարեկարգության անվամբ որևէ խախտում կատարելը, «Ջեկուցման» հեռևողությամբ ճիշտ է համարում ծանր հիվանդաց, դժվարածին կնոջ, այսահարների և լուսնոտների, պատանու մազերը առաջին անգամ կտրելու համար սահմանված այս և համանման մի շարք կանոնները հանելը, որոնք արդեն իսկ չէին կատարվում և տեղ չէին գտել «Մաշտոցի» նոր հրատարակություններում:

Գրքում զետեղված վեցերորդ հոդված-խմբագրականը նվիրված է հայ հոգևորականության ցենզի հարցին, որը շարունակ այնքան կարևորում էր Թ-որգոմ Սրբազանը: Ահա այս պատճառով, եթե մյուս հարցերում վիճելի կամ անընդունելի դրույթներ էր գտնում, այս մեկի կարևորությունն ու հրամայական անհրաժեշտությունն անվիճելի է համարում և ժամանակի թելադրանքով ամենակարևորներից մեկը մեր Եկեղեցու համար: Ինչպես ինքն է գրում. «Կ'ապրինք այնպիսի թուականի մը մէջ, ուր ոչ մէկ կրօնական կեանք չի կրնար շարունակուիլ, ոչ մէկ Եկեղեցի, մերինը մանաւանդ, չէ կարող փնել, եթէ չունի իր մէջ բարձրագոյն կրթութեամբ զօրացած հոգևորականներու կարևոր թիւ մը»:

Ասում է, որ հայ հոգևորականների պատրաստվածության հարցը մեր Եկեղեցու համար ոչ թե բարեկարգության, այլ գոյության խնդիր է:

«Ջեկուցումը» և վերջինիս հեռևողությամբ Թ-որգոմ Սրբազանը անդրադառնում են նաև անցյալ դարից հայ իրականության մեջ բազմիցս քննարկված, չարչրկված և անգամ շահարկված կուսակրոնության հարցին: Ինչպես Թ-որգոմ Սրբազանն է գրում՝ «Բարեկարգութիւն ըսելով լոկ այդ հարցը կ'իմանան, իսկ անոր լուծման միակ կերպը կը նկատեն կուսակրօնութեան ջնջումը»: «Ջեկուցումը» ևս շեշտում է կուսակրոն հոգևորականության կարևորությունը Եկեղեցու համար: Քանի որ այս հարցը «եկեղեցագիտական տեսակէտով՝ վարդապետական ըլլալէ առեի և առաջ, կարգապահական է», անդրադառնում է կուսակրոնության առաջացման հանգամանքներին և պատմական զարգացմանը՝ գտնելով, որ փվյալ ժամանակահատվածում սխալ կլիներ փոխել իրավասությունների այն շրջանակը, որը գծված է ամուսնացյալ քահանաների և կուսակրոն հոգևորականների համար: Անդրադառնալով այն իրողությանը, որ կուսակրոն հոգևորականներից ոմանք իրենց եկեղեցական բարձրության վրա չեն մնում՝ դարձյալ բարեկարգությունը որպես եղած կարգի բարվոք պահպանություն համարելով, ասում է, որ նման հոգևորականներից պետք է ազատվել ու ձեռնադրվելիս ճիշտ ընտրություն կատարել և ոչ թե կուսակրոնությունը ջնջել: Իբրև ասվածի ամփոփում և եզրակացություն՝ գրում է. «Ամուսնաւոր

քահանայութիւնը անհրաժեշտ է Հայ Եկեղեցւոյ կեանքին համար, իսկ ամուրի հոգևորականութիւնը՝ անոր գոյութեան պահպանութեան համար»:

Ամուսնական և ամուսնալուծական հարցերում ևս համաձայնում է «Ջեկուցման» դրույթներին՝ միաժամանակ շեշտելով, որ հնարավորինս խիստ պետք է լինել ամուսնալուծության իրավունք տալու պարագային՝ «հակառակը անկարգութեան պիտի տանէր Եկեղեցին և ոչ թէ բարեկարգութեան»:

Նոր տոմարի հարցը Թորգոմ Սրբազանը համարում է երկրորդական ասպիճանի եկեղեցագիտական հարց, որի լուծումը ժամանակին է վերապահում:

Սքեմի վերաբերյալ «Ջեկուցման» մեջ ասվում է. «Գերագոյն Հոգևոր Խորհուրդը կարծում է, որ յարմար կը լինի պարտադրել հոգևորականութեան հոգևոր սքեմ կրել եկեղեցում, օրինակ՝ պարտութիւնների, պաշտօնական հանդէսների և հանգամանքների ժամանակ, որից դուրս արտօնել նոցա աշխարհիկ սքեմ կրել»: Այս հարցի քննարկումը, ավելի ճիշտ՝ շահարկումը, մեր ազգային եկեղեցական կյանքում Թորգոմ Սրբազանը համարում է ցանկությունը այն մտայնությունը կրողների, ովքեր «բարեկարգութիւն ընծայով արդէն ուրիշ ոչինչ կը հասկնան բայց միայն հոգևոր երաժշտութեան տրուած համերգային շողշողանք, ամբոխութեան ջնջում և քահանաներու աշխարհականօրէն հագուիլը»: Այսինքն՝ Եկեղեցին զրկել իր ավանդականությունից ու նվիրականությունից: Ընդունելով հանդերձ այն խոսքը, թե հանդերձը չէ, որ հարգելի է դարձնում հոգևորականին՝ միաժամանակ շեշտում է. «Կրօնաւորը պէտք է կրօնաւոր ըլլայ ինչպէս իր հոգւոյն և կեանքի մէջ, նոյնպէս և իր բոլոր արտայայտութիւններուն, իր կենցաղին, իր վարքին ու բարքին, իր խօսքին, իր նիստուկացին և նոյնիսկ իր հագուստներուն մէջ»:

Գիտակցելով նաև, որ Գերագույն Հոգևոր Խորհուրդը սքեմի հարցը քննարկման է դրել այն պատճառով, որ Խորհրդային Միությունում ծավալված հալածանքների հետևանքով հոգևորականներն ի զորու չէին հոգևոր հանդերձներով դուրս գալ, տարբերակիչ մոտեցմամբ գտնում է, որ եկեղեցուց դուրս առանց սքեմի կարելի է շրջել միայն այն երկրներում, ուր պետական արգելող հանգամանքներ կան: Մերձավոր Արևելքում, քանի որ հայ կյանքն ու ավանդությունը առավել անխաթար վիճակում էին, ինչպես նաև այս երկրների մյուս ժողովուրդների և կրոնական հարանվանությունների սովորությունների ի նկատի ունենալով, այստեղ պարտադիր է համարում հոգևորական փակեղը, պարեգոտը և վերարկուն, իսկ եվրոպական ու հեռավոր գաղթօջախներում «փոխանակ փակեղի՝ պարզաճաճ բեղոյր մը միայն ընտրելով, և առնուազն պարեգօտ մը ունենալով անհրաժեշտ, կլիմային համեմատ թանձր կամ թեթև վերնազգեստի մը հետ. իսկ բոլորովին աշխարհիկ զգեստը անպատշաճ է իսպառ՝ հայ հոգևորականին համար»:

«Ջնկուցումը» անդրադարձել էր նաև քահանաների ապրուստի հարցին՝ գտնելով, թե արդեն ժամանակն է, որ քահանային պահի ոչ թե ծուխը, այլ նա կանոնավոր ամսական ստանա իր ծառայած թեմից: Թորգոմ Սրբազանը եկեղեցականի համար այս հարցը համարելով պատվո ե կյանքի հարց, ճիշտ է գտնում «Ջնկուցման» մեջ արտահայտված դիրքորոշումը: Նաև ավելացնում է, որ հիմա փոխվել է պատմական և տնտեսական այն վիճակն ու միջավայրը, որում գտնվում էին Հայ Եկեղեցին ու հայ քահանան մինչև Հայոց Մեծ եղեռնը: Բուն հայրենիքում հայ գյուղացին իր բերքից բաժին էր հանում քահանային: Վերջինս ուներ նաև իր սեփական հողն ու անասունները և այս ամենով կարողանում էր ապրել: Եղեռնից հետո օտար ափերում հանգրվանած և համայնքային կյանքով նոր-նոր կազմակերպվել փորձող միջավայրում հնարավոր չէր շարունակել նախկին ծխական ընդունված կարգով. «Եկեղեցականը պէտք չէ ձեռք երկարէ դրամի համար. իր իրաւունքը, ժողովարդին հոգևոր գործը, Եկեղեցին պէտք է վճարի իրեն: Այս կերպով է որ կը փրկուի իր պատիւը»:

Ինչ վերաբերում է Պահքի վերացմանը և Աստվածապաշտության լեզվին, Թորգոմ Սրբազանը, «Ջնկուցմանը» համամիտ, գտնում է, որ Պահքը ոչ պետք է վերացնել և ոչ էլ պարտադրել, այլ կամավոր թողնել, սակայն չի համաձայնում «Ջնկուցման» մեջ արտահայտված այն մտքի հետ, որ Պահքը դադարել է կրոնական ապրում լինելուց և վերածվել է սովորույթի: Ասածը հիմնավորելու համար օրինակներ է բերում իր հովվական փորձառությունից:

Աստվածապաշտության լեզվի մասին «Ջնկուցման» մեջ ասում է, թե գրաբարը, անհասկանալի դառնալով, անհասկանալի է դարձրել նաև նրանով կատարվող հասարակաց աղոթքը, որի պատճառով այն չի ծառայում իր նպատակին՝ «սրեղծնել ընդհանուր կրօնական փրամադրութիւն աղօթքների մէջ»: Ասվում է, թե եղած առաջարկները՝ թարգմանել Ս. Գիրքը, աղոթքները ու շարականները, ցանկալի են, բայց դժվար իրագործելի: Ելնելով սրեղծված իրավիճակից՝ «Գերագոյն Հոգևոր Խորհուրդը հնարաւոր է գտնում թոյլատրել, որ Ս. Գրքի որոշ հատուածները և Հայրերի թղթերը թարգմանաբար կարդացուին եղած թարգմանութիւններից օգտուելով, մինչև որ հնարաւոր կը լինի Ս. Գիրքը ամբողջովին թարգմանած տեսնել»: Թորգոմ Սրբազանը գրում է, որ այս մասին ժամանակին հայտնել է իր կարծիքը, որն էլ ամբողջությամբ մեջ է բերում:

Անհրաժեշտ է նշել, որ երանաշնորհ Պատրիարքն այս հարցին անդրադարձել է ոչ միայն հիշյալ գրությամբ, այլև «Հնդկահայքում» ու մի շարք ուրիշ հրապարակումներում, քանի որ, ինչպես անցյալ դարակեսից հայ իրականության մեջ քննարկվում էր գրական լեզվի հարցը՝ գրաբարից աշխարհաբարին անցնելը, որը պատմության մեջ հայտնի է գրապայքար անվանմամբ, նույն կերպ այս դարասկզբից Եկեղեցու բարեկարգության հարցի ներքո սկսվեց քննարկվել եկեղեցական արարողությունների լեզուն

մատչելի՝ աշխարհաբար դարձնելու հարցը: Թորգոմ Սրբազանը միշտ էլ ընդդիմացել է այս տեսակետին՝ գտնելով, որ այդ դեպքում կխզվի անցյալի հետ հոգևոր միության կապը: Նաև իրավիճակը էականորեն փոխվեց Հայոց Մեծ եղեռնից հետո. երբ արևմտահայությունը զրկվեց ողջ աշխարհով մեկ ու ատրճանաբար թույացավ բնաշխարհից կտրված սերունդների կապը մայրենի լեզվի հետ: Նման պայմաններում արդեն գրաբարից աշխարհաբարի անցնելը փուստրակ չէր կարող ծառայել, քանի որ, դժբախտաբար, աշխարհաբարն իսկ դժվար ընկալելի էր դառնում: Նման պայմաններում սպացվում էր, որ Եվրոպայում ու Ամերիկյան աշխարհամասում, հասկանալիության այս փաստարկից ելնելով, հարկավոր էր աստվածապաշտության լեզուն թարգմանվեր այն երկրի լեզվով, որում ապրում էր փվյալ գաղութի հայությունը:

Այսպիսով 1930-ական թվականներից ստեղծվում է մի վիճակ, որը հիշեցնում է անցյալ դարի 30-ական թթ.: Այն ժամանակ տարբեր բարբառների միջև կտրտրակված հայության համար ընդհանուր հասկանալի գրական լեզու կարող էր լինել գրաբարը: Նույն կերպ հետեղեռնյան շրջանում, մայրենի լեզվի նահանջի պայմաններում, գրաբարը դառնում է ոչ միայն անցյալի հետ, այլև տարբեր համայնքների միջև հոգևոր միության կապ, և «Հայր Մերը», ժամակարգության ու ծիսական տարբեր արարողությունների ժամանակ շարունակ հնչող հանրածանոթ երգերը, աղոթքներն ու հոգևոր բանաձևումները այն կրողների համար լեզվական ընդհանրության մի շերտ էին ստեղծում նրանց հոգեպես կապելով իրար և անցյալի ժառանգությանը:

Վերսկին շեշտելով, որ բարեկարգություն չի նշանակում նախնյաց ավանդություններից հեռանալն ու արարողության պարզեցումը, Թորգոմ Սրբազանը նշում է, որ ընդամենը կես դար առաջ, երբ քահանաները նվիրումով էին կատարում իրենց պարտականությունները, անգամ թուրքախոս հայերը հասկանում էին եկեղեցում հնչող գրաբարը: Եվ գրնում է, որ ոչ թե գրաբարից պետք է հրաժարվել, այլ այն նվիրումով հնչեցնել, ինչպես նաև ժամանակի արևմտյան Եկեղեցիների օրինակով՝ կատարվող արարողությունները պլպագրել անհրաժեշտ ծանոթագրություններով և հնարավորության դեպքում նաև զուգահեռ աշխարհաբար թարգմանությամբ:

Թորգոմ Սրբազանը հոգոտ գրաբարի պահպանության մտրնացույց է անում նաև մեկ այլ կարևոր հանգամանք, որ մեր Եկեղեցին նաև ազգային Եկեղեցի ու հաստատություն է և իր բուն առաքելությունից բացի կոչված է «Հայութեան մէջ պահպանելու ինչ որ ազգային է և ազգին հոգւոյն հետ կը զօրէ իր ժողովուրդը», և որ «Եկեղեցին է, այժմ, այն գանձարանը, ուր մեր անցեալ սրբութեանց հետ կը պահպանուի դեռ Գրաբարը»:

Որպես առվածի հավաստում վկայակոչում է նաև կաթոլիկ և ուղղափառ Եկեղեցիները, որոնք, որպես անցյալի ավանդույթի և նվիրապետական կարգի վրա խարսխված Եկեղեցիներ, վերսկին ձգտում են պահպանել

լատիներենն ու հունարենը եկեղեցական լեզվում, թեև ոչ միայն ազգային Եկեղեցի չեն, այլև իրենց եկեղեցական կառույցի մեջ մտնում են տարբեր երկրներ ու ժողովուրդներ իրենց տարբեր լեզուներով:

Այս հիմնավորումներից հետո, իբրև ամփոփում-եզրահանգում աստվածապաշտության լեզվի մասին ասում է. «Ս. Պատարագը և աղօթքները և շարականները բոլորովին պահելով գրաբար, քարոզանման մեծ աղօթքները կարդալ միայն Աշխարհաբար, իսկ Հին Կտակարանի և Առաքելական ընթերցուածները նոյնպէս կարդալ լոկ կամ նաև Աշխարհաբար: Աւետարանի ընթերցուածները պէտք չկայ բնաւ Աշխարհաբարի վերածելու. այնքան պարզ է անոնց Գրաբարը, ինչպէս իրենց իմաստը»:

Այս շարքի վերջում հրատարակիչները գետեղել են նաև «Առաջին քայլը» խմբագրականը, որը թեև նվիրված չէ «Ջեկուցման» մեջ արծարծված հարցերին, սակայն նրանում առավել հստակ է ցոլանում Թորգոմ Սրբազանի ըմբռնումը բարեկարգության՝ որպես եղածի բարվոք պահպանության բուն էության և խորհրդի մասին: Բարեկարգության ճանապարհի առաջին քայլն է անվանվում Խորեն Ա Կաթողիկոսի որոշումը, որը նախորդել էր հայրապետական կոնդակին և «Ջեկուցմանը», Սրբոց Թարգմանչաց աշնանային տոնի ժամանակ կատարել նաև հայոց գրերի գյուտի և Ս. Գրքի հայերեն թարգմանության հիշատակը: Թեև հայրապետական այս տնօրինումը բարեկարգության հարցի պաշտոնական քննարկումը սկսելուց առաջ է կատարվել, սակայն Թորգոմ Սրբազանն ասում է, թե այս տնօրինմամբ խանդավառվողները ցանկանում են մի կապ տեսնել վերջինիս և Բարեկարգության հրահանգի միջև: Իր կողմից էլ ավելացնում է, թե կարող ենք «Թարգմանչաց տօնի մտածումը բարեկարգութեան ձեռնարկին իբրև ծրագիր կամ յատկածիր նկատել»: Թարգմանչաց տոնը գրերի գյուտով և Աստվածաշնչի թարգմանությամբ «Տօն ազգային և եկեղեցական» հռչակելով՝ անմահացնում ենք հիշատակը Թարգմանչաց շարժման, և բարեկարգությունն էլ պետք է դիտել այդ շարժման շրջագծում և բխեցնել նրանից:

Ըստ Թորգոմ Սրբազանի՝ բարեկարգությունը հենց հայ դպրության ոսկեդարն էր, իսկ բարեկարգիչները՝ մեր Սուրբ Թարգմանիչները: Հետևաբար բարեկարգությունը պետք է լինի «վերանորոգումը կամ շարունակութիւնը միայն անոնց ձեռքով արդ կատարուածին. այսինքն՝ «աստուածագործ մշակութեան»* մեծ շարժումին»:

Ո՞րն էր Թարգմանչաց նպատակը հինգերորդ դարում և որը պիտի լինի մեր օրերում. «Մօտեցնել կրօնքը ժողովուրդին. ա՛յս միայն էր և եղաւ Անոնց նպատակը, իրենց գործին ամբողջ ընթացքին. ա՛յս պէտք է լինի նաև հիմակ

* Չակերտներում բերվածը Կորյունի խոսքերն են:

հետապնդելիք միակ բանը բարեր այն աշխատութենանց միջոցին. զորս առաջադրած ենք ընել»:

Այսպիսով. բարեկարգության բուն հարցը էության մեջ է և ոչ թե ձևական՝ իր իսկ բնորոշմամբ երկրորդական, նորոգողական և չորրորդական հարցերի զեղչման կամ հավելման մեջ, այլ «անիկա ժողովուրդներու կեանքին գերագոյն յղաշրջումովը անոնց հոգիին մէջ նոր ու փրկարար մրափրիպարի մը կառուցումն է. բան մը. որ. ինչպէս ըսինք. եղած-կատարուած է արդէն անգամ մը և ընդմիշտ մեր մէջ փասնևհինց դարեր առաջ»:

Իբրև ամփոփում ասում է. որ բարեկարգության նպատակն է Եկեղեցին առավել մոտեցնել և ընտանի դարձնել ժողովրդին. բայց առանց նոծնլու Հայոց Եկեղեցու Առաքելական. Արևելյան. Ազգային և վաղնջական նկարագիրը. որի համար անհրաժեշտ է ոչ միայն Եկեղեցին մոտեցվի ժողովրդին. այլև «բանել Ազգը. քրիստոնեական դաստիարակութեամբ. Աւետարանի բարոյական բարձրութեան»:

Այսպիսով. Թորգոմ Սրբազանի համար Հայ Եկեղեցու բարեկարգությունը ոչ թե Եկեղեցու բողոքական ըմբռնմամբ ռեֆորմացիան է. նվիրապետական կարգի և ավանդության փոփոխությամբ. այլ եղած կարգի բարվոք պահպանությունը: Եկեղեցու բարեկարգության նպատակը. ըստ Թորգոմ Սրբազանի. չպետք է լինի նրա բաղկացուցիչ տարրերի փոփոխությունը. այլ Եկեղեցին ժողովրդին և ժողովուրդը Եկեղեցուն մոտեցնելը. հոգևոր կյանքի վերանորոգությունն ու վերարծարծումը ժողովրդի կյանքում. որի համար անհրաժեշտ է ոչ թե պարզեցնել Եկեղեցու ծեսը. ժամակարգությունը. լեզուն և. ընդհանրապես. նվիրապետական ողջ կառույցը. այլ այս ամենը հասու դարձնել ժողովրդին. եղածը պարզեցնելու փոխարեն ընկալելի դարձնել. որի համար էլ. Թորգոմ Սրբազանի ըմբռնմամբ. եկեղեցական բարեկարգության կենտրոնն ու առանցքը կազմում են պատրաստված հոգևորականները և բարեպաշտ ժողովուրդը: Այս երկու բարձունքների նվաճումը կհասցնի Եկեղեցու բարեկարգմանը. և Եկեղեցու բարեկարգման ուղին դեպ այս երկու բարձունքները տանող ճանապարհը գտնելն է:

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ԹՈՒՂԹ ԿԱՆՈՆԱԿԱՆԸ»

1786 թ. դեկտեմբերին Էջմիածնի վանքի կաթողիկոսական կոնդակների ու նամակների սնագրությունների մատյանում գրանցվեց մի կարևոր գրություն, որը 1787 թ. հունվարի 11-ին մաքրագրվեց երկու օրինակ, մեկն ուղարկվեց Կ. Պոլիս, մյուսը պահվեց Էջմիածնում: Մեր ձեռքի տակ է ցարդ անտիպ մնացած այդ գրության թե՛ սնագրությունը[1] և թե՛ մաքրագիր օրինակը[2]: Վերջինս կնքված է Ղուկաս Կաթողիկոսի (1780-1799) կողմից և վավերացված Էջմիածնի վանքի բոլոր միաբանների (18 եպիսկոպոս, 35 վարդապետ, 3 աբեղա) կնիքներով: Մաքրագրող քարտուղարը կնիքների տակ դրել է միաբանների անունները: Այդ գրության բովանդակությունը խտացված է վերնագրի տեսք ստացած ներքոհիշյալ համառոտագրության մեջ. «Թուղթ կանոնական ի հաստատութիւն նախնեացն սահմանաց վասն որպիսաբար ընտրելոյ և կացուցանելոյ զկաթուղիկոս ի տուրբ Աթոռս Էջմիածնի, և որպէս վարելոյ սպասաւորաց նոցա և գործակալաց, նաև նուիրակացն ի գործս իւրեանց, որ առ ընդհանուր ազգն: Գրեցաւ յերկուս օրինակս և կնքեցաւ ի սրբազաեէն և բոլոր քահանայակարգ միաբանից և յայլոց, որոց մինն առաքեցաւ ի Կոստանդնուպօլիս և մինն պահեցաւ ի տուրբ Աթոռոջս»[3]:

Ինչը պատճառ դարձավ «Թուղթ կանոնականի» ստեղծվելուն և ինչ է դա իրենից ներկայացնում:

---

[1] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4501, էջ 1565-1566:

[2] Մատենադարանի արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 243, վավերագիր 69:

[3] Ձեռ. 4501, էջ 1501, 1565:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը (1763-1780) 1775 թ. Ջմյուռնիայից եկած կանչեց Ղուկաս Կարնեցի եպիսկոպոսին, որը մեկնել էր այնտեղ որպես նվիրակ և առաջնորդ: Ի դեմս իր նախկին գործակիցի, գործիքաց, շրջահայաց և կազմակերպչական անուրանալի ձիրքով օժտված մի հոգևորականի, որին կարելի էր այդպիսի ծանր ու դժվարին պայմաններում վստահել Հայոց Եկեղեցու ղեկավարությունը: Եվ բերելով նրան Էջմիածին՝ քաղաքական բուռն իրադարձությունների մեջ ուժասպառ եղած Սիմեոն Երևանցին ծրագրել էր Ղուկաս Կարնեցուն որպես խորհրդական պահել իր կողքին և ի վերջո նրան թողնել Ամենայն Հայոց Կաթողիկոսի Աթոռը:

Այդ տարիներին քաղաքական ծանր վիճակ էր ստեղծվել Արևելյան Հայաստանում, հատկապես նրա կենտրոնական մասում՝ Արարատյան դաշտում: Երևանի խանը, չկարողանալով պաշտպանվել Իրանի հյուսիսում մերթ ընդ մերթ հզորացող բռնակալներից, հարկադրված էր եղել համապատասխան դրամական վարձատրությամբ օգնություն հայցել Քարթլ-Կախեթի թագավոր Հերակլ Բ-ից: Հարկային այդ կախվածությունը, սակայն, փևական բնույթ չուներ, ուստի վրաց թագավորը ժամանակ առ ժամանակ արշավում էր դեպի Երևան՝ ավերելով ու ամայացնելով Արարատյան դաշտի բնակավայրերը: Այդ արշավանքները պարբերաբար հետևում էին միմյանց և Սիմեոն Երևանցին միշտ չէ, որ կարողանում էր հաշտեցնել երկու կողմերին:

1779 թ. Հերակլի զորքը կրկին ներխուժել էր Արարատյան դաշտ և շրջապատել Երևանի բերդը: Չկարողանալով գրավել այն՝ նա Արարատյան դաշտի ութ գյուղերի բնակիչներին իր զորքի հետ տարել էր Վրաստան: Բայց նախքան գնալը, Երևանի խանին նա մի նամակ էր գրել, որով հայտնել էր իր կողմից երկիրն ավերելու, մարդկանց գերեվարելու և այն մասին, որ «թէ այսպէս է առնելոց, եթէ ոչ անսայցեն»[4]:

Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի կյանքի վերջին ամիսներն անցան ընդհանուր ավերածության ու ամայության պայմաններում: Հերակլի տեղահան արած և Վրաստան փոխադրած բնակիչների մի մասը ոչնչացավ՝ «կէսք ժանտ-մահիւ, կէսք օդով խստութեան, կէսք սովու և կէսք այլ իմն ցաւօք ըստ մեծի մասին հանգեան ի Քրիստոս»[5]: Հետագայում Ղուկաս Կաթողիկոսը շատ ճիգ ու ջանք թափեց կենդանի մնացածներին իրենց տները վերադարձնելու համար: Հայտնի է, որ Երևանի Հուսեյն-Ալի խանը ձգտում էր Հերակլի արշավանքի վրեժը լուծել հայերից: Նա ձերբակալել էր Երևանի հայ մեծատուններից ոմանց, թալանել նրանց ունեցվածքը և մի

---

[4] Գարեգին Ա. Կաթողիկոս, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պրակ. ե., 1951, Անթիլիաս-Լիբանան, էջ 52:

[5] Նույն տեղում, էջ 56:

մասին սպանել: Այժմ նա հարմար առիթի էր սպասում իր բարկությունը Էջմիածնի վրա թափելու համար:

Միմեոն Երևանցին մահացավ 1780 թ. հուլիսի 26-ին: Մահից երկու օր առաջ նա կանչել էր բոլոր եպիսկոպոսներին և հայտնել, որ ինքը Ղուկասին պահել էր իր մոտ, որ «յաջորդաբար նա լիցի Հայրապետ և կառավարեսցէ զսուրբ Աթոռս յայսմ վտանգածին և վրդովեալ ժամանակիս»[6]: Դրանից յոթ օր անց, օգոստոսի 2-ի կիրակի օրը, Ղուկաս Կարնեցին օծվեց կաթողիկոս[7]: Էջմիածնի միաբանները, հաշվի առնելով ստեղծված պայմանները, ստիպված էին արտակարգ հապճեպությամբ, առանց դրսի հայերի գիտության ու համաձայնության կատարել նոր կաթողիկոսի ընտրությունը՝ մի բան, որ կարող էր հայության մեջ դժգոհություն ու պառակտում առաջ բերել: Այդ շրջապտղականությունը վանքի գրագիր Անանիա սարկավագը պատճառաբանում է այսպես.

«Վասն աւերութեան երկրիս, ըստ մեծի մասին և խառնակութեանցն (միաբանները-Վ. Գ.) ոչ կարացին թողուլ թարց հոգաբարձուի զսուրբ Աթոռս յերկար ժամանակս: Քանզի այս երկրական ժանտքն և գայլաբարոյքն կատաղիք կամէին զպէսպէս վնասս հասուցանել սրբոյ Աթոռոյս առենայն կերպիւ, թող թէ արտաքին թշնամիքն երկրիս»[8]:

Սովորաբար, կաթողիկոսի ընտրության հարցում Կ. Պոլսի հայերին էր վերապահված վերջին խոսքը: Երբ լինում էր ընտրությունը և այդ մասին կազմվում համախոսական գրություն (մահսարագիր), այն տանում էին շրջակա վայրերը և հայկական գաղութները, որտեղ ի նշան համաձայնության կնքում էին մահսարագիրը: Ամենավերջում մահսարատար արքեպիսկոպոսը մնկնում էր Կ. Պոլիս, և այնտեղի հայերը տալիս էին իրենց համաձայնությունը կամ հակառակ դեպքում, եթե կար ավելի հարմար թեկնածու, նրան էին ընտրում, հետո ստանում կաթողիկոսի հաստատման սուլթանական հրովարտակը (ֆերմանը) և ուղարկում Էջմիածին: Դրանից հետո միայն տեղի էր ունենում կաթողիկոսի օծումը[9]: Այժմ խախտվել էր այդ կարգը և դրսի հայերը դրվել էին կատարված փաստի առջև:

Երբ մահսարատար Սեթ Պետրոս եպիսկոպոս Խոզարաբյանն ընտրության վերաբերյալ կազմված արձանագրությունը, որի տակ ստորագրել ու կնքել էին ընտրողներն ու հարևան բնակավայրերի ներկայացուցիչները, հասցնում է Կ. Պոլիս, այնտեղ արդեն ամեն ինչ գիտեին և չափազանց վրդովված էին: Զաքարիա Պատրիարքը կարգադրում է չընդունել Ղուկասին որպես կաթողիկոս, նրա անունը չհիշատակել եկեղեցիներում, չհանել

---

[6] Նույն տեղում:

[7] «Ցիշատակարան. Սիմէօն Կաթողիկոս», «Արարատ», Էջմիածին, 1875, էջ 340:

[8] Մատենադարան, ձեռ. 4481, էջ 1ա:

[9] Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, Ղուկաս Կաթողիկոս, Թիֆլիս, 1899, էջ ԼԳ-ԼԴ:

սուլթանական ֆերմանը: Բացի այդ, նա վերահրապարակել է փալիս հին Տոնացույցը և մերժում Սիմեոն Երևանցու կազմած ու օգտագործման հանձնարարված Տոնացույցը[10]:

Քաջ գիտակցելով իր շուրափույթ ընտրության հետ կապված բոլոր կարգի դժվարությունները՝ Ղուկաս Կարնեցին հրաժարվում էր մտնել այդ պատասխանատու լծի տակ, բայց կաթողիկոսական գահի թափուր մնալը, թեկուզ կարճ ժամանակով, չափազանց վտանգավոր էր, ուստի միաբանների թախանձագին խնդրանքներից հետո Ղուկասը տեղի է տալիս: Բայց երբ նրան տեղեկություններ հասան Կ. Պոլսի հայերի վերաբերմունքի մասին, պառակտումն ավելի չխորացնելու համար, նա այլևս Կաթողիկոսական Աթոռին չնստեց, կարգադրեց աղոթքների ժամանակ հիշատակել ոչ թե իր, այլ հանգուցյալ կաթողիկոսի անունը, հրաժարվեց եպիսկոպոս ձեռնադրելուց, նամակները չէր կնքում կարմիր գույնի կնիքով և նույնիսկ ցանկանում էր Վեհարանից տեղափոխվել միաբանների մոտ[11]: Այնուհետև նա գրավոր հայտնեց Զաքարիա Պատրիարքին, թե ինքը պատրաստ է գիջելու կաթողիկոսական գահը: «Երբ և նկեսցէ, - գրել է նա, - յանձննեցից ինքեան զՏունս սուրբ, զոր իւրով ամբողջ կուսութեամբ պահեալ եմ շնորհոքն Աստուծոյ մինչև ցայս կէտ և պահեմ»[12]:

Սույն վիճակը շարունակվեց մինչև 1781 թ. կեսերը և այդ ընթացքում Ղուկասի համակրողների ու կողմնակիցների թիվը գնալով ավելացավ: Այս ժամանակ մի անակնկալ միջադեպ կարգավորեց խնդիրը: Կ. Պոլսում կաթոլիկություն ընդունած հայերին հալածելու պատճառով գերմանական դեսպանի միջամտությամբ թուրքական իշխանությունները Զաքարիա Պատրիարքին 1781 թ. մայիսին աքսորեցին Բուրսա: Նրա փոխարեն պատրիարք դարձավ Բուրսայի առաջնորդ Հովհաննես Համադանցին, որը Կ. Պոլսի հայ մեծամեծների հետ միասին դիմեց սուլթանին՝ ստանալու Ղուկաս Կարնեցու հաստատման հրովարտակը[13]: Դա ստացվեց 1781 թ. օգոստոսին[14]: Այսպիսով, Ղուկասի ընտրությունն օրինականացվեց և նա ճանաչվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Ամեն ինչ կարծես թե հարթվեց, բայց Ղուկաս Կարնեցին չէր հանգստանում կատարված միջադեպից: Նա անպայման որոշել էր ստեղծել կանոնական մի թուղթ, որի մեջ հանգամանորեն ներկայացնելով արտակարգ պայմանների թելադրանքով Կաթողիկոսական ընտրության կարգի

---

10 Նույն տեղում, էջ ԼԷ:

11 Նույն տեղում, էջ ԼԸ:

12 Նույն տեղում, էջ Խ-ԽԱ:

13 Նույն տեղում, էջ ԽԱ:

14 Այդ հրովարտակի պատճենն այժմ պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվային բաժնում (տե՛ս Կթղկ. դիվան, թղթ. 1դ, վավ. 491ա-491է, 492ա-492ե):

բացառիկ այդ խախտումը՝ մեկնաբանել Հայոց Եկեղեցու Կաթողիկոսական ընտրության ընդունված և սրբագործված կարգը՝ հնտրագայում թույլ չտալու համար նման կարգի խախտումներ: Առավել ևս, որ այդպիսի կանոնական թղթի սրեղծման ու հաստատման պահանջ էին ներկայացրել նաև կոստանդնուպոլսեցիները:

1787 թ. հունվարի 11-ին Կ. Պոլսի Պատրիարքին, քահանաներին և ողջ ժողովրդին ուղղված կոնդակում Ղուկասը գրում է, թե կանոնական թղթի սրեղծման պահանջը միանգամայն օրինական է, ուստի ինքը թողնելով «զբիտրազան հոգս և զգործառնութիւնս մեր անպակասելիս յայսքան միջոցի ... գրեցաք զկանոնական նամակն Բ (2) համանման՝ հանդերձ պատճառօք և որպիսութեամբն անցիցն մերոց, և բոլոր եպիսկոպոսօք և քահանայակարգ միաբանիւք սրբոյ Աթոռոյս և առաջնորդօք մերձակայ վանորէից մերոց կնքնալ, զմին թողաք ի սուրբ Աթոռոջս մնալ մշտնջենապէս և զմին ընդ հոգևոր որդւոյդ մերում Յովհաննէս խոհեմամիտ վարդապետիդ առաքեցաք առ ձեզ՝ ի մնալ յայոր միշտ, զոր տեսանելոց էք»[15]:

1787 թ. հունվարի 11-ի կոնդակի մեջ Ղուկաս Կարնեցին ընդգծում է այն հանգամանքը, որ թուղթ կանոնականը ստեղծվել է վերացնելու բոլոր կարգի գժտություններն ու տարաձայնությունները՝ «երթայով սիրոյ և խաղաղութեան և որպէս յառաջն, ջերմանալ ի սէր սրբոյ Աթոռոյս և մեր ... որպէսզի ... զսուրբ Աթոռս և զօրհնեալ ազգս մեր յառապէս կառավարեսցուք ի պարծանս ձեր»: Վերջում նա խնդրում է կոնդակը Կ. Պոլիս հասցնող Հովհաննես վարդապետին շուտ պատասխան տալ և վերադարձնել, որպեսզի հնարավոր լինի նվիրակ ուղարկել և «որ այս պաղատութիւնքն բարձցին ի միջոյ և սուրբ Աթոռ մայրս ձեր ոչ բազմապատրիկ վնասեսցի»[16]:

Կանոնական թղթի հետ միաժամանակ Էջմիածնի միաբանները նամակ են գրում կոստանդնուպոլսեցիներին՝ «զեկուցանելով և յամեցման առիթն (ըստ որում յապաղեցաւ միջոցն), և նա՝ յորդորումն ի խաղաղութիւն առ եղբայրս և ի հարազատութիւն առ սուրբ Աթոռս, և առ սրբազան Վեհապետն մեր»[17]:

Նույն օրը Ղուկաս Կարնեցին և միաբանները նամակ են գրել Զաքարիա Պատրիարքին, որը, ցավոք, գրանցված չէ սնագրությունների մատյանում: Բայց պահպանվել է նրա համառոտագրությունը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Թուղթ մի ևս առ Պատրիարք Զաքարիա վարդապետն վասն կանոնականի գրոյն, զոր ահա գրեալ և կնքեալ սրբազան Վեհա-

---

15 Ձեռ. 4501, էջ 1092:

16 Ձեռ. 4501, էջ 1093:

17 Ձեռ. 4481, էջ 195ա:

պետին և միաբանից յղեցին ընդ Յոհաննէս վարդապետին, և յորդորումն ի սէր սրբոյ Աթոռոյս և իւր. ընդ որս և առանձին ինչ բանք»[18]:

Անցնենք այժմ «Թուղթ կանոնականին»: Վերը նշված երկու օրինակներից մեկը, որը պատրաստել ենք հրատարակության, ճիշտ այնպես է, ինչպես Կ. Պոլիս ուղարկվածը: Գրված է գեղեցիկ նոտրգրով, միմյանց սոսնձված երկու մեծ թերթերի վրա: Դրանց միացման տեղի վրա դրված է կաթողիկոսի փոքր կարմիր կնիքը, որի վրա ընթերցվում է. «Ղուկաս Կաթողիկոս ՌՄԻԹ»: Չափսն է 140x49 սմ: Բաղկացած է 110 տողից: Մի շարք բառեր գրելու համար օգտագործված է կարմիր գույնի թանաք: «Թղթի» վերևում, կենտրոնական մասում, կաթողիկոսական կնիքն է, կարմիր գույնով (տրամագիծն է 5 սմ), որը հրաշալի պահպանվել է: Կնիքի կլոր շրջագծի մեջ պատկերված Միածինը Գրիգոր Լուսավորչին ցույց է տալիս Էջմիածնի վանքը: Նրանք երկուսն էլ շրջապատված են չորսական հրեշտակներով: Կնիքի շրջագծի վերի մասում գրված է հետևյալը. «ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԵՐ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑ ՀԱՅՈՑ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՅՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՌՄԻԹ»: Ներսի շրջագծի մեջ՝ «ՏԵՄԻԼ ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ, ԻՋՄԱՆ ԲԱՆԻՆ ՄԻԱԾՆԻ, Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՔԱՂԱՔԻ, ՇԻՆԵԱԼ ՏԱՃԱՐՍ ՀՐԱՇԱԼԻ»:

«Թղթի» սկզբում Ղուկաս Կարնեցին սիրտ, ողջույնի և օրհնության խոսքեր է ուղղում արևմուտքում, արևելքում, հարավում և հյուսիսում, ինչպես հատկապես Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Սպահանում ու Նոր Ջուղայում ապրող հայ հավատացյալ ժողովրդին, Երուսաղեմի, Կ. Կոլսի Պատրիարքներին, բոլոր հոգևորականներին ու աշխարհիկ իշխաններին, առևտրականներին, արհեստավորներին և երկրագործներին: Այնուհետև նշված է, որ մեր նախնիները և Հայրապետները բարվոք կարգ և օգտակար սահմանադրություն են կանոնել ու ավանդել մեզ: Նրանց հետնորդներն ու աշակերտները պետք է ղեկավարվեն նրանցով, «այլապէս անպատշաճ լեալ՝ ընդունեն զհարուածս և բազմավնաս դիպուածս յամենայն կողմանց»: Հետո գրում է, որ ըստ «նախնավանդ և հնագոյն սահմանադրութեան» կաթողիկոսը կարգվում է բոլոր միաբանների և «ընդհանուր ազգի մերոյ» ընտրությամբ ու համակամությամբ: Նա վկայակոչում է Աղեքսանդր Ջուղայեցի Կաթողիկոսին, որը հնագույն կանոնները «կանոնադրեալ և կրկնակապէս աւանդեալ է ի նամակի իւրում», որպեսզի իրենից հետո և ապագայում առանց վկայական թղթի «չորեքծագեան կողմանէ, որք թէմ և վիճակ են և ժողովուրդ սրբոյ

---

[18] Միաժամանակ Ղուկաս Կարնեցին նամակ է գրել Թոխաթում գտնվող մահտեսի Աղամջանին և հանձնարարել օժանդակություն ցույց տալ Կ. Պոլիս մեկնող Հովհաննես վարդապետին, իսկ Կարինի գործակալ Հայրապետին կարգադրել է Հովհաննեսին տալ ճանապարհածախս՝ 150 դուռուշ (Ձեռ. 4481, էջ 196ա-196բ):

Աթոռոյս» առանց «Իսպահանի և Իստամպօլիս» և առանց սուրբ Աթոռի մեծ ժողովի ոչ ոք չի կարող ձեռնադրվել կաթողիկոս:

Աղեքսանդր Բյուզանդացի Կաթողիկոսը իր կանոնադրության մեջ գրել է, թե «Հայրապետք մերոյս ազգի ... համահաւանութեամբ բոլոր ազգիս մերոյ եղիցի ընտրեցեալ»: Որ նա «լինիցի ի հաւատս ուղղափառ, միաբնադաւան... ի գործս բարի, ի հասակս կատարեալ, ի վարս պարկեշտ, ի բարս քաղցր և խոնարհ և այլն»:

Ղուկաս Կարնեցին վկայակոչում է նաև Հակոբ Շամախեցի Կաթողիկոսի կանոնները, ըստ որոնց վախճանված Հայրապետի փոխարեն նորն ընտրվելու է «աթոռայեոցս և ամենայն ազգի մերոյ կամակցութեամբ»: Ապա բերում է ընտրության ժամանակ պարտադիր հետևյալ չորս կանոնները.

Նախ, ընտրված կաթողիկոսը մինչև օծվելը իր անունը չպետք է հիշատրակի «հայրապետական անուամբ» եկեղեցական աղոթքների ժամանակ:

Երկրորդ, նախքան օծվելը իր նամակների սկզբում անվան մոտ նա պետք է գրի արքեպիսկոպոս և կաթուղիկոսացու»:

Երրորդ, մինչև օծվելը կաթողիկոսը իր նամակները կնքելու համար օգտագործելու է սև գույնի թանաք:

Չորրորդ, կաթողիկոսացուն, եթե կարելի լինի գնալ Էջմիածին, ապա այլ վայրում չպետք է օծվի «ի հայրապետութիւն»:

Ղուկասը նշում է, որ նախապես իմանալով այս բոլոր կանոնների մասին՝ ինքը, այնուամենայնիվ, հարկադրված է եղել շուտափույթ, առանց դրսի հայերի գիտության և համաձայնության, կաթողիկոս օծվել: Հետո նա մանրամասն նկարագրում է ստեղծված քաղաքական կացությունը: «Ահա յայնցանէ պատճառացն հարկաւորեցեալ, այսպէս եղև կոչումն մեր և օծումն, և ոչ այլ կերպիւք»: Այդ պատճառների մասին խոսք եղավ այս հրապարակման սկզբում:

Ղուկաս Կարնեցին անհրաժեշտ է համարում «կրկակօրէն դրոշմեմք ի թղթիս և կանոնադրեմք» հետևյալ կանոնները, որոնք «ըստ վաղնջական սովորութեանց եղելոց ի սուրբ Աթոռոջս» և որոնք այնուհետև «անվրէպ կատարեսցին»:

Նախ, կաթողիկոսի մահվան ժամանակ գլխավոր արքեպիսկոպոսները Վեհարանից դուրս են հանում սպասավորներին, ապա փակում ու կնքում դռները, բայց բանալիները թողնում են նախկին սպասավորների մոտ: Եթե որևէ առարկա հարկավոր լինի, ապա նույն կնքողները սպասավորների հետ, որոնց մոտ էին գտնվում բանալիները, բաց են անում դռները, վերցնում հարկավոր առարկաները, փակում և կնքում դռները մինչև նոր կաթողիկոսի ընտրվելը: Երբ ընտրությունը կայանա, և կաթողիկոսը գա նստելու իր գահին, ապա նրան պետք է հանձնեն իր գրասն ու բանալիները:

Երկրորդ, ըստ Աղեքսանդր Ջուղայեցի Կաթողիկոսի կանոնի և «ըստ յիշեցմանց» Աղեքսանդր Բյուզանդացու և Հակոբ Շամախեցու, կաթողիկոսի

մահից հետո ս. Աթոռում գումարվելու է ժողով բոլոր միաբանների, առաջնորդների, քահանաների, երկրի իշխանների և նշանավոր մարդկանց մասնակցությամբ, որի ժամանակ ընտրվելու է «գհայրապետութեան արժանի արքեպիսկոպոսն», որը կարող է լինել թե՛ Էջմիածնից և թե՛ այլ վայրերից: Հետո համախոսական նամակ (մահնամակ) պետք է գրել մեր ազգին «ն մանաւանդ ի գերահռչակ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս և ի յԱսպահան» և համակամությամբ խնդրեն «կարգել գնա կաթուղիկոս»:

Իսկ թե ոմանք առանց գիտության և համաձայնությամբ բոլոր ազգին հանդգնեն մի որևէ եպիսկոպոսի ընտրել կաթողիկոս, և ինքն էլ համաձայնվի դրան, ապա դա անընդունելի կլինի, կհամարվի խռովություն, և ընտրողները նզովյալ կլինեն:

Երրորդ, նորընտիր կաթողիկոսը Էջմիածնի վնց գլխավոր և պարիքով ծեր եպիսկոպոսների ընտրում է իրեն խորհրդակից և «նոցին գիտութեամբն գգլխատր առնլիս առնուցու, և զպալիսն տացէ»: Այս կանոնը նորություն չէ և օգտար չէ «ի նախնեացն սովորութեանց», քանի որ միշտ էլ ս. Տան «իրակութիւնք» գործակալներն են արել, ամենայն մուտք և ելք նրանց ձեռքով է կատարվել ու գրանցվել դավթարների մեջ: Ուրեմն կաթողիկոսի մոտ գտնվող արքեպիսկոպոսը, փեղապահը, աթոռակալ կոչվող գործապետը, ս. Տաճարի մեծ լուսարարը, ժամօրհնողը և դարպասչին խորհրդականներ են լինելու կաթողիկոսին և «մտերմաբար ակնածուք ամենայն գործառնութեանց, ելից և մտից սրբոյ Գահիս»:

Չորրորդ կանոնը վերաբերում է Էջմիածնի նվիրակներին: Վերջիններս, ըստ Հակոբ Ջուղայեցու գրած խրատների և իր՝ Ղուկասի «պատուիրատուութեանց», ուր էլ գնան, համեստ և պարկեշտ պետք է լինեն, «առաքինավար և ուղղաբարոզ»: Չպետք է խառնվեն վիճակների առաջնորդների գործերին, սիրով ու քաղցրությամբ պետք է վարվեն Երուսաղեմի նվիրակների հետ: Նրանք միմյանց նկատմամբ եղբայրասիրության բարի օրինակ պետք է լինեն ժողովրդի համար, կռվից ու աղմուկից մշտապես պետք է խույս տան: Նվիրակները ս. Աթոռի արտյունքները չպետք է վատնեն և իրենց գործն ավարտելուց հետո անհապաղ վերադառնալու են Էջմիածին և այնտեղ են տալու իրենց հաշվետվությունը: Ժողովրդի հետ նրանք խաղաղությամբ պետք է վարվեն, մեղմությամբ, նրանց հորդորեն ս. Աթոռին տալու իրենց տուրքերը:

Ուշագրավ են այս կապակցությամբ Ղուկաս Կարնեցու արտահայտած մտքերը. «չափաւորապէս խնդրեսցեն զնոյն, իբր զկաթն ի կթելոց, և ոչ ճմլելով գպտկունս, զի արիւն ելցէ ըստ իմաստնոյն»: Նվիրակներին նաև պատվիրում է ուղղասիրաբար, խոհեմությամբ և բարի քաղաքավարությամբ վարվել բոլորի հետ, որպես վայել է Քրիստոսի պաշտոնյային և ս. Աթոռից ուղարկված առաքյալին՝ մխիթարելով ժողովրդի սիրտը շահեն և ս. Աթոռը փառավորեցնեն իրենց բարի գործերով: Իսկ նթե նվիրակներից

ոմանք հակառակն անեն և այդ մասին վիճակներից բողոքներ հասնեն կաթողիկոսին, ապա նրանք եկ կվերադարձվեն Էջմիածին, կդատվեն և արժանի պատիժ կստանան:

Այնուհետև խոսվում է այն անձանց մասին՝ «ի դատելեացն ոք», որոնք անհնազանդություն կցուցաբերեն Հայրապետին Օսմանյան տերության մեջ: Այդ դեպքում կաթողիկոսը պետք է գրավոր դիմի Կ. Պոլսի Պատրիարքին՝ մեղավորին արքունական հրամանով Էջմիածին ուղղարկելու համար:

Վերջում հորդորվում է ամենայն ժամ պահել Աստծո օրենքները, պատվիրանները և մեր սուրբ Հայրապետների կանոններն ու բարի ավանդությունները: Նա նշում է, որ բազմաթիվ անձանց խնդրանքով գրել է այս կանոնները «ի յօգուտ սրբոյ Աթոռոյս, ի խաղաղութիւն և ի շահ օրհնեալ ազգիդ»: Կանոնները գրվել են երկու օրինակից «միապես», կնքվել ս. Գահի բոլոր եպիսկոպոսների ու քահանայակարգ միաբանների կողմից: Եվ արդ, ովքեր չեն հետեւի «զխաղաղաւոքն, աստուածահաճոյ և օգտաւոր կանոնս գայսոսիկ ... արժանիք լիցին մերոցս դատաստանաց և պատժոց հոգևորապես և մարմնատրապէս»: Իսկ ովքեր հնազանդությամբ կատարեն այս գրվածները, կլինեն «անպարտք պատժոց և ազատք ի խղճէ, օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ»:

ՎԱՀԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
«Երևանի համալսարան» թերթի խմբագիր

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Այս գարնան մայիսի 16-ին լրացավ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 80-ամյակը:

Արդեն դարասկզբից բարձրացվում է հայրենի հողում միջնադարյան համալսարաններից հետո վերստին համալսարան ունենալու հույժ կարևոր խնդիրը: Այդ առթիվ դեռևս 1917 թ. ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանը, խոսելով հայկական համալսարան ունենալու մասին, ասում էր. «Եվ պետք է սրտեղծել Հայոց Համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորել հայերեն լեզվով: Մեր գարբրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ՝ Հայկական Համալսարան ... Ինչ որ մենք կլինենք՝ մեր համալսարանն էլ մեզ հետ»[1]:

Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծումից մեկ տարի էլ չանցած, նախանձախնդիր մի խումբ մտավորականներ դիմում են կառավարությանը և շեշտում համալսարան հիմնելու «հույժ կարևորությունը նորանկախ Հայաստանը կուլտուրապես, քաղաքականապես բարձրացնելու ու զարգացնելու տեսակետից»[2]: Այդ խնդիրն առաջադրողներից ու նրա հետևողական պաշտպաններից էին ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարներ Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը, Սիրական Տիգրանյանը և Նիկոլ Աղբալյանը: Նրանք մի քանի անգամ դիմում են ՀՀ կառավարությանը՝ հիմնավորելով համալսարան ունենալու խիստ անհրաժեշտությունը: Սկզբում հարց է դրվում Թիֆլիսում գործող Անդրկովկասյան մասնավոր համալսարանը Երևան տեղափոխելու կամ նրան նյութական օգնություն

---

[1] Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 7, Եր., 1995, էջ 326-327:

[2] Երևանի համալսարան. 1918-1920 թթ. վավերագրերի ժողովածու, կազմեցին Ֆ. Հ. Մամիկոնյան, Ս. Ս. Միրզոյան, Եր., 1995, էջ 18: Ներկա հոդվածում առկա մեջբերումների մեծ մասը վերցված է այդ ժողովածուից:

ցույց տալու՝ նկատի ունենալով, որ այդ համալսարանի 1715 ուսանողներից մոտ 700-ը, իսկ 76 դասախոսներից 25-ը հայեր էին:

Այդ խնդրի շուրջ տեղի են ունենում մի շարք բանակցություններ, գրվում դիմումներ ու զեկուցագրեր, հարցը դառնում է լայն քննարկման առարկա: 1919 թ. մայիսի 7-ին ՀՀ նախարարների խորհուրդը լսում է հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Մելիք-Ղարագյոզյանի՝ «Անդրկովկասյան համալսարանին 500.000 ռուբլի նպաստ տալու մասին» զեկուցումը և մերժում այն: Բայց և նույն նիստում նրան հանձնարարվում է նոր զեկուցում պատրաստել՝ Հայաստանում համալսարան հիմնելու մասին՝ դրան կցելով համալսարանի ծրագիրը և նախահաշիվը:

ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարությունն այս հանձնարարականների հիման վրա նախապատրաստում և ՀՀ նախարարների խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հայաստանում համալսարան հիմնելու առաջարկը: Այդ ամենից հետո, 1919 թ. մայիսի 16-ին, ՀՀ նախարարների խորհուրդն ընդունում է «Օրենք Հայաստանում համալսարան բանալու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 300.000 ռուբլի հատկացնելու մասին», որի մեջ ասված է.

«1. Հիմնել Երևանում համալսարան հետևյալ ճյուղ բաժիններով՝ ա)պատմալեզվաբանական, բ) բնիսնասիրավաբանական, գ) բժշկական և դ) ֆիզիկամաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումով:

2. Համալսարանը բանալ 1919-20 ճեմարանական տարում:

3. Առաջին հերթին բանալ պատմալեզվաբանական բաժինը:

4. Մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է Մինիստրների խորհուրդը ըստ հանրային կրթության մինիստրի առաջարկության:

5. Համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել 300.000 ռուբլի, հանձնարարելով ֆինանսների մինիստրությանը բանալ համապատասխան վարկ Հանրային կրթության մինիստրությանը»[3]:

Ըստ այս որոշման, 1919 թ. հունիսի 5-ին ընդունվում է «Օրենք Երևանի համալսարանի մասին», իսկ հուլիսի 8-ին հաստատվում են «Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնները»: Հուլիս 19-ին ընդունվում է «Լրացուցիչ օրենք Երևանի համալսարանի մասին», որոշվում է համալսարանի տեսուչ (ռեկտոր) հաստատել նշանավոր իրավաբան, Մոսկվայի և Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր, Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ Յուրի Սրեփանի Ղամբարյանին (1850-1926): Որոշվում է նաև համալսարանի դասախոսների աշխատավարձերի չափերը. ա) պրոֆեսորներին՝ մի-

[3] Նույն տեղում, էջ 58:

նիստրական, բ) դոցենտներին՝ մինիստրների օգնականների և գ) պրիվատ-դոցենտներին՝ բաժանմունքների կառավարչի աշխատավարձի չափով:

Այնուհետև, 1919 թ. ամռան և աշնան ամիսներին ընթանում են համալսարանի կազմակերպման բարդ ու դժվարին աշխատանքները: Երևանում համապատասխան շենք գրամադրել չկարողանալու պատճառով համալսարանը ժամանակավորապես փոխադրվում է Ալեքսանդրապոլ:

Ըստ հուլիսի 6-ին ընդունված «Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնների», որպես իսկական ուսանող կարող էին ընդունվել լրիվ միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացիները՝ առանց սեռի խտրության, իսկ միջնակարգ կրթություն չունեցողներից կարող էին ընդունվել որպես ազատ ունկնդիրներ միայն ժողովի թույլտվությամբ: Դիմումի հետ պետք էր ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ 1. Միջնակարգ դպրոցի լրիվ դասընթացի ավարտման վերաբերյալ վկայականը կամ նրա վավերացված պատճենը: 2. Ծննդյան վկայականը: 3. Զինվորական ծառայության վկայականը: Սահմանված էր նաև ուսման վարձ. ուսանողների համար՝ տարեկան 500, իսկ ազատ ունկնդիրների համար՝ 100 ռուբլու չափով:

Դիմումների թիվը համալսարանում մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը եղել է 632: Սակայն համալսարանի ժամանակավոր կանոններին համապատասխան, ընդունվում են ընդամենը 260 ուսանողներ, որոնցից 121-ը՝ հիմնական, իսկ 139-ը՝ որպես ազատ ունկնդիր: Հետաքրքրական է, որ ազատ ունկնդիրների ցուցակում հանդիպում ենք նաև Չարենցի՝ Եղիշե Սողոմոնյան անվանը[4]:

Նախապատրաստական այս աշխատանքներից հետո, 1920 թ. հունվարի 31-ին, տեղի է ունենում Հայաստանի համալսարանի* հանդիսավոր բացումը: Այդ տոնական արարողությանը մասնակցում են հանրապետության կառավարության դեկավարները՝ Ալ. Խատիսյանի գլխավորությամբ, քաղաքական կուսակցությունների դեկավարները, ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Պարսկաստանից և այլ երկրներից, «բազմաթիվ օտարազգի հյուրեր ու հայկական հիմնարկությունների պատգամավորներ»: Հանդիսավոր նիստը բացել է նորաստեղծ համալսարանի ռեկտոր, պրոֆ. Յու. Ղամբարյանը, որի ողջույնի ելույթից հետո Հայաստանի համալսարանի մասին զեկուցումով հանդես է եկել հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը: Նա նշում է, որ վերջապես իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազանքը, որ համալսարանի ստեղծումով նոր փուլ է սկսվում հայ ժողովրդի մտավոր կյանքում: Չնայած որ մեր երկիրն ավերված է, ասում է նա, մեր ժողովուրդը՝

---

[4] Նույն տեղում, էջ 330:

* Փաստաթղթերում կոչվել է «Երևանի համալսարան», իսկ ի պաշտոնե՝ «Հայաստանի համալսարան»: Նրա կնիքի վրա նշված է՝ «Երևանեան Հայաստանի համալսարան»:

աղբպտության մեջ, մենք հիմնում ենք բարձր կրթարան: Այն, ինչ որ մենք ունենք այսօր, շարունակում է նախարարը, ձեռք է բերված սերունդների արյունով, հարգենք նրանց հիշատակը (ամենքը լուռ ոտքի են կանգնում):

Նախարարից հետո համալսարանի հիմնադրման մանրամասներին ու խնդիրներին նվիրված ճառով կրկին հանդես է գալիս պրոֆ. Յու. Ղամբարյանը:

Ռեկտորի ելույթից հետո պառլամենտի կողմից ողջույնի խոսք է ասում փոխնախագահ Ա. Սահակյանը: Նա հավաստում է, որ նորաբաց համալսարանը կդառնա գիտության օջախ միացյալ Հայաստանի համար: Այն կլինի լուսավոր փարոս, ասում է ելույթ ունեցողը, որ իր շողերը կտարածի Հայաստանի բոլոր կողմերը և բոլոր ցեղերի վրա:

Կառավարության կողմից ողջույնի խոսքով հանդես է գալիս նախարարապետ Ալ. Խատիսյանը: Նա, դիմելով երիտասարդությանը, կոչ է անում, «բռնության շղթան կործանելուց հետո կործանել նաև տգիտության շղթան»:

Հանդիսավոր նիստում ընթերցվում է նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի ողջույն-օրհնանքը, որի մեջ մասնավորապես ասված է. «.... Ընդ մերովս հայրենի իշխանութեամբ, և աչք մեր այսօր տեսանեն զբացումն բարձրագոյն Հայկական կրթարանի, յորում, որպէս մեծայոյս եմք, ըստ հնոյն օրինակի, ծաղկելոց են պէսպէս գիտութիւնք ի հայ լեզու ի ձեռն հայազնեայ ուսուցչապետից և դասախօսաց:

Սիրելի է մեզ տեսանել զայդ բարձր կրթարան առ Մեզ, առընթեր Ճեմարանի Ս. Էջմիածնի, որ ամս յիսուն լեալ է միակ բարձրագոյն եռգևոր կրթարան ազգիս և Մայր Աթոռոյս, յորս ուսեալ են և բազումք յուսուցչապետից և դասախօսաց նորոյ Հայաստանի համալսարանիդ:

Ուրախ եմք ի սիրտ և յոգի ի բացումն բարձրագոյն կրթարանիդ. և որպէս յանցելումն Ս. Թարգմանչիք մեր և նոցին աշակերտք ի դարս եղեն սպարք հայ կրթութեան և մերոյս դպրութեան՝ հաւատամք եթէ գիտէք գնացեալ նոցին օրինակի և ուսանողք և ուսանողուհիք համալսարանիդ մերոյ, ճոխացեալք և եմփացեալք յուսումն գիտութեան՝ լինելոց են մշակք բարիք և ժրաջանք յանդաստանի կրթութեան ժողովրդեանն Հայոց մերոց Հայրենեաց:

Օրհնեմք Մերով Հայրապետական Օրհնութեամբ զայդ կրթարան, լինել առ միշտ հաստատուն և ջահ լուսատու. Օրհնեմք զվերատեսուչ նորին և զամենայն ուսուցչապետս և դասախօսս ի գործ կրթութեան հաւատացեալ ինքեանց ուսանողաց, և մաղթեմք ոյժ և կարողութիւն ի ջամբել աշակերտելոց իւրեանց ըստ աւանդեալ գիտութեանցն և ոգի հայկական: Օրհնեմք և զամենայն ուսանողս համալսարանիդ՝ լինել ջանասէր յուսանելն, սիրել զլեզու և զդպրութիւն Հայոց և գմերս պատմութիւն. իսկ յետ աւարտման

ընթացից ուսման իրեանց լինել ազնիւ և բարի քաղաքացիս Հանրապետեան Հայոց և մերոյ Հայրենեացս: Ամէն»[5]:

Ամենայն Հայոց Հայրապետի օրհնանքին հաջորդում են դիվանագիտական ներկայացուցիչներ 0. Ուտուրոպի. Վ. Հասկելի. Պուատերարի. Աստռալա-խանի. Ախվերդովի. գնդապետ Ջենկինիչի. գեներալ Նագարբեկյանի ողջույնի ելույթները: Իսկ Ս. Տիգրանյանն ընթերցում է սպացված ողջույնի հեռագրերը, որից հետո Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը կարդում է ակադեմիական դասախոսություն «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի կուլտուրական գործերում» թեմայով:

Այդ դասախոսությունից հետո դարձյալ շնորհավորանքի խոսքեր են ասում բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ն. Մելքոնյանը, Ա. Շարաֆյանը (Երևանից), Ն. Նահապետյանը (Կարսից), Վ. Աֆրիկյանը (Նոր Բայազետից), Ա. Չոլախյանը (Ալեքսանդրապոլի կանանց միությունից), Պ. Թարվերդյանը (Երևանի ուսանողության անունից), Ա. Ղազարյանը (Հայ հեղափոխական դաշնակցությունից), Ա. Խոնդկարյանը (Էջմիածնի կողմից) և ուրիշներ:

Ողջ հանդիսության ընթացքում առևտրական դպրոցի շենքի դիմաց հավաքվել էր մեծ բազմություն, որը ցնծությամբ է դիմավորում նիստի մասնակիցներին: Նրանց առջև ելույթ են ունենում Ալ. Խատիսյանը, Ս. Վրացյանը և ուրիշներ: Ապա Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ն. Մելքոնյանը կազմակերպում է մեծ ճաշկերույթ, գրական-երաժշտական երեկույթ և պարահանդես, որոնք տևում են մինչև ուշ գիշեր:

Ի պատիվ համալսարանի հանդիսավոր բացման, նույն օրը լույս էր տեսել նաև «Հայաստանի համալսարան» թերթը, որը բաժանվում է նիստի մասնակիցներին և տարածվում քաղաքում: Նրանում տպագրված են ռեկտոր, պրոֆ. Ցու. Ղամբարյանի, եպիսկոպոսներ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի և Գարեգին Հովսեփյանի, Եր. Տեր-Մինասյանի, Ստր. Մալխասյանցի, Ռ. Աբրահամյանի, Ալ. Բարխուդարյանի և այլ գիտնականների հոդվածները, որոնք արժեքավոր փաստաթղթեր են նորաստեղծ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դպրոցի առաջնեկի վերաբերյալ: «Ազատված և մեծ ազգերի ընտանիքի կողմից իբրև անկախ պետություն ճանաչված Հայաստանում այսօր բացվում է բարձրագույն դպրոց,- գրում է պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան, մագիստրոս Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը,- նորագույն ծրագրով և պահանջներով ծառայելու հայ սերնդի զարգացմանը և մարդկության լավագույն մասի քաղաքակրթական առաջադիմության ամենաբարձր նպատակներին: Մենք կամենում ենք ապրել մեր հայրենիքում, կամենում ենք շենացնել մեր ավերակները և այսօր վառում ենք մեր լուսո լապտերը, վառում ենք, որպեսզի նրա փայլուն լույսով լուսավո-

[5] «Հայաստանի համալսարան» թերթ, 31 հունվարի 1920 թ.:

րենք մեր երկրի մութ խորշերը, լուսավորենք մեր լեռների գագաթներն ու գետերի հովիտները, հաստատուն հավատով, որ այսուհետև ընդմիշտ մեր սիրուն հայրենիքից հեռանալու և չքանալու են իսկապես ուժերը ... »:

Իսկ մեր Եկեղեցու մյուս մեծ նվիրյալը՝ Գարեգին եպս. Հովսեփյանը (1867-1952, հետագայում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս), համալսարանի հիմնադրումը համարում է «մեր պատմության մեջ հաճախ կրկնված երևույթներից մեկը»: «Հաստատուն է այն փուլը,- գրում է նա,- որ հիմնված է ժայռի վրա, ազգերի կյանքի այդ անսասան ժայռը նրա հավատն է դեպի յուր լուսավոր ապագան, դեպի հոգևոր գեղեցկությունն ու ճշմարտությունը, դեպի յուր սրբազան առաքելությունը ազգերի շարքում: Այդպիսի աննկուն հավատի և ձգտումների անհնման մի շղթա է մեր նախնյաց պատմությունը, անմար յուր ազատագրության տենչերով և քաղաքակրթական ու ստեղծագործական կյանքի անդադրում ձգտումներով: Քաղաքական ամենադժվարին կացության մեջ իսկ, բարբարոսների հարվածների տակ, հայ ժողովրդի մեջ չէ հանգել ազատության, հոգևոր կյանքի, գիտության և արվեստի սրբազան փենչը. ժամանակի գրական հասկացությունների համեմատ դարեդար ստեղծվել է մի անվավեր գրականություն, որտեղ մեր ժողովրդի լավագույն զավակների անունով հուսադրվել է փառապանքի շղթաների տակ հեծող ժողովուրդը, թե պիտի գա ժամանակը, երբ ամպերի տակ թաքնված ազատության արևը նորից պիտի փայլե մեր հայրենիքի գեղեցիկ երկնակամարի վրա»:

Ահա այսպես, փոնական ճոխ հոնդիսություններով 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում իր պարապմունքներն է սկսում Հայաստանի համալսարանը: Նրա միակ պատմալեզվաբանական ֆակուլտետում, ուր ընդգրկված էին 260 ուսանողներ, փետրվարի 1-ին առաջին դասախոսությունը կարդում է Մտր. Մալխասյանցը: Միաժամանակ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում հասարակագիտական ու բնագիտական ֆակուլտետներ հիմնելու ուղղությամբ:

Այս շրջանում համալսարանում դասավանդում էին Գրիգոր Ղափանցյանը (լեզվաբանության ներածություն և համեմատական լեզվաբանություն), Մտեփան Մալխասյանցը (հայագիտության ներածություն և հին հայերեն), Արսեն Տերտերյանը (հայ գրականության պատմություն), Կոնստանտին Սավիչ-Զաբլոցկին (երկրաբանություն), Աշխարհբեգ Լոռու Մելիք-Քալանթարյանը (ինագիտություն), Գարեգին եպս. Հովսեփյանը և Երվանդ Տեր-Միհասյանը (Եկեղեցու պատմություն), Ալեքսեյ Ջիվիլեգովը (Ընդհանուր պատմություն), Ալեքսանդր Հովհաննիսյանը (հայոց պատմություն), Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը և Ռուբեն Աբրահամյանը (հունարեն և լատիներեն): Այս ֆակուլտետում են աշխատում նաև նշանավոր հայագետներ Հակոբ Մանանդյանն ու Մանուկ Աբեղյանը, ճարտարապետներ Ալեքսանդր Թամանյանն ու Թորոս Թորամանյանը և ուրիշներ: Շուտով

այստեղ աշխատանքի են հրավիրվում Նիկողայոս Ադոնցը, Հրաչյա Աճառյանը, Հովսեփ Օրբելին, Աշոտ Հովհաննիսյանը, Լևոն Մսերյանը, Նիկոլ Աղբալյանը, ինչպես նաև օտարազգի մեծանուն հայագետներ Նիկողայոս Մառը, Անտուան Մեյեն, Յոզեֆ Մարկվարտը և շատ ուրիշներ: Այդ ժամանակ հիշյալ ֆակուլտետի դեկանն էր Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը (1864-1936), որին մարտի 5-ից փոխարինում է Հ. Մանանդյանը: Այսպես պարապմունքները տևում են մոտ կիսամյակ՝ մինչև 1920 թ. հունիսը: Դրանից մի փոքր առաջ, մայիսի 27-ին, ֆակուլտետի խորհուրդը միաձայն որոշում է ընդունում համալսարանը Երևան տեղափոխելու վերաբերյալ:

Հայաստանի համալսարանը Ալեքսանդրապոլից Երևան է տեղափոխվում 1920 թ. հոկտեմբերի սկզբներին, իսկ պարապմունքները, Ս. Վրացյանի վկայությամբ, պետք է սկսվեին նույն ամսվա 16-ից: Սակայն պարապմունքները չեն սկսվում սրտեղծված քաղաքական իրադրության կտրուկ վատթարացման հետևանքով, չնայած արդեն հոկտեմբերի վերջերին կազմակերպվել էին պատմալեզվաբանական (90 ուսանող), իրավաբանական (146 ուսանող), ֆիզիկամաթեմատիկական (484 ուսանող) ֆակուլտետները: Իսկ հաջորդ տարվանից պետք է բացվեր նաև բժշկական ֆակուլտետ:

Համալսարանի գործունեությունը վերսկսելու կապակցությամբ հոկտեմբերի 29-ին տեղի է ունենում պատմալեզվաբանական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ժողովը, որը որոշում է «մեկ շաբաթով հետաձգել ֆակուլտետի բացումը՝ նկատի ունենալով ներկա լուրջ դրությունը ռազմաճակատում»: Սակայն, մեկ շաբաթ անց, ուսանողությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը պահանջում են դասերն անհապաղ սկսել: Այդ առթիվ ռեկտորի նոր պաշտոնակատար Դավիթ Զավրյանը (1889-1957) անընդհատ խնամախոսական պատասխաններ է տալիս նրանց պահանջին, որը և ստիպում է հիշյալ ֆակուլտետի խորհրդին՝ նոյեմբերի 30-ին «բողոքելու պարոն Զավրյանի այդօրինակ ընթացքի դեմ»:

Դրանից մեկ օր առաջ, 1920 թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր, որից անմիջապես հետո, դեկտեմբերի 5-ին, ֆակուլտետի խորհուրդը հանձնարարում է դեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյանին «ներկայանալ հանրային կրթության նոր կոմիսարին (խոսքը Ա. Գ. Հովհաննիսյանի մասին է- Վ. Մ.) և զեկուցել դասախոսությունները սկսելու՝ ֆակուլտետի որոշման մասին, և խնդրել նրա աջակցությունը»[6]:

Այսպիսին է Հայաստանի համալսարանի հիմնադրման և նրա կարճատև գործունեության պատմությունը, որը Խորհրդային Հայաստանի նորակազմ կառավարության կողմից ընդունվում ու պաշտոնապես ճանաչվում է: Եվ երբ 1920 թ. դեկտեմբերի 17-ին ՀԽՍՀ Լուսժողկոմ Ա.

[6] Երևանի համալսարան. 1918-1920 թթ., վավերագրերի ժողովածու, էջ 279:

Հովհաննիսյանը հրաման է արձակում, այն լինում է ոչ թե նոր համալսարան ստեղծելու, այլ եղածը վերակազմելու վերաբերյալ: Այդ հրամանում հստակ կերպով ասված է. «Երևանի համալսարանը վերակազմվում է և վերանվանվում Երևանի ժողովրդական համալսարան: Նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում են և հիմնվում է երկու բաժանմունք՝ բնագիտական և հասարակագիտական»: Նույն նպատակով ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որի աշխատանքներն ավարտվելուց հետո, 1920 թ. դեկտեմբերի 28-ին, ՀԽՍՀ Լուսժողկոմատն արձակում է համալսարանի կազմավորման մասին նոր հրաման, և հաստատվում է նրա ժամանակավոր կանոնադրությունը[7]: Իսկ 1921 թ. հունվարի 2-ին համալսարանի խորհուրդը փակ (գաղտնի) քվեարկությամբ ժողովրդական համալսարանի ռեկտոր է ընտրում մեծանուն պատմաբան Հակոբ Համազասպի Մանանեղյանին (1873-1952):

1921 թ. հունվարի 23-ին Երևանի Ստր. Շահումյանի անվան բանվորական ակումբի դահլիճում (ներկայիս Երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքի տեղում) տեղի է ունենում Երևանի ժողովրդական համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը, որի վերջում «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով հրապարակային դասախոսություն է կարդում նշանավոր իրավաբան Գրիգոր Չուբարը: Իսկ հաջորդ օրը, հունվարի 24-ին, ուսուցչական սեմինարիայի շենքում (ներկայիս Աբովյան փողոցի թիվ 52-ում գտնվող հին սև շենքում) սկսվում են պարապմունքները:

Այսպիսով, Երևանի ժողովրդական համալսարանը, ինչպես տեսնում ենք, Հայաստանի համալսարանի օրգանական շարունակությունն է, և նրա ստեղծման տարեթիվը պաշտոնապես ընդունված է 1919 թ. մայիսի 16-ը[8]: 1923 թ. հոկտեմբերի 20-ից ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահության որոշմամբ Երևանի ժողովրդական համալսարանը անվանվում է «ՀԽՍՀ պետական համալսարան», իսկ 1933 թ. սեպտեմբերի 1-ից՝ Երևանի պետական համալսարան:

Նրա սկզբնական շրջանի 2 ֆակուլտետի, 260 ուսանողի և 27 դասախոսի փոխարեն այսօր գործում են 20 ֆակուլտետներ և Իջևանի

---

[7] ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 17-18:

[8] Երևանի պետական համալսարանի հիմնադրման տարեթիվը, ընդհուպ մինչև 1980-ական թվականների վերջը, խորհրդահայ պատմագրության մեջ ընդունված էր 1920 թ. դեկտեմբերի 17-ը: Սակայն 1989 թ. մայիսի 15-ին ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցած գիտական նստաշրջանը, որը նվիրված էր այդ կարևոր տարեթվի ճշգրտմանը, վերջնականապես հաստատեց, որ Երևանի համալսարանը հիմնադրվել է ոչ թե 1920 թ. դեկտեմբերի 17-ին, այլ դրանից շուրջ մեկուկես տարի առաջ՝ 1919 թ. մայիսի 16-ին, այդպիսով ճշգրտելով խորհրդային շրջանում աղավաղված, մեր պատմության համար կարևոր նշանակություն ունեցող մի տարեթիվ ևս:

մասնաճյուղը իր 4 ֆակուլտետներով, որոնք ունեն 10 հազար ուսանող և 200-ից ավելի ասպիրանտ, այդ թվում նաև 200 արտասահմանացիներ ու սփյուռքահայեր: Ուսանողներից 36-ը անվանական կրթաթոշակառուներ և շուրջ 700-ը գերազանցիկներ են: Նրանց ուսուցմամբ ներկայումս զբաղված են 1400 դասախոսներ, որոնցից 39-ը ՀԳԱԱ ակադեմիկոսներ, 170-ը գիտությունների դոկտորներ ու պրոֆեսորներ և 700-ից ավելին թեկնածուներ ու դոցենտներ են, որոնք աշխատում են 105 ամբիոններում: Բացի այդ, նրանցից 35-ը տարբեր երկրների միջազգային ակադեմիաների ու գիտական ընկերությունների անդամներ են, իսկ 55-ը ունեն ՀՀ գիտության, բարձրագույն դպրոցի և զանազան ոլորտների վաստակավոր գործչի պատվավոր կոչումներ, ոմանք էլ պետական ու այլ մրցանակների դափնեկիրներ են[9]:

Երևանի պետական համալսարանը կադրեր է պատրաստում 28 մասնագիտությունների և 77 մասնագիտացումների գծով: Իր գոյության 80 տարիների ընթացքում երկրին տվել է շուրջ 70 հազար որակյալ մասնագետներ: Նրա կամարների ներքո կրթություն են ստացել նաև աշխարհի 75 երկրների 6.000-ից ավելի քաղաքացիներ, որոնցից շուրջ 2.500-ը՝ սփյուռքահայեր: Այստեղ իրենց թեկնածուական ու դոկտորական թեզերն են պաշտպանել 550 օտարերկրացիներ, այդ թվում շուրջ 300-ը՝ սփյուռքահայեր: Այսօր աշխարհում «ԵՊՀ պատվավոր դոկտոր»-ի գիտական աստիճանը կրում են 25 նշանավոր օտարազգիներ ու սփյուռքահայեր, որոնց թվում և երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինը, իսկ Վազգեն Ա երջանկահիշատակ Հայրապետը 1990 թ. արժանացել է ԵՊՀ բարձրագույն պարգևին՝ «Գիտական ուսումնասիրությունների և բարձրագույն կրթության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» մեդալին: 1994 թ. «ԵՊՀ պատվավոր դոկտոր»-ի գիտական աստիճան է շնորհվել նաև Հայ Եկեղեցու մեկ այլ անվանի գործչի ու գիտնականի՝ պրոֆ. Շահե արքեպս. Աճեմյանին, որը Աստվածաբանության ֆակուլտետի ստեղծումից (1995 թ.) ի վեր նրա անփոփոխ դեկանն է ու սիրված դասախոսը:

Երբ 1943 թ. նոյեմբերի 25-ին հիմնադրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան, նրա անդրանիկ կազմի 23 անդամներից 12-ը եղել են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ներկայումս ՀԳԱԱ նախագահության կազմում ընտրված 25 ակադեմիկոսներից 10-ը համալսարանականներ են: Իսկ ակադեմիայի գոյության 55 տարիների ընթացքում նրա կազմում ընդգրկված 208 անդամներից 100-ը եղել են համալսարանի դասախոսներ ու շրջանավարտներ: Նրա սաներից մի քանիսը ընդգրկվել են նաև ԽՍՀՄ ԳԱ կազմում և իրենց գիտական

---

[9] Այս թվերը վերցված են «Երևանի պետական համալսարան. 1997-98 ուստարվա հաշվետվություն»- ից, Երևան, 1998, էջ 292:

ծանրակշիռ վաստակով ձեռք են բերել համաշխարհային հռչակ: Այստեղ են իրենց գրական մկրտությունն ստացել հայ մեծանուն գրողներ Եղիշե Չարենցը, Գուրգեն Մահարին, Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սևակը, Վահագն Դավթյանը և շատ ուրիշներ:

Տարբեր գարիների համալսարանի ֆակուլտետների հիման վրա են սկզբնավորվել մեր համալսարանի մի շարք բուհեր, որոնք են՝ պոլիտեխնիկական (ներկայումս՝ ճարտարագիտական և ճարտարապետաշինարարական), բժշկական, գյուղատնտեսական, Խ. Աբովյանի անվան մանկավարժական, Վ. Ցա. Բրյուսովի անվան օտար լեզուների, Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտները, որոնց պրոֆեսորադասախոսական կազմի շատ անդամներ նույնպես Երևանի համալսարանի շրջանավարտներից են:

Երևանի պետական համալսարանն այսօր աշխարհի ճանաչված համալսարաններից մեկն է: Դեռևս 1970 թ. աշնանը, երբ նշվում էր նրա կեսդարյա հոբելյանը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, իսկ դրանից մի կարճ ժամանակ անց նա դասվել է Խորհրդային Միության 70 առաջատար բուհերի շարքը: Ներկայումս համագործակցում է աշխարհի 25 երկրների և գիտական կենտրոնների հետ և լիիրավ անդամ է համալսարանների միջազգային ընկերակցության, Եվրոպական համալսարանների ընկերակցության, Եվրասիական համալսարանների ընկերակցության, Սևծովյան երկրների համալսարանների ընկերակցության և համալսարանների նախագահների միջազգային ընկերակցության:

Հիմնադրումից ի վեր մեր մայր կրթօջախը գիտահետազոտական աշխատանքներ կատարելու խոշոր կենտրոն է դարձել: Այստեղ ներկայումս մշակվում են 217 թեմաներ, այդ թվում՝ 121-ը պետպատվերով: Համալսարանի գիտնականներից շատերը վերջին ենգամյակում արտասահմանյան գիտական կենտրոններից ստացել են պատվավոր գրանտներ: Գիտական հետազոտությունները հիմնականում ընդգրկում են երկու բնագավառ՝ բնական և հումանիտար գիտություններ, որոնց գրեթե բոլոր ճյուղերով հետազոտություններ են կատարում 1.000-ից ավելի գիտնականներ: Այստեղ հատկապես լուրջ աշխատանքներ են կատարվում «Լազերային տեխնիկա» գիտաարտադրական միավորումում, որ ուսումնասիրվում են ժամանակակից լազերային ֆիզիկայի ու տեխնիկայի, պինդ մարմնի ֆիզիկայի և բյուրեղների աճի խնդիրները: Նոր արդյունքներ են ստացվել նաև մաթեմատիկայի, աստղաֆիզիկայի ու տեսական ֆիզիկայի, օրգանական ու ֆիզիկական քիմիայի, բժշկության և դեղաբանության, կենսատեխնոլոգիայի ու կենսաբանական ակտիվ նյութերի սինթեզի, գյուղատնտեսության և հանքային ռեսուրսների արդի պրոբլեմների ուսումնասիրության բնագավառում:

Հումանիտար գիտությունների և հայագիտության բնագավառում նս հաջողություններն սկսնառ են: Հրատարակվել են մի շարք մենագրություններ ու դասագրքեր: Հայագիտական կենտրոնում վերջին շրջանում ուսումնասիրվում են միջնադարյան մատենագրությունը, հայ-բասկյան փոխառնչությունները: Այստեղ ստեղծվել է նաև բասկագիտական «Արաքս» միջազգային կիսամյա հանդեսը, ավարտին են մոտենում Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բազմահատոր բառարանի աշխատանքները, որի 4 սկզբնածավալ հատորներն արդեն լույս են տեսել: Հայ ժողովրդի պատմության ու բանասիրության, արևելագիտության ու ռոմանագերմանական լեզուների, փիլիսոփայության ու իրավագիտության, մանկավարժության ու հոգեբանության, տնտեսագիտության ու սոցիոլոգիայի, քաղաքագիտության ու հասարակագիտության հարցերը նս համալսարանականների ամենօրյա ուշադրության կենտրոնում են: Իսկ արվեստաբանության խնդիրները ուսումնասիրվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո ստեղծված հայ արվեստի պատմության ամբիոնի կողմից:

Մեր մայր կրթօջախի պատկերն ավելի ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է խոսել նաև նրա անբաժան մասը հանդիսացող մի քանի կարևոր օղակների մասին: Նրանցից առաջինն է գիտական գրադարանը, որի դերն անփոխարինելի է բարձրորակ մասնագետներ պատրաստելու գործում: Այն հիմնադրվել է համալսարանի հետ մեկտեղ, դասախոսների անձնական գրքերի նվիրատվություններով, և հետագա տասնամյակներում հարստացել ու ընդլայնվել է՝ դառնալով Հայաստանի խոշորագույն գրադարաններից մեկը: Ներկայումս նրա գրքային ֆոնդերում պահվում են 2 մլն կտոր գրականություն աշխարհի տարբեր լեզուներով: Իր մեծությամբ ու հարստությամբ ԵՊՀ գիտգրադարանը երրորդն է հանրապետությունում ՀՀ Ազգային և ՀԳԱԱ հիմնականում գրադարաններից հետո: 1994-ին շահագործման հանձնվեց նրա բազմահարկ գեղեցիկ մասնաշենքը, որի ամբողջական կահավորումը՝ նորագույն սարքավորումներով, կատարել է սիյուտքահայ բարեբար Տիգրան Իզմիրլյանը՝ ի հիշատակ իր ծնողներ Սարգիս և Մարի Իզմիրլյանների, որոնց անունով էլ կոչվում է գրադարանը ներկայումս:

Մյուս կարևոր օղակը-հրատարակչությունն է, որը հիմնադրվել է 1927 թ. մարտի 31-ին: Մինչ այդ, իհարկե, համալսարանում հրատարակվել են գրքեր, և դրանց ընդհանուր թիվը սկզբնական շրջանում (1920-27 թթ.) անցել է 30 անունից: Առաջին երկու գրքերը, որ 1920-ին տպագրվել են այստեղ, եղել են Ս. Տիգրանյանի «Հոգեբանություն» համառոտ ձեռնարկն ու նույն հեղինակի թարգմանած Ջեմսի «Հոգեբանություն» գրքի մի մասը (7 մամուլ): Հետագա 72 տարիներին ԵՊՀ հրատարակչությունը լույս է ընծայել 3050 անուն գիրք՝ մոտ 25.500 մամուլ ծավալով: ԵՊՀ հրատարակչությունն այսօր հանրապետությունում երկրորդն է, ՀԳԱԱ «Գիտություն» հրատ. հետո, որ լույս է ընծայում գիտական գրականություն: Նրա տպագրած գրքերը մեծ

հեղինակություն ունեն աշխարհի գիտական շրջաններում: Բացի այդ, այստեղ լույս են տեսնում նաև «ԵՊՀ գիտական տեղեկագիր» (1925-ից), «Քանբեր Երևանի համալսարանի» (1967-ից), «Հանդես Երևանի համալսարանի» (1967-1992 թթ. «Երևանի համալսարան») քառամսյա հանդեսները, ինչպես և «Երևանի համալսարան» թերթը:

ԵՊՀ պատմության թանգարանը ևս մեծ դեր ունի մեր «Ալմա մատերի» փարեգրության սրտեղծման գործում: Այն հիմնադրվել է 1960 թ. և առ այսօր մեր բուհերի մասին վիթխարի քանակությամբ նյութեր է ամբարել, որոնց մի մասը ցուցադրվում է մշտական գործող ցուցահանդեսում, իսկ մի զգալի մասն էլ պահվում է արխիվային ֆոնդերում:

Գիտամանկավարժական կադրերի պատրաստման ասպարեզում մեծ է ասպիրանտուրայի դերը, որը հիմնադրվել է 1928 թ. սեպտեմբերի 1-ին: Իր գոյության 71 տարիների ընթացքում 70-ից ավելի մասնագիտությունների գծով հազարավոր գիտնականներ է պատրաստել: Ամեն տարի այստեղ ընդունվում են շուրջ 100 հոգի և նույնքան էլ ավարտում, որոնցից շատերը պաշտպանում են թեկնածուական թեզեր: Այժմ ԵՊՀ ասպիրանտուրայում սովորում են 250-ից ավելի երիտասարդներ ու աղջիկներ: Նրանց թվում քիչ չեն օտարազգիներն ու սփյուռքահայերը, որոնք արտերկրում միշտ էլ աչքի են ընկել իրենց հարուստ գիտելիքներով: Գիտական կադրերի պատրաստման գործին խթանում է նաև Ռուսաստողական գիտական ընկերությունը, որը համալսարանում հիմնադրվել է 1947 թ., իսկ մինչ այդ, սկսած 1922-ից, եղել են ռուսաստողական գիտական խմբակներ տարբեր գիտությունների գծով, որոնք ղեկավարել են ականավոր գիտնականները:

Վերջին հինգ տարիներին Երևանի համալսարանում մի շարք նոր մասնագիտությունների ու մասնագիտացումների գծով բացվել են նոր ֆակուլտետներ ու բաժիններ, որոնց թվում Աստվածաբանության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետները: Հիշարժան է 1995 թ. սեպտեմբերի 16-ը, երբ համալսարանի հին շենքի կամարների ներքո, հանդիսավոր պայմաններում, հանրապետության ղեկավարների, Ամենայն Հայոց Հայրապետ երջանկահիշատակ Գարեգին Ա-ի, բազմաթիվ անվանի գիտնականների, արտասահմանյան հյուրերի ու համալսարանականների մասնակցությամբ բացվեց Աստվածաբանության ֆակուլտետը՝ իր 25 նորընծա սաներով: Այդ օրը ցնծության և ուրախության տոն էր համալսարանում: Արդ անցել է չորս տարի, և Աստվածաբանության ֆակուլտետն այս տարի փվեց իր առաջին շրջանավարտները՝ թվով 25 հոգի, որոնցից 7-ը համալսարանն ավարտել են գերազանցությամբ:

Ընթացիկ տարվա հուլիսի 17-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրանոցի սրահում տեղի ունեցավ հիշյալ ֆակուլտետի առաջին շրջանավարտների ավարտական հանդիսությունը, որին մասնակցում էին ԵՊՀ ռեկտորատի անդամները, անվանի գիտնականներ, բարձրաստիճան հոգևորա-

կաններ, բազմաթիվ համալսարանականներ և հյուրեր Սփյուռքից: Այդ օրը, հանդիսավոր պայմաններում, աստվածաբան շրջանավարտները սփացան իրենց վկայագրերը:

Ահա այսպես, ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական և հասարակական կյանքում ձեռք բերած նվաճումներով Երևանի պետական համալսարանը ոտք է դնում նոր՝ 21-րդ դարի շեմին: Ներկայումս համալսարանում կատարվում են մեծ վերափոխություններ, նոր ուստարվանից լիարժեք կերպով շարք է մտնելու հռաստիճան ուսուցման համակարգը, առաջին անգամ ընդունելության է կատարվելու մագիստրատուրայում: Ընդլայնվում են նաև նրա գիտամշակութային կապերը արտասահմանյան առաջատար համալսարանների հետ, և այդ գործում մեծ են ԵՊՀ քսանմեկերորդ ռեկտոր (1993 թ. հոկտեմբերի 25-ից), ականավոր գիտնական, ՀԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ջանքերը: Նա ամեն ինչ անում է մեր մայր կրթօջախի միջազգային հեղինակության բարձրացման համար: Արդեն երրորդ տարին է, ինչ ինտերնետի հիմքի վրա ձևավորվում է տեղեկատվական լայն ցանց, որի նպատակն է սփեղծել գիտելիքների ամբողջական բանկ և այն մատչելի դարձնել բոլոր համալսարանականներին: Դա թույլ կտա միջազգային ասպարեզում բարձրացնելու Երևանի պետական համալսարանի հեղինակությունը, և նրա շրջանավարտները համաշխարհային կրթագիտության բնագավառում կունենան մեծ մրցունակություն:

Վերջում ուզում ենք ավելացնել, որ վաղուց իրականություն են դարձել Հովհ. Թումանյանի մարգարեական խոսքերը. մեր համալսարանն արդեն ութսուն տարի է, ինչ մեզ հետ է, ինչ որ մենք ենք եղել, ինքն էլ՝ մեզ հետ, կիսել է հարազատ ժողովրդի փորձություններն ու դառնությունները սփալինյան բռնապետության դաժան տարիներին՝ տալով մեծ թվով զոհեր, ապա հարյուրավոր զոհեր է տվել Մեծ Հայրենականի ռազմաճակատներում: 1960-ականներին և 1988-ին նույնպես համալսարանը ժողովրդի հետ էր, իր նպաստն էր բերում ազգային զարթոնքի և Արցախյան ազատագրական պայքարի գործին, ուր ևս նահատակվեցին իր նվիրյալ սաներից շատերը: Երևանի համալսարանի դերը մեծ է եղել նաև ժողովրդի հասարակական-քաղաքական գիտակցության ձևավորման, գիտակրթական գործունեության և հայրենական գիտության վարկի բարձրացման ասպարեզներում: Այսօր նրա դերն առավել մեծանում է հայոց անկախ պետականության ամրապնդման գործում:

ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍ... 130*

Ամենամեծ դու նահատակ,
ամենահայր, ամենահայ...
Պ. ՍԵՎԱԿ

Սիա պաշտելի ու ճվիրական մի անուն, որ խորհրդանշում է բազմադարյան մի ժողովուրդ՝ իր հարուստ մշակույթով, իր տխուր ու դաժան ճակատագրով, իր տևական, բայց և հերոսական մաքառումներով, իր անկումներով ու քոխչքներով, իր անպատմելի բազում տառապանքներով ու խիզախումներով, իր մահվամբ ու մշտանորոգ հարությամբ: Քաղաքակիրթ ազգերի պատմության մեջ շատ չեն այն անհատները, որոնք իրենց հանճարի արտափայլումով, իրենց զարմանահրաշ հայտնագործությամբ ու թողած վաստակով վերակենդանացրել ու անմահացրել են իրենց իսկ ծնող ժողովրդին:

Սիա այդպիսի բացառիկ անհատականություններից է Կոմիտասը, որի մեծագործությունը կարելի է չափել ու գնահատել մաշտոցյան մեծագործության չափանիշներով միայն:

Առանց վերապահության կարելի է ասել, որ հայ ժողովրդի մշակույթի անդաստանում, հատկապես վերջին հարյուրամյակի բովանդակ տարածքի վրա, գրականության ու արվեստի բնագավառում ոչ մի մեծություն չի ունեցել և չի արժանացել համազգային այնպիսի խորը հարգանքի ու պաշտամունքի, չի վայելել այնքան ջերմեռանդ սեր ու մեծարանք, որքան Կոմիտասը: Եվ ի պատիվ մեր ժողովրդի պետք է ասել, որ նա ոչինչ չի խնայել հավերժացնելու իր այս հանճարի ճվիրական անունը:

Կոմիտասը հայտնագործեց հայ տոհմիկ երգն ու երաժշտությունը, ուստի նա մեր ազգի հարազատ ու լուսապայծառ փառքերից մեկն է, որի կատարած գերմարդկային գործի արդյունքը հար և նման է հանճարեղ Տարոնացու հրաշագործությանը:

Հայոց պատմության վաղնջական ժամանակներից, մեր ժողովրդի

---

* *Կոմիտասի ծննդյան 130-ամյակի առիթով սույն հոդվածը որպես զեկուցում կարդացվել է Գևորգյան հոգևոր ճեմարանում:*

սկզբնավորման օրերից իսկ սկիզբ առած ու նրա հետ ապրած ու գոյատևած մեր երգը քեն կայլ. ապրում էր նրա հետ. նրա շուրթերին. ավանդվելով դարեր շարունակ սերնդե-սերունդ՝ սնուցելով մեր ազգի հոգին ու սիրտը, սակայն այդ կրկը. որի մեջ մեր հինավուրց ազգի հոգին ու նկարագիրը բյուրեղացած վիճակում վարագուրվել էր դժնդակ դարերի անթափանց մշուշով, սպասում էր. որ գա ու հայտնվի արարչագործ մի ձեռք և բաց անի այն ու դուրս բերի դեպի լույս:

Եվ եկավ նա. ծնվեց մեր ժողովրդի բեղուն արգանդից՝ ծնվեց աննշան Քյոթահիայում 1869 թվականի սեպտեմբերի 26-ին. բայց նա ծնունդն էր. իր իսկ խոստովանությամբ՝ Գողթն գավառի. ուստի և վերակենդանացած շառավիղը Գողթան երգիչների. որոնք մինչև հինգերորդ դարը մեր թվարկության երգում էին գովքն ու փառքը մեր աստվածների՝ ի լուր և ի զարմանս մեր մեծ Խորենացու: Նա սնվեց ու դաստիարակվեց Վաղարշապատի այդ նույն դպրոցում. որ քացել էին մեր մեծերը՝ Ս. Սահակը. Ս. Մեսրոպն ու Վռամշապուհ արքան:

1895-ին Կոմիտասը, փայլուն կերպով ավարտելով Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դասընթացը. Հայոց Հայրիկի հովանավորությամբ 1896 թվականին մեկնում է Բեռլին և տվորում տաղանդավոր երաժշտագետ Ռիխարդ Շմիդտի մոտ ու. 1899-ին, ճոխացած երաժշտական տեսական խորը գիտելիքներով, վերադառնում է հայրենիք և նվիրվում ազգային երգ-երաժշտության տարածման վսեմ գործին:

Կոմիտասը խիզախեց..., ապա սուզվեց հայոց պատմության մութ ու խավար դարերի անդունդները անհատակ. որոնեց, գտավ և դուրս հանեց. ապա ինքնամոռաց նվիրումով. մարտիրոսական տքնությամբ ու հայրենախնամ գուրգուրանքով մաքրեց. զտեց. հղկեց ու դաշնավորեց հայ երգը և. նրա բյուրեղային հայկականությունը հավաստող քոլոր հանգամանքներով, աստիճան առ աստիճան հրաշակերտեց հայ տոհմիկ երգի գերահրաշ աշտարակը:

Մաշտոցի նման հայ երգի այս մեծ առաքյալը ևս իր սքանչելի գյուտից հետո. շրջեց ամբողջ Հայաստանում և ապա Եվրոպայում՝ տանելու իր մեծ գյուտի ավետիսը համայն աշխարհին. տարածելու մեր երգ ու տաղի. մեր բան ու բառի հմայքն ու բույրը:

Սկսած 1901 թվականից Կոմիտասը պարբերաբար համերգներ է կազմակերպել Վաղարշապատում. Երևանում. Թիֆլիսում. Քաքվում. ապա Բեռլինում. Փարիզում. Կ. Պոլսում. Կահիրեում. Ալեքսանդրիայում. Վենետիկում. Լոզանում և այլ քաղաքներում:

Այդ անմոռանալի համերգների հաջողության մասին գրվել են հիացական գրախոսություններ՝ հայ և օտար պարբերականներում: Ահա դրանցից մի քանի տող:

- Ոչ ոք ինձ չի կարող չափազանցության մեջ մեղադրել, եթե ասեմ. որ

այդ համերգը մի հեղաշրջում էր, և իր հայտնությամբ զարմացրեց մեզ... Գրում է ֆրանսիացի հանրահայտ երաժտագետ Լուի Լալուան:

1906 թվականին Փարիզում կայացած համերգից հետո կոմպոզիտոր Դեբյուսին բացականչում է՝ մոտենալով Կոմիտասին.

- Հանճարեղ Հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական հանճարի առջև խոնարհվում եմ...:

- Աստված մի Կոմիտաս էլ մեզ պարգևի, որպեսզի կարենա փրկել հելլենական երգն ու երաժշտությունը, - գրում է մի հույն քննադատ, Կահիրեում կայացած համերգի առթիվ:

- Կոմիտասն ամբողջ արևելքի հպարտությունն է ու փառքը, - գրում է մեկ այլ գրախոս ֆրանսիական լրագրերից մեկում:

Համերգային գործունեությունից բացի, դեռևս Բեռլինում ուսումնառության տարիներից սկսած, Կոմիտասը կարդացել է բազմաթիվ հրապարակային դասախոսություններ՝ նվիրված հայ գեղջուկ ու հոգևոր երաժշտության հարցերին: Այդ դասախոսություններին զուգակցվում էին Կոմիտասի անզուգական կատարումները:

Կոմիտասն անհերքելի փաստերով կարողացավ ապացուցել և համոզել, որ հայ երաժշտությունն ունի ազգային ինքնատիպ նկարագիր, և որ այդ երաժշտությունը իր դասական էությամբ զուգակշիռ է Արևմտաեվրոպական դասական երաժշտությանը, և որն ապրելով բազում դարեր ու պատռելով դաժան դարերի անջրպետները՝ հարություն առած այսօր ճառագայթում է կենդանի շնչով և հոսում ինչպես յեռուն հատակից քխող սառնորակ մի վտակ, հոսում է իր կենսատու զորությամբ ու պարզությամբ:

Իր մի շարք արժեքավոր հետազոտություններով Կոմիտասը կարողացավ հերքել նաև մեր երաժշտության մասին գոյություն ունեցող այն թյուր և անհիմն կարծիքը, ըստ որում. «հայ երգը մելամաղձոտ է ու լալկան»: «Մինչդեռ հայ երաժշտությունը ոչ միայն մեղկ ու տխուր չէ, այլ համակ ուժ է ու կենդանություն, ու իր մեջ կսնուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ ցեղին, ամենեն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությանց մեջ, կենդանի՝ որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ՝ որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը»,- գրում է Կոմիտասը:

Կոմիտասի կարդացած բազում դասախոսությունների մեջ առանձին նշանակություն և արժեք ուներ 1914 թվականի գարնանը Փարիզում գումարված Միջազգային երաժշտագետների գիտաժողովում նրա ներկայացրած դասախոսությունը: Գիտաժողովին մասնակցող շուրջ չորս հարյուր երաժշտագետները հիացմունքով են ունկնդրել հայկական գեղջուկ երգի, հայ միջնադարյան խազերի, ինչպես նաև հայ երաժշտության ամանակի, շեշտադրության ու տաղաչափության մասին Կոմիտասի խիստ շահեկան զեկուցումը:

Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի թերթերը գիտաժողովի առանցքն ու

հայտնությունը համարեցին Կոմիտասին: Կոմիտասի շնորհիվ հայ երգը սիրեց նաև օտարը: Այս հանգամանքն իրոք Կոմիտասի պատմական առաքելության կարևոր մեկ մասն է:

- Իմ երգչի կարողությունները մեկ նպատակի կծառայեն. մեծ ժողովրդիս երգն ու երաժշտությունը ծանոթացնել երաժշտական աշխարհին. և ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդն սկզբնական դարերեն ունեցեր է իր ինքնուրույն երգն ու երաժշտությունը,- գրում է Կոմիտասը:

Կոմիտասը բացեց նաև մեր վարագուրված աչքերը՝ մեր իսկ սեփական արժեքների ճկատմամբ, վերադարձրեց մերը մեզ: Նա լավ գիտակցեց, որ երաժշտությունը ոչ միայն ժողովրդի կյանքի ու նրա ներքնաշխարհի արտացոլումն է, այլ այն նաև մի զորեղ ազդակ է նրա ազգային ինքնագիտակցության զարգացման ճանապարհին:

«Ամբողջ մտատանջությունս է հասցնել աշակերտները, որոնք դպրոցներու մեջ տեղ գրավեն, ներիրվեն ազգային երաժշտության ուսումնասիրության, տարածեն ժողովրդի մեջ ազգային երաժշտության ոգին, որպեսզի ժողովրդի մեջ ազգային երաժշտության խոսքը մարմնանա, և նրա ազդեցության տակ ժողովուրդը քոքափելով իր թույլ պատյանը, մտնե վերակենդանացման շավիղի մեջ», - գրում է Կոմիտասը մեկ այլ առիթով:

Կոմիտասը հայտնաբերեց նաև մեր երգի կատարման ոճը: Օժտված լինելով բնածին զարմանալի ձայնային տվյալներով, նա հայ երգի կատարողական արվեստը հասցրեց մի զարմանալի աստիճանի: Այդ մասին են վկայում 1912 թվականին Փարիզում ձայնագրված նրա մի քանի երգերի կատարումները:

Այս տեսակետից Կոմիտասն իրավամբ հանդիսանում է երգեցողության մեր ազգային դպրոցի հիմնադիրը: Նրա ոգեղենացած ձայնը՝ ձայնն է իր ցեղի, ձայն, որի ելևէջների մեջ կարելի է լսել ու տեսնել, զգալ ու ապրել մեր ժողովրդի բազմադարյան պատմությունը: Որովհետև այդ ձայնը՝ «բուռն ու մեղմ, բարձր է ու հեզասահ, վեհ է ու ազատ, ի հեռուստ է և ի խորուստ, մերթ մեղմիկ է իբր արծագանք, մերթ ուժգին է և ավետավոր, մերթ սքանչացմամբ ու հիացական, մերթ ոգևոր ու սրտաբաց, մերթ ուրախական է ու մերթ աճուն, մերթ հավատով ու ցնծագին, մերթ լայն է ու աղաչական, մերթ վստահ է ու ջերմեռանդն հոգվով...»:

Ահա Կոմիտասի կերտած հայ երգի կատարման ու մեկնաբանման էությունը: Վերը թվարկված հատկանիշների առկայությամբ պետք է երգվեն կոմիտասյան երգերը: Թվարկված այս հատկանիշների հայեցի անվանումները ևս պատկանում են Կոմիտասի հանճարին՝ դուք այդ անվանումներին կհանդիպեք նրա ստեղծագործությունների մեջ:

Կոմիտասը նաև ապացուցեց, որ հայ երգն ունի ճիշտ նույն առանձնահատկությունները, ինչ հայոց լեզուն:

«Ժողովուրդը երգում է այնպես, ինչպես խորհում և խոսում է նա»,-

գրում է Կոմիտասը: Այստեղից էլ բխում է Կոմիտասի ստեղծագործության ակնաղբյուրը:

Հայ գեղջուկի շուրթերից քաղեց նա շուրջ հինգ հազար երգ ու տաղ, բայց, ավա՜ղ, դրանց միայն մի մասը հասցրեց մաքրել ու գտել իր հոգու և հանճարի մաքրամաքուր ավազանում. և դրանք նորից վերադարձրեց ժողովրդին՝ այդ երգի բուն ստեղծողին՝ հայտարարելով՝ որ «ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը. գնացեք և սովորեք նրանից»: Կոմիտասը գտավ նաև հայ գեղջուկ երգին խիստ պատշաճ դաշնավորում: Կոմիտասյան երգերի նվագակցությունը կարծեք միահյուսված լինի մեղեդուն. և ամեն մի երգի մեջ խոսքը, մեղեդին ու նվագակցությունը ընկալվում են իբրև մեկ ամբողջություն:

Մի քանի խոսք Կոմիտասի երաժշտական ժառանգության մասին:

Հարուստ ու բազմազան է Կոմիտասի թողած երաժշտական ժառանգությունը, այն ընդգրկում է երաժշտական արվեստի գրեթե բոլոր բնագավառները՝ ինքնուրույն ստեղծագործություն, ժողովրդական երգերի հավաքում և մաքրում անհարազատ ազդեցություններից, երաժշտագիտական բարձրարժեք հետազոտություններ, կատարողական լայն գործունեություն: Իսկ նրա գրի առած ու դաշնավորած երգերի ընդհանուր պատկերը այսպիսին է. գեղջկական-քնարական երգեր ու խմբերգեր, սիրո, կարոտի ու պանդխտության երգեր, աշխատանքային երգեր, հունձքի, գութաներգի, կալերգի, հորովելներ, ծիսական երգեր, որոնց մեջ առանձին արժեք ունի հարսանյաց երգերի շարքը, ղյուցազնական, հայրենասիրական ու քաղաքային երգեր, և վերջապես միջնադարյան հոգևոր երգերի ու առանձին շարականների բարձրարվեստ ու հարազատ մշակումներ: Այդ բոլորից բացի առանձին արժեք ունի նաև մեր ավանդական Պատարագի կոմիտասյան բազմաձայն տարբերակը, որտեղ կան առանձին համարներ, որոնք կարող են մրցել համաշխարհային դասական հեղինակների բազմաձայնած ստեղծագործությունների հետ: Կոմիտասը մշակել է բազմաձայն Պատարագի մի քանի տարբերակ, սակայն ցավ ի սիրտ դրանք ևս ի թիվս նրա մի շարք այլ ստեղծագործությունների անհետ կորել են: Կոմիտասյան Պատարագի միակ տարբերակը, որը հրատարակվել է 1933 թվականին Փարիզում, ամբողջական չէ. և որը հիշողությամբ վերականգնել է Վարդան Սարգսյանը՝ Կոմիտասի ամենաբեղմնավոր ու տաղանդավոր աշակերտներից մեկը:

Կոմիտասը եղել է նաև տաղանդավոր խմբավար. նա կարողացել է կարճ ժամանակի ընթացքում երգչախմբեր կազմակերպել ու ելույթներ ունենալ:

Մեծ է նաև Կոմիտասի վաստակը երաժշտա-մանկավարժական ասպարեզում: Նա դասավանդել է և՛ Վաղարշապատում, և՛ Պոլսում ու նրա արվարձաններում: Ժամանակակիցները ջերմ սիրով ու ակնածանքով են

հիշում իրենց սիրելի ուսուցչին: Խիստ արժեքավոր ու այժեմական են Կոմիտասի մանկավարժությանը վերաբերող հետևյալ տողերը. «Երգեցողությունը սրտի հետ կապ ունի, որ ուղղակի հոգիին կերթա, ուսուցիչ պարտիներ և քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին: Խիստ փափուկ պաշտոն մըն է ձերինը, դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է». - գրում է Կոմիտասը: Ապագա ազգը մեր մշտանորոգ ժողովուրդն է՝ մեր անցյալ, ներկա և գալիք սերունդներն են, որոնց կոչ է անում մեր տոհմիկ երգի մեծ ճվեղյալը՝ իր հավերժական պատգամով. «Ահա մեր իսկական երգերը, որոնց ստեղծել է այն ժողովուրդը, որին դուք պատկանում եք, և դուք պիտի նոցա սիրեք»: Այս պատգամի ճշմարիտացիությունը հավաստում է նաև օտարը՝ նշանավոր երաժշտագետ Թովմաս Հարթմանը. «Հայ երաժշտության նախանձախնդիր ամեն ոք նախ պետք է լիովին ուսումնասիրի և հասկանա Կոմիտասին ու ապա միայն սկսի ստեղծագործել: Ով ուզում է հայ երաժշտությանը զարկ տալ, այդ ավելի առաջ մղել, նա այլ ճանապարհ չունի»: Այո, Կոմիտասն է հայ երաժշտության ճշմարիտ ու միակ ճանապարհը, և այդ ճանապարհը լուսավորող մշտավառ փարոսը: Դժվար է կոմիտասյան գոհար երգերից մեկն ու մեկին գերապատվություն տալ, դրանք բոլորն էլ անխտիր իրենց վրա կրում են կոմիտասյան հանճարի կնիքը, և ամեն մեկը մարդկային հոգու մի չքնաղ մանրանկար է, որը հանճարեղ երգահանի արարչագործ վրձնի ու շնչի տակ դարձել է մի բարձրարվեստ կոթող և առանձինն կարող է փառքի լուսապսակով զարդարել հեղինակի լուսավոր ճակատը:

Ուստի, ինչպիսի հովերի առջև էլ բաց լինեն ձեր պատուհանները, մի մոռացեք Անտունին, Ծիրանի ծառը, Կռունկը, Կուժն առա-ն, Չինար ես-ը, Քելեր Ցոլերը, Գարուն ա-ն, Մոկաց Միրզան, Հայաստանը:

Մի մոռացեք Խորհուրդ Խորհինը, Ով զարմանալին, Հիշեցուքը, Ուրախ լերը և կոմիտասյան հոգեպարար մյուս երգերն ու մեղեդիները:

Եվ քանի որ հանճարներն անմահ են և ապրում են իրենց իսկ ստեղծած ու թողած արժեքներով, ուստի Կոմիտասը ևս ապրում է ու պիտի ապրի իր մեծագործությամբ: Իր հրաշալի ու անգնահատելի վաստակով՝ ամեն հայի մեջ՝ քանի դեռ ապրում է հայը մեր մոլորակի վրա:

«Որ մահկանացու ծնեալ անմահ զիւրն յիշատակ եթող»:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Լեզվաբանության
ինստիտուտի գիտաշխատող

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈՂՈՍՊԱԼՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԸ

«Աստված Իր սիրով մարդկանց նմանվեց և ցույց տվեց, որ մարդիկ ևս իրենց սիրով նմանվեն Աստծուն: Ուր որ սեր կա, այնտեղ չկա երկյուղ և խռովություն: ...Մերն է արքայության բանալին»:
ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՄԱՆԳԱԿՈՒՆԻ

Գերաշնորհ Ներսես արքեպս. Պողոսպալյանը թե՛ մայր հայրենիքում, թե՛ Սփյուռքում սիրված ու հարգված է ոչ միայն որպես իր հոտին նվիրված հոգևոր հովիվ, այլև որպես գեղարվեստական խոսքի վարպետ: Նա մեր ժողովրդին հայտնի է Ներսես Վանական գրական անունով: Տարբեր տարիներին լույս ընծայված չափածո երկերի հրատարակությունն ու վերահրատարակությունը վկայում են հոգևորականի բանաստեղծական շնորհի մասին: Նրա չափածո ստեղծագործությունները հոգևոր բանաստեղծական ժանրի լավագույն արտահայտություններից են:

Հոգևոր բանաստեղծության ժանրը, դարերի ավանդություն ունենալով հանդերձ, խամրել ու լռել էր մեր ժամանակներում: Այն առժամանակ անջրպետված էր Եկեղեցուց հեռացած ու խորքացած մեր հայրենակիցներից և անգամ անտեսված գրականագետների կողմից:

Քրիստոնեության համար անբարենպաստ այդ տարիներին անգամ Ներսես Վանական մտավորականն ու բանաստեղծը աննկուն կերպով ստեղծագործեց՝ այն պարզ լավատեսությամբ համակված, որ իր սրտի ձայնը կհասնի ժողովրդին, ու նա մի օր կվերագտնի դեպի Եկեղեցի բերող իր պապերի ճամփան: Այսօր հոգևոր բանաստեղծությունը աստիճանաբար գտնում է դեպի ժողովուրդը գնացող սրտի ճանապարհը:

Ներսես Վանականի բանաստեղծությունները տպագրվել են ոչ միայն մայր հայրենիքում («Ավանդ հավերժական», 1990, «Քնար հովվական», 1991, «Հատընտիր», 1995, Ս. Էջմիածին), այլև արտերկրում: Վենետիկի

Մխիթարյան միաբանությունը 1989 և 1990 թթ. տպագրել է «Տեսիլք յաւերժական» և «Հավերժ պատարագ» բանաստեղծական ժողովածուները, իսկ այս տարվա սկզբին Ստամբուլի «Արաս» հրատարակչությունը լույս է ընծայել «Յոյսի անտես թևերով» բանաստեղծությունների ընտրանին, որի շնորհահանդեսը տեղի է ունեցել Պոլսում՝ հեղինակի մասնակցությամբ: Պոլսահայությունը ջերմագին երախտիքով է արտահայտել իր հարգանքի տուրքը Մայր Աթոռի դիվանապետին:

Ներսես Վանական ստեղծագործողի գրական ներկապնակը բազմազան է: Նա ընթերցողի հետ խոսում է և՛ չափածոյի, և՛ արձակի տարբեր ժանրերով՝ բանաստեղծություն, պոեմ, քառյակ, արձակ բանաստեղծություն, քարոզախոսություն, մտորումներ և այլն, և այլն:

1995 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լույս ընծայած «Հատընտիր» ժողովածուում զետեղված են նաև թարգմանություններ, որոնք կատարված են Վ. Շեքսպիրից, Ս. Վ. Ռալեյից, Ջ. Դոննից, Ջ. Շըոլից, Օ. Մ. Տոպլեյդիից, Ա. Լ. Տեննիսոնից, Լ. Բայրոնից: Կատարված թարգմանությունները վկայում են բարձրակարգ վարպետության և թարգմանչական գործի հմտության մասին: Ի պատիվ թարգմանչի պետք է ասել, որ թարգմանական այս տարբերակներում Վ. Շեքսպիրի սոնետները և թվարկված հեղինակների բանաստեղծությունները չեն կորցրել բնագրային հնչեղությունը:

Բարձրաշնորհ հոգևորական-բանաստեղծի չափածոյի գեղարվեստական առանձնահատկություններին հայ ընթերցողը արդեն բավականին ծանոթ է մամուլում հրապարակված տարբեր գրախոսականներից, որոնցում խոսվում է հեղինակի պատկերավոր լեզվամտածողության, կիրառած հարուստ բառապաշարի, բառային նորակազմությունների, գեղարվեստական պատկերավորման միջոցների և այլնի մասին:

Ներսես Վանական ստեղծագործողի գրական դիմանկարը թերի կլինի, եթե ծանոթ չլինենք նրա արձակ խոսքին:

Չափածոյի և արձակ խոսքի յուրօրինակ համադրում է «Ուխտագնացություն դեպի լույսը» ժողովածուն (Ս. Էջմիածին, 1997 թ.): Այս հետաքրքիր քարոզգրքի հրատարակության համար հայ ընթերցողը երախտագետ պիտի լինի Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքի նորակառույց Ս. Աստվածածին եկեղեցու բարերար մեծարգո տիար Արքուր Մարտիրոսյանին:

Ժողովածուի առաջաբանում երջանկահիշատակ Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետը հայրական սիրով ու գնահատանքով է ողջունում գրքի լույս ընծայումը և ըստ պատշաճի արժևորում Ներսես Վանականի բանաստեղծական գրչարվեստի այս նորովի դրսևորումը: «Այս հատորով ան նոր տարածք մը կ'աւելցնէ իր գրական բեղուն վաստակին»,- իրատեսորեն ընդգծում է Նորին Սուրբ Օծությունը:

Այդ «նոր տարածքը» նշանավորվում է գրական-գեղարվեստական մի շարք առանձնահատկություններով:

Ողջունելի է հատորի բովանդակության արտահայտման կառուցվածքային մտահղացումը: Հեղինակը յուրաքանչյուր արձակ քարոզախոսությունից հետո զետեղում է ասելիքին համահունչ չափածո ստեղծագործություն: Դա քարոզի լեզվաոճական դրսևորման առանձնահատուկ լուծում է և այդ բնագավառում կարելի է նորույթ համարել, որտեղ արձակ խոսքը ավարտվում է չափածոյով՝ որպես յուրօրինակ ամփոփում:

Ժողովածուում ի մի են բերված Սրբազան Հոր քարոզախոսությունները՝ համաձայն Հայաստանյայց Ս. Եկեղեցու տոնակարգի: Դրանում զետեղված են նաև ազգային-եկեղեցական կյանքին վերաբերող նյութեր և հիշատակային ոգեկոչման պահեր մեր ժողովրդի կյանքից: Ժողովածուում Հայ Եկեղեցու տոնակարգին վերաբերող նյութերից բացի կան զանազան այցելությունների և ճեռնադրությունների առիթով ասված ճառեր, Հայ Եկեղեցու ծագմանը և պատմությանը վերաբերող հարցեր, առաքելական թղթերի շուրջ մտորումներ, Աստվածաշնչի՝ նոր սերնդի դաստիարակության հարցում ունեցած դերի մասին խոկումներ, կենցաղագիտական մի շարք հիմնախնդիրներ, որոնք ունեն ճանաչողական մեծ նշանակություն:

Դեպի լույսը կատարվող այս ուխտագնացությունը սկսվում է «Սրբալույս մեռոն» խորագիրը կրող նյութով, որում հեղինակը նշանավորում է նոր մեռոնը որպես հայ ժողովրդի միասնության և Հայ Եկեղեցու հարատևության խորհրդանիշ: Այս քարոզում Գերաշնորհ Սրբազան Հայրը քրիստոնեական հավատքով խանդավառելուց զատ, ընթերցողին բորբոքում է նաև ազգային հպարտության զգացումով: Նա ասում է հավատացյալ հայորդուն, որ «մեռոնով օրհնված ճակատը հայկական հպարտորեն թող կրի յոտը այդ սրբազան»: Այսպիսով շեշտը դրվում է հայրենասիրական զգացումների, ավանդության պահպանման վրա, առանց որոնց քրիստոնեությունը չի գոյատևի մեզանում:

«Ծննդյան ճրագալույցի» քարոզում բարձրաշնորհ հոգևորականը մեկ անգամ ևս անդրադառնում է համայն մարդկության Փրկչի ծնունդին, խոսում մեսիական փրկագործության դերի մասին և արդիականացնում այն: Նա անդրադառնում է հատկապես մեր օրերում նահանջող սիրուն և ներողամտության պակասին: Նրան մտահոգում են արդի բացասական երևույթները, և քարոզիչը հորդորում է հեռու մնալ դրանցից՝ հոգում կանթեղելով աստվածային ճշմարիտ լույսը: Ճշմարիտ հովիվը չի անտեսում Եկեղեցուց հեռացածներին: Որպես ներողամիտ Հայր՝ նա սիրով ու քախանձանքով հորդորում է թողնել մոլորության ճամփան ու գտնել դեպի Եկեղեցի բերող հանգստավետ ուղին: Հմուտ քարոզիչը դիմումի

այսպիսի հորդորական տոնով անշուշտ հոգեբանական ավելի արդյունավետ ազդեցություն կարող է ունենալ:

Սիմյանց հաջորդող «Քուն բարեկենդան», «Արտաքսման կիրակի», «Ծաղկազարդ» և այլ քրիստոնեական տոների կրոնական խորհուրդը մեկնաբանելուց հետո քարոզիչը դրանք անպայման արդիականացնում է՝ ներկայացնելով ժամանակի մտահոգիչ բացասական երևույթներից ձերբազատվելու բազմաթիվ ուղիներ:

Այդ քարոզախոսությունների կրոնական բովանդակությանն անդրադառնալիս նա հաճախակի պատմական էքսկուրսներ է կատարում՝ ասելիքը հիմնավորելու համար: Նա, գիտակ պատմաբանի բարեխղճությամբ վկայակոչելով պատմական փաստերը, ներկայացնում է նաև Հայ Եկեղեցու ծագումն ու հետագա պատմական ընթացքը: «Արտաքսման կիրակի» քարոզում կարևորելով աշխարհում քարիք ստեղծելը, մեզ պարզված օգնություն հայցող ձեռքերին պատասխան տալը՝ նա հիշեցնում է Աշոտ Ողորմած թագավորի կյանքի պատմությունը և հորդորում որպես ուղեցույց ունենալ այդպիսի անձանց:

Գրքի վերջում հեղինակը զետեղել է այնպիսի նյութեր, որոնք իրենց բովանդակությամբ նորույթ են քարոզախոսության ժանրում: Դրանցից մեկը կարևորում է Աստվածաշնչի դերը նոր սերնդի բարոյահոգեբանական նկարագրի ձևավորման խնդրում: Նա յուրովի է մոտենում մեր դարավերջի՝ տիեզերքը նվաճած, կոմունիստական-աթեիստական ոգով դաստիարակված սերնդի քրիստոնեացման հարցին՝ ի նկատի ունենալով նրա հոգեբանական բարդույթները:

Նյութերից մեկում արծածված է կենցաղագիտության հարցը մեր եկեղեցիներում: Այդ հարցը ևս իր բնույթով նորություն է և անհրաժեշտ մեկնաբանության ու լուսաբանման կարիք ունի: Մեզանից շատերը չեն տիրապետում կենցաղագիտության այդ մանրուքներին:

Հրապարակախոսական ժանրի այս յուրահատուկ դրսևորումները, որոնք խոհափիլիսոփայական, կրոնական բնույթ ունեն, առինքնող ու գրավիչ են դառնում գեղարվեստական բարձր արժանիքով և լեզվաոճական առանձնահատկություններով: Շարադրանքը հագեցած է հոգեբանական վերլուծություններով, կարևոր հարցերի արծարծումով, դրանց տրված ստույգ և կողմնորոշիչ պատասխաններով, պայծառ լավատեսությամբ: Հեղինակը հաճախակի զուգահեռներ է տանում բնության երևույթների և մարդկային հոգեբանության միջև՝ ասելիքը դարձնելով կենդանի և հետաքրքիր:

Քարոզների լեզուն սահուն է, պարզ, մատչելի, բայց և միաժամանակ գեղարվեստորեն հագեցած: Այդ են վկայում բազմաթիվ բանաստեղծական բառակապակցությունները (ինչպես՝ մշտանորոգ խորհուրդ փրկության,

ծննդյան լուսաշող իրականություն, աղոթավոր աղերսավոր, մյուռոնաբույր ավազան, ժառանգորդ բարյաց, ցորենաբույր հայրենիք, լուսավորչապարգև օրհնություններ, եղեռնահար քույրեր և եղբայրներ, մահաբույր իմաստ և այլն), ինչպես նաև անգործածական բառերին կենսունակություն հաղորդելով մեր բառապաշարը հարստացնելը (օրինակ՝ անսվաղ, պժգալի, բանկալ, կենցաղագետ, ջամբել, տրուպ և այլն), ինչպես նաև գեղարվեստական խոսքի պատկերավորման այլ հնարանքները:

Քարոզները նման են արձակ բանաստեղծությունների, որոնք սկսվում են շարադրանքի բովանդակությանը հարիր շարականների պատառիկներով: Գրաբարյան տեքստին հաջորդում է աշխարհաբար թարգմանությունը՝ քարոզը լսարանի յուրաքանչյուր մասնակցին հասու դարձնելու նպատակով:

Շարադրանքը սեղմ է և ամփոփ՝ զերծ անհարկի ավելորդաբանություններից և խրթնաբանություններից: Դիմումի հորդորական, խոսքի քնական ընթացքը, որն իր խորքում ենթադրում է ձայնի մեղմություն, առինքնող է և հոգեպարար: Որոշիչ-որոշյալի գրաբարյան շարադասությունը խոսքին հաղորդում է բանաստեղծական շունչ և երաժշտականություն՝ գրավիչ և դյուրընկալելի դարձնելով այն:

Պատումը շարադրված է քայի սահմանական եղանակի անցյալ կատարյալով, որին միահյուսված պատմական ներկայի վարպետ համադրությունը սահունություն է հաղորդում ասելիքին, որը քարոզախոսության ոճական կարևոր առանձնահատկություններից է:

«Ուխտագնացություն դեպի լույս» ժողովածուն կրոնական գիտելիքների համառոտ տեղեկագիրը՝ տոգորված աստվածային սիրով ու քրիստոնեական հավատքի ջերմությամբ: Նրանում ամփոփված յուրաքանչյուր ենթավերնագիր կարող է հրաշալի նյութ ծառայել առանձին քարոզթերթիկի համար: Դրանք կարելի է համապատասխան գեղարվեստական ձևավորումով հրատարակել և դարձնել մեր ժողովրդի սեփականությունը:

Բոլոր քարոզները առնչվում են արդիական խնդիրների հետ: Նրանցում աննահանջ է հույսի զգացողությունը: Միշտ հնչում է ազգին, ժողովրդին, Եկեղեցուն և հայրենիքին ծառայելու հորդորը: Եվ այդ հորդորն անընդհատ գոտեպնդում ու ոգևորում է ընթերցողին:

«Եկեք միանանք,
Որ մեր այս փոքրիկ, շատ փոքրիկ հողի երազանքը մեծ
Մարմին ստանա մեր միս-ոսկորով ...»,-

կոչ է անում ազնվաշնորհ հոգևորականը և սպասում, որ անսանք իր սրտի ձայնին և ազգովի դառնանք լույսի ուխտավոր:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՇՐՋԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ, տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 1999-2000 թթ. ուսումնական տարեշրջանի բացման հանդիսավոր արարողությունը:

Ի տարբերություն անցյալ տարիների, այս տարի, Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի նախաձեռնությամբ, բացման հանդիսադրությունն սկսվեց Տ. Գևորգ Դ և Տ. Գևորգ Ջ Կաթողիկոսների գերեզմանների վրա հոգեհանգստյան կարգի կատարմամբ: Հոգեհանգստյան պաշտոնից հետո Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը խոսքն ուղղեց ներկաներին.

«Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Այսօր մի նոր ավանդություն ենք սկսում, և դա այն է, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի շենքը կառուցողի՝ երախտավոր մեծ Հայրապետի՝ Տ. Գևորգ Դ Կաթողիկոսի շիրիմի վրա Հոգևոր Ճեմարանի 1999-2000 թթ. ուսումնական տարեշրջանի բացման առիթով հոգեհանգստյան պաշտոն ենք կատարում: Այս առիթով չենք մոռանում նաև Հոգևոր Ճեմարանի դռները 1945 թ. վերստին բացող, մեծ ջանքեր ի գործ դնող և խորհրդային իշխանությունից այդ իրավունքը առնող Տ. Գևորգ Ջ Կաթողիկոսի հիշատակը:

Այսպիսով մի նոր ավանդություն է սկսվում՝ ամեն տարի այսպիսի հոգեհանգստյան պաշտոնով պետք է սկսվի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի առօրյա կրթական կյանքը: Այս առիթով մաղթում եմ ձեզ, սիրելի սաներ, աշխատանքի եռանդ և ուսումնատենչ ոգի, որպեսզի ձեր ուսման տարիները հումպետս չգնան, այլ լինեն արդյունավետ, և դուք էլ, ի շարս այս Հայրապետների, գաք և ծառայեք Հայաստանյայց Եկեղեցուն: Թող օրհնյալ լինի հիշատակը այս եռամեծ Հայրապետների:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի. ամեն»:

Հոգեհանգստից հետո ներկաները շարժվեցին Ճեմարանի հանդիսությունների սրահ: Հանդիսությունը նախագահում էր Կաթողիկոսական Տեղապահ

Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Միջոցառմանը ներկա էին Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը, Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը, Տ. Հակոբ եպս. Գըլնճյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, բազմաթիվ հյուրեր:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, ապա ճեմարանի երգչախումբը փայլուն կատարեց «Ճեմարանի քայլերգը»: Տոմակիրների ու բուրվառակրի ուղեկցությամբ ճեմարանի փոխտեսուչ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը ներս բերեց Ավետարանն ու ընթերցեց «Սերմնացանի առակը»: Ապա ճեմարանականները կատարեցին «Որք զարդարեցին» հիասքանչ շարականը, որից հետո տեսուչ Հայր Սուրբը հանդես եկավ բացման խոսքով.

«Առաջին զանգը շուտով հնչելու է, և ճեմարանը սկսելու է պատմական մի նոր տարեշրջան, որը վերջինն է այս տարվա և առաջինը՝ եկող հազարամյակի... Մենք անցյալ տարվա ընթացքում ունեցանք մեծ կորուստներ: Ես ի նկատի ունեմ ճեմարանն այս պարագային: Մեր դասախոսական կազմից այսօր բացակայում է Գարեգին Կաթողիկոսը, բացակայում է պարոն Վաչագան Հովհաննիսյանը, ինչպես նաև մեր սաներից ողբերգական դիպվածի զոհը դարձած Ալբերտ Խաչատրյանը, որը Ձ լսարանում պիտի լիներ այս տարի:

Այնուհետև Հայր Սուրբը խնդրեց բոլորին մեկ րոպե լռությամբ հարգել նրանց հիշատակը, որից հետո Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը կարդաց «Հոգւոցն հանգուցելոց» աղոթքը: Ճեմարանի տեսուչը, շարունակելով խոսքը, կոչ արեց ուսանողներին հնարավորինս արդյունավետ օգտագործել ժամանակը և փորձել իրագործել նաև այն, ինչ որ չհաջողեցին իրականացնել կյանքից հեռացածները: Հայր Սուրբը հորդորեց ուսանողներին ավելի ջանասիրությամբ աշխատել և հույս հայտնեց, որ դասախոսական և տեսչական կազմի օգնությամբ հնարավոր կլինի առավելագույնն անել, որ ուսանողներն ավելի կարգապահ ու ուսումնատենչ դառնան:

Ապա Բ լսարանի սան Ջոհրապ Կարապետյանը դաշնամուրի վրա հնչեցրեց Շոպենի «Էտյուդ թիվ 12-ը», որին հաջորդեց երգչախմբի կողմից Ալ. Հարությունյանի «Հայրենիքիս հետ» երգի կատարումը:

Հավարտ հանդիսության գեղարվեստական մասի, Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը հանդես եկավ օրհնության խոսքով.

«Սիրելի Սրբազան եղբայրներ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, սիրելի սարկավագներ, ուսանողներ, դասախոսական կազմ և հյուրեր:

«Հույսի հայրենիք, լույսի հայրենիք, հզոր հայրենիք» Թումանյանի այս խոսքերը, քիչ առաջ որ երգեցիք, կրկին անգամ ալեկոծեցին իմ հոգին: Բոլորս առաջ ենք նայում հույսի ակնկալիքով, հույսի բաղձանքով և հզորանալու տեսիլքով: Այս բոլորը սկսվում են հենց մեր կրթությունից կամ դաստիարակությունից, դպրոցական և բարձրագույն կրթությունից, և այս բոլորն են, որ կազմում են այս ձգտումները, միավորում և կերտում ճշմարիտ հայրենասեր

մարդուն:

Սիրելի նախկին և նոր սաներ, կրկին անգամ եկել էք այս հաստատության ծոցը՝ մի տարի ևս աշխատելու, մի տարի ևս դաստիարակվելու և կրթվելու, մի տարի ևս ուսումնասիրություններ կատարելու համար: Ուրախ ենք, որ դուք այստեղ էք, որովհետև դուք այստեղ լինելով եկեղեցու կենդանությունն էք ներկայացնում: Առանց ուսանողության, առանց հոգևոր դպրոցի, առանց Գևորգյան Ճեմարանի մեր միաբանությունը կարող է վաղը ծերանալ և վերջ գտնել: Դուք աղբյուրն էք կազմում հոգևոր կյանքի, և մենք՝ հոգևորականներս, ձեզ առաջնորդ և նպատակակետ ենք դառնում՝ մեր օրինակով ապրելու, քերևս մեզնից առաջ գնալու կյանքում՝ կրթությամբ ու դաստիարակությամբ, և մենք սպասում ենք, որ ձեր ուսմամբ, ձեր՝ գիտության հանդեպ ցուցաբերած սիրով մեզ անցնեք և մեզանից էլ ավելի առաջ գնաք: Գիտեք, որ կյանքը, հատկապես վերջին քսան-երեսուն տարիների ընթացքում, շատ առաջ գնաց: Գիտությունը ոչ թե քայլելով առաջացավ, այլ մեծ ոստումներով: Ժողովուրդը այսօրվանից քսանմեկերորդ դարի ամբողջապես պատրաստված հոգևորական է ուզում տեսնել մեր մեջ: Այդ ուղղությամբ մենք ամեն զոհողություն հանձն առած ենք և կատարում ենք. դուք միայն աշխատեցեք, միայն կարգապահ եղեք, սիրեցեք Հոգևոր Ճեմարանը, միայն սիրեցեք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և ներիրվեցեք ամբողջությամբ, ոչ կիսով չափ: Սերը պետք է ամբողջությամբ լինի, սերը եթե նվազ է, սեր չի լինի, ամբողջությամբ դուք պիտի մոռանաք դրսի աշխարհը և ձեզ նվիրեք նոր ասպարեզին, նոր աշխարհին, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի կյանքն է, մթնոլորտն է և մեր առօրյան՝ առավոտյան աղոթքից սկսելով մինչև երեկոյան խաղաղական ձեր աղոթքը անկողինների մոտ, քնելուց առաջ: Այսպիսի իդեալական ձևով պետք է պատկերվի ձեր մտքին, իմացականությանը և ձեր հոգիին մեջ տիպար ուսանողի կերպարը:

Սիրելի՝ դասախոսական կազմ, մենք ձեզ հանձնում ենք, ահավասիկ, մի աշխույժ, երիտասարդ, կորովի, հավատքով, նվիրումով և ուսումնական տենչով լեցուն մի խումբ սաներ, ձեր ձեռքերի մեջ պիտի կողմնորոշվեն, դուք էք քանդակագործը, ձև ու կերպար տվողը այս խմորին, որպեսզի այս բոլորը լավ կերպարանք ստանա, լավ հոգի դրվի մեջը և այդ հոգին կենդանի, աշխույժ, ապրող լինի՝ նվիրումով լեցուն, և այդպիսով միայն հնարավոր կլինի ապագայի մեր շարքերի մեջ տեսնել պատկառելի, պատվական, ժողովրդի կողմից սիրելի հոգևորականը: Այդ հոգևորականը՝ քսանմեկերորդ դարու հոգևորականը, ձեր միջից պիտի ծլի, ծաղկի և բարձրանա:

Պատրա՞ստ էք զոհողության, այս գիտակցությունը ձեր մեջ ապրու՞մ է, և եթե ապրում է, երանի է ձեզ և մեզ, որ մենք ձեզ շունչ ենք տալիս, մեր առօրյա հացից կիսում ենք ձեզ հետ, ձեզ համար փորձում ենք բարերարներ գտնել, որպեսզի եկեղեցին կենդանանա, աշխուժանա, և դուք կարողանաք բոլորանվեր սրտով ծառայելու պատրաստվել՝ ամեն տեսակի համարություն ունենալով: Պատրա՞ստ էք՝ կրկին անգամ հարց եմ տալիս: Եթե պատրաստ չէք, կարող էք վաղը ձեր պայուսակները առնել և հեռանալ: Բայց նրանք, որոնք

պատրաստ եմ, Գեղեռնի զինվորների նման աման ու բաժակ չեմ փնտրում՝ աղբյուրից ջուր խմելու համար, այլ կռանում եմ, խոնարհվում, որպեսզի այդ ջուրը խմեմ կենդանու նման, հափշտակությամբ, և միայն այս ատեն է, որ դուք իսկապես սաները կլինեք այս վսեմ հաստատության:

Քիչ առաջ աղոթեցինք Գևորգ Դ Կաթողիկոսի շիրիմի վրա, մեր աղոթքը գնաց նաև Գևորգ Ջ Կաթողիկոսին, բայց Գևորգ Դ Կաթողիկոսը ի՞նչ վեհ տեսիլքի մարդ եղած էր, խեղճ ու կրակ վանական դպրանոցը Հոգևոր Ճեմարանի փոխեց և Հոգևոր Ճեմարանը իր ժամանակին համալսարանական բարձրություն ունեցող հաստատություն եղավ և մեծավ մասամբ այնտեղ կրթվեցին ու թրծվեցին մեր ժողովրդի ղեկավարները և լույս սփռեցին, հույս տվեցին և հզոր հայրենիքի ճանապարհը հարթողները եղան:

Ես բարի գալուստ եմ մաղթում ձեզ գոհունակ սրտով: Աստված ձեզ օրհնի, ձեզ առաջնորդի, ձեր դասախոսների կյանքը երկար անի: Աստված թող օրհնի, իր շնորհներով օժտի, որպեսզի իրենց հանճն առած ծանր պարտականությունը բեռ չլինի իրենց վրա, այլ հոգևոր հաճույք, և այդ հոգևոր հաճույքը ձեր աշխատասիրությամբ նրանք կզգան: Աստված թող օրհնի ձեզ»:

Հանդիսությունն ավարտվեց Տերունական աղոթքով ու Սրբազան Հոր «Պահպանիչ»-ով:

ՀՐԱՆՏ ՈՒՐՍԱԿԻՐ ԿՈՍՏԱՆՅԱՆ
Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ջ լսարանի սան

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ՏՈՒԵՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Երէկ էր, կարծես, երբ համալսարանի հնագոյն շէնքի մէջ 1995 թուականի Սեպտեմբերին տեղի ունեցաւ բացումը նոր՝ Աստուածաբանութեան ֆակուլտետի:

Այստեղ սովորող երկսեռ ուսանողները մասնագիտանում են աստուածաբանութեան մէջ, իբրեւ գիտութիւն, որի գիտաղաշտն է կրօնը ընդհանրապէս եւ աստուածաբանութեան զանազան բաժինները՝ մասնաւորաբար: Նպատակն է պատրաստել կրօնի եւ աստուածաբանութեան ուսուցիչներ եւ դասախօսներ:

Պետական համալսարանում Աստուածաբանութեան ֆակուլտետի բացման պահը պարզեց յուզիչ երեւոյթը Հայ պետութեան եւ ազգային եկեղեցու գործակցութեան, մասնաւորաբար նոր սերնդի դաստիարակութեան եւ կրթութեան ասպարեզում: Հին շէնքի մուտքի առջեւ կողք-կողքի կանգնած էին համալսարանի ռեկտոր ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսեանը եւ նորընտիր Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա-ն՝ շրջապատուած մէկ կողմից բարձրաստիճան եկեղեցականներով եւ միւս կողմից՝ պետական աւագանիով՝ փոխնախագահ Գագիկ Յարութիւնեանը, Գերագոյն Խորհուրդի նախագահ Բաբկեն Արարքցեանը, Գիտութեան եւ Կրթութեան նախարար Վարդգես Գնունին, Մատենադարանի տնօրէն ակադեմիկոս Սէն Արեւշատեանը, ֆակուլտետների դեկաններ եւ այլ բարձրաստիճան հիւրեր:

Նորահաստատ ֆակուլտետն իր հիմնադրման օրուանից ունեցաւ երկու ամպիոններ՝ մէկը կրօնի եւ պատմութեան եւ միւսը՝ աստուածաբանութեան: Առաջին երկու տարիների ուսումնական ծրագրի հիմնական առարկաներն են լեզուները, որոնք ընդգրկում են երկու հին՝ գրաբար ու յունարէն և ժամանակակից լեզուներ՝ անգլերէն, գերմաներէն կամ ֆրանսերէն, նաեւ հայերէն եւ ռուսերէն: Նոյն երկու տարիների ընթացքում դասաւանդւում են նաեւ կրօնների պատմութիւն, ընդհանուր Եկեղեցու պատմութիւն, Ա. Գրոց Հին եւ Նոր Կտակարանների ներածութիւն եւ փիլիսոփայութիւն: Ուսումնական երրորդ եւ չորրորդ տարիներին ուսուցւում են աւելի մասնագիտական առարկաններ, ինչպէս Ա. Գրոց մեկնութիւն, վարդապետական աստուածաբանութիւն, հայրաբանութիւն, ծիսագիտութիւն, հայ աստուածաբանական մատենագրութիւն, տոմարագիտութիւն, Հայ Եկեղեցու պատմութիւն, մշակոյթի պատմութիւն եւ վարքաբանութիւն:

Առաջին տարին ընդունուած քսանհինգ ուսանողներին, ամէն տարի գումարուեցին յիսունից աւելի նոր ուսանողներ, չնայած դիմողների թիւը շատ աւելին էր:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1998-1999 ուսումնական տարում ուսանողների թիւն արդէն 180 էր: Գալիք ուսումնական տարուայ դիմորդների թիւն անցել է հարիւրը: Սոյն երեւոյթը հաւաստիքն է ֆակուլտետի յաջողութեան եւ ապագայ զարգացումի:

Յաջողութեան գեղեցկագոյն արտայայտութիւնը հանդիսացաւ աւարտական աշխատանքների պաշտպանութիւնը եւ վերջին քննութիւնները, որոնք անցկացրեց պետական յանձնախումբը: Պետական քննական յանձնաժողովը նախագահեց Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարխուդարեանը: Բակալաւրատի առաջին շրջանաւարտները քսանհինգն էին, նոյն այն քսանհինգը, որոնք եղան ֆակուլտետի անդրանիկ սաները: Նրանցից յոթը արժանացան «գերազանց» վկայականների, իսկ միւսները իրենց քննութիւններն անցկացրին եւ աւարտաճառերը պաշտպանեցին մեծ յաջողութեամբ եւ ստացան «լաւ» գնահատական:

Ֆակուլտետն իր յաջողութեան համար պարտական է դասախօսական անձնակազմի պարտաճանաչ եւ տքնաջան աշխատանքին: Նրանցից իւրաքանչիւրն իր աշխատանքը կատարում է խղճմտօրէն եւ, համաձայն դեկանի կարգադրութեան, դասախօսութիւնները պատրաստում է գրաւոր, որպէսզի դրանք հավաքուեն համակարգչի մէջ եւ տրամադրուեն ուսանողին:

Ֆակուլտետի հարուստ գրադարանի հիմնական ֆոնդը հանդիսացաւ Երուսաղէմից Շահէ Արբազանի բերած անձնական գրադարանը: Անհրաժեշտ է յիշել այստեղ, որ Երեւանի պետական համալսարանի կենտրոնական գիտական մեծ գրադարանն իր հոյակապ շէնքում եւ մոտաւորապէս երկու միլիոնի հասնող իր ֆոնդերում չունէր կրօնական գրականութիւն, որ տրամադրուէր Աստուածաբանութեան ֆակուլտետի ուսանողներին: Բոլորովին նոր գրադարան ստեղծելու կարիքը ստիպեց դեկանին, որ նա դիմի Եվրոպայի տարբեր համալսարանների եւ եկեղեցական նուիրապետութիւնների, որպէսզի նորահաստատ գրադարանը ճոխանայ նորագոյն աստուածաբանական հրատարակութիւններով: Առաջին նուէրը ստացուեց Անգլիկան Եկեղեցու պետ Քենթրբերիի Արքեպիսկոպոսից, որին հետեւեցին գերմաններէն գրականութիւն պարունակող ծրարները՝ ուղարկուած Գերմանիայի համալսարաններից: Աստուածաբանական նոյնպիսի ճոխ գրականութիւն ստացուեց նաեւ Ֆրանսիայից՝ «Ֆրանսայ-Հայաստան Բողոքական Համերաշխութիւն» կոչուող կազմակերպութիւնից՝ շնորհիւ նրա տնօրէն Վերապատուելի Սամուէլ Սահակեանի բարեացակամ կարգադրութեան: Նմանօրինակ ամերիկեան հրատարակութիւններ՝ հաւաքածոներ, բառարաններ եւ աստուածաբանական գրականութիւն ստացուեց Վերապատուելի Սիարոն Կայայեանի հոգածութեամբ: Գրադարանն արդեն իսկ ճոխացած է վեց հազարից աւելի գրքերով, որոնք դասակարգուած են չորս գլխաւոր ենթախմբերի. Ս. Գիրք, աստուածաբանութիւն, Եկեղեցու պատմութիւն եւ հայագիտութիւն: Հարուստ է նաեւ հանրագիտարանների եւ բառարանների բաժինը:

Դեռեւս երկու տարիներ առաջ հիմնադրուեց նաեւ ֆակուլտետի առաջին մատենաշարը, որի առաջին գործը եղաւ Վարդան Այգեկցու «Արմատ Հաւատոյ» բնագրի գիտական հրատարակութիւնը: Պատրաստ են հրատարա-

կութեան նաեւ Ռաֆիկ Վարդանեանի «Հայ Տոնացոյցը» եւ Ռուբէն Ղազարեանի «Գրաբար լեզուի Բառարան» մասնագիտական աշխատութիւնները:

Ուսումնական տարուայ երկու կիսամեակների ընթացքում. ամէն լսարան առնուազն երկու անգամ առաջնորդուեց պատմական վայրեր, ուր մէկ անգամ եւս սովորեց խաչակնքել, աղօթել եւ զգալ ս. վայրերի խորհուրդը:

Եւ ահա չորս տարիների կրթական տքնաջան աշխատանքը տուեց իր պտուղները:

Յուլիսի 17-ին քսանհինգ հաւատացեալ եւ մտաւոր պատրաստութեամբ հարստացած ուսանողներ՝ աղջիկները ճերմակ հագուստով եւ տղաները սեւ ու սպիտակ հագուստով, ներկայացան նախագահութեան սեղանին, ուր նստած էին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պոզապալեանը, Երեւանի պետական համալսարանի ռեկտոր ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսեանը, ԵՊՀ երեք պրոռեկտորները, Աստուածաբանութեան ֆակուլտետի դեկան դոկտ., պրոֆ. Շահէ արքեպս. Աճէմեանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Նաւասարդ արքեպս. Կճոյեանը, Արարատեան թեմի Առաջնորդական փոխանորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսէսեանը, Գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Աշճեանը, Գերշ. Տ. Տաթեւ արքեպս. Սարգիսեանը, Հարաւային Ռուսաստանի թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Եզնիկ եպս. Պետրոսեանը եւ բազմաթիւ բարձրաստիճան եկեղեցականներ, տօնական ու միաժամանակ անչափ յուզումնալից մթնոլորտում, շրջանաւարտներին յանձնուեցին ֆակուլտետի առաջին վկայականները:

Փակման իր խօսքում Շահէ արքեպիսկոպոսը շնորհաւորեց իր ուսանողներին եւ ասաց.

«Համայնավարութեան փլուզումէն ետք, ամբողջ մարդկութիւնը սկսաւ ապրիլ բարոյական մեծ տագնապ մը: Ազատ աշխարհը կարծես շուարած ըլլար, թէ ինչ նպատակի պիտի ծառայեցնէ իր ազատութիւնը: Երիտասարդութիւնը, մասնաւորաբար մեր երիտասարդութիւնը, տարուած է կապկելու ուրիշ աշխարհներու անիմաստ եւ աննկարագիր հեշտասիրութիւնները, անհատական շահերու գինովութիւնը, անսանձ բարոյական կեանքը, մէկ բառով՝ ապազգայնացումի ճանապարհը:

Մեր պարտականութիւնը նկատեցինք շարունակ հնչեցնել ահազանգը մեր պատերէն ներս եւ դաստիարակել մեր երիտասարդութիւնը բարոյական սկզբունքներով, որ մերը եղած են դարերով, այսինքն քրիստոնէական բարոյագիտութեամբ:

Ինչպէս առաջին օրերուն բերինք ձեզ Օշականի Սուրբին մօտ երդում ընելու, թէ պիտի մնաք լաւ հայեր, հաւատարիմ մեր լեզուին, մեր մշակոյթին եւ մեր հայրերու հաւատքին, այսօր ուզեցինք բերել ձեզ դարձեալ Օշական, որպէսզի, ստանալէ ետք ձեր վկայականները, իջնէք դէպի Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզման եւ կատարէք ոչ թէ հաւաքական, այլ անձնական ձեր ուխտը՝ ծառայելու մեր ժողովուրդին՝ հայ ժողովուրդին»:

ԳԱՅԱՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՐՈՒ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՒ ՏՈՒՈՒՀՈՒԹԻՒՆ ԼԻՈՆԻ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Ներսէս արքեպս. Պոզապալեանի արտօնութեամբ եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Յուլիս 22 1999 թ. ժողովի որոշմամբ, եւ Բարձրաշնորհ Տ. Գիւտ արքեպս. Նագաշեանի բարեհաճ կարգադրութեամբ եւ ձեռամբ Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Միջին Ֆրանսայի Հայոց՝ Գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարեանի, տեղի ունեցաւ Վարդապետական իշխանութեան տուուչութիւն:

12 Սեպտեմբեր 1999 թ. Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ Սուրբ եւ անմահ Պատարագ Խաչվերացի տօնին առթիւ: Պատարագիչն էր Նորվան Սրբազան: Պատարագի աւարտին Գերաշնորհ Սրբազանը յատուկ արարողութեամբ մասնաւոր Վարդապետական իշխանութեան չորս աստիճաններ շնորհեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիտասարդ միաբան եւ Սենք էթիենի հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Տաթեւ աբեղայ Յակոբեանին՝ խարտաւիլակութեամբ Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Պէքճեանի: Այս առթիւ եկեղեցւոյ մէջ ներկայ հասարակութեան իր խօսած քարոզով պատարագիչ Սրբազանը բացատրեց վարդապետական չորս աստիճաններու իմաստն ու արժէքը, ընդգծեց նաեւ, թէ այս գնահատականը ե՞րբ եւ ի՞նչ պատճառով կը տրուի:

Արդարեւ 9 Սեպտեմբերին Հոգեշնորհ Տ. Տաթեւ աբեղայ Լիոնի «Էնսթիթիւ Քաթոլիք» Աստուածաբանական համալսարանի հայագիտական բաժնի քննիչ յանձնախումբի առջեւ պաշտպանած էր իր վարդապետական թեզը, որուն նիւթն էր «Սատաղը Հայ Աստուածաբանութեան մէջ»: Յանձնախումբի անդամներն էին՝

1. Գերշ. Տ. Նորվան եպս. Զաքարեան,

2. Փրոֆ. Գրիգոր Պըլտեան (դասախօս Լիոնի «Էնսթիթիւ Քաթոլիք» համալսարանի),

3. Սահակ սրկ. Սուքիասեան (դասախօս Հայերէն լեզուի «Ժան Միւլէն» համալսարանի):

Քննիչ յանձնախումբը, ներկայութեամբ ստուար բազմութեան, լսելէ ետք թեկնածուի յաջող պաշտպանութիւնը, զայն գնահատեց «քաջալաւ»:

Յատուկ տուուչութեան հոգեպարար արարողութեան ընթացքին կարդացուեցան չորս Աւետարաններ եկեղեցւոյ չորս կողմերուն մէջ եւ որուն ընթացքին վարդապետական գաւազան եւ քարոզելու եւ ուսուցանելու իշխանութիւն տրուեցաւ Հայր Սուրբին, ինչպէս որ կը վկայուի 15-րդ դարու հայ

եռամեծար վարդապետ եւ ուսուցչապետ Գրիգոր Տաթեւացիի ծեռնադրութեան Մաշտոցին մէջ:

Սրբազանը իր քարոզի աւարտին անգամ մը եւս շեշտեց, որ Աստուած անսասան պահէ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը եւ առաւել պայծառացնէ Հայ Առաքելական Ս. Եկեղեցին, անոր ծոցին մէջ աւելցնելով որակաւոր վարդապետներու թիւը, որոնց վրայ այսօր աւելցաւ Հոգեշ. Տ. Տաթեւ Վարդապետ Յակոբեանի անունը:

Հնկեղեցւոյ մէջ կատարուած արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին նաեւ «կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Պրն. Յովհաննէս Պէրպէրեանի, եւ տուուչութեան արարողութեան շարականներու երգեցողութիւնը կատարեց էդուարդ Դաւիթեանը:

Եկեղեցական արարողութենէն յետոյ Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ «կարապիս Մանուկեան» սրահին մէջ տրուեցաւ ընդունելութիւն մը՝ կազմակերպուած Սենթ էթիենի եւ Լիոնի եկեղեցասէր տիկնանց կողմէ:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏԱԹԵՒ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Ծնած է 1966 Յուլիս 7-ին Իրաքի Մուսուլ քաղաքին մէջ: Նախնական ուսումը ստացած է Պաղտատի հայոց «Թարգմանչաց» Վարժարանին մէջ: 1979 թուականին միջնակարգ ուսումը աւարտելէ ետք, նոյն թուականին

մեկնած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան: 1981 թ. դեկտեմբերին ստացած է դպրութեան 4 աստիճաններ: 1984 թ. դեկտեմբերին ստացած է ուրար կրելու իրաւունք, իսկ 1986 թ. Փետրուար 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տաճարին մէջ ստացած է սարկաւագութեան աստիճան: 1986-ի Յուլիսին յաջողութեամբ աւարտած է Հոգևոր Ճեմարանը, իսկ 1988 թ. Մարտ 10-ին նոյն յարկի ներքոյ պաշտպանած է «Եւսեբիոս Կեսարացին Հայ Մատենագրութեան մէջ» թեմայով աւարտաճառը: Պատրաստուած աւարտաճառը արժանացած է «գերազանց» գնահատանքի:

1989-1990 թթ. Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի հովանաւորութեամբ ու կարգադրութեամբ ուսանած է Պոսէի և Ժընեւի համալսարաններուն Աստուածաբանութեան ֆակուլտետին մէջ: Այս միջոցին ծառայած է Ժընեւի Ս. Յակոբ եկեղեցւոյ որպէս քարտուղար և սարկաւագ: Հիմնած է Ձուիցերահայ երիտասարդաց Միութիւնը և դասաւանդած է Կիրակնօրեայ դպրոցի մէջ:

1990-1992 թթ. ծառայած է Հոլանտիայի Ս. Հոգի եկեղեցւոյ մէջ որպէս քարտուղար, սարկաւագ, խորհրդատու ազգային-եկեղեցական վարչութեան և հիմնած է կիրակնօրեայ վարժարան:

Իրաք վերադարձած է 1992 Փետրուար 13-ին, և 18 Փետրուար 1993-ին ձեռամբ Իրաքի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Սւագ Արքեպիսկոպոս Ասպտուրեանի, ձեռնադրուած է կուսակրօն քահանայ Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ: Պաղտատ պաշտօնավարութեան շրջանին եղած է հոգևոր հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցւոյ, դասաւանդած է տեղւոյն «Սրբոց Թարգմանչաց» վարժարանին մէջ որպէս դասախօս քրիստոնէական կրօնի, ինչպէս նաև Պաղտատի Կիրակնօրեայ Վարժարանի: 1992-1996 թթ. դասաւանդած է նաև «Հայ Եկեղեցասիրաց կազմ»-ի 5 դասարաններուն Սուրբ Գրոց Մեկնութիւն և սոյն կազմի մէջ նշանակուած է որպէս հոգևոր խորհրդատու: 1993-1996 թթ. թեմի բարեխնամ Առաջնորդի կողմէ նշանակուած է Իրաքի հայոց թեմի Դատաստանական Խորհուրդի անդամ: 1994-1995 թթ. դասախօսութիւններով և դասընթացքներով հանդէս եկած է «Իրաքի Տիկնաց Հայ Աշակութային Միութեան», «Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան», ՀԲԸՄ-ի և ՀՄԸՄ-ի մէջ: 1993-1996 թթ. տարբեր հոդուածներով հանդէս եկած է «Լրաբեր» և «Ձայն» իրաքահայ եռամսեայ ամսագրերուն մէջ:

1996-ին նշանակուած է Պոլսոյ Պատրիարքարանի «Լրաբեր» շաբաթաթերթի խմբագրութեան անդամ և միևնոյն ժամանակ ստորագրած է հոդուածներ: 1996-1997 թթ. հրաւիրուած է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, այնտեղ մասնակցած է Հայց. Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզչութեան Կեդրոնի գործունէութեանց, դասախօսած է էջմիածին քաղաքի վեց կիրակնօրեայ վարժարաններու մէջ, ինչպէս նաև դասընթացքներով կրօնի ուսուցիչներու վերապատրաստման լսարաններուն, քարոզներով ամէն երեկոյ հանդէս եկած է Հայաստանի Պետական Հեռուստատեսութեան «Սիրեցէք

զմիմեանս» հաղորդաշարին, իսկ «Խորան Լուսոյ»-ին՝ շաբաթը անգամ մը. ինչպէս նաև՝ ծայնասփիւռով: 1997 Փետրուարէն մինչեւ Օգոստոս ղեսպանուհած է Ք.Դ.Ք.Կ.-ի քարոզի լսարանին:

1997 թ. Սեպտեմբերին, նոյնպէս Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Հայրապետի բարձր հովանաւորութեամբ, նշանակուած է Սէնթ-էթիէնի ու շրջանի հայոց հոգևոր հովիւ: Բազմաթիւ յօդուածներով աշխատակցած է սփիւռքահայ մամուլին: 1997 թ. Ամերայն Հայոց Կաթողիկոսի խորհուրդով պատրաստած է իր վարդապետական թեզը՝ նիւթ ունենալով «Մատաղը հայ աստուածաբանութեան մէջ», որը յաջող կերպով պաշտպանելով 1999 Սեպտեմբերի 12-ին, ստացած է վարդապետական աստիճան:

ԴԻՒԱՆ ԼԻՈՆԻ ՀԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 5-ին, կիրակի, Վաղարշապատի Ս. Գայանե եկեղեցում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Նախորդ օրը, հավարտ երեկոյան ժամերգության, Մայր Տաճարում, նախագահությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, կատարվել էր քահանայական կոչման արարողություն, որի ընթացքում Մայր Աթոռի միաբան Բարեշնորհ Արթուր սրկ. Ղևոնդյանն իր ուխտն էր կնքել և պատրաստակամություն հայտնել ծառայելու Հայ Առաքելական Եկեղեցուն՝ համաձայն Ուղղափառ դավանության և Սուրբ Հայրերի կանոնների:

Կիրակի առավոտյան Ս. Գայանե եկեղեցին լեցուն էր մեծաթիվ բազմությամբ: Հոգևոր աստիճանի շնորհման այս արարողությանը իրենց մասնակցությունն էին բերում վանաբնակ միաբանակից հայրերն ու եղբայրները, ներկա էին ձեռնադրվողի հարազատները, մտերիմ ընկերները և մեծ թվով հավատացյալներ: Իբրև խարտավիլակ իր վկայությունն էր բերում Հոգեշնորհ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը, որի ուղեկցությամբ նորընծան ծնրադիր բարձրացավ խորան: Ի պատասխան ձեռնադրող Սրբազանի աղոթքների, դպրաց դասի և ներկա ժողովրդի կողմից լսվեց՝ «արժանի է»: Այնուհետև Ս. Պատարագի ընթացքում շարականների երգեցողության ներքո, Ավագ խորան բարձրացվեց մյուռոնաթափ աղավնին, և Սրբազան Հայրը, կնքելով նորընծա քահանայի ճակատը, անվանակոչեց նրան Ս. Ղևոնդ քահանա: Իր քարոզի մեջ Հուսիկ Սրբազանը՝ սրտագին շնորհավորեց նորաօծ Հայր Ղևոնդին, ապա հավատացյալ ժողովրդին մեկնաբանեց Ձեռնադրության խորհրդի և քահանայական աստիճանի արժեքները:

Նույն օրը, երեկոյան, Մայր Տաճարում տեղի ունեցավ վեղարի տվչություն: Կրկին Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի նախագահությամբ և Մայր Աթոռի միաբանների մասնակցությամբ, Տ. Ղևոնդ աբեղա Ղևոնդյանը ստացավ վեղար՝ այդպիսով ընդունելով կուսակրոն քահանայության կարգ:

Իր քառասնօրյա պահեցողության ավարտից հետո Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի օրհնությամբ և կարգադրությամբ Հայր Ղևոնդը մեկնելու է Աթենք՝ տեղի աստվածաբանական համալսարանում բարձրագույն կրթություն ստանալու, ինչպես նաև պետք է մասնակից դառնա Աթենքի հայոց գաղութի կյանքին իբրև հոգևոր հովիվ:

Տ. ՂԵՎՈՆԴ ԱԲԵՂԱ ՂԵՎՈՆԴՅԱՆԸ ծնվել է 1972 թ. հոկտեմբերի 12-ին, Արտաշատ քաղաքում: Նախնական կրթությունը (1979-1990) ստացել է

ծննդավայրում, Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում: Ավարտելով միջնակարգը՝ ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. դեկտեմբերի 26-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի: Դեռևս ուսանողական տարիներից՝ սկսած 1992 թ., ծառայել է Մայր Տաճարում իբրև լուսարարապետի օգնական: 1997 թ. եղել է Մայր Տաճարի ավագ լուսարար և թանգարանի վարիչ: 1998 թ. սեպտեմբերին գրել է ավարտաճառ «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և հայ գաղթականությունը առաջին Աշխարհամարտի (1915-1918 թթ.) տարիներին» թեմայով:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Քահանայական ձեռնադրության արարողությամբ առանձնակիորեն տոնական եւ հանդիսավոր էր սեպտեմբերի 19-ի կիրակնօրյա Պատարագը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում: Սրբազան արարողությանը ներկա էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տեր-Տերյանը, Նեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության բարձրաստիճան հոգեւորականներ Տ. Տաթեւ արքեպս. Սարգսյանը եւ Տ. Օշական արքեպս. Չոլոյանը, Մայր Աթոռի միաբաններ, Արարատյան Հայրապետական թեմի Թեմական խորհրդի անդամներ, Վազգենյան Հոգեւոր Դպրանոցի սփյուռքահայ բարերար պրն. Նազար Նազարյանը, դպրանոցի եւ Գեւորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոսներ, հյուրեր:

Սուրբ Պատարագի ընթացքում, ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Հովսեփյանի ձեռնադրությամբ եւ խարտավիլակությամբ Հոգեշնորհ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանի, ամուսնացյալ քահանայության կոչվեցին Արարատյան Հայրապետական թեմում սպասավորող յոթ սարկավագներ՝ Տիգրան սրկ. Գափոյանը, Արթուր սրկ. Հայրապետյանը, Արտակ սրկ. Արթենյանը, Նորայր սրկ. Ավետիսյանը, Ռոբերտ սրկ. Օհանյանը, Վարդան սրկ. Բաղումյանը և Հրաչյա սրկ. Խաչատրյանը: Նախորդ շաբաթ օրը, երեկոյան ժամերգության ավարտին, Սրբազան Հոր կողմից կատարվել էր քահանայական կոչման արարողություն, որի ընթացքում նորընծաները հանձն առան «Ամենայն պատրաստակամութեամբ եւ առանց ծանծրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ եւ ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոց» եւ տվեցին իրենց ուղղափառ դավանության խոստովանությունը՝ հատկապես խորհրդաշատ յոթնածայն հնչողությամբ. «Ունիմք զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ... ընդ սուրբ հայրապետսն...»:

Կիրակնօրյա Պատարագի ընթացքում «Ես դնեմ ձեռս ի վերա սորա եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան» խոսքերով Տ. Վաչէ արքեպիսկոպոս Հովսեփյանը ձեռնադրում է քահանայության կոչվածներին: Այնուհետեւ Սրբազան Հոր օրհնությամբ ու աղոթքով նրանք ստանում են փիլոն եւ պատարագչի զգեստներ: Ձեռնադրության խորհուրդը՝ իր խորքին եւ լրումին է հասնում, երբ Սրբազանը սրբալույս մյուռոնով օծում է նորընծաների ճակատն ու ձեռքերը եւ շնորհում նրանց նոր անուններ, որոնք կրել են իրենց ժողովուրդներին ճշմարտության բոցավառ ոգով աներկյուղ առաջնորդած մեծ զորավարներն ու մարգարեները: Նոր

ձեռնադրվածները վերակոչվեցին Տ. Վարդան քահանա, Տ. Վաչէ քահանա, Տ. Եսայի քահանա, Տ. Երեմիա քահանա, Տ. Մաղաքիա քահանա, Տ. Զաքարիա քահանա և Տ. Դանիել քահանա:

Այս ձեռնադրությամբ եւս մեկ էջ է գրվում Վազգենյան դպրեվանքի տասնամյա տարեգրությունում: Պատարագի ընթացքին քահանայական իշխանություն ստացած սարկավագներն Արարատյան Հայրապետական թեմի Սեւանի Վազգենյան դպրեվանքի շրջանավարտներն են, որ դպրեվանքի հնգամյա դասընթացն ավարտելուց հետո՝ եւս մեկ տարի սովորել եւ ավարտել են Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի վեցերորդ լսարանը: Ձեռնադրությամբ շնորհված իրենց իշխանությամբ նրանք այսուհետ առավել ջանուժի ծառայություն են բերելու Հայ Առաքելական Եկեղեցուն, հովվելու եւ ղեպի Աստված կյանքի ճանապարհ են առաջնորդելու մեր ժողովրդին: Իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելով նորընծա քահանաներին, Արքազան Հայրը մասնավորաբար ասաց. «Մեծ է հոգեւոր ծառայության պատասխանատվությունը եւ դժվարին՝ հոգեւորականի ուղին. քահանան Հայ Եկեղեցու զինվորն է, եւ ծառայության մեջ է նրա երջանկությունը: Անվարան հավատքով եւ առ Աստված ապավինությամբ պիտի զորանաք՝ անսայթաք ծառայելու Մայր Եկեղեցուն ու մեր ժողովրդին»:

Ջերմորեն շնորհավորում ենք նորոգ օծյալ քահանաներին եւ բարեմաղթում արժանի մշակներ դառնալու Հայ Առաքելական Եկեղեցու՝ կարող գտնելու ծառայության երջանկությունը:

ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ
Արարատյան Հայրապետական Թեմի
Մամլո Դիվանի տնօրեն

Տ. ՎԱՐԴԱՆ ՔԱՀԱՆԱ ԳԱՓՈՅԱՆԸ (ավազանի անունը՝ Տիգրան) ծնվել է 1973 թ. ապրիլի 23-ին Արարատի մարզի Ավշար գյուղում: 1979-1990 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1991-96 թթ. ուսանել եւ ավարտել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը, ապա 1996-97 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: 1991 թ. Ս. Ստեփաննոսի տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: 1997 թ. խմբագրել է «Տաքեւ» տարեգիրքը: 1997-98 թթ. աշխատանքի է անցել Ս. Սարգիս եկեղեցու առաջնորդարանում՝ վարելով մայր դիվանի պատասխանատու քարտուղարի պաշտոնը: 1998 թ. դեկտեմբերից պաշտոնավարության է անցել Սեւանի Վազգենյան դպրանոցում իբրեւ վերակացու:

Տ. ՎԱՉԵ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ (ավազանի անունը՝ Արթուր) ծնվել է 1976 թ. օգոստոսի 10-ին Էջմիածին քաղաքում: 1983-1986 թթ. սովորել է տեղի թիվ 9 միջնակարգ դպրոցում: 1986-1991 թթ. սովորել է Սանկտ-Պետերբուրգի թիվ 2 միջնակարգ դպրոցում: 1992 թ. ընդունվել է Վազգենյան հոգեւոր դպրանոց, որն ավարտել է 1997 թ.: 1997-1998 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Վազգենյան դպրանոցում ուսումնառության ընթացքում, 1996 թ. մայիսի 16-ին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի: 1998-1999 թթ. ծառայության է անցել Վեհարանում, որպես քարտուղար-սարկավագ: Սույն թվականի օգոստոս ամսից ծառայում է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանում որպես պատասխանատու-քարտուղար կրոնա-եկեղեցական հարցերի:

Տ. ԵՍԱՅԻ ՔԱՀԱՆԱ ԱՐԹԵՆՅԱՆԸ (ավազանի անունը՝ Արտակ) ծնվել է 1975 թ. նոյեմբերի 10-ին, Էջմիածնի շրջանի Պտղունք գյուղում: 1981 թ. հաճախել է տեղի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց եւ այն ավարտել 1991 թ.: 1992թ. ընդունվել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոց, որն ավարտել է 1997 թ.: 1996 թ. մայիսի 16-ին ձեռնադրվել է սարկավագ՝ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի ձեռամբ: 1997-1998 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Ճեմարանն ավարտելուց հետո, իբրեւ Մայր Աթոռի միաբան սարկավագ, ծառայել է Մայր Աթոռում (Գանձատանը): 1998 թ. ծառայության է անցել Արարատյան հայրապետական թեմում:

Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱ ԽՍՉԱՏՐՅԱՆԸ (ավազանի անունը՝ Հրաչ) ծնվել է 1975 թ. հունվարի 21-ին Էջմիածնում: 1981-1992 թթ. սովորել եւ ավարտել է Էջմիածնի Խ. Աբովյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը: Այնուհետև 1992-ին, ընդունվել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոց, որն ավարտել է 1997 թ.: 1996 թ. մայիսի 16-ին, Ս. Համբարձման տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը ավարտելուց հետո, 1997-98 թթ. սովորել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Ուսումը վերջացնելուց հետո աշխատանքի է անցել Ս. Էջմիածնի Վեհարանում որպես քարտուղար: Ամուսնացել է 1999 թ. հուլիսի 10-ին:

Տ. ՅԱՔՈՐԻ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ (ավազանի անունը՝ Նորայր) ծնվել է 1974 թ. նոյեմբերի 26-ին Երեւանում: 1981 թ. ընդունվել է Երեւանի թիվ 14 միջնակարգ դպրոցը, որն ավարտել է 1991 թ.: 1992 թ. ընդունվել է Արարատյան հայրապետական թեմի Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոց, որն ավարտելով՝ 1997 թ., մեկ տարի՝ 1997-98 թթ., սովորել է Ս. Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: 1998 թ. անցել է ծառայության Արարատյան հայրապետական թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում, որպես գործավար: Այդ ընթացքում նույն թվականի օգոստոսի 30-ին, ձեռամբ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի, ձեռնադրվել է սարկավագ: 1999 թ. հուլիս ամսից հոգեւոր ծառայության է անցել ազգային բանակում:

Տ. ՄԱՂԱՔԻԱ ՔԱՀԱՆԱ ՕՀԱՆՅԱՆԸ (ավազանի անունը՝ Ռոբերտ) ծնվել է 1974 թ. նոյեմբերի 22-ին Արարատ քաղաքում: 1981-1991 թթ. սովորել է տեղի թիվ 4 միջնակարգ դպրոցում: 1992-1997 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում: 1997-1998 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Այնուհետեւ մեկ տարի, 1998-1999 թթ., անցել է ծառայության Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանում, որպես պատասխանատու քարտուղար կրոնա-եկեղեցական հարցերի: 1998 թ. օգոստոսի 30-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի: 1999 թ. հունիսից ծառայում է ՊՆ ռազմական ինստիտուտում որպես հոգեւոր խորհրդական:

Տ. ԴԱՆԻԵԼ ՔԱՀԱՆԱ ԲԱՂՈՒՄՅԱՆԸ (ավազանի անունը՝ Վարդան) ծնվել է 1975 թ. փետրվարի 6-ին Արարատի շրջանի Վեդի քաղաքում: 1982 թ. ընդունվել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոց, որն ավարտել է 1992 թ.: 1992 թ. ընդունվել է Արարատյան հայրապետական թեմի Վազգենյան հոգեւոր դպրանոց, ավարտելով այն 1997 թ.: Եւս մեկ տարի, 1997-98 թթ., ուսանել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Նույն տարում ծառայության է անցել Արարատյան հայրապետական թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում որպես գործավար: Այդ ընթացքում, օգոստոսի 30-ին, սարկավագ է ձեռնադրվել՝ ձեռամբ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կիրակի, սեպտեմբերի 19-ին, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալեանի բարձր տնօրինությամբ, հընթացս Ս. Պատարագի տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Պատարագիչ Գերաշնորհ Տ. Շահան արքեպս. Սվաճյանը քահանա ձեռնադրեց Ճեմարանի ուսանող Գևորգ սարկավագ Կողեցյանին՝ վերակոչելով նրան Տ. Անուշավան՝ ի հիշատակ երուսաղեմի հայոց Պատրիարքության նորոգ վախճանյալ միաբան Հոգեշնորհ Տ. Անուշավան ծ. վրդ. Ջոջանյանի: Խարտավիլակի պաշտոնը կատարեց Արժանապատիվ Տ. Սկրտիչ քահանա Երանյանը: Արարողությանը ներկա էր Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Հավուր պատշաճի քարոզելով՝ Սրբազան Հայրն իր հայրական պատգամները տվեց նորընծա քահանային:

Նորընծա Տ. Անուշավան քահանան առաջնորդ Սրբազան Հոր կարգադրությամբ հոգևոր ծառայության կանգնի Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՋՈԴԻ ՋՈՐԱՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՏՈՒԱՆ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Օգոստոսի 5-ին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի՝ բարձր կարգադրությամբ և հայոց բանակի հոգևոր խորհրդատու Հոգշ. Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանի առաջարկությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մի խումբ միաբաններ, գլխավորությամբ Գերշ. Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի, ուղևորվեցին Արարատի մարզի Ջոդ ավանի թիվ 58831 զորամաս՝ կատարելու նոր կառուցվելիք Սբ. Վարդան մատուռի հիմնարկեքը:

Սինչ հիմնարկեքի արարողությունը՝ Սրբազան Հայրը շնորհավորեց և իր գնահատանքի խոսքն ասաց զորամասի հրամանատար գնդապետ Սուրիկ Գևորգյանին, սպաներին ու զինվորներին՝ զորանոցում մատուռ ունենալու սրբազան գործն իրենց անմիջական ջանքերով նախաձեռնելու և կազմակերպելու համար:

Ապա Սրբազան Հայրը հրավիրեց կառուցվելիք մատուռի 16 կնքահայրերին, որոնք շարականների երգեցողության ներքո՝ գինիով լվացված և սրբալույս մյուռոնով օծված հիմքի 16 քարերը հերթականությամբ զետեղեցին մատուռի հիմքում:

Ավարտելով հիմնարկեքի արարողությունը, Գրիգորիս Սրբազանը հույս հայտնեց, որ զինվորներն իրենց ձեռքերով վեր կբարձրացնեն Սբ. Վարդան մատուռը՝ ի նշան քրիստոնեական հավատքի և հայրենյաց դարավոր պաշտպան Հայ Առաքելական Եկեղեցու հանդեպ ունեցած անմնացորդ նվիրումի:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

«ԵԿԱՅՔ ՇԻՆԵՍՑՈՒՔ ՍՈՒՐԲ ՋԽՈՐԱՆՆ ԼՈՒՍՈՅ»

1999 թ. հուլիսի 18-ին, Շիրակի թեմի Ազատան գյուղում մեծ տոնախմբություն էր: Հավատացյալների առջև իր դռներն էր բացել տասնամյակներ առաջ փակված գյուղի Ս. Ստեփանոս և այժմ Ս. Հարություն վերանվանված եկեղեցին: Եկեղեցու հարավային դռան վերնամասում կա մի արձանագրություն, որում ասվում է, որ այս եկեղեցին կառուցվել է 1460 թ. և նորոգվել 1865 թ.:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հիշատակին նվիրված խաչքարը Ս. Հարություն եկեղեցու մուտքին

Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանի գլխավորությամբ կատարվեց Դոնբացեքի կարգը: Այնուհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հրավիրված Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը վերանվիրագործեց և Ս. Պատարագ մատուցեց վերաբացված Ս. Հարություն եկեղեցում: Սրբազան արարողությունից հետո արարողապետ Գերաշնորհ Սրբազան Հայրը ոգեշունչ խոսքով դիմեց ազատանցի հավատացյալներին՝ ընդգծելով եկեղեցու պատմական ու կարևոր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում՝ ի մասնավորի նշելով. «Եկեղեցին մեր կյանքի հանգստյան կայանն է, ուր ծաղկում են երջանկության վարդերն ու շուշանները: Մարդիկ երջանիկ են այն չափով, ինչ չափով իրենք իրենց նվիրում են Աստծու ծառայությանը, և եկեղեցաշինությունն այդ ծառայությունների մեջ մեծագույններից է: Ուստի «եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»: Ս. Պատարագին մասնակցում էին նաև Մայր Աթոռի միաբաններ Տ. Մակար աբդ. Հովհաննիսյանը, Տ. Արշակ աբդ. Խաչատրյանը, Շիրակի թեմից՝ Տ. Շիրակ քհն. Առաքելյանը, Տ. Թաթուլ քհն. Հակոբյանը, Տ. Արսեն քհն. Սիմոնյանը, սարկավագներ, թեմի քառածայն երգչախումբը՝ խմբավարությամբ Արամ Աղաբաբյանի, և Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողներ:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց մատաղի օրհնություն՝ ի հիշատակ հանգուցյալ Վեհափառ Հայրապետի: Մատաղի կազմակերպիչներն էին բեյրութահայ բարերարներ Հարություն և Մարի Արսլանյանները: Հարկ է նշել, որ Հարություն Արսլանյանը, հանգուցյալ Վեհափառ Հայրապետի կոչին ընդառա-

ջելով, իր պատրաստակամությունը հայտնեց վերանորոգելու Ազատանի եկեղեցին՝ հատկացնելով 60000 ԱՄՆ դոլար: Ընդ որում բարերարների որդին և հարսը՝ Գրիգոր և Հիլտա Արսլանյանները, նույնպես իրենց մասնակցությունը բերեցին տարվող աշխատանքներին՝ հոգալով մկրտարանի ծախսերը: Բացի դրանից, նրանք հոգացին նաև անհրաժեշտ միջոցները եկեղեցու սրբապատկերների՝ Աստվածամայրը մանկան հետ, Ս. Հարությաև, Ս. Ստեփաննոսի, Ս. Գրիգոր Լուսավորչի և եկեղեցու բարեկարգված տարածքում կանգնեցված խաչքարի, որը նույնպես հանգուցյալ Վեհափառ Հայրապետի հիշատակին է նվիրված:

Փառք ենք տալիս Աստծուն, որ որպես հայ քրիստոնյաներ Լուսավորչի տեսիլքով ծնված ժողովրդի զավակն ենք: Ծառայելու կոչումը առաքելություն է: Որքան երջանիկ պիտի զգանք մենք մեզ, որ ծառայության բաժնից մենք էլ ունենք՝ կառուցելու և առավել զորացնելու ու ընդարձակելու Հայ Առաքելական եկեղեցին, որպես անբաժանելի մի մասնիկը Քրիստոսի Եկեղեցու: Ուրեմն մեզ մնում է հրավիրել բոլոր այն մարդկանց, ովքեր պատրաստ են ընդունելու նվիրումի այս վայելքը՝ ծառայելով և հաճելի դառնալով Աստծուն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՅԱՊՐՅԱՆ

ԲԱԶՄԱՀԱՐԻՒՐ ՀԱՅ ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐ ՄԱՄՆԱԿԵՑԵԱՆ ԼՈՒԽԱՆԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ

Քրիստոնէութեան Հայաստանի մէջ պետական կրօն հռչակման 1700-ամեակի առիթով՝ Ազգային Առաջնորդարանի կազմակերպած ուխտագնացութիւններու եւ ձեռնարկներու կարեւորագոյններէն մին էր Լուխանի Ուխտագնացութիւնը, որ պսակուեցաւ մեծ յաջողութեամբ: 21 Օգոստոսի Շաբաթ օր. աւելի քան եօթ հարիւր հայ հաւատացեալներ հոգեւոր եւ ազգային խոր ապրումներով հետեւեցան ու մասնակցեցան Սուրբ Պատարագին, Աստուածածնի պատկերի օծման ու Հայկական խորանի օրհնութեան եւ, վերջապէս, ուխտաւորներու ընդհանուր ճաշին եւ ուխտի աղօթքին:

Առաւօտեան ժամը 9.30-ին Պուէնոս Այրէսի բոլոր Հայկական եկեղեցիներէն մասնաւոր օթոպուսներ ճամբայ ելան, հաւատացեալներու խուռներամ բազմութիւնը Լուխան փոխադրելու համար: Ընդհանուր տասը օթոպուսներ էին, որոնցմէ հինգը՝ Մայր Տաճարէն, երկուքը՝ Ֆլօրէսի Վարագայ Ս. Խաչ եկեղեցիէն, երկուքը՝ Ալսինայի Ս. Յակոբ եկեղեցիէն եւ մէկը՝ Վիսէնթէ Լոփէսի Ս. Գէորգ եկեղեցիէն ճամբայ ելան. տակաւին մեծ թիւով ուխտաւորներ Լուխան մեկնեցան իրենց անձնական փոխադրամիջոցներով:

Սուրբ Պատարագը, Լուխանի Սուրբ Կոյսին նուիրուած Պասիլիքային մէջ, սկսաւ ժամը 11-ին. պատարագիչն էր թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Գիսակ արքեպս. Մուրատեան, Սուրբ Սեղանին կը սպասարկէին Արժ. Տ. Սուքիաս եւ Տ. Մասիս Քահանայ Հայրերը, ինչպէս նաեւ սարկաւագներ ու դպիրներ. Սուրբ Պատարագի երգեցողութիւնը կատարեց Մայր Տաճարի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Օրդ. Մաքրուհի Էօլմէսէքեանի: Հսկայ Տաճարը լեցուն էր Հայ եւ տեղացի հաւատացեալներով, եւ իւրաքանչիւրը այդ խորհրդաւոր պահը ապրեցաւ իւրայատուկ ձեւով եւ հոգեկան ապրումով: Հայ ուխտաւորը յուզումով կը հետեւէր Հայկական Սուրբ Պատարագին, որ կը մատուցուէր առաջին անգամ ըլլալով Հայ Առաքելական Առաջնորդի մը կողմէ, Հայ եկեղեցւոյ 1700-ամեակին առիթով եւ Արժանքիճի մեծագոյն ուխտատեղի Լուխանի Տաճարին մէջ: Իսկ տեղացի հաւատացեալը հոգեկան խորհրդաւոր ապրումով մը կը հետեւէր իրեն անծանօթ լեզուով երգուած շարականներուն, որ իր տեսածէն ու վարժուածէն ամբողջովին տարբեր էր: Բազմահարիւր հաւատացեալները, հաւաքական խոստովանութիւնը կատարելէ ետք, յուզումով մօտեցան Ս. Հաղորդութեան, որ մատակարարուեցաւ ներկայ Քահանայ Հայրերուն կողմէ:

Սուրբ Պատարագի վերջաւորութեան Սրբազան Հայրը Ս. Միւռոնով օծեց Աստուածածնի պատկերին չորս անկիւնները, եւ ապա թափօրով իջան Տաճարի գետնայարկը՝ զայն զետեղելու համար նոր կազմուած Հայ եկեղեցւոյ

խորանին վրայ: Տեղւոյն վրայ, հայերէն եւ սպաներէն լեզուներով, կարդացուեցաւ պատկերի օրհնութեան աղօթքը: Արարողութիւնը վերջ գտաւ Սրբազան Հօր օրհնութեամբ:

Սուրբ Պատարագին ներկայ եղան նաեւ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան Տէր եւ Տիկին Արա Այվազեանը, Հայ Եկեղեցւոյ բարեկամ Մոնսէնիօր Նեսթոր Տանիէլ Վիլլան, Լուխանի Տաճարի հոգեւոր հովիւ Բատրէ Իվան Լիքօզար եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կեդրոնական Վարչութեան անդամներ:

Աստվածածնի պատկերի զետեղումը Լուխանի Ս. Կույսին նվիրված տաճարի հայկական խորանում

Կրօնական արարողութիւններէն ետք, շուրջ ժամը 13.30-ին, ուխտաւորները հաւաքուեցան Տաճարին մօտիկ ճաշարաններէն մին եւ ուրախ մթնոլորտի մէջ ճաշեցին: Ներկայ էին շուրջ 500 հոգիներ եւ շատեր դուրս մնացին տեղի պակասութեան պատճառով: Եղան երգեր ու խօսքեր, իսկ ժամը 15-ին, «ճանապարհ» շարականի եւ նոյնանուն աղօթքի երգեցողութենէն եւ ընթերցումէն ետք, բոլոր ներկաները հայերէն եւ սպաներէն լեզուներով կարդացին «Ուխտի» յատուկ աղօթքը: Ուխտաւորները շուրջ ժամը 16-ին, Սրբազան Հօր վերջին օրհնութիւնը ստանալէ ետք, ճամբայ ելան վերադառնալու համար Պուէնոս Այրէս:

Ազգային Առաջնորդարանի կողմէ կազմակերպուած այս Ուխտագնացութիւնը հաւատացեալներուն տուաւ առիթ մը նորոգելու իրենց ուխտը Հայ Եկեղեցւոյ ու իրենց ազգային արմատներուն հետ եւ միեւնոյն ժամանակ դիմելու Ս. Կոյս Աստուածածնի բարեխօսութեան իրենց կարիքներուն համար:

Իսկ թէ ինչու՞ Լուխանը ընտրուեցաւ որպէս ուխտի տեղի, ըսենք, որ ան փոքր քաղաք մըն է Պուէնոս Այրէսի մօտ եւ Արժանթինի կարեւորագոյն

ուխտատեղին. Տաճարը նուիրուած է Սուրբ Կոյս Աստուածածնին, որ ծանօթ է իբրեւ «Լուխանի Ս. Կոյս»ը: Ամէն տարի հարիւր հազարաւոր ուխտաւորներ կ'այցելեն Լուխան իրենց յարգանքը մատուցելու Աստուածամօր, ուխտը կատարելու եւ Աստուածածնի բարեխօսութեան եւ օգնութեան յանձնուելու: Շատեր նոյնիսկ ոտքով կ'երթան եւ շուրջ 65-70 քիլօմեթր կը քալեն հաւատքով եւ երկիւղածութեամբ:

Մենք՝ հայերս, ընդունած ենք ու կ'ընդունինք Ս. Կոյս Մարիամը իբրեւ տիպարը հայ մայրերուն, եւ անոր կու տանք «Աստուածամայր», «Աստուածածին» եւ այլն անունները. Ան միշտ ներկայ է մեր արարողութիւններուն եւ աղօթքներուն մէջ, քանի որ միշտ կը դիմենք անոր բարեխօսութեան:

Այս իմաստով եթէ նկատի ունենանք. ա) Լուխանի ուխտատեղի ըլլալը, բ) Աստուածամօր բարեխօսութեան կարեւորութիւնը, գ) 2000-ի եւ 2001-ի արժէքն ու իմաստը քրիստոնեաներու, հայութեան ու Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ, պարզ կը դառնայ թէ ինչո՞ւ իբրեւ հայ ուխտաւորներ կը դիմենք Լուխանի Սուրբ Կոյսին, եւ կ'երթանք անոր նուիրուած Տաճարին մէջ աղօթելու: Իբրեւ հաւատացեալ քրիստոնեաներ եւ հայեր, մեր 1700-ամեակի իրողութիւնը պէտք է բաժնենք ու զգացնենք նաեւ մեր շրջապատին:

Լուխանի Տաճարին գետնայարկը (Cripta) զանազան ազգեր ունին իրենց խորանները՝ նուիրուած Ս. Կոյս Մարիամին: Անոնց կարգին է նաեւ Հայ Կաթողիկէ Համայնքի «Նարեկի Սուրբ Կոյս»ի խորանը, որուն կողքին այսօր արդեն գոյութիւն ունի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ խորանը՝ նուիրուած Ս. Կոյսին, ի յիշատակ Քրիստոնէութեան Հայաստանի մէջ պետական կրօն հռչակման 1700-ամեակին:

Ուստի, աշխարհի խաղաղութեան, մեր զոյգ հայրենիքներու՝ Հայաստանի եւ Արժանթինի բարօրութեան, Հայաստանի, հայ ժողովուրդի եւ Հայ Եկեղեցւոյ պայծառութեան համար կը դիմենք Ս. Կոյս Մարիամ Աստուածածնին, որ իր բարեխօսութեամբ օգնէ մեզի:

Վարձդ կատար, Հայ ուխտաւոր, Ս. Կոյսի բարեխօսութեամբ Բարձրեալն Աստուած պահէ ու պահպանէ նաեւ քեզ ու քու ընտանիքդ:

ԳԻՄԱԿ ԱՐՔԵՊԻՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆ
Առաջնորդ Արժանթինահայոց

ԼՈՒՐԵՐ
ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

1999 թ. հունիսի 11-12-ը Հանովեր քաղաքում կազմակերպված հանդիսությամբ Հայ-Գերմանական ընկերակցությունը, որը 1914 թ. Գերմանիայում հիմնել է հայ ժողովրդի մեծ բարեկամ Յովհաննես Լեփսիուսը, նշեց իր ստեղծման 85-ամյակը:

Հանդիսությանը մասնակցեց նաև Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպս. Բեկչյանը՝ ընկերակցությամբ թեմական խորհրդի ներկայացուցիչներ տիկ. Մելինե Փոլմանի և դոկտ. Խաչիկ Մխիթարյանի: Առաջնորդ Սրբազանը ողջույնի իր խոսքում բարձր գնահատելով ընկերակցության ծավալած հայանպաստ գործունեությունը՝ հաջողություն մաղթեց այս կազմակերպության հետագա ծրագրերի իրականացմանը: Ընկերակցության հաջորդ օրը տեղի ունեցած ընդհանուր ժողովը վարչության ատենապետ ընտրեց դոկտ. Րաֆֆի Քանդյանին, որը երկար տարիներ խմբագիրն էր այս կազմակերպության եռամսյա թերթի:

1999 թ. հունիսի 19-ին Շտուտգարդում տեղի ունեցավ Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու 28-րդ Եկեղեցական Օրը: Ամեն երկու տարին մեկ այս օրը տեղի ունեցող հավաքին մասնակցում են բազմահազար հավատացյալներ Գերմանիայի քաղաքներից, ինչպես նաև տարբեր դավանանքների ներկայացուցիչներ: Այս տարի Եկեղեցական Օրվա գլխավոր բանախոսն էր Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը: Նորին Սրբությունը հրավիրված էր որպես Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ատենապետ: Արամ Կաթողիկոսը նախագահեց նաև հաջորդ օրը Շտուտգարդի մարզադաշտում տեղի ունեցած եկեղեցական արարողությանը:

Գարեգին արքեպս. Բեկչյանը մասնակցելով այս հանդիսություններին՝ գերմանահայոց թեմական խորհրդի և հավատացյալների ողջույնները հաղորդեց Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսին:

Օգոստոսի 8-ին Գերմանիայի հայկական բոլոր եկեղեցիներում տեղի ունեցավ Ս. Պատարագ և հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի մահվան քառասունքի: Քյոլնի առաջնորդարանի Ս. Աստվածածին եկեղեցում Ս. Պատարագ մատուցվեց ծեռամբ թեմակալ առաջնորդի, ապա տրվեց հոգեճաշ: Արարողությանը ներկա էին նաև ներկայացուցիչներ Գերմանիայում գործող մյուս եկեղեցիներից:

Սեպտեմբերի 5-ին Քյոլնի Հայոց Առաջնորդարան այցելեց Գերմանիայի խորհրդարանի 50-ամյակի հանդիսություններին մասնակցելու համար ժամանած ՀՀ Ազգային ժողովի պատվիրակությունը՝ ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանի գլխավորությամբ: Նույն օրը Կարեն Դեմիրճյանը հանդիպեց նաև

գերմանահայ միությունների ներկայացուցիչների հետ: Ջերմ մթնոլորտում անցած հանդիպման ընթացքում Ա.Ժ նախագահը ներկայացրեց Հայաստանի այսօրվա վիճակը և պատասխանեց ներկաներին հուզող հարցերին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններից Հալլեում սովորող Անուշավան աբեղա Ժամկոչյանը թեմում տված իր հոգևոր համերգների ընթացքում, ծանոթանալով այստեղ բնակվող հայերի հետ, կազմակերպել է մի փոքր համայնք, ստեղծելով նաև երեխաների երգչախումբ, որ առաջին անգամ Ս. Պատարագին մասնակցեց սեպտեմբերի 5-ին: Ս. Պատարագին ներկա էր նաև թեմակալ առաջնորդը: Պատարագից հետո Սրբազանը հանդիպեց տեղի հայերի հետ, ինչպես նաև նախագահեց նորակազմ համայնքի առաջնայա վարչության նիստը:

Հաջորդ օրը Առաջնորդ Սրբազանն այցելեց Բեռլինի շրջանի հոգևոր հովիվ Սերովբե վրդ. Խսախանյանի հրավերով, տեղի հայկական եկեղեցում նախագահելու հոգեհանգստյան պաշտոնին՝ ի հիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Արարողությանը ներկա էին հայ և օտար եկեղեցականներ:

Նույն օրը, երեկոյան, Բեռլինի «Ամբերդ» հայկական սրահում ընթրիք տրվեց՝ ի պատիվ Հայաստանից ժամանած Ազգային ժողովի պատվիրակության, որը հաջորդ օրը ավարտելով իր մասնակցությունը կազմակերպված հանդիսություններին, մեկնելու էր հայրենիք:

Ընթրիքի ընթացքում մեկ անգամ ևս շեշտվեց Սփյուռք-Հայրենիք կապերի առավել ամրապնդման և փոխադարձ վստահության զորացման անհրաժեշտությունը:

ԸՍՏ ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԻՎԱՆԻ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԺՆԵՎՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԵՀԽ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սույն թվականի օգոստոսի 26-ից սեպտեմբերի 3-ը ժնևում գումարվեց եկեղեցիների Համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի տարեկան համաժողովը, որի բացումը տեղի ունեցավ եկեղեցական հատուկ արարողությամբ: Համաժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մասնակցում էր երկու ներկայացուցիչներով՝ հանձինս Գերաշնորհ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանի և օրիորդ Սիլվա Ղազելյանի:

Ընթացիկ հարցերի քննարկումից և պատգամավորների հաշվառումից հետո, անդրանիկ նիստում լսվեցին և գնահատվեցին ԵՀԽ-ի ատենապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի, ինչպես նաև ընդհանուր քարտուղար դոկտոր Կոնրադ Ռայզերի տեղեկագրերը:

Երեկոյան Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչները գումարեցին առանձին ժողով, որի ընթացքում քննարկվեցին ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում նաև՝ հատուկ հանձնախմբի կազմության հարցը: Որոշվեց, որ Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների համաձման հանդիպում կգումարվի ևս մեկ անգամ՝ շաբաթ օրը:

Կազմվեցին խմբեր և ենթախմբեր: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչներից Տ. Աղան արքեպս. Պալիոզյանն ընդգրկվեց ծրագրային հանձնախմբում, օր. Սիլվա Ղազելյանը՝ թիվ 2 ուղեցույց հանձնախմբում:

ԵՀԽ կենտրոնական վարչությունն օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը շարունակեց իր աշխատանքները առանձին հանձնախմբերում:

Օգոստոսի 31-ի երեկոյան նորակազմ «Հատուկ հանձնախմբի» ուղղափառ և ոչ ուղղափառ անդամները գումարեցին իրենց անդրանիկ նիստը, որի ընթացքում տեղի ունեցավ կարծիքների փոխանակում, միաժամանակ որոշվեց հանձնախմբի հաջորդ ժողովը գումարել սույն թվականի դեկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում: Այս նիստում Հայաստանյայց Եկեղեցին ներկայացրեց Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը: Որոշվեց, որ առաջիկա ժողովին յուրաքանչյուր ներկայացուցիչ իր ելույթում պարտադիր համադրի իր հարազատ եկեղեցին Ուղղափառ երկու եկեղեցիների հետ:

Սեպտեմբերի 1-ին Տիեզերական Պատրիարքության ժնևի առաջնորդ Դամասկինոս Արբազանի կողմից տրվեց պաշտոնական ընդունելություն՝ ի պատիվ ԵՀԽ-ի կենտրոնական վարչության Ուղղափառ եկեղեցիների եկեղեցական և աշխարհական մասնակից անդամների:

Սեպտեմբերի 3-ին տեղի ունեցավ ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի հերթական ժողովի պաշտոնական փակումը: Եկեղեցական հատուկ արարողության մաս կազմեցին նաև ոսկեղենիկ հայերենով հնչած աղոթքը և հոգևոր երգը:

ՄՍԱՐ ԱՒՈՒՒ ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ. ԼՈՒՐԵՐ

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

ԼՈՒՐԵՐ ՎԱՏԻԿԱՆԻՑ

Հուլիսի 24-ին Հռոմի Պապ Հովհաննես-Պողոս II-ն ցավակցական հեռագիր է հղել Սարոկկոյի նոր թագավոր Մոհամեդ VI-ին՝ նախորդ օրը, երեկոյան, 70 տարեկան հասակում, նրա հոր՝ Հասսեյն II-ի վախճանման կապակցությամբ: Իր համառոտ ցավակցականի մեջ Պապն ասել է. «...վերհիշելով Երուսաղեմի հարցով Կասաբլանկա այցելությանս ընթացքին իր հետ ունեցած իմ հանդիպումները, ես մտապահել եմ մի մարդու կերպար, որը ցանկանում էր զարգացնել երկխոսությունը հավատացյալների միջև և նպաստել խաղաղության հաստատմանը՝ հատկապես Միջին Արևելքում»:

Հուլիսի 28-ին տեղի ունեցավ արքեպիսկոպոս Ժան-Լուիս Տյուռանի և ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթի հանդիպումը: Մեկ ժամից ավել տևող հանդիպման ընթացքում քննարկվել են միջազգային հարաբերություններին առնչվող լայն շրջանակի հարցեր: Մասնավոր ուշադրություն է դարձվել Միջին Արևելքի, ասիական մի շարք երկրների և Բալկանյան հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացին:

Սեպտեմբերի 4-ին Նորին Սրբությունը հովվապետական այցելությամբ մեկնել է Սալեռնոյի թեմ, Իտալիա, որտեղ նախագահել է Ֆաիանո դի Պոնտեսագնանո քաղաքում «Հովհաննես-Պողոս II» անունը կրող թեմական ճեմարանի և «Սուրբ Մատթեոս» հոգևորականաց տան բացման հանդիսավոր արարողությանը, ուր հավաքվել էին շուրջ 10.000 հավատացյալներ:

«Կաթոլիկ հայերի Պատրիարք Հովհաննես-Պետրոս XVII (Գասպարյանը), որը 72 տարեկան է և պատրիարքական գահին է 1982 թվականից, վայր է դրել իր լիազորությունները»,- սեպտեմբերի 8-ին հայտարարել է Սուրբ Աթոռի լրատվական ծառայությունը: Պատրիարք Հովհաննես-Պետրոսը, մայիս ամսին Հռոմում գումարված հայ կաթոլիկների սինոդի որոշումը լսելուց հետո, իր հրաժարականն է ներկայացրել Հովհաննես-Պողոս II Պապին, որը և ընդունել է այն: Նոր Պատրիարքի ընտրությունները կկայանան հոկտեմբերի 2-ին, իսկ մինչ այդ պատրիարքության գործերը վարելու է Սանվել եպիսկոպոս Բատակյանը:

1996 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիր Կառլոս եպիսկոպոս Խիմենես Բելոն կոչ է ուղղել միջազգային հանրությանը՝ միջամտելու Արևելյան Թիմորում կատարվող ողբերգությանը: Իտալական «Ավվենիրե» թերթին տված

իր հարցազրույցում եպիսկոպոսն ասել է. «Այսօր, առավել քան երբևե, մենք ունենք տարածաշրջանում միջազգային խաղարարար զորքերի ներկայության կարիքը»: Նա ավելացրել է նաև, որ Ինդոնեզիայի զինված ուժերը ցանկանում են կրկնել 1975 թ. իրադարձությունները, երբ Ինդոնեզիան բռնի կերպով գրավեց նախկին պորտուգալական այդ գաղութը:

Սեպտեմբերի 12-ին Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս II Պապը Թիմորում խաղաղության վերահաստատման և արյունահեղության դադարեցման կոչ է ուղղել իր ամենշաբաթյա ուղերձում: Արքազան Քահանայապետը նկատել է, որ նախկին պորտուգալական այդ համայնքում տեղի ունեցող «դաժան բռնությունները» ուղղված են «երկխոսություն և հաշտություն կառուցող» կաթոլիկ եկեղեցու դեմ: «Ես կրկին իմ կոչն եմ ուղղում քաղաքական ու զինվորական առաջնորդներին և ունկնդիր միջազգային հանրությանը՝ լսել խեղճերի ու անօգնականների լացը և անհապաղ օգնության ձեռք մեկնել»,-ասել է նա:

Սեպտեմբերի 17-ին Կարդինալ Սալվադորե դե Ջիորջիի նախագահությամբ կատարվեց Սիցիլիայի քահանա Ջուզեպպե Պուգլիսի սրբացմանը նախորդող կրոնական մի արարողություն: Հանգուցյալ քահանան, որը հայտնի էր աղքատ և կարիքավոր երեխաների հանդեպ իր հոգածությամբ, 1993 թ. սեպտեմբերին սպանվել էր սիցիլիական մաֆիայի կողմից:

«Բաղդադի առաջնորդ Սադամ Հուսեյնը հրահանգել է վերանորոգչական աշխատանքներ սկսել Ուր քաղաքում, որտեղ ծնվել է Աբրահամ նահապետը, ըստ պատշաճի պատրաստելով այն Հռոմի Պապի մոտալուտ այցելությանը»,- տեղեկացրել են իրաքյան թերթերը: Ավելին՝ Իրաքի կառավարությունը մշակույթի, ինչպես նաև կրոնի գործերի և լրատվության նախարարությունների մասնակցությամբ հատուկ հանձնախումբ է ստեղծել, որը զբաղվելու է այցելության նախապատրաստական աշխատանքներով: 2000 թվականի հավանաբար մարտ ամսին կատարելիք այդ ուխտագնացության ճանապարհին Պապն այցելելու է նաև Հորդանանում գտնվող Նեբո սար, որտեղից, Աստվածաշնչի համաձայն, Մովսես մարգարեն մահվանից առաջ նայել է Ավետյաց երկրին: Այցելության մանրամասները քննարկվել են սեպտեմբերի 18-ին Հորդանանի նոր թագավոր Աբդուլլայի և Հռոմի Պապի միջև վերջինիս ամառային «Կասել Գանդոլֆո» դղյակում տեղի ունեցած հանդիպման ընթացքում:

Կիրակի օրը, սեպտեմբերի 19-ին, Հովհաննես-Պողոս II-ը իր երկրորդ հովվապետական այցելությամբ մեկնել է Սլովենիայի Հանրապետություն, Մարիբոռ: Օդանավակայանում կատարված ողջույնի կարճ արարողությունից հետո, Պապն անմիջապես մեկնել է Բետնավա ամրոցի մոտ գտնվող բացատ՝ սրբացման հանդիսավոր պատարագը մատուցելու: Այս անգամ Նորին Սրբությունը սրբերի դասն է կարգել եպիսկոպոս Անտոն Մարտին Սլոմսեկին, որը մեծ նպաստ է ունեցել սլովենական լեզվի և մշակույթի զարգացման գործում:

Սրբադասմամբ զբաղվող Վատիկանի հատուկ հանձաժողովը որոշում է ընդունել Հովհաննես-Պողոս II Պապին ներկայացնել Հովհաննես XXIII-ին սրբացնելու մասին առաջարկությունը: Իտալական «Իլ Մեսսաջեռո» թերթի

հաղորդած տեղեկությունների համաձայն, 2000 թվականին սպասվում է մեկ այլ Հռոմի Պապի՝ Պիոս IX-ի սրբացումը: Սակայն եթե Հովհաննես XXIII-ի սրբացնելու պարագային ներկայիս Պապը ոչ մի առարկություն չունի, ապա Պիոս IX-ի կապակցությամբ նա ցանկացել է խորհրդակցել իտալացի պատմաբանների և քաղաքագետների հետ՝ խուսափելու համար հետագա բարդություններից: Հիշեցնենք, որ Պիոս IX Պապը որոշ պատմաբանների կողմից մեղադրվում էր Ադոլֆ Հիտլերի հետ կապեր ունենալու մեջ:

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիայի Արդարադատության նախարարը հանդես է եկել «Գիտության Եկեղեցի» կոչվող հաստատության՝ Ֆրանսիայում պաշտոնապես չգրանցելու առաջարկությամբ, որովհետև նա գտնում է, որ վերջինս ավելի աղանդ է, քան թե կրոն: «Գիտության Եկեղեցի»-ն ԱՄՆ-ում գրանցված է իբրև կրոն և մեծ համակրանք է վայելում Հոլիվուդյան կինոաստղերի շրջանակներում: Այսպես, օրինակ, հանրաճանաչ Ջոն Տրավոլտան, Թոմ Կրուզը և Նիքոլ Քիդմանն այս աղանդի հետևորդներ են: Մինչդեռ Գերմանիայում «Գիտության Եկեղեցի»-ն համարվում է նույնիսկ քրեապես հետապնդելի աղանդ, որովհետև իր «պաշտամունքի» ընթացքում թույլատրում է բժշկության անթույլատրելի կիրառություններ և բռնություններ:

ՈՒՂՂԱՓԱՌ ԱՇԽԱՐՀ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Բարդուղիմեոս I-ը ողջունել է իր եկեղեցու բոլոր հետևորդներին՝ ծիսական նոր տարվա սկզբի կապակցությամբ: Իր խոսքում Պատրիարքը կարևորել է հոգևոր կյանքի անհրաժեշտությունը յուրաքանչյուր հավատացյալի կյանքում: Անդրադառնալով Հարավսլավիայում և Թուրքիայում երկրորդ հազարամյակի ավարտին պատահած մարդկային ծանր դժբախտություններին, նա ասել է. «Սա հիմնականում այն պատճառով է, որ յուրաքանչյուր մարդու ներքին հոգևոր միջավայրի գիտակցությունը ոչ բարելավվել է, ոչ էլ Աստծո փառքով դարձել դեպի բարին»:

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Սույն թվականի սեպտեմբերի 6-ին գումարվեց Հունական եկեղեցու Սուրբ Սինոդի ժողովը, որը մասնավորաբար քննարկեց կարդինալ Էդվարդ Իդրիս Կասսիդիի Խրիստոդուլոս արքեպիսկոպոսին ուղղված գրությունը, որտեղ վկայակոչված էր Հռոմի Պապի շրջաբերական նամակն այն մասին, ուր Պապը

2000 թվականին քրիստոնեական մեծագույն սրբատեղիներով կատարելիք իր ուխտագնացության ընթացքում ցանկություն էր հայտնել հանդիպել ուղղափառ առաջնորդների, այդ թվում նաև Խրիստոդուլոս արքեպիսկոպոսի հետ: Ի պատասխան այս գրության, Սուրբ Սինոդն ընդունել է որոշում, որտեղ ասվում է, որ ուղղափառ եկեղեցիների առաջնորդները պետք է հավաքվեն Տիեզերական Պատրիարքի նախաձեռնությամբ գումարված ժողովում, որտեղ և պիտի քննարկեն նախատեսվող հանդիպման մանրամասները:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Սեպտեմբերի 10-ին Մոսկվայում գումարվեց Ռուսաստանի Միջկրոնական Խորհրդի երկրորդ նիստը, որին մասնակցում էին Մոսկվայի Պատրիարքության արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ միտրոպոլիտ Կիրիլը, Ռուսաստանի Եվրոպական տարածաշրջանի մուսուլմանների հոգևոր իշխանության Գերագույն Խորհրդի նախագահ, Ռուսաստանի մուֆտիների խորհրդի նախագահ Ռավիլ Գայնուտդինը, ԱՊՀ-ի և Ռուսաստանի գերագույն ռաբբի Ավռոմ Շայևիրը, Մոսկվայում Պանդիտո Խամբա-լամայի հոգևոր ներկայացուցիչ Սանճեյ-լաման և շատ ուրիշներ: Մասնավորաբար քննարկելով Դաղստանում առկա կացությունը, նիստի մասնակիցներն իրենց համոզվածությունն են արտահայտել, որ անհրաժեշտ է ամրապնդել միջկրոնական երկխոսությունն ու համագործակցությունը՝ միևնույն ժամանակ նշելով, որ վերոհիշյալ իրադարձությունները ոչ մի առնչություն չունեն կրոնի հետ:

Սեպտեմբերի 13-ին Պատրիարքարանում գումարվեց Քրիստոնեական միջհարանվանական խորհրդակցական կոմիտեի երրորդ ընդլայնված նիստը, որը նվիրված էր հոբելյանական միջազգային- միջհարանվանական համաժողովի նախապատրաստական աշխատանքների կազմակերպմանը:

Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիյ II-ը սեպտեմբերի 13-ին հանդես է եկել Մոսկվայում և Բույնակսկում կատարված ահաբեկչությունները դատապարտող մի հայտարարությամբ, որտեղ ասվում է. «Այսօր մեր եկեղեցու տաճարներում աղոթք է վերառաքվել Մոսկվայում և Բույնակսկում կատարված հանցագործությունների զոհերի հոգվո խաղաղության համար: Սգո օրը նշանավորվեց նոր սարսափելի ոճրագործությամբ՝ մեկ այլ բնակելի տան պայթեցմամբ, որը տասնյակ անմեղ մարդկանց մահվան պատճառ դարձավ»: «.... մոսկվացիներին անհրաժեշտ է համախմբվել՝ նոր ոճրագործությունները կանխելու համար»,- կոչ է արել Ալեքսիյ Պատրիարքը:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պատրիարք Պետրոս VII-ը, լսելով Հունաստանում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի մասին, ցավակցական գրություններ է հղել Հունաստանի Հանրապետության նախագահին, վարչա-

պետին և Հունաստանի Ավտոկեֆալ Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Խրիստոդուլոս արքեպիսկոպոսին: «Մենք խորապես վշտացած ենք մարդկային զոհերի համար և կիսում ենք Աստծո բոլոր այն զավակների և ընտանիքների ցավն ու վիշտը, որոնք տուժել և վնասվել են այդ աղետից»,- ասվում է գրության մեջ:

ՍԵՐԲԻԱ

Սերբ Ուղղափառ Եկեղեցին վերջերս հրապարակեց պաշտոնական տվյալներ, որոնց համաձայն, միայն հունիսի 2-ից և խաղաղարար զորքերի տեղակայումից մինչև օգոստոսի 22-ը սպանվել են 265 և (մինչև օգոստոսի 30-ը) առնանգվել թվով շուրջ 212 սերբեր: Դարձյալ անարգվում և կործանվում են Կոսովոյի և Մետոհիայի շրջաններում գտնվող քրիստոնեական սրբավայրերը: Այսպես, «Պռովոսլավլե Պրեսս» գործակալության հաղորդած տեղեկությունների համաձայն, սեպտեմբերի 5-ին շուրջ 70 գինվորներ իրենց մարմիններով «կենդանի պատնեշ» են ստեղծել ալբանական ծայրահեղականների դեմ և պաշտպանել՝ իր հնությամբ և մշակութային արժեքներով հռչակված Պեք Պատրիարքության վանքը: Այս կապակցությամբ Սերբական Եկեղեցին իր տառապյալ ժողովրդի հետ միասին շարունակում է բարձրացնել իր արդար բողոքի ձայնը:

ԱԼԲԱՆԻԱ

Ալբանական Ավտոկեֆալ Ուղղափառ Եկեղեցին, օգնելով Կոսովոյի տուժած մահմեդական բնակչությանը, բարեկամության և հաշտության կամուրջ է անցկացրել հակամարտող այս երկու ժողովուրդների միջև: «Ալբանական Եկեղեցին մեծ դժվարության մեջ էր, երբ սկսեց Կոսովոյի հակամարտությունը,- ասել է Ալբանական Եկեղեցու առաջնորդ, ազգությամբ հույն Անաստասիոս արքեպիսկոպոսը,- որովհետև կոսովոցիները անիծում էին ուղղափառ սերբերին իրենց տառապանքների համար»: Սակայն այս կարճ ժամանակահատվածում Ալբանական Եկեղեցին, միլիոնավոր դոլարների օգնություն բաշխելով կարիքավորներին, կարողացել է գրավել ալբանացիների համակրանքն ու վստահությունը: «Մենք աղքատ, բայց ընկերներով հարուստ Եկեղեցի ենք»,- հայտարարել է Անաստասիոս արքեպիսկոպոսը:

ԿԱԹՈԼԻԿ ԱՇԽԱՐՀ

ԱՆԳԼԻԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Յորքի արքեպիսկոպոս Դևիդ Հոպը հուլիսի վերջին այցելեց Ռումինիա: Այցելության հիմնական նպատակը բարեգործական մի քանի ծրագրերին մասնակից լինելն էր: Ինքը՝ Դևիդ Հոպը, Մեծ Բրիտանիայի Քրիստոնյա երեխա-

ների բարեգործական ֆոնդի (CCF) միջոցով մարդասիրական մեծ ծրագրեր է իրականացնում Ռումինիայի կարիքավոր երեխաներին օգնելու համար:

Այս տարի Անգլիկան եկեղեցին մեծ շուքով տոնակատարությունների մի շարք ծրագրեր է անցկացնում նվիրված կանանց ձեռնադրության 25-ամյա հոբելյանին: Իր ելույթում Անգլիկան Համայնքի գլխավոր քարտուղար Ջոն Լ. Պետերսոնն ասել է. «Անգլո-Կաթոլիկ և Ավետարանական եկեղեցիները հյուսիսում և հարավում քայլեր են ձեռնարկել այս ուղղությամբ: Աշակութային առումով տարբեր երկրների եկեղեցիները Միացյալ Նահանգներում, Ուգանդայում, Ճապոնիայում և Հարավային Աֆրիկայում ձեռնադրում են կանանց»:

Սեպտեմբերի 14-ից 25-ը Շոտլանդիայում, Դունդիի Համալսարանում, գումարվեց Անգլիկան Խորհրդակցական ժողովի (ACC) հերթական 11-րդ համագումարը: Ժողովի բացմանը, սեպտեմբերի 11-ին, նախորդել էր պատմական Սբ. Անդրեաս Մայր Տաճարում Քենթրբերիի արքեպիսկոպոս Ջորջ Լ. Քերիի մատուցած Պատարագը, որի ընթացքում քարոզ էր խոսել Շոտլանդական եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ Ռիչարդ Հոլլովեյը: Համագումարին մասնակցել են 125 պատգամավորներ:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԴԱՆԻԱ

Դանիական զանգվածային լրատվության միջոցները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել ընբոստ քահանա Լեիֆ Բոռկ Հանսենի դատավարության նկատմամբ: Վերջինս 20- օրյա կալանքի էր դատապարտվել այն բանի համար, որ դանիական իշխանություններից թաքցրել էր 29 սերբ փախստականների: Թեև եկեղեցին գտել է, որ քահանան իսկապես զանցանք է գործել և մեղավոր է պետության առջև, սակայն Հանսենը հավաստիացրել է, որ շարունակելու է իր գործը նույնիսկ ի գին իր քահանայության:

Վերջերս Դանիայում անցկացվել են վիճակագրական հարցումներ, որի արդյունքում հայտի է դարձել, որ Դանիայի բնակչության 85,4%-ը, 4.539.857 մարդ, Դանիական Լութերական եկեղեցու հետևորդներ են: Մահմեդական համայնքը հաշվում է 119.000 հոգի: Բացի այդ, Դանիայում կան 34.864 կաթոլիկներ, 15.234 Եհովայի վկաներ, 3.120 հրեաներ, Սկրտչական և երեք այլ եկեղեցիների՝ 5.000 և ավելի քիչ հետևորդներ:

ՇՎԵԴԻԱ

Շվեդական եկեղեցին ամենիջապես արձագանքել և օգնության ձեռք է մեկնել Թուրքիայում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի զոհերին: Շուրջ 1.000.000 շվեդական տարադրամ է փոխանցվել երկրաշարժից տուժածների օգնության հաշվեհամարին: Բացի այդ, Շվեդական եկեղեցու Օգնություն

(ՇԵՕ) կազմակերպությունը Իզմիր քաղաքի մոտ մի ճամբար է հիմնել, որտեղ ժամանակավոր բնակություն են հաստատել ավելի քան 500 ընտանիքներ, որոնց խնամքը նույնպես իր վրա է վերցրել ՇԵՕ-ն :

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՀԽ-ն մեծագույն վշտով է ընդունել Արևելյան Թիմորի Քրիստոնեական եկեղեցու գերագույն քարտուղար Ֆրանսիսկո դե Վասկոնսելոսի սպանության լուրը: Նա սպանվել էր սեպտեմբերի 10-ին ինքնավարությանը կողմնակից ոստիկանության կողմից: Այս առնչությամբ ԵՀԽ-ն, դիմելով միջազգային հանրությանը, մեկ անգամ ևս կոչ է արել ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ արյունահեղությունը կանխելու ուղղությամբ:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀ

ՍԻՐԻԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ

Սիրիական եկեղեցին սկիզբ է առնում Անտիոքի վաղ քրիստոնեական համայնքից, որը հիշատակված է Գործք Առաքելոցում: Անտիոքյան եկեղեցին վաղ դարերի քրիստոնեական մեծագույն կենտրոններից մեկն էր: Սակայն 451 թվականի Քաղկեդոնի ժողովը համայնքում պառակտում առաջ բերեց: Ժողովի ուսմունքը բյուզանդական կայսրության իշխանավորների կողմից պարտադրվում էր քաղաքներում, միչդեռ երկրի գավառական մասում այն համատարած մերժվում էր:

6–րդ դարում Եդեսիայի եպիսկոպոս Հակոբ Բարադային մեծ թվով եպիսկոպոսներ և քահանաներ ձեռնադրեց՝ ի դեմս կայսերական ընդդիմության Քաղկեդոնը մերժածների հոգևոր կարիքները հոգալու համար: Այստեղից այս եկեղեցին հայտնի դարձավ «Հակոբիկյան» անվամբ, իր սեփական («Արևմտյան Սիրիական» կամ «Անտիոքյան» կոչվող) ծիսակարգով և այլ ավանդություններով, որոնք կատարվում էին բոլորի կողմից գործածվող սիրիական խոսակցական լեզվով: Որոշ համայնքներ հիմնվեցին նաև Բյուզանդական կայսրությունից դուրս՝ Պարսկաստանում:

Տարածաշրջանի գրավումը նախ պարսիկների, ապա քիչ ուշ՝ արաբների կողմից դադարեցրեց բյուզանդական հալածանքը և Սիրիական եկեղեցու զարգացման համար ստեղծեց բարենպաստ պայմաններ: Միջին դարերում սիրիական ուղղափառ գիտական միտքը մեծ վերածնունդ ապրեց, երբ համայնքներն ունեին աստվածաբանության, փիլիսոփայության, պատմության և այլ գիտությունների բարգավաճող կրթօջախներ: Զարգացման իր գագաթնակետին գտնվելու ժամանակ եկեղեցին ներառում էր 20 միտրոպոլիտական Աթոռներ և 103 թեմեր, որոնք հասնում էին ընդհուպ մինչև Աֆղանստան: Սկսնայտորեն այս ժամանակաշրջանում հեռավոր Թուրքմենիայում և Սինկիանգում գոյություն են ունեցել նաև առանց եպիսկոպոսի առաջնորդվող սիրիական ուղղափառ հավատացյալների համայնքներ:

Սակայն 14–րդ դարի վերջերին Լենկ-Թեմուրի գլխավորությամբ մոնղոլների ներխուժումների ընթացքում սիրիական եկեղեցիների և վանքերի մեծամասնությունը ավերվեց՝ սկզբնավորելով երկարատև անկումը: Սարսափելի վնասներ հասցվեցին նաև Առաջին Աշխարհամարտի ժամանակ և դրանից հետո՝ արևելյան Թուրքիայում իրականացվող հալածանքների և ջարդերի պատճառով: Սա պատճառ դարձավ համայնքի սփռվելուն:

Նույնիսկ այսօր սիրիական ուղղափառ բնակչության թիվը փոփոխական է: 1950 և 1960-ականներին շատերը Իրաքից և Սիրիայից գաղթեցին Լիբանան: Իրաքի ներսում նրանք հյուսիսային Մոսուլ քաղաքից շարժվեցին դեպի

Բաղդադ: Համայնքն ամենազգալի կորուստներն ունեցավ Թուրքիայի հարավ-արևելքում, որտեղ մնացին թվով շատ քիչ ուղղափառ սիրիացիներ: Այս դարասկզբին ուղղափառ շատ սիրիացիներ տնտեսական և քաղաքական շարժառիթներով գաղթեցին Արևմտյան Եվրոպա և Ամերիկյան մայրցամաք:

Սիրիացիներն ունեն ուժեղ վանական ավանդություն, սակայն միայն մի բանի վանքեր են պահպանվել հարավարևելյան Թուրքիայում և Միջին Արևելքի այլ վայրերում: Մեկ այլ վանք վերջերս բացվել է Նիդեռլանդներում, որն իր տեսակի մեջ Սփյուռքում միակն է:

Սիրիայի պատրիարքները մինչև 1034 թվականը նստում էին Անտիոքում: Այդ ժամանակից ի վեր նրանք նստել են Մար Բարսումա վանքում (1034-1293), Դերեզ-Զաֆառան վանքում (1293-1924), Հոմսում (Սիրիա, 1924-1959) և վերջապես Դամասկոսում (սկսած 1959 թ.):

Որոշ աստվածաբանական կրթություն տակավին մատուցվում է վանքերի կողմից: Բայց Սբ. Եփրեմ սիրիական ուղղափառ ճեմարանը Պատրիարքության գլխավոր աստվածաբանական հաստատությունն է: Այն հիմնվել է 1939 թ. Մոսուլում, Իրաք, ապա 1960-ականներին փոխադրվել Լիբանան: 1968 թ. նոր հարմարություններ ստեղծվեցին Բեյրութին մոտ գտնվող Ատչանեհ կոչվող վայրում, սակայն Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմը ուսանողներին ստիպեց տեղափոխվել Դամասկոս, Սիրիա: Սբ. Եփրեմ ճեմարանի համար նոր մասնաճյուղեր կառուցվեցին Դամասկոսին մոտ գտնվող Սայեդնիյայում: Սրանց բացումը տեղի ունեցավ 1995 թ. աշնանը:

17-րդ դարի կեսերից սկսած Սիրիայի Պատրիարքությունը ներառնում էր Հնդկաստանի ինքնավար Եկեղեցին, որի մի մասն այսօր կոչվում է «Մալանկարա Սիրիական Ուղղափառ եկեղեցի» և ղեկավարվում Կաթողիկոս Մար Բասելիոս Պաուլոս II-ի (ծնված 1915 թ., ընտրված 1975 թ.) կողմից:

ԱՄՆ-ի և Կանադայի սիրիական ուղղափառ թեմերը 1957 թվականին հիմնվել են արքեպիսկոպոս Մար Աթանասիուս Եշուե Սամուելի կողմից: Նա վախճանվեց 1995 թ. ապրիլի 16-ին, և նրա հաջորդը նշանակվեց իր թողած գրության համաձայն: Թեմը ներառնում է 18 պաշտոնական ծխեր և առաքելություն իրականացնող 4 միաբանություններ, որտեղ պաշտոնավարում են 17 քահանաներ և թոշակի անցած 6 հովիվներ: 1993 թվականին Սիրիայի Պատրիարքը հնդիկ հավատացյալների համայնքները բաժանեց սիրիական թեմից և միտրոպոլիտ Մար Նիկոլովոս Ջաքարիայի հովվական առաջնորդության ներքո Հյուսիսային Ամերիկայում ստեղծեց Սիրիական Ուղղափառ Եկեղեցու Մալանկարա թեմը: Այն ներառում է 23 ծխեր, որտեղ ծառայում են 25 հոգևորականներ: Արքեպիսկոպոս Մար Տիմոթեոս Ափռեմ Աբոդին պատրիարքական փոխանորդն է Ավստրալիայի, որտեղ կան վեց եկեղեցիներ:

Ronald G. Roberson-ի «The Eastern Christian Churches» հայերենի թարգմանեց
ԲՈՒՐԿԵՆ ՍՐԿ. ՆԱՀԱՊԵՏԸ

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

ՀԱՆԳԻՍՏ

Տ. ԵՂԻՇԷ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՆՈՍԵԱՆԻ

ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՒ ՄԱՐՍԵՅԼԻ ՍՐԲՈՅ

ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Խոր վիշտով կը յայտնենք, որ իր ընտանեկան բնակարանին մէջ 20 Սեպտեմբերին, երկուշաբթի առաւօտեան կանուխ, իր կեանքին 82-րդ տարուն մէջ խաղաղութեամբ ի Տէր հանգեաւ Արժանապատիւ Տ. Եղիշէ աւագ քահանայ Փանոսեան:

Տէր Եղիշէ աւագ քահանայ (աւազանի անունով՝ Սարգիս) ծնած է 1917 թուին: 1921-22 թթ. ջարդէն փրկուած մանուկ մը՝ ծնողաց հետ կը մեկնի Պէյրութ:

Իր նախնական ուսումը կը ստանայ Պէյրութի Սահակեան վարժարանէն ներս: Այնտեղ կը ցուցաբերէ ուսումնատենչ իր կարողութիւնները, որոնց շնորհիւ՝ ան կ'ընդունուի Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրեվանքի ուսումնարան-ժառանգաւորաց, Անթիլիաս: Հինգ տարի իր ուսման աւարտին՝ կանխահաս նկատելով դեռեւս քահանայական կարգի մէջ մտնելու, կը նախընտրէ ուսուցչական ասպարէզէ ներս դառնալ օգտակար երիտասարդ սերունդի հայեցի դաստիարակման: Հ.Բ.Ը. Միութեան շնորհիւ, ան կը գործուղուի Քեսապ՝ Գալատուրան հայկական գիւղը, տեղւոյն դպրոցի մէջ պաշտօնավարելու, ուր կը մնայ երկու տարի: Ապա՝ ան կը պաշտօնավարէ Անթիլիասի Դպրեվանքէն ներս:

Երբ Հոգեւոր պաշտօնեաներու անհրաժեշտութիւնը Հալէպ քաղաքի մէջ պահանջք կը դառնայ՝ ան իր յօժարակամութիւնը կը ցուցաբերէ եւ Հալէպի Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ Սրբոց Քառասուն Սանկանց՝ կը ձեռնադրուի քահանայ՝ իր օծումը ստանալով երջանկայիշատակ Տ. Արտաւազդ արքեպիսկոպոսի ձեռամբ:

Քսան տարիներ կը ծառայէ այս ծուխէն ներս թէ՛ որպէս հոգեւորական եւ թէ՛ որպէս ուսուցիչ եւ դաստիարակ: Սպա՝ կը նշանակուի հոգեւոր հովիւ Ս. Վարդան եկեղեցւոյ Տավուտիէ ծուխին, որուն Վարդանեան վարժարանէն ներս, որպէս տնօրէն, կը ցուցաբերէ կազմակերպողի ու ղեկավարի յատկութիւնները:

1960 թուին, այս անգամ երբ Ֆրանսայի հայոց ծուխերը կարիքն ունէին հոգեւորականներու, Տէր Եղիշէ կը թողու իր սիրած Հալէպը, կուգայ հաս-

տատուելու Հարաւային Ֆրանսայի թեմէն ներս ի Մարսեյլ, դառնալով հոգեւոր հովիւ ութ եկեղեցիներէն Սրբոց Սահակ-Մեսրոպ եկեղեցիին:

Այս ծուխէն ներս, 36 տարիներ, ամենայն նուիրումով, իր քաղցրաբարոյ բնաւորութեամբ եւ ծառայասիրութեամբ՝ դարձաւ բոլորին Հայր ու դաստիարակ:

Անխզելի եղաւ իր կապը իր եպիսկոպոսին հետ, որ Մայր Աթոռը կը ներկայացնէ: Գիտցաւ հաշտ ապրիլ ու գործակցիլ իր քաղաքականութեան հետ: Բայց մանաւանդ՝ միշտ բաժնեց իր սէրը իր ժողովուրդին հետ՝ ծառայական անխորտակելի ոգիով շաղախուած:

Աղօթք ու խունկ իր յիշատակին:

ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐՃԷԱՆ

ՀԱՆԳԻՍՏ ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Անժամանակ՝ 68-րդ տարում կյանքից հեռացավ ճանաչված բանաստեղծ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սիրված դասախոս, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հիմնադիր աշխատակիցներից Վաչագան Հովեյի Հովհաննիսյանը: Վաչագանի ծնողները սասունցիներ էին, որոնք Սեծ եղեռնից հրաշքով փրկվելով՝ ապաստանել էին Թալինի շրջանի Ներքին Բազմաբերդ գյուղում: 1931 թ. օգոստոսի 23-ին այս գյուղում է ծնվել ապագա բանաստեղծն ու մանկավարժը: Միջնակարգն ավարտելուց հետո, Վաչագանն ընտանիքով տեղափոխվում է Էջմիածին: Ընդունվում է Գևորգյան Հոգևոր Ճեմարան, որն ավարտում է 1954 թ. և աշխատանքի է անցնում Սայրավանքում, այնուհետև որպես գրաշար՝ Երևանի պոլիգրաֆ կոմբինատում: Աշխատանքին զուգահեռ նա ուսանում է Երևանի մանկավարժական ինստիտուտի բանասիրության ֆակուլտետի հեռակա բաժնում:

Նրա առաջին բանաստեղծությունները տպագրվում են Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրում՝ արժանանալով Վարպետի՝ Ավետիք Իսահակյանի ուշադրությանը, հատկապես «Մեր վանքերը» վերտառությամբ ստեղծագործությունը: Ծանոթանալով պատանի բանաստեղծի հետ, Վարպետն ասել է. «Գառնուկս, տասը այսպիսի բանաստեղծություն էլ որ գրես, հայ ժողովուրդը քեզ երկար կհիշի»: Դեռ ուսանող էր նա, երբ տպագրվեցին «Վաղվա համար» և «Սրտի զարկեր» բանաստեղծական ժողովածուները:

1967 թ. լուսահոգի Վարդգես Պետրոսյանի և մի շարք այլ մտավորականների հետ մասնակցեց «Գարուն» երիտասարդական ամսագրի հիմնմանը, որի տեխնիկական խմբագիրն էր երկար տարիներ: 1972, 1975 թթ. հաջորդաբար լույս են տեսնում «Աշխարհն իմ մեջ» և «Հողի կանչը» գրքերը: Ընթերցողների կողմից նրա յուրաքանչյուր ժողովածուն ընդունվում էր ջերմորեն: Էրգրի անպարփակ ու այրող կարոտը, ապուպապերի չիրականացած մխացող երազը, Սասուն աշխարհի չխամրող պատկերները շնչավորվում էին նրա գրչի տակ: Եվ նա լիաբուռն սիրով բանաստեղծության թովչանքը բաշխում էր անմնացորդ, ընծայում Աստուծո տվածը: Նրա խառնվածքին հոգեհարազատ էին մեր ժողովրդի հերոսական անցյալն ու եղեռնի չսպիացած վերքերը, նրա բողոքն ու արդարացի ընդվզումը, լքված վանքերի քարե մորմոքն ու հայ մարդու տառապանքից ծնված մի բուռ հրճվանքը:

Գրքից գիրք նրա ստեղծագործությունների շրջանակները դարձան ավելի ընդգրկուն, շաղախվեցին հայրենասիրական տաք թրթիռներով: Հայրենի հող ու ջրին, Ավարայրին, մեր վանքերին ու հավատին նվիրված նրա ձոներգերն ընթերցողի հոգում մաղում են լույս ու հավատ, լցնում հոգևոր մաքրությամբ:

80-ական թվականներին տպագրվում են «Հին տան առավոտը», իսկ Մոսկվայում ռուսերեն՝ «Հավատի գույնը» չափածո գրքերը: «Խորան Սիրո և Հավատի» ժողովածուն /1993 թ./ եղավ բանաստեղծի կարապի երգը: Վաչագան Հովհաննիսյանը ոչ միայն զբաղվեց գրական-ստեղծագործական, խմբագրական-հրատարակչական բեղուն աշխատանքով, այլև իր ամբողջ կյանքում բարձր պատասխանատվությամբ նվիրվեց մանկավարժական աշխատանքին: Հայոց լեզու և գրականություն դասավանդեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և էջմիածին քաղաքի մի շարք միջնակարգ դպրոցներում:

Հայոց լեզվի հմայքն ու հավերժությունը նա ուսուցանում էր յուրովի, բանաստեղծորեն, նվիրյալի պատրաստակամությամբ: Բարի էր, միաժամանակ՝ անաչառ: Օգտակար խորհուրդներ էր տալիս ստեղծագործական առաջին փորձերը կատարող պատանիներին: Աշխարհի չափ ուրախանում էր մի լավ քառատողով, հաջողված ստեղծագործությունով: Երկար տարիներ ղեկավարում էր էջմիածնի գրական միավորումը: Վաչագան Հովհաննիսյանի ստեղծագործությունները տպագրվում էին նաև Սիյուռքի մամուլում: Արտերկրում նա նույնպես սիրված ու գնահատված հեղինակ էր. Վաչագանը Հայ դատի ուխտի երդվյալ անդամներից էր, «Ուխտատուն» բանգարան-ինստիտուտի ամենառանդուն անդամ-հիմնադիրներից: Իր և սասունցի մի խումբ նվիրյալների ջանադիր հետևողականությամբ ստեղծվեց այդ բացառիկ թանգարանը: Բարձր ու առաքինի էին նրա մարդկային հատկանիշները: Ճշմարիտ խոսքն ու ազնվությունը, հայրենասիրությունն ու քաջությունը նրա պաշտամունքն էին: Ստեղծագործական, մանկավարժական իր ողջ կյանքում մնաց պարզ ու հասարակ, իր ժողովրդի իղձերն ու զգացմունքներն արտահայտող բանաստեղծը: Ընկերություն արեց և՛ հայտնիների, և՛ շարքայինների հետ հավասարապես: Հայրենի գրական անդաստանում ունեցավ իր հաստատուն տեղը:

Ստեղծագործական բուռն կյանքով ապրող բանաստեղծն այլևս մեզ հետ չէ, մեզ հետ չէ Սասունի ու Մեղրագետի, Մարաթուկի, Արածանու, էրգիր աշխարհի երգիչն ու երկրպագուն, շիտակ մարդն ու ազնվության ջատագովը: Քանի՜-քանի գրքեր, բանաստեղծական շարքեր մնացին անկատար: Ափսոս այն երազներին, որ չթևավորվեցին: Սակայն մնաց բանաստեղծի թրթռուն տողն ու խորիմաստ խորհուրդը: Հայրենի սուրբ մասունքների կարոտը, սիրո և հավատի, ազգովի միասին լինելու և Մայրենին ամենից սուրբը համարելու պատգամը:

Եվ ես, և դու, և նա
Վաղը հող ենք մի բուռ,
Ճամփաղ ուղիղ գնա...

հորդորում էր բանաստեղծը, և ինքն էլ իր ողջ կյանքում հավատարիմ մնաց իր ուխտին: Նրա հիշատակի լույսը, բանաստեղծական տողի ջերմությունը կմնա նրա երգած կարոտի գույնի և Սասուն աշխարհի բնապատկերների նման:

Օրհնություն ու լույս, խնկաբուրմունք նրա հիշատակին:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 1-ին, հինգշաբթի.- Սրբոյն Եղիսէի մատզարէին:

Այսօր, երեկոյան, Մայր Աթոռի միաբան սարկավագները հանգստյան սենյակում հանդիպում ունեցան Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Բեզյանի և Գերմանիայի Այիշքեթ քաղաքի Ասրվածաբանական համալսարանի ռեկտոր դոկտոր Անդրեաս Թիերմեյերի հետ: Սրբազան Հայրը ներկայացրեց գերմանական Աստվածաբանական համալսարանը և անդրադարձավ նրա առաքելությանը՝ նշելով, որ այն բարձրագույն կրթություն սպանալու մեծ հնարավորություն է ընձեռում իրենց ուսումը շարունակել ցանկացող հոգևորականներին: Այնուհետև խոսքը տրամադրվեց համալսարանի ռեկտոր Անդրեաս Թիերմեյերին, որն առավել հանգամանալից կերպով խոսեց համալսարանի նշանակության և այնտեղ կրթություն ստանալու մասին:

Հանդիպմանը ներկա էին նաև Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը, Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը և Տ. Սերովբե վրդ. Խաչիանյանը:

Հուլիսի 2-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հուղարկավորության արարողությանը մասնակցելու նպատակով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը՝ Սնան արքեպս. Ղարիբյանի ուղեկցությամբ, և Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը՝ Շահան արքեպս. Սվաճյանի ուղեկցությամբ:

Նույն օրը, Վեհափառ Հայրապետի մասնական կապակցությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Հայաստանի Երրորդ Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահ Բաբկեն Արարքցյանը:

Հունիսի 3-ին, շաբաթ.- Սրբոց երկուքսանան առաքելոցն Քրիստոսի և Ողջոյն Պողոսի երեքտասանեորդի առաքելոյն:

Այսօր Վեհարանում տեղի ունեցավ մամլո ասուլիս, որին մասնակցում էին Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Շահե արքեպս. Ամեմյանը, Տ. Վասե արքեպս. Հովսեփյանը և Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Ընդմիջումից հետո լրագրողների հետ հանդիպեցին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գաբեգին արքեպս. Ներսիսյանը և Տ. Ոսկան արքեպս. Գալստյանը: Գարեգին արքեպս. Ներսիսյանը նշեց, որ հաջորդ օրը Կաթողիկոսական Տեղապահի ընտրություններն է տեղի ունենալու:

Հունիսի 4-ին, կիրակի.- Ջ. կիրակի զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Սվազ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շահան արքեպս. Սվաճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Ապրուած զօրութեանց, դարձ հայեաց յերկինից և տես, այց արա այգւոյս այտմիկ և դարման տար ամա զոր տնկեաց աջ քո» (Սղմ. ՀԹ 15-16) բնաբանով:

Նույն օրը, երեկոյան, Կաթողիկոսական Տեղապահ ընտրելու նպատակով Վեհարանում Գերագույն Հոգևոր Խորհրդի և Եպիսկոպոսաց համատեղ ժողով գումարվեց: Փակ գաղտնի քվեարկությունից հետո Կաթողիկոսական Տեղապահ ընտրվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հունիսի 5-ին, երկուշաբթի.- Ս. օր Վարդավառի պահոց:

Այսօր, առավոտյան ժամը 7.00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին բերվեց Գարեգին Ա Հանգուցյալ Հայրապետի մարմինը, որը դրվեց Վեհարանի սրահում: Հարազատների հրաժեշտից հետո Տան Կարգ կատարվեց, որից հետո հոգևորականների ուղեկցությամբ հանգուցյալ Հայրապետի դին տարվեց Երևանի առաքնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի, որպեսզի համայն ազգակիր ժողովուրդը կարողանա իր վերջին հրաժեշտը տալ Վեհափառ Հայրապետին:

Նույն օրը, երեկոյան, Ս. Սարգիս եկեղեցում հոգեհանգստյան արարողություն կատարվեց, որին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահը, Պատրիարք Սրբազան Հայրերը, այլ բարձրաստիճան հոգևորականներ, Վեհափառ Հայրապետի ազգականները և հավատացյալ ժողովուրդը:

Նույն օրը Վեհարանում մամլո ասուլիս հրավիրվեց, որին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և Եկեղեցական հանձնաժողովի լրատվության հարցերի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական պատվիրակությունը՝ Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի գլխավորությամբ:

Հուլիսի 6-ին, երեքշաբթի.- Բ. օր Վարդավառի պահոց:

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին բերվեց Հանգուցյալ Հայրապետի մարմինը: Համապատասխան հոգեհանգստյան արարողություն կատարելուց հետո՝ այն դրվեց Մայր Տաճարի գավթում, որպեսզի սգակիր ժողովուրդն իր վերջին հրաժեշտը տա Վեհափառ Հայրապետին:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, հոգեհանգստյան արարողություն կատարվեց՝ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Մեղրյաղբյանի հանդիսապետությամբ:

Հուլիսի 7-ին, չորեքշաբթի.- Գ. օր Վարդավառի պահոց:

Այսօր, առավոտյան, Մայր Տաճարում հոգեհանգստյան պաշտոն կատարվեց, որի հանդիսադիրն էր Տ. Շահան արքեպս. Սվաճյանը:

Հոգեհանգստյան արարողություններ կատարվեցին նաև ժամը 12.00-ին և երեկոյան ժամերգությունից հետո՝ Տ. Գարեգին արքեպս. Բեզջյանի և Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի հանդիսապետությամբ:

Նույն օրը Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ, որի ժամանակ միաբաններն իրենց շնորհավորանքներն ուղղեցին Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին՝ Կաթողիկոսական Տեղապահի ընտրվելու առիթով: Այնուհետև Սրբազան Հայրը միաբաններին ներկայացրեց Հանգուցյալ Հայրապետի հուղարկավորության հետ կապված առաջիկա ծրագիրը:

Հուլիսի 8-ին, հինգշաբթի.- Դ. օր Վարդավառի պահոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, ապա կատարվեցին Հանգուցյալ Հայրապետի վերջին օծման և հուղարկավորության արարողությունները:

Հուլիսի 9-ին, ուրբաթ.- Ե. օր Վարդավառի պահոց:

Այսօր, կեսօրին, համաձայն Հայ Եկեղեցու «Մաշտոց» ծիսարանի արարողակարգի, Հանգուցյալ Հայրապետի շիրիմի վրա Այգուցի արարողություն կատարվեց՝ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի հանդիսապետությամբ (նշենք, որ այն կատարվում է մինչև յոթնօրեքը):

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ, Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ներկայությամբ, իր

աշխատանքները սկսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը, որի ընթացքում քննարկվեցին Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսի ընտրությունների վերաբերող հարցեր: Նիստը իր աշխատանքները շարունակեց մինչև հուլիսի 12-ը:

Նույն օրը, երեկոյան, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ, Երուսաղեմի հայոց Պատրիարքարանում արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանում Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ապենապետությամբ. Եպիսկոպոսաց ժողովի հերթական նիստ գումարվեց:

Հուլիսի 11-ին, կիրակի.- ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Մ. Պատարագ մատուցեց Տ. Տաթեն արքեպս. Ղարիբյանը: «Հայր մեր»-ից առաջ հավատո պատշգամի բովանդակալից քարոզ խոսեց Կ. Պոլսի հայոց Պատրիարքարքը Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

Ս Պատարագին ներկա էին նաև Կաթողիկոսական Տեղապահը, այլ բարձրաստիճան հոգևորականներ և հյուրեր:

Հուլիսի 12-ին, երկուշաբթի.- Բ. օր Վարդավառի: Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Մ. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ արեպս Մնացականյանը: Պատարագի ավարտին հոգեհանգստյան արարողություն կատարվեց՝ «վասն հանգուցելոց»:

Հուլիսի 13-ին, երեքշաբթի.- Գ. օր Վարդավառի:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մեկնեց Երուսաղեմի հայոց Պատրիարքը Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

Հուլիսի 14-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրիմի առջև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսադրությամբ, յոթնօրեքի հոգեհանգստյան պաշտոն կատարեց:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ:

Արարողության ավարտին, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու կարգի համաձայն, Ս. Խաչով կնքվեց Վեհափառ Հայրապետի գերեզմանը:

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ, որին Տեղապահ Սրբազան Հայրը միաբաններին ծանուցեց կաթողիկոսական ընտրությունների մոտավոր ամսաթիվը՝ նշելով, որ մինչև 2000 թ. Հայաստանյայց Ս. Եկեղեցին կունենա իր 132-րդ Կաթողիկոսը:

Յուլիսի 15-ին, հինգշաբթի.- Սրբոյն Եսայեայ մարգարէին:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մեկնեց Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

Յուլիսի 17-ին, շաբաթ.- Սրբոցն Թադէոսի առաքելոյն մերոյ և Սանդխտոյ կուսին:

Այսօր Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հրամանով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն նշանակվեց Տ. Արսեն արքեպս. Բեդրեդյանը:

Յուլիսի 18-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Բագրատ արեղա Գալստյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Զի ի նմանէ դուք էք ի Քրիստոս Յիսուս, որ եղև մեզ իմաստութիւն յԱստուծոյ՝ արդարութիւն և սրբութիւն և փրկութիւն» (Ա Կորնթ. Ա 30) բնաբանով:

Պատարագին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, այլ բարձրաստիճան հոգևորականներ և հյուրեր:

Յուլիսի 21-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր, երեկոյան, Վեհարանում միաբանական հավաք տեղի ունեցավ, որի ժամանակ Տեղապահ Սրբազան Հայրը միաբանների ուշադրությանը ներկայացրեց իր մտորումները՝ կապված հանգուցյալ Հայրապետի քառասունքի օրը կատարվելիք ծիսակատարության հետ: Այնուհետև հիշեցրեց, որ հաջորդ օրը Վեհափառի մահվան 15-րդ օրն է և պետք է հոգեհանգստյան արարողություն կատարվի հանգուցյալ Հայրապետի շիրիմի մոտ:

Յուլիսի 22-ին, հինգշաբթի.- Սրբոց նահատակացն՝ Սուսաննայ, Աբէլի, Մեթոյ, Եւովսայ, Եւովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Իսահակայ, Յակովբայ, Յովսեփայ, Մովսիսի, Միսրայեմի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամփսոնի, Յեփթայենայ, Բարակայ, Գեդէոնի և այլոց սրբոց նահատակացն:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.U.O.S.S. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի թաղման 15-րդ օրվա առիթով, նրա շիրիմի առջև հոգեհանգստյան մասնավոր պաշտոն կատարվեց՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսապետությամբ, ըստ Հայ Եկեղեցու «Մաշտոց» ծիսարանի:

Արարողության ավարտին Տեղապահ Սրբազան Հայրը մեկ անգամ ևս Ս. Խաչով կնքեց Վեհափառ Հայրապետի գերեզմանը:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հայրերը և բազմաթիվ հավատացյալներ:

Հուլիսի 23-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովության նախարար Ռազմիկ Մարտիրոսյանը, որին ընդունեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց հանրապետությունում առկա սոցիալական խնդիրների շուրջ:

Հուլիսի 25-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր եպս. Փանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «խաղաղութեամբ քով Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացոյ զմեզ եւ աներկիւղ պահեա յամենայն չարէ» (Պատարագամատոյց) բնաբանով:

Հուլիսի 27-ին, երեքշաբթի.- Սրբոց երկուրասան մարգարէիցն՝ Ովսեայ, Ամովսայ, Միքիայ, Յովելեայ, Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յովսեայ, Սոփոնեայ, Անգեայ, Զաքարեայ և Մաղաքեայ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ՀՀ կրոնի գործերի պետական հարցերի ժամանակավոր պաշտոնակատար Լևոն Մկրտչյանը, որին հյուրընկալեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ամենասպրիվ Սրբազան Հայրը և պարոն Մկրտչյանը փոխադարձաբար միմյանց շնորհավորեցին՝ Կաթողիկոսական Տեղապահ ընտրվելու և նոր պաշտոնի նշանակվելու առիթներով:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ներկայիս խնդիրներին առնչվող հարցերի շուրջ:

